# ԷՋՄԻԱԾԻՆ



Զ

2003



ԾԹ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

**Յունիս**
**2003**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գումարման անդրանիկ նիստին . . . . . . . . 3
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Մայր Տաճարում Սուրբ Էջմիածնի տոնին, եպիսկոպոսական ձեռնադրության առիթով . . . . . . . . 5

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Ժան Նոել Գերինիին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . . 8
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Հակոբ Հակոբյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . . 10
Հայրապետական գնահատություն . . . . . . . . 12
Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարձրագույն պարգևը՝ տեր և տիկին Արեգ և Մոնիկ Երկանյաններին . . . . . . . . 13
«Ս. Ներսես Շնորհալի» շքանշան հանձնվեց եկեղեցու երկու բարերարների . . 14
Տ. Բագրատ վարդապետ Գալստանյանն ընտրվեց Կանադայի հայոց թեմի առաջնորդ . . . . . . . . 15

## ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ոփսփի Պատարագին . . . . . 16
Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Հոգեգալստյան տոնին . . . . . . . . 19
Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ոփսփի Պատարագին . . . . . 22
Տ. Վարդան աբեղա Նավասարդյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում «Ելն ի Վիրապէն» տոնին . . . . . . . . 25
Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանի եպիսկոպոսական Ոփսփի Պատարագի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում . . . 27
Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում . . . . . . . . 31

## ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ԱԴԱՄ ՔՀՆ. ՄԱԿԱՐՅԱՆ - Մարդու Որդին երկնքում է . . . . . . . . . . 33

## ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. Ս. ՍՎԱՋՅԱՆ - Աղվանից Կաթողիկոս Մանուկ Գրիգորիս . . . . . . . . . 39
ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - Սամուել Անեցի . . . . . . . . . . . . . . . . . . .47
ԽԱՉԻԿ ՄԱՄՎԵԼՅԱՆ - Ոսկան Երևանցին ապավինում է
Լյուդովիկոս XIV թագավորին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 58
ԱՆԱՀԻՏ ՋԱՔԱՐՅԱՆ-ԲՈԵՀՆԵՆՍԻԵԿԵՐ - Ալիշանը և հայ երգի
ու գրականության ժողովրդականացումը «Բազմավեպի» էջերում . . . . . . 64
ՌԻՄԱ ՄԻՐՈՒՄՅԱՆ - Ազգային պետության մոդելը և
ազգի ինքնապաշտպանական հասարակական-տնտեսական
կառույցների ըմբռնումը XIX դ. հայ պատմափիլիսոփայության մեջ . . . . . 73
ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ - Էջեր մի բարեգործ տոհմի պատմությունից . . . . .84
ՀՐԱՆՏ ԲԱՐՍԵՂԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ - Արցախի թեմն իր
գոյության վերջին տարիներին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 87

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ - Նոր խոսք բառարանագրության մեջ . . . . . . 97
ՌՈՒԲԵՆ ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ - Կոմիտասին նվիրված
արժեքավոր մենագրություն . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 100
ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ - Ակադեմիկոս Մարի Բրոսսե . . . . . . . . . . . . .102

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . . . . . . . .104
Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյան . . . . . . . . . . . . . . . . . . . .106
Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյան . . . . . . . . . . . . . . . . . . . .108
Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանի Ուխտի Պատարագը
Մայր Տաճարում . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .110
Նորաօծ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի
Ուխտի Պատարագը Թբիլիսիի առաջնորդանիստ եկեղեցում . . . . . . . . 111
Մայր Տաճարում Ուխտի Պատարագ մատուցեց
Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ
Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը . . . . . . . . . . . . . . . . . . . . . 112
Մայր Տաճարում Ուխտի Պատարագ մատուցեց Անգլիայի հայոց
թեմի առաջնորդ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը . . . . . . . . . . 113

Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի
Ուխտի Պատարագը Ս. Էջմիածնում . . . 114
Արցախի թեմի Ուխտի Պատարագը Մայր Տաճարում . . . 115
Գարեգին Բ Կաթողիկոսի հանդիսապետությամբ
կատարվեց Վանաձորի առաջնորդանիստ եկեղեցու հիմնարկեքը . . . 116
Ամավերջի հանդիսություն Գևորգյան Հոգևոր Ճեմարանում . . . 118
Ամավերջի հանդիսություն Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում . . . 119

**Ամերիկայի Արեւմտեան թեմէն ներս**
Միացեալ Նահանգներու Հայաստանի դեսպանին զեկոյցը
առաջնորդարանի մէջ . . . 120

**Ամերիկայի Արեւելեան թեմէն ներս**
Նշուեցաւ Հոգշ. Տ. Վարուժան ծ. վրդ. Գասպարեանի
ձեռնադրութեան 50-ամեակը . . . 122
Էջմիածին քաղաքի բնակչության համար Մայր Աթոռում
կբացվի ատամնաբուժական կենտրոն . . . 124
Հաղպատում ավարտվեց Գուգարաց թեմի կազմակերպած
«Ս. Հովհան Օձնեցի Հայրապետը և իր ժամանակը»
խորագրով գիտաժողովը . . . 125

**ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ**

**Տ. ԱՐՄԱՇ ԱԲԵՂԱ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ** - Էկումենիկ ուղեգիծ
(փաստաթղթի թարգմանությունը հոդվածագրի) . . . 127

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց
ԱՊՀ անդամ երկրների անվտանգության մարմինների
և հատուկ ծառայությունների ղեկավարներին . . . 140
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց
Ռուսաստանի Դաշնության Հարավային Դաշնային մարզում
ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Վիկտոր Կազանցևին . . . 141

Եկեղեցական բեմ. լուրեր . . . 142

"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 144
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin . . . 148
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine . . . 152

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԵՐՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԻՆ

(12 հունիսի 2003 թ.)

Մեծարգո Նախագահ,

Հայաստանի Ազգային ժողովի պատվարժան պատգամավորներ.

Ողջունում ենք Ձեզ Հայաստանի նորընտիր խորհրդարանի այս անդրանիկ նիստի առիթով և ընտրության կապակցությամբ Մեր շնորհավորանքը բերում Ազգային ժողովի պատգամավորներին:

Մեր Հայրենիքի և համայն հայության կյանքում որոշիչ վերափոխումների ու վերակառուցումների ժամանակաշրջան ենք ապրում՝ կապված ինչպես Հայաստանի անկախության վերահաստատման ու Արցախի ազատագրության, այնպես և համընդհանուր փոխակերպումների ու վերակազմավորումների հետ: Վերափոխվում և ամրապնդվում են նաև մեր երկրի օրենսդրական հիմքերը, որոնց վրա պիտի բարձրանա հասարակական մեր կյանքի նորոգ շինվածքը՝ ապահովելով տնտեսության կենսունակ զարգացումը, գիտության ու կրթության և հոգևոր կյանքի շարունակական առաջընթացը:

Օրենքը արդարության և իրավունքի հաստատման հասարակական ձգտումն է և, արդարև, «օրենքը սուրբ է», ինչպես ասում է առաքյալը (Հռոմ. Է 12): Սուրբ է օրենքը, երբ նրանով իսկապես հաստատում ենք արդարություն և իրավունք, երբ օրենքներ սահմանելիս և օրենքները գործողության ճամփելիս առաջնորդվում ենք մարդու ու հասարակաց համընդհանուր շահի անհրաժեշտություններով:

Օրենքներով կարգավորվում է մեր կյանքը՝ ընտանիքից մինչև ներպետական ու միջպետական հարաբերություններ, հետևաբար օրենսդրությունը, իբրև արտահայտություն հասարակական շահի մեր իրական մտահոգության, պետք է խարսխված լինի ազգային մեր ավանդներին, քրիստոնեական բարոյական մեր սկզբունքներին ու արժեքներին, քանզի օրենքները միաժամանակ հասարակական մտածողություն են կրթում, դիմագիծ հավելում մեր ազգային նկարագրին: Մեր ժողովրդի մշակութային հարուստ ժառանգության կարևոր մաս են կազմում կանոնաց ու օրինաց ժողովածուները, որոնցով պետականության կորստի պայմաններում անգամ հավաք է մնացել հայրենական մեր կյանքը:

Մեծարգո պատգամավորներ, Դուք կոչված եք կարևոր ու մեծ առաքելության: Ձեր ընդունած օրենքները որքան որ համահունչ լինեն ժամանակի զարգացումներին ու խնդիրներին և հարազատ՝ մեր նկարագրին, մտածողությանն ու ձգտումներին, որքան որ հարիր՝ 1700-ամյա քրիստոնեական երկրին ու մշակույթին, այնքան ավելի պիտանի ու գործուն

կլինեն և կերաշխավորեն մեր երկրում ժողովրդավարական գործընթացների զարգացումները:

Հայրապետիս հորդորն է Ձեզ, սիրելիներ, որ Հայաստանի Ազգային ժողովում օրենքները կյանքի կոչեք Ձեր սիրով առ հայրենին ու հարազատ ժողովուրդը, որպեսզի այդ օրենքներով ավելի պաշտպանված լինի մեր Հայրենիքը, հասարակական ամուր դաշինք լինի ընկերային մեր կյանքը, և իբրև մեկ ամբողջություն շարունակեն ապրել Հայաստանը, Արցախն ու Սփյուռքը: Աղոթում ենք, որ Ազգային ժողովի առաջիկա չորս տարիների գործունեությունը հայրենաշինության Ձեր միասիրտ ոգով կարևոր ներդրում դառնա մեր Հայրենիքի առաջընթացի, հայոց գալիքի հավատաշող ճանապարհին:

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Ձեզ և մաղթում, որ հանդիսավոր Ձեր երդումով սկիզբ առնող պատգամավորական Ձեր ուղին լինի արդյունաշատ՝ հանուն մեր ժողովրդի հույսերի ու սպասումների և խաղաղ, բարօր ու երջանիկ կյանքի:

*Շնորհք եւ սէր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ամէն:*

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՈՆԻՆ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(22 հունիսի 2003 թ.)

*«Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ,*
*արարէք տօնս ուրախութեան»:*
(Սաղմ. ՃԺԷ 27)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Միրելի բարեպաշտ ժողովուրդ,

Տոն է այսօր Կաթողիկե Սուրբ Էջմիածնի՝ Ամենայն Հայոց Մայր Տաճարի: Տոն է զվարթահանդես՝ Տիրոջ մեծափառության լույսով պսակված: Այսօր հայոց բոլոր եկեղեցիներում զանգերը ղողանջում են հայոց հողում Միածնի Էջքի փառաբանությամբ: Այսօր աշխարհասփյուռ մեր ժողովուրդը աղոթք է բարձրացնում երկինք՝ հայոց կյանքում Աստծո Էջքի, Աստծո ներկայության օրհնաբանությամբ:

«Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ, արարէք տօնս ուրախութեան»:

17 դար առաջ Փրկչի Իջման երկրպագելի այս վայրում Սուրբ Գրիգոր Լուսավորչի երավերով մեր նախնիները քար քարի հետ հավատ շաղախելով կանգնեցրին Տաճար Աստծո ու կոչեցին «Էջմիածին»՝ օրհներգելով փառքը Տիրոջ. «Ի Տեառնէ եղեւ այս, եւ է սքանչելի առաջի աչաց մերոց» (Սաղմ. ՃԺԷ. 23 - 24):

«Էջմիածին» ասելով, 17 դար ազգս հայոց խոնարհվում է Քեզ, Տեր, որ անսասցիր աղոթքին մեր Հավատի Հոր ու Հայրական խնամքով այցի եկար մեր ժողովրդին:

17 դար «Էջմիածին» ասելով, տեսնում ենք Օրհնյալ Աջովդ գծագրված Խորանը Լույսի, որտեղից շնորհդ, սերդ ու Սուրբ Ավետարանիդ լույսը կենսատու ճառագեց հայոց կյանքի վրա ու գծագրեց հարության ու հարատևության մեր ճանապարհը:

«Էջմիածին» ասելով, 17 դար Քեզ ենք կանչում, Տեր, քանզի Դու այստեղից կանչեցիր մեր ժողովրդին ու պահեցիր միասնական հոտ հավատավոր:

«Այսօր է, զոր արար Տէր, եկայք ցնծասցուք եւ ուրախ եղիցուք ի սմա... Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ» (Սաղմ. ՃԺԷ 24 - 27): Արդ, կատարենք տոն ուրախության, Սուրբ Էջմիածնի հավատակերտ խորհրդով արարենք կյանք հոգիներից ներս և կյանք՝ հոգիներից դուրս, նորոգենք հավատ, սեր ու միասնություն, ուխտ համազգային, որպեսզի Սուրբ Էջմիածինը մեր ժողովրդի համար միշտ մնա շտեմարան աստվածային անսպառելի շնորհների, մայր, ծնող ու դաստիարակ, զորության ու պայծառության ակունքը հայոց բոլոր եկեղեցիների:

Սուրբ Էջմիածնի տոնի նվիրական այս օրը, սիրելի ժողովուրդ հայոց, կատարեցինք նորընծա երկու եպիսկոպոսների ձեռնադրությունն ու օծումը: Աստծո և ձեր ներկայությամբ և բարեխոսությամբ մեր Հավատի Հոր ու առաջին Կաթողիկոս Սուրբ Գրիգոր Լուսավորչի, Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջև եպիսկոպոսական շնորհ և իշխանություն ստացան մեր Եկեղեցու արժանավոր եկեղեցականներ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը և Տ. Բագրատ վրդ. Գալստանյանը՝ այսուհետ Գերաշնորհ Սրբազան Հայրեր:

Վազգեն Սրբազանը ծնվել է 1965 թ. Արմավիրի մարզի Արտիմետ գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո ուսանել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում: 1991 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա և իր ծառայությունները սիրով ու ջանադրաբար բերել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն: Դասավանդել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում: Երջանկահիշատակ Մեր նախորդի՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ գլխավորել է Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի գործունեությունը: 1996 թ. ստացել է վարդապետության աստիճան: 1999 թ. Մեր տնօրինությամբ նշանակվել է Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ և 2002 թ.՝ Վիրահայոց թեմի առաջնորդ:

Բագրատ Սրբազանը ծնվել է 1971 թ. Գյումրի քաղաքում: Դպրոցական ուսումնառությունից հետո ավարտելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանը՝ 1995 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա: 2002 թ. ստացել է վարդապետության աստիճան: Իր ծառայությունը մեր Սուրբ Եկեղեցուն Բագրատ Սրբազանը նույնպես սկսել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանում դասավանդությամբ: Այնուհետև նշանակվել է «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր: Երանաշնորհ Գարեգին Ա Հայրապետի տնօրինությամբ ուղարկվել է ուսանելու Անգլիայում, որտեղից վերադառնալով՝ ստանձնել է Վազգենյան Դպրանոցի տեսչությունը: 2002 թ. Մեր տնօրինությամբ նշանակվել է Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ, իսկ 2003 թ. Կանադայի Պատգամավորական Ժողովն ընտրեց նրան կանադահայոց հոգևոր առաջնորդ:

Սիրելի ժողովուրդ, այսպիսի վաստակով մեր երիտասարդ հոգևոր հայրերն այսօր եպիսկոպոս ձեռնադրվեցին՝ կոչվելով ավելի պատասխանատու հոգևոր ծառայության, քանզի ինչպես առաքյալն է ասում, «եթէ ոք եպիսկոպոսութեան ցանկայ, բարւոյ գործոյ ցանկայ» (Ա Տիմոթ. Գ 1):

Հայ Եկեղեցու անդաստանում բարի գործեր հավելելու ջերմ ցանկությամբ, սիրելի Սրբազան Հայրեր, այսօր՝ Սուրբ Էջմիածնի շնորհաառատ տոնի օրը, Դուք վերստին հաստատեցիք ծառայական Ձեր ուխտը՝ անսայթաք հետևել Հայաստանյայց Եկեղեցու վարդապետությանը, ուղիղ ընթացքին ու գործերին մեր սուրբ հայրերի և միշտ հավատարիմ մնալ Սուրբ Էջմիածնին ու անկորուստ պահել ձեր խնամքին հանձնված հոտը բանավոր: Աստված կամեցավ Ձեր ձեռնադրությունն ու տեսչությունն իր ժողովրդի վրա: Ձեզ վստահված ժողովուրդն է գանձը Ձեր և այնտեղ են Ձեր սրտերը: Հիրավի, արժեքների փլուզման ու կորստի, բայց միաժամանակ, արժեքների վերագտնումի ու հոգևոր զարթոնքի մեր ժամանակներում սիրտ է պետք, սիրող, զոհաբերվող, Քրիստոսասեր սիրտ, որ սրտեր բոցավառի, հոգիներ ներշնչի ու առաջնորդի: Նոր խոսքեր չէ, որ պիտի ասենք, նոր ճանապարհ չէ, որ պիտի ցույց տանք, բայց Ձեր կյանքով ու բարյաց գործերով Ավետարանի խոսքը պի-

պի նորանա և հավատի ճանապարհը պիտի նորոգվի այն թեմերից ներս, որոնց առաջնորդներ կարգվեցիք: Մենք հավատում ենք Ձեր նվիրումին, և «որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ» եղաք, «ի վերայ բազմաց կացուցից զքեզ» (Մատթ. ԻԵ 23): Հավատում ենք Ձեր սիրուն, որով իբրև հովիվք քաջ, Ձեր անձերը պիտի դնենք Ձեր հոտի ամեն անդամի համար, որպեսզի հավատարիմ լինեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, մեր վերանկախացյալ Հայրենիքին ու հայրենյաց ժառանգությանը: Դուք, սիրելի Սրբազաններ՝ կրողները Սուրբ Էջմիածնի առաքելության, Սուրբ Էջմիածնով եք զորավոր, և Սուրբ Էջմիածինը՝ Ձեզնով, զավակներով իր բոլոր՝ մոտ ու հեռավոր: Պատմությամբ է վկայված. ով հեռանում է Սուրբ Էջմիածնից, հեռանում է ազգից, ով ուրանում է Սուրբ Էջմիածինը, ուրանում է մեր հայրերի Աստվածաշնորհ դարավոր սուրբ հավատքը, քանզի Էջմիածնադրոշմ է հայ ինքնությունը և Էջմիածնակերպ՝ հայոց հավատքը, քանզի Սուրբ Էջմիածնով նույնացած է Կամքն Աստծո և կամքը հայոց, ինչպես ասել ենք Մայր Տաճարի 1700-ամյակի առիթով Մեր Կոնդակում:

Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում Ձեզ, սիրելի Սրբազան Հայրեր: Թող այս տոնական օրվա սուրբ խորհրդով մեզ բացված Աստծո բարի հայացքի ներքո սկիզբ առնող Ձեր առաջնորդական ծառայությունը Տիրոջ օրհնությամբ արգասավոր լինի եկեղեցասեր ու հայրենանվեր Ձեր քաջ հոգու բարյաց գործերով:

Եպիսկոպոսական ձեռնադրության այս ուրախ առիթով Հայրական սիրով ողջունում ենք Կանադայից, Վրաստանից և Միացյալ Նահանգներից Մայր Աթոռ ժամանած պատվարժան հայորդիների ներկայությունն այստեղ: Մաղթում ենք, որ իրենց նոր առաջնորդների շուրջ կանադահայ ու վիրահայ համայնքների համախմբությամբ շարունակ շեն ու պայծառ լինի հայրենական կյանքը հայոց ավանդաշատ այդ թեմերում:

Մեր շնորհավորանքներն ենք բերում Վիրահայոց և Կանադայի հայոց թեմերի ուխտապահ հոգևոր դասին, եկեղեցական վարչությանց պատվարժան անդամներին ու բարեպաշտ հավատացելոց և Մեր օրհնությունն ենք հղում համայն մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի:

Թող Աստված խաղաղությամբ պահպանի ազգս հայոց, Հայրենիքը մեր և Առաքելական Սուրբ Եկեղեցին:

*Սէր Աստուծոյ, շնորհք եւ օրհնութիւն եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեանն ամէն:*

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԺԱՆ ՆՈԵԼ ԳԵՐԻՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԺԱՆ ՆՈԷԼ ԳԵՐԻՆԻ, ՈՐ Ի ՄԱՐՍԷԼ, ՖՐԱՆՍԻՍ

Յարգարժան պրն Գերինի.

Մեծապէս ուրախ ենք համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ողջունելու Ձեզ՝ հայ ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու սիրելի բարեկամին եւ բերելու Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը, սէրն ու բարեմաղթանքները:

Մենք առանձնակի սիրով յիշում ենք Հովուապետական Մեր այցը Ֆրանսիա, երբ առիթ ունեցանք հանդիպելու Ձեզ եւ ի մօտոյ ծանօթանալու հայանպաստ Ձեր արգասաւոր գործունէութեանը: Մեզ համար մեծ ուրախութիւն էր ականատեսը լինել այն սիրոյն ու յարգանքին, որը Ձեր նկատմամբ փածում է մարսէլահայ համայնքը հայ-ֆրանսիական հարաբերութիւնների զարգացման եւ Ֆրանսիայի կողմից Հայաստանի նորանկախացեալ Հանրապետութեանը ցուցաբերուող զօրակցութեան գործում Ձեր նախանձախնդիր եւ յեփեւողական ջանքերի համար:

Դուք, իբրեւ Ֆրանսիայի Ծերակոյտի անդամ եւ Ռոշ-Դիւ-Ռոն նահանգի Գլխաւոր Խորհրդի Նախագահ, Ձեր նպաստն էք բերել նաեւ Ֆրանսիայի կողմից Հայոց Ցեղասպա-

նութեան ճանաչման, որը մեծ մխիթարութիւն է եղեռն վերապրած մեր ժողովրդին եւ խօսուն վկայութիւնը Ձեր երկրի եւ ժողովրդի արդարամիտ եւ ժողովրդավար նկարագրի:

Այսօր գոհունակութեամբ ենք անդրադառնում Ձեր աջակցութեանը Հայաստանի կրթական եւ առողջապահական ծասպարտութիւններին: Տակաւին երեկ կատարուեց Ձեր նախաձեռնութեամբ եւ Ռաշ-Դիւ-Ռոռ նախանգի Գլխաւոր Խորհրդի հովանաւորութեամբ Գիւմրիում կառուցուած ծիւանդանոցի՝ Ֆրանսիական դիսպանսերի բացման արարողութիւնը, որի շնորհակալ գործունէութեամբ բազմաթիւ հայորդիներ բժշկական օգնութիւն պիտի գտնեն դժուարական եւ ընկերային կեանքի ներկայ դժուարութիւնների պայմաններում: Ուրախալի է, որ նախատեսուում է բժշկական նմանատիպ կենտրոն բացել նաեւ Էջմիածին քաղաքում՝ Մայր Աթոռիս հովանու ներքոյ, ընդլայնելով կարիքաւորներին սատարելու աստուածահաճոյ ծրագիրը:

Յարգարժան պրն Գերինի,

Հայրապետական այսու Կոնդակով բարձր գնահատելով խանդէպ մեր ժողովուրդը Ձեր բարեացակամ ու ազնիւ վերաբերմունքը, շնորհում ենք Ձեզ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր մաղթանքն է, որ Բարին Աստուած հանապազ աջակից ու օգնական լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, երջանկութիւն եւ երկնապարգեւ ամենայն բարիք:

Այլեւ աղօթում ենք, որ Բարձրեալ Տէրը խաղաղ երկնքի ներքոյ միշտ բարօր ու բարգաւաճ պահպանի Ձեր հիւրընկալ երկիրը՝ Ֆրանսիան, եւ հանապազ օրհնութեամբ միշտ ամուր պահի մեր ժողովուրդների բարեկամութիւնը:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Յունիսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 170

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմօրէն ողջունում եւ շնորհաւորում ենք Ձեզ ծննդեան 80-ամեայ յոբելեանի առիթով եւ Հայրապետական սիրով բերում ենք Ձեզ Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Մեծարգոյ պրն Յակոբեան, այսօր, Ձեր յոբելեանի առիթով, ուրախութեամբ ենք անդրադառնում, որ Աստծուց պարգեւած Ձեր ձիրքերն ու շնորհները՝ կրթուելով Մելքոնեան վարժարանի աւանդներով ու փայլ առնելով Կահիրէի եւ Փարիզի գեղարուեստից ակադեմիաներում, ծնունդ են տուել գեղեցիկ ու մեծ արուեստի, որը ամենաբարձր մակարդակներով գնահատուած է հայրենական ու միջազգային արուեստասէր կեանքում: Գեղանկարչութեան բարձունքները նուաճած Ձեր կտաւները անուն ու ճանաչում են բերում Ձեզ եւ հռչակ յաւելում հարուստ ու հինաւուրց մշակոյթ ունեցող մեր ժողովրդին, որի արժանաւոր եւ շնորհաշատ զաւակն էք Դուք՝ Ձեր հոգում միշտ կրելով քրիստոնեայ մեր ժողովրդի արժէքները ու հայրենի ժառանգութիւնը:

Տասնամեակներ շարունակ նշանաւոր տարբեր քաղաքների հանրայայտ թանգարաններում ցուցադրուող Ձեր նկարները ծառայում են հոգեւորի զօրացմանը մարդկանց սրտերում եւ բարու արգասաւորմանը աշխարհում:

Մենք ուրախ ենք նաեւ, որ Ձեր վրձնած կտաւները զարդարում են Վեհարանի պատկերասրահը՝ ի տես Մայր Աթոռիս հիւրերի ու այցելուների:

Մեծարգոյ Յոբելեար, Հայրապետական այսու Կոնդակով բարձր գնահատանքի արժանացնելով Ձեր ծառայութիւնները մեր ժողովրդին՝ Ձեր ծննդեան 80-ամեայ յոբելեանի առիթով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

**Ս Ո Ւ Ր Բ  Ս Ա Հ Ա Կ - Ս Ո Ւ Ր Բ  Մ Ե Ս Ր Ո Պ**

պատուոյ բարձր շքանշանը:

Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալն Աստուած Իր խնամքի ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին, պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ օրհնի Ձեր կեանքը նոր յաջողութիւններով ու երկնատուր բարիքներով:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 4-ն Յունիսի
Յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 171

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2003 թվականի հունիս ամսին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Սրբատառ կոնդակով

**Օրհնության գիր է փրվել.**
Մանուկ քահանա Մսրլյան (Դամասկոսի հայոց թեմ)
Միսաք Միսիրլյան (Դամասկոսի հայոց թեմ)
Ցուզբաշյան-Գյուլբենկյան Վարժարանին (Հորդանան)

**Ծաղկյա փիլոն կրելու իրավունք է շնորհվել**
Պարթև քահանա Գարագաշյանին (Ավստրալիայի հայոց թեմ)



ՍԱՐՈ ԽՈԴԱՎԱՐԴՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՂԱՍԱՐԳՍՅԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ Է ՀԱՆՁՆՈՒՄ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԱՐԵՏ ԵՎ ՄՈՆԻԿ ԵՐԿԱՆՅԱՆՆԵՐԻՆ

# ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՐԳԵՎԸ՝ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԱՐԵՏ ԵՎ ՄՈՆԻԿ ԵՐԿԱՆՅԱՆՆԵՐԻՆ

Հունիսի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարձրագույն պարգև՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան հանձնեց սփյուռքահայ բարերարներ տեր և տիկին Արեթ և Մոնիկ Երկանյաններին:

«Մենք բարձր ենք գնահատում Երկանյանների ազգային և հայրենասիրական ոգին, որ նրանք դրսևորում են մեր սրբավայրերի պահպանման գործում: Մենք նաև քաջալերում ենք նրանց հոգատար վերաբերմունքը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ»,- հանձնելով շքանշանը՝ բարերարներին ասաց Հայոց Հայրապետը:

Նորին Սրբությունը նշեց, որ աշխարհի ամենատարբեր վայրերում հանդիպել է սփյուռքահայերի, ճանաչել նրանց իբրև ճշմարիտ հայ քրիստոնյաներ ու Մայր Աթոռի հավատարիմ զավակներ, որոնք խորը նախանձախնդրություն են հանդես բերում ազգային արժեքների պահպանման գործում:

Երախտագիտություն հայտնելով պարգևի համար՝ տեր և տիկին Երկանյանները հավաստեցին, որ այսուհետ ևս հավատարիմ կմնան իրենց ուխտին և կծառայեն Հայ Եկեղեցուն:

Առաջին անգամ լինելով Հայաստանում՝ սփյուռքահայ բարերարներն այցելեցին նաև Սևանի Վազգենյան Դպրանոց, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի և Նորքի Հայորդյաց տուն, ծանոթացան Հայ Եկեղեցու գործունեությանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆՎԵՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԿՈՒ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական կոնդակով Հայ Եկեղեցու բարերարներ Սարո Խոդավարդյանը և Հարություն Աղասարգիսյանը պարգևատրվել են Հայ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո շքանշանով:

Հունիսի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ձեռամբ Վեհափառ Հայրապետի, տեղի ունեցավ շքանշանների հանձնման հանդիսավոր արարողությունը: Բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը, ապա ընթերցվեց Հայրապետական սրբատառ կոնդակը, որով Նորին Սրբությունն իր գնահատանքն էր հայտնում եկեղեցանվեր բարերարներին:

Իտալահայ բարերար Սարո Խոդավարդյանը երկար տարիներ վարում է Միլանի Սուրբ Քառասուն Մանկունք եկեղեցու համայնքային վարչության փոխատենապետի պատասխանատու պաշտոնը: Ի հավելումն բազմաթիվ եկեղեցաշեն գործերի, նա իր մասնակցությունն է բերել նաև Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու բարեզարդման գործին՝ հանձն առնելով եկեղեցու ներքին լուսավորության համակարգի բարերարությունը:

Ամերիկահայ Հարություն Աղասարգիսյանը ևս Հայ Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նվիրյալներից է և նախանձախնդրորեն մասնակցում է Հայ Եկեղեցու ԱՄՆ Արևմտյան թեմի եկեղեցական կյանքին՝ կամավորաբար ստանձնելով զանազան հանձնառություններ:

Ստանալով Հայ Եկեղեցու շքանշանը՝ փիար Սարո Խոդավարդյանը Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնեց իրեն արժանացրած պատվի համար՝ մասնավորաբար նշելով, որ լինել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայրենիքի կողքին՝ նշանակում է հաճախ գալ Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք՝ նախ զորացնելու և ապա զորավիգ լինելու նրանց: Երախտիքի խոսք ասաց նաև Հարություն Աղասարգիսյանը:

Վերջում ներկաներին իր հայրական խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը: «Մենք կարևորում ենք բարեգործության երևույթը և առավելաբար ոգին, որով կատարվում է այդ բարեգործությունը: Մեզ համար մխիթարություն է տեսնել, որ երկու երիտասարդ հայորդիք իրենց ունեցվածքից մաս ու բաժին են հանում մասնակցելով Մայր Եկեղեցու և Հայրենիքի զորացման սրբազան գործին», - նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Հանդիսությանը գեղարվեստական հայտագրով մասնակցեց Երևանի Կամերային նրգչախումբը՝ խմբավարությամբ Հարություն Թոփիկյանի:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# Տ. ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՍՏԱՆՅԱՆԸ ԸՆՏՐՎԵՑ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Մայիսի 31-ին Կանադահայոց թեմի 20-րդ պատգամավորական ժողովը ձայների մեծամասնությամբ նոր թեմակալ առաջնորդ ընտրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, Արագածոտնի թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Բագրատ վրդ. Գալստանյանին:

Ժողովը նախագահում էր թեմի նախկին առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, որ վերջերս ընտրվել է ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ:

Հունիսի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական գրով վավերացրեց նորընտիր առաջնորդի ընտրությունը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

## *ՔԱՐՈԶ ԽՈՍԱԿԱՆ*

# Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(1 հունիսի 2003 թ.)

*«Միեղ գոչմամբ ուռն ի ձեռին*
*Իջեալ յերկնից Միածին Որդին,*
*Տեսանելով արթուն անուն*
*Հայաստանեայց սուրբ Լուսաւորչին»:*
(Պաղպասար Դպիր)

Ոսկե ոտնակի քրիստոնեակոչ զարկն ու 1700-ամյա Միածնաէջ այս տաճարի կոչնակն է ամենքիս ի մի բերել այստեղ՝ մեկ անգամ ևս ծնրադրելու Էջման Սուրբ Սեղանի առջև և մեր աղոթքի ձայնն ընդելուզելու աղոթախյուս այս կամարներին: Այսօր Աստծո կանչով միակամ եկել ենք նորեն նորոգելու մեր ուխտը, մեկ անգամ ևս հավաստելու ի Քրիստոս մեր կանդադուն դաշինքը:

Մենք ուխտի ժողովուրդ ենք: Ուխտագնացությունը մեր ազգային նկարագրի անկապտելի մասն է: Մեր պապերն ուխտի են ելել ամբողջական բնակավայրերով, գյուղերով, ընտանիքներով, մեծ ու փոքրով: Հայոց աշխարհի մեր փափկասուն պիկնայք, որ խանապազ բոկոտն քայլում էին աղոթքի տների արահետներով, ուխտի գաղափարով էին դաստիարակում իրենց զավակներին: Եվ մանավանդ հոգնաբաստիկ էին նրանք, ովքեր հետիոտն ուխտի էին գնում Աստվածորդու լույս գերեզմանին:

***«Ուխտն, որ գլուխն է եկեղեցւոյ, ընտիրք և պիտանիք լինիցին. ևս առաել ժողովուրդն»,***- ասել է մեր հավատքի վեհացույն Հայրապետներից Սահակ Պարթևը: Այո՛, միայն ուխտավոր ժողովուրդն իրավամբ կարող է ընտիր և պիտանի լինել և արարել լուսե այսպիսի տաճար, որին 1700 տարի ուղղված են մեր հավատավոր ու վճռակամ հայացքները:

Ագաթանգեղոսը վկայում է, որ այս տաճարը կառուցելու համար Տրդատ արքան յոթնօրյա ճանապարհ գնաց Մասիսն ի վեր և այնտեղից թիկնամբարձ բերեց կարծր, անկոփ, երկայն, հաստ ու մեծամեծ քարեր: Հայոց առաջին քրիստոնյա գահակալը ոսկի խարիսխի վրա գտնվող հրեղեն սյան տեղում կառուցեց տաճարն այս ու կանգնեցրեց փրկչական խաչը ի երկրպագություն արժանավոր հետնորդների: Եկեք, ուրեմն, ասենք միակամ. ***«Ուրա՜խ լեր, Սո՛ւրբ եկեղեցի... »:***

Նաև այստեղ էր, այս վայրից ոչ շատ հեռու՝ Քասախ գետի ափին, Սուրբ Մեսրոպն իր ժողովրդին հանձնեց հավերժության բանալին, և երկու հաստատուն սյուներ՝ քրիստոնեություն և քրիստոնեական գիր, դարձան մեր անշեղ երթի ուղեփորդները:

Այս տաճարի առինքնող զորության մասին է խոսում նաև Առաքել Դավրիժեցին:

Իսպահանում հայերի մեջ ծպտյալ շրջող Շահ-Աբասն իմանում է այն անքակտելի կապի մասին, որով տեղահանվածներն աներևութապես կապված էին հայկյան հողին: Չգողը ոչ միայն նախնիների գերեզմաններն ու վանքերն էին, ուխտատեղիներն ու սրբերի դամբարանները, այլև մանավանդ Ս. Էջմիածնի նշանավոր Աթոռը՝ Գրիգոր Լուսավորչի մյուռոնաբույր Սուրբ աջով: Խորագետ շահը որոշում է Պարսկաստան բերել տալ Գրիգոր Լուսավորչի աջը և այնտեղ կառուցել տալ մի նոր Էջմիածին՝ կաթողիկոսանիստով ու մյուռոնօրհնությամբ: Շահ-Աբասը վստահ էր, որ միայն այդ կերպ հայերը կհաստատվեն Իսպահանում, քանզի «Ի վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգս հայոց կապեալ կայ»:

Սակայն շահի նկրտումներն ի դերև ելան, որովհետև միայն «Արարատեան գաւառէն բղխեցին հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ»: Այո՛, մեր տարագիր ժողովրդի նման հայոց Կաթողիկոսական Աթոռը ևս աստանդական եղավ, սակայն մնաց Տաճարն այս որպես Հայրապետական գահի հաստատունության ու անշարժության վայր: Միաժամանակ այս սրբավայրն անփոխարինելի է հայ ժողովրդի համար, քանի որ միայն այստեղ «Քրիստոս հաստատեց տուն աղօթից ամենայն հաւատացելոց և Աթոռ քահանայապետութեան» (Ագաթանգեղոս):

Հիրավի, հայոց ազգի հոգևոր պատվարն այս տաճարն է, Իջման այս Սուրբ Սեղանը և, ինչպես Արշակ Չոպանյանն է ասում, այն բարոյական Արարատ է՝ նրա նման ալևոր, վեհափառ ու երկնաբարձ: Որպես Արարատ՝ լուսահորդ խորանով տաճարն այս մեր պատմության կենդանի վկան է: Եվ, ինչպես Գարեգին Հովսեփյանն է ասում, որպես գթառատ մայր՝ այն մխիթարության ու սփոփանքի աղբյուրներ է հոսեցրել մեր սրտերի մեջ, եղել հոգևոր դաստիարակության մայր, որից բխել են Ավետարանի լույս ճառագայթները՝ լուսավորելով հայության սրտի խորքերը: Եվ մշտապես հայի հոգևոր և մտավոր շարժման արդյունքները Լույս Խորանի աղբյուրներից են բխել:

Այսօր ևս այս սրբարանից պիտի սկիզբ առնի մեր հոգևոր, կրոնական կյանքի ուժգին հոսանքը, քանզի այստեղ է հաստատված Լուսավորչի՝ Հայաստանյայց վերածնության Հոր սուրբ գավազանը, որ նրա հոտին միշտ ի փրկություն է հովվել: Այս ուխտով մենք պիտի նոր շունչ ու ոգի հաղորդենք մեր հավատքի հոր աստվածաշնորհ զորությանը՝ քրիստոնեությանը: Այս պահին ևս մեր մեջ լսելի է մշտակենդան հրավերը. «Եկայք շինեսցուք սուրբ զԽորանն լուսոյ»:

Ի՞նչ ոգով ենք այսօր մենք եկել ուխտի, հանձնակատա՞ր ենք մեր հավատքի մոմի լույսը միախառնելու Սուրբ Խորանի լույսին, նվիրումով, համատեղ գործունեությամբ կարո՞ղ ենք շենացնել ու բարեզարդել հայության երազների ու կարոտների բնօրրան երկիրը մեր:

Հարկավ, այո՛: Քանի որ մեզ այստեղ բերել է մեր ուխտադիր նախնիներից ժառանգված հայրենասիրության ու եկեղեցասիրության ոգին: Այս պահին ամենքս նորացված հավատքով ավելացրինք սրբերի արցունքներից մակարդված Լուսավորչի կանթեղի յուղը, նորեն մկրտվեցինք Լուսավորչյան լույսով, մեր հոգիներում վառեցինք փրկչական ջահը: Այս

պահին ամեն մեկս ուխտի մեր սպասումն ունենք: Աստված ի կատար անի ուխտն ամենքիս, իրականացնի բոլորիս երազները, համակի բարի մղումներով: Ապրենք նոր ձգտումներով, որպեսզի Աստծո լուսեղ տաճարի մեջ յուղասպառ կանթեղ չդառնանք, ինչպես կասեր Մուշեղ Իշխանը, որպեսզի մեր հոգին չդառնա հին բույն, որտեղ ոչ մի թռչուն գարուն չի բերում: Ուրեմն այս ուխտով թող գարնանանա մեր կյանքը, թող բոցբոցվի մեր հոգու կանթեղն աստվածային սիրով առլեցուն:

Ուխտի մեր օրը մեր երեխաների օրհնության օրն է: Բյո՛ւր օրհնություններ մեր մանուկներին, որոնց երազների իրականացնողներն ենք մենք: Մեր քրտինքով ծաղկյալ հողի վրա թող նրանց քայլքը հաստատուն լինի, որպեսզի դառնան մեր վաղվա ուխտի շարունակողները և Քրիստոսի հավատակիրները:

Ընդունելի լինի ուխտդ, ուխտավոր հայորդի:

*Լուսավորչի կանթեղն անշեջ կլինի,*
*Քանզի վառող Աջն է մեզ միշտ հովանի:*

(Հովհաննես Հովհաննիսյան)

# Տ. ՆԱԹԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(8 հունիսի 2003 թ.)

*«Տուր ինձ ցնծութիւն փրկութեան, եւ հոգւով պետութեան քոյ հաստատեա զիս»:*
*«Տուր ինձ փրկության ցնծությունը և քո հոգու պետության մեջ հաստատիր ինձ»:*
(Սաղմ. Ծ 14)

Այս սաղմոսը, որ դարեր շարունակ իբրև աղոթք արտասանվում է հատկապես քրիստոնյա ժողովրդի կողմից, իր մեջ խտացրել է մարդու մեղքի պատճառով դրախտից վտարվելու օրվանից կարևորագույն աղոթքը, որ Տերը նորից պարգևի մարդուն փրկության ուրախությունը և իր աստվածային հոգու փառության մեջ հաստատի այն երազանքը մարդկության, որ կատարվեց և իր լրումն ստացավ մեր Տեր Հիսուս Քրիստոսով:

Իր Հրաշափառ Հարությունից հետո Հիսուս 40 օրեր դեռևս ապրեց Իր աշակերտների հետ, շարունակեց հետհարության Իր առաքելությունը և խոստացավ նրանց, որ նրանց հետ պետք է լինի մինչև աշխարհի կատարումը, իսկ Հոր մոտ Իր համբառնալուց հետո անպայմանորեն նրանք կստանան մխիթարիչ Սուրբ Հոգին: Անավասիկ և համբարձումից 10 օր հետո Հիսուսի աշակերտները, ինչպես որ պատվեր էին ստացել իրենց վարդապետից՝ մնալու Երուսաղեմում, վերնատանն աղոթքի պահին երկնքից կրակի պես լեզվակներ իջան նրանց վրա: Սուրբ Հոգին էր այդ, որ տարբեր ազգերի լեզուների կերպով իջավ աշակերտների վրա, և նրանք սկսեցին քարոզել հարուցյալ Փրկչին և մարդկության փրկությունը աշխարհիս բոլոր լեզուներով, և Երուսաղեմում գտնվող տարբեր ազգությունների մարդիկ զարմանքով էին նայում, թե ինչ է կատարվում այնտեղ: Հոգեգալուստը, Սուրբ Հոգու էջքը կատարվեց Հիսուսի Հրաշափառ Հարությունից 50 օր հետո, որի համար այն կոչվում է Պենտեկոստե, այսինքն՝ հիսնյակ:

Այդ օրն էր, որ Սուրբ Հոգին եկավ, և այս օրն է, որ Աստված նորից մարդուն վերցրեց իր հոգու պետության ներքո՝ իբրև հաշտություն, իբրև փրկություն: Այս օրն էր, որ հիմնվեց Քրիստոսի տիեզերական եկեղեցին, և ինչպես որ Վարդապետը նրանց պատվիրել էր գնալ և ուսուցանել բոլոր ազգերին և մկրտել նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով, այսպես աշակերտները ստանալով նաև բոլոր ազգերի լեզուները և կարողությունը նրանց լեզվով նրանց խոսելու, ցրվեցին աշխարհով մեկ՝ տարածելու Քրիստոսի վարդապետությունը, և այսպես էր, որ աստվածային նախախնամությամբ Հիսուսի երկու աշակերտները՝ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները, երևի թե ստացել էին Սուրբ Հոգուց հայոց լեզուն, եկան Հայաստան աշխարհ քարոզելու Հարուցյալ Փրկչին, քարոզելու փրկությունը մեր, և Հայաստան աշխարհում առաքելական քարոզությամբ տարածվեցին քրիստոնեության սերմերը,

որոնք Ս. Թադեոսն ու Ս. Բարդուղիմեոսը ոռոգեցին իրենց մարտիրոսական արյամբ և նրանց ցանած հոգևոր սերմերը բազում արդյունք տվեցին. և իրենք էլ դարձան հիմնադիրները Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Երկու հազարամյակ անց Հայաստան աշխարհում հայտնվեց մի նոր Պետրոս. ոչ միայն խոսքով, գործով, այլև իր անպարտում տառապանքներով ու չարչարանքներով իր անխախտելի հավատը խոստովանող մի հավատարիմ վկա: Առաքելազոր մեր մեծ Լուսավորիչը՝ Սուրբ Գրիգորը, իր անսասան հավատի զորությամբ կարողացավ դարձի բերել հայոց արքային, և հայոց Տրդատ արքան խոնարհվելով ճակատագրի առջև՝ Սուրբ Ավազանի մկրտությունն ընդունեց արքայական ընտանիքի և փրկություն փենչող ժողովրդի հետ միասին, և երանելի մի օր, երբ աստվածընտիր Հայրապետը նոր հավատքի կրակը սրտի մեջ վերացած էր աղոթքի թևերով, նրան երևաց Ինքը՝ Միածին Որդին Աստուծո Լուսե շողակաթումներով և հրեղեն կերպարանքով երկնքի բարձունքներից իջնելով Հայաստան աշխարհ՝ ոսկե ոտով հարվածեց Իր առաքյալների արյամբ շաղախված հողի վրա, ուր և ցույց տվեց ու հաստատեց Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու հավատքի վեմն ու այդ վեմի վրա որպես կնիք երկնավոր անապականության, որպես նյութականացած անմահ հիշատակ Լուսավորչի լուսեղեն տեսիլքի, մեր նախնիք կանգնեցրին այս հոյակերտ Շողակաթ Լույս Խորան Սուրբ Էջմիածինը՝ մայրը բոլոր հայ եկեղեցիների: Այդ օրվանից Սուրբ Էջմիածինը դարձավ հայ հավատքի անառիկ բերդը, հավիտենության տանող ճանապարհի անշեջ փարոսը, ազատ ապրելու տենչի անխորտակելի հույսը և հայի ստեղծագործ ու շինարար կամքի դարբնոցը:

Սուրբ Մաշտոցն իր լուսաբաց աչքերով Սուրբ Էջմիածնի օրհնության լույսի ներքո տեսավ հայոց ոսկեղենիկ լեզվի աստվածատուր նշանները և իր Սուրբ Աջով, որպես նոր կտակ իր ժողովրդին, գծագրեց հայատառ առաջին խոսքերը՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Նույն ինքը՝ Սուրբ Մեսրոպ վարդապետը, Սուրբ Սահակ Հայրապետն ու նրանց աշակերտները, թարգմանիչ մեծ սուրբերը, անխոնջ տքնությամբ Սուրբ Էջմիածնի կամարների ներքո թարգմանեցին Սուրբ Գիրքը, այն դարձնելով Աստուծո շունչի հայաբարբառ մարմնառությունը և անմար ջահը վառեցին հայ դպրության ու գրականության, հիմք դրեցին հայ դպրոցի, որը դարձավ վահան ամրության ընդդեմ նենգադավ ձուլման:

Ազգիս ամենաօրհասական պահերից մեկին, երբ հայի լինելիությունն էր որոշվում, նույն ինքը Վաղարշապատի Կաթողիկեն օրհնեց սուրբ Կարմիր Վարդանի «վասն հաւատոյ և վասն հայրենեաց»: Ավարայրի դաշտում Ս. Էջմիածնի աղոթքով, Լուսավորչի խաչվառով ու լուսաճաճանչ խաչով Սուրբ Ղևոնդ Երեցն ու նրա հոգևոր եղբայրները դուրս եկան անազորույն ոսոխի դեմ, և Վարդանանց պատերազմը դարձավ Հայ Եկեղեցու հերոսացումը և հայ ժողովրդի հավաքական սրբացումը: Սուրբ Էջմիածինն իր պատմությամբ խարսխված այս մեծ ժառանգության պատվանդանի վրա 1700 տարվա պատմությունն է հայ ազգի, նրա ստեղծարար կամքի և ստեղծածը պաշտպանելու հերոսության:

Սուրբ Էջմիածին. յուրաքանչյուր հայ երբ լսում է իրեն հարազատ այս անունը, մեկ անգամից հոգու թևերով վերանում է դեպի Հայաստան աշխարհ: Սուրբ Էջմիածին՝ Հայրապետական Մայր Աթոռ՝ նստավայր Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Այստեղ է գտնվում Ամենայն Հայոց Հայրապետաց լուսավորչահաստատ գահը, և այստեղ են գործել, աղոթել և իրենց երկնային վերջին հանգրվանը գտել մեր մի շարք երջանկահիշատակ հայրապետներ:

Ս. Էջմիածին՝ դպրության օրրան, ուր դարեր շարունակ կրթության իրենց ծարավն են հագեցրել մեր ազգի ուսումնատենչ զավակները: Ս. Էջմիածին՝ մշակույթի բազմադարյան մի կենտրոն, մշտարթուն պահապան դարերի ընթացքում հայ հանճարի ստեղծած անկրկնելի ու անգնահատելի արժեքների և ի վերջո Ս. Էջմիածին հարազատ անուն և օրհնաբաշխ մի ուխտավայր, ուր իջել է ինքը՝ Քրիստոս Փրկիչը մեր, սրբացրել ու հոգի փչել բազում պատապանքներ տեսած այս հողին:

Արդ, 17 դարեր շարունակ ամեն հայորդի գալիս է աստվածակառույց այս կամարների տակ իր հայրերի աղոթքը կրկնելու և նրանց տեսիլքը կիսելու, 17 դարեր շարունակ Հայոց հավատացյալն այս Ս. Խորանից է հաղորդվում Փրկչի սուրբ Արյանն ու Մարմնին, բարձրացող խունկի ու մոմի աղերսող լույսի հետ վերառաքում իր աղոթքն առ Աստված: 17 դարեր շարունակ Միածին Որդու իջման այս սուրբ վեղում և Իջման Ս. Խորանին լուսավորչավառ կանթեղը անդադար վառված է մնում: Քրիստոսակոխ այս սրբավայրի առջև ամեն մի հայորդի ծունկի է գալիս՝ նորոգելու իր ուխտը և գոհություն մատուցելու Ամենակալին, քանզի այստեղից է փրկության լույսը ծագել ի Հայաստան աշխարհի:

Վեհափառ Տեր, սիրեցյալ հոգևոր եղբայրներ, սիրելի քույրեր և եղբայրներ ի Քրիստոս և մեր ուխտավոր ժողովուրդ, գոհություն և փառք ենք մատուցում Ամենակալին և մեր շնորհակալությունն ենք բերում Ձերդ Սրբության, որ արժանացրեց իմ անձը՝ համեստ սպասավորիս Հայաստանյայց Եկեղեցվո, Հոգեգալստյան մեծ տոնի այս օրը գալու աղոթք մատուցելու, Ս. Պատարագ մատուցելու և նորոգելու իմ ուխտը՝ իմ հայրերի կյանքին խառնելով, և հատկապես գոհություն եմ հայտնում Աստծուն, որ կարծես թե այնպես տնօրինեց, որ ես իմ ուխտը պիտի այսօր նորոգեի, այն օրը, երբ լրանում է իմ քահանայական ձեռնադրության 15-ամյակը:

Մենք այսօր, Վեհափառ Տեր, Ձեր հոգևոր զավակներս, հեռավոր Բրիտանիայից եկել ենք, որպեսզի մեր ուխտի հետ միասին Ձեզ՝ Ամենայն Հայոց Հայրապետիդ, այսինքն՝ ողջ ազգիս հոգևոր Հորը հայտնենք մեր որդիական սերը, հավաստենք մեր խորը հարգանքը և, անշուշտ, հաստատենք մեր հավատարմությունը Ս. Էջմիածնի Աթոռին և Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետին, և մեր աղոթքն է առ Աստված մեր ուխտավոր քույրերի և եղբայրների հետ միասին, որպեսզի Տերը անսասան պահի Մայր Տաճարը Ս. Էջմիածնի, Մայր Աթոռը Ամենայն Հայոց և որ պայծառ մնա մեր Եկեղեցին, ինչպիսի պայծառություն որ ստացավ այն օրը, երբ Պիտուս իջավ շողակաթումով և հիմնեց այս սրբավայրը:

Մեր աղոթքն է, որ Տերը Ձերդ Սրբությանը պարգևի զորություն և ուժ ու կարողություն, որպեսզի Ձեր օրհնությունից որևէ հայորդի անմասն չմնա, որպեսզի Դուք կարողանաք հասնել Ձեր բոլոր զավակներին աշխարհի բոլոր ծագերում: Մեր աղոթքն է, որ Տերն Իր հովանու ներքո պահի մեր ազգը ողջ, մեր հայրենաբնակ եղբայրներին ու քույրերին և, անշուշտ, մեր Մայր Հայրենիքն ու Հայրենի պետությունը:

Եվ մենք վերստին գոհություն ենք առաքում առ Աստված՝ փառք և պատիվ մատուցելով, և թախանձագին աղաչում. «Տեր Աստված մեր հայրերի, պահապան, Փրկիչ և Առաջնորդ, Քո հովանու ներքո պահիր մեր Եկեղեցին, զահակալին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո, մեր Մայր Հայրենիքը և մեր ժողովուրդը թե՛ ի Հայաստան և թե՛ ի Սփյուռս աշխարհի. ամեն:

# Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(15 հունիսի 2003 թ.)

Սիրելի հավատացյալներ, կապրինք աշխարհի մը մեջ. ուր մարդիկ կհոշոտեն զիրար. աշխարհի մը մեջ, ուր գիտությունն առաջ կընթանա սրընթաց. աշխարհի մը մեջ, երբ մարդիկ խեթով կնային իրարու: Կստեղծվին նոր փեսություններ, նոր նշանարաններ, նոր պայմաններ: Կմեռնին թագավորություններ, կծնին նոր պետություններ, և այս արևին փակ ամեն օր, ամեն ժամ և ամեն վայրկյան բան մը կփոխվի. նույնիսկ մարդ արարածը կփոխվի:

Միակ բանը, որ կմնա հաստատ և անխախտ. մեր քրիստոնեական հավատքն է: Եվ այս հավատքին հնաբույր 1700 տարիներու պատմության ունեցող տաճարին մեջ երբ ուխտի եմ եկած, երբ Աստուծուն ճանչցա ճիշտ այս տաճարին մեջ, կուգամ հանուն ռումանահայերու և բուլգարահայերու ողջունելու ձեզ բոլորդ: Գաղութն մը կուգամ, որ ամենահիներեն մեկն է և ամենաերկարակյացներեն: Իրմե առաջ և իրմե ետքը շատ գաղութներ գոյություն ունեցան, սակայն անոնք դժբախտաբար հեռացան Մայր Եկեղեցիեն և ցամքեցան: Օրինակ՝ Թրանսիլվանիո հայությունը, Լեհաստանի հայությունը: Ռումանիո և Բուլգարիո հայ գաղութները սակայն միշտ փարած մնացին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի փեսիլքին և խորհուրդին ու մնացին հայ քրիստոնյա:

Գաղութները հին ըլլան կամ նոր, գաղութները մեծ ըլլան կամ փոքր, անոնք կապված են երկու նվիրական կապերով, որոնցմե մեկն է մեր Հայրենիքը և մյուսը՝ Ս. Էջմիածինը: Ավելի քան ութ դարեր առաջ հայեր քարավան առ քարավան մեկնեցան դեպի Աստրախան և Ղրիմ և անցան Եվրոպա, և անոնք փոխանակ իրենց հոգնած մարմնին բարձ մը շինելու՝ շինեցին աղոթքի տուներ, որպեսզի ինչ որ բերած էին Մայր Հայրենիքեն՝ Մեսրոպյան լեզուն, մեր հավատքը քրիստոնեական, մեր ավանդությունները նվիրական և սրբությունները, որպեսզի անոնք ապրին և աճին: Այսօր ալ, յոթ դարեր ետքը, Եվրոպայի սրտին մեջ մենք որպես ամրոց ամուր կպահենք մեր եկեղեցիները, բաց կպահենք մեր եկեղեցիները և լեցուն կպահենք մեր եկեղեցիները:

Ես սիրով կողջունեմ նաև ներկայությունը Բուլգար հայրենիքի դեսպանին և Ռումանիո հայրենիքի դեսպանին՝ բոլորին, անունեն շնորհակալություն հայտնելու այն եղբայրական ապաստանի համար, որ տվիք, երբ հայ ժողովուրդն անապատե անապատ կքշվեր, երբ քրիստոնյա աշխարհը, քաղաքակիրթ Եվրոպան իրենց աչքերը փակեցին՝ չտեսնելու համար կոտորվող հայ ժողովրդի մարտիրոսությունը և ողբերգությունը: Այդ նույն քրիստոնյա պետություններն իրենց ականջները փակեցին՝ չլսելու համար մեր մորթվող զավակներու ճիչն ու աղաղակը: Այդ պետությունները չակերտյալ քաջություն ունեցան փակելու իրենց սրտի դռները՝ չզգալու համար Արևելքի քրիստոնյա հին ժողովրդի մը կոտորածը: Եվ ճիշտ այդ պահուն Ռումեն հայրենիքը և ժողովուրդը, Բուլգար հայրենիքը և ժողովուրդը ոչ միայն իրենց սրտի դռները բացեցին, այլև բացին իրենց սահմանի դարպասները, և հայերը եկան

խաղաղ անկյուն մը որոնելու, և երբ գտան այդ խաղաղ անկյունը, իրենց շնորհքը, իրենց քրտինքը, ի պահանջել հարկին նաև իրենց արյունը տվին Ռումեն հայրենիքի և Բուլղար հայրենիքի վերազարթոնքի համար:

Սիրելի հավատացյալներ, ժողովրդական առածը կըսե. եթե կուզես ապրիլ երկու կամ երեք տարիներ՝ ցորեն ցանե, եթե կուզես քսան և երեսուն ավելի տարիներ ապրիլ՝ ծառ տնկե, իսկ եթե կուզես հարյուր և ավելի տարիներ ապրիլ՝ դպրոց շինե, իսկ եթե կուզես հազար յոթ հարյուր և ավելի տարիներ ապրիլ՝ եկեղեցի շինե: Ուրեմն այս 1700-ամյա եկեղեցիին Ս. Խորանեն ողջունելով ձեզ՝ պիտի հիշեցնեմ, թե խարիսխներեն մեկը, որուն կռթնեց հայ ժողովուրդը, դիմացավ բոլոր աղետներուն և փորձություններուն՝ Ս. Էջմիածինն էր:

Առաքյալներ քրիստոնեական կրոնը բերած էին այստեղ, և Քրիստոսի կրոնին սերմերը դիմացան ավելի քան երեք դարեր: Առաջին անգամ այս կրոնը ազատորեն պաշտվեցավ այս եկեղեցու կամարներուն տակ:

Ս. Էջմիածինը հայ ժողովրդի հոգեղեն աշխարհն է: Էջմիածինն է, որ ամփոփեց, հավաքեց և դիմացուց հայ ժողովրդի բոլոր ավանդությունները, քրիստոնեական ոգիով օծեց անոնց և հանձնեց դարերուն:

Կսխալվին բոլոր անոնք, որոնք պարզ առասպել մը կկարծեն Ս. Գրիգոր Լուսավորչին տեսիլքը: Առասպել մը չէ անիկա, այլ գեղեցիկ ավանդություն, որովհետև Աստծո Որդին ցանկացավ այնտեղ իջնել, ուր հայ ժողովուրդը ամփոփած է իր բոլոր ավանդությունները, և այդ ավանդություններուն վրա է, որ Հիսուս ուզեց կառուցել այս հողին վրա հայրենի իր անդրանիկ աղոթքի տաճարը:

Կսխալին նաև անոնք, որոնք կկարծեն, թե հայ ժողովուրդը կպաշտե Ս. Էջմիածնի քարերը: Այդ շփոթությունն ունեցավ ինքը՝ Շահ Աբաս: Մայր Տաճարեն քարեր տարավ Սպահան՝ զարգացնելու, շենցնելու և ճոխացնելու համար իր երկիրը, սակայն, ինչպես կըսե Ավետիք Իսահակյան, «Էջմիածինը կառուցված է ոչ թե հաստաբեստ սյուներու վրա, այլ հայ ժողովրդի հոգիին և սրտին մեջ, և դրա համար խորտակելի չէ և անսասանելի է»: Ուրիշ բանաստեղծ մը՝ Վահան Թեքեյան, ըսել է, թե «Եկեղեցին հայկական անառիկ բերդն է հայ հոգիին»: Եվ Էջմիածնի բանաստեղծ մըն ալ՝ Հովհաննես Հովհաննիսյան կավելցնե.

Դարեր եկան, դարեր անցան, Էջմիածին,
Քո հիմն անշարժ ու անսասան Էջմիածին:

Հիսուներեք տարիներ առաջ, երբ ուսանող էի Հոգևոր Ճեմարանում, Ս. Էջմիածնի տոնին Հայաստանի զանազան գյուղերեն կուգային ուխտավոր հավատացյալներ, ամբողջ գիշերը կերգեին, կպարեին, որոնցմե կհիշեմ միևնույն նախադասություն մը Էջմիածնին նվիրված՝ աշուղներու բերանով. «Էջմիածին ուչարդուշա, ուխտավորդ կուգա դոշա-դոշա»: Էջմիածինը թռչող, սավառնող թռչուն մըն է, և ուխտավորը կուգա վազելով:

Այո՛, Էջմիածինը եղած է մեր մայրը, իր թևերուն տակ առած է իր վիրավոր զավակներուն, իր վերջին շուրջառն է պատռած, իր վերջին վեղարն է պատռած՝ սպեղանի և բալասան դառնալու համար իր վիրավոր ծագերուն: Էջմիածինը մեր փառքն է, մեր խիղճն է,

մենք այդ բոլորը սպա-
ռրովենյուն ինչ որ ունինք քաղաքակիրթ աշխարհին ներկայանալու,
ցանք Ս. Էջմիածնի միջոցով:
Էջմիածինը կա
Տկարացնել Ս. Էջմիածինը՝ կնաշանակե սառեցնել հայ ժողովրդի ոգին:
և կմնա և սլիւրի մնա մեր հավատքի ամենանվիրական սրբությունքերեն, նվիրակայրւթան
մեկը: Փարած մնանք Ս. Էջմիածնի խորհուրդին, և հոգնորական կամ աշխարհական մեր
բոլորի պարտականությունը պիտի ըլլա, գերագույն պարտականությունը, բաց պահել հայ
եկեղեցիները, լեցուն պահել հայ եկեղեցիները, պայծառ պահել հայ եկեղեցիները, որովհե-
տև օտարության մեջ այնքան խայծեր կան մեր հոգին շվարեցնող, մեր հոգին թունավորող.
Հայ եկեղեցին է միակ այն վայրը, ուր մեր հոգիները կթարմանան: Վա՜յ այն մարդուն, որ
երածնվի և կմոռանա եկեղեցիի ճամփան: Օտարները կարիք չունին եկեղեցվո շաղախին
իրենց դիմագիծը պահելու համար, բայց վայ հայ քրիստոնյային, որ կհեռանա և կմոռանա
եկեղեցիին ճամփան:
Սիրելի հավատացյալներ, անսասան մնա այս հավատքի փունը իր Հայրապետով, և ես
եկած եմ այսօր ո՛չ միայն պատարագելու, ո՛չ միայն ողջունելու ձեզ, այլև հաշի՛վ տալու Ամե-
նայն Հայոց Հայրապետին, հաշի՛վ տալու Ս. Էջմիածնին և ուղիղ նայելու սրբազան մեր լե-
ռան՝ Արարատին: Երեկ հայ քրիստոնյա էիր դու, այսօր հայ քրիստոնյա կշարունակի՞ս
ապրիլ, և շարունակե՛ք հայ քրիստոնյա ապրիլ, եկող բոլոր սերունդներ: Եվ թող մեր Հայ-
րապետներու հավատքեն կաթիլ մը, կայծ մը անոնց հայրենասիրութենեն իջնե մեր հոգի-
ներուն մեջ, մաքրե և լվա, բյուրեղացնե և գեղեցկացնե մեզի, ավելի հայացնե, ավելի քրիս-
տոնեացնե՝ չօտարանալու և չքարանալու համար, ուստի չձուլվելու համար փարած մնանք
մեր Մայր և Սուրբ Եկեղեցիին փեսիլքին և խորանին:
Փառք Ս. Էջմիածնին, անսասան թող մնա այս հավատքի փունը, և Աստված երկար ընե
Վեհափառ Հայրապետին կյանքին օրերը, որպեսզի բազմած Լուսավորչին գահին՝ դեռ շա-
րունակե Հայ Եկեղեցին վարել Արարատի անմիջական շուքին ներքև այժմ և հավիտյանս
հավիտենից. ամեն:

# Տ. ՎԱՐԴԱՆ ԱԲԵՂԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ «ԵԼՆ Ի ՎԻՐԱՊԷՆ» ՏՈՆԻՆ

(21 հունիսի 2003 թ.)

*«Հովիւ քաջ բանաւոր հօտի Տէր Ս. Գրիգոր, հաստատեցեր զհիմունս Եկեղեցւոյ ի Հայաստան երկրի ի վերայ հիման սուրբ առաքելոց... հաստատեա զանձինս մեր հաւատով ճշմարտութեան ի վերայ հիման Ս. Եկեղեցւոյ»:*

(Շարական)

*«Բանավոր հոտի քաջ հովիվ Տեր Ս. Գրիգոր, որ Հայաստան աշխարհում Եկեղեցու հիմքերը հաստատեցիր առաքելական ավանդության վրա, այսօր մեր անձերը հաստատիր ճշմարտության հավատով Ս. Եկեղեցու հիմքերի վրա»:*

«Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելիք, սիրելիներ, սրբազան շարականագիրը այսպես է բնորոշում մեր հավատո խորը, ում ծնվել են բազմաթիվ սրբերծագործություններ և բարեխոսական աղոթքներ, ում անվանել են արդարության և սրբության անոթ, ուր խտացված է ճգնության առաքինությունը, խոստովանող, բազմաչարչար և բազմերախտ հովվապետ, երկնային զորքի հետ բնակվող, մարտիրոսների պարծանք, առաքյալների լրում, մարմնավոր հրեշտակ երկրի վրա և այլն:

Սուրբ Գրքի առաջին իսկ էջերից տեսնում ենք Տիրոջ բարի հայեցողությունը հանդեպ այս հողի, ուր ստեղծվեց առաջին մարդը, ուր իջավ փրկության տապանը Նոյի, որտեղից գոհաբանական առաջին աղոթքը բարձրացվեց, և դարձյալ այս ազգն էր, որ Քրիստոս չտեսավ, բայց հավատաց և Տիրոջն ընդունելու ցանկություն հայտնեց՝ Աբգար թագավորի անձով, արժանացավ Տիրոջ առաքյալներից Ս. Թադեոսի ն Ս. Բարդուղիմեոսի օրհնությանը, ովքեր էլ առաջինը սերմանեցին բանական Լույսի ճշմարիտ գիտությունը, և ի վերջո մեր ազգն էր, որ արժանացավ հոգևոր մի առաջնորդի, ով հանուն իր ժողովրդի նախ 13 տարիներ Վիրապի խորը գուբի մեջ մաքրագործվեց և հետո կարողացավ Աստծո հայացքը վերստին դարձնել մեր ազգի վրա:

Այս շաբաթը, սիրելիներ, մեզ համար ուսանելի խորհուրդներով լի շաբաթ է, քանզի մեզ հայտնվում է սուրբ և անմեղ կույսերի մարտիրոսությունը՝ հանուն Երկնավոր Փեսայի, որոնց արյան հետ միախառնվեցին Լուսավորիչ մեր Ս. Հոր աղոթքի արցունքները, շնորհիվ որոնց և Աստծո Միածին Որդին իջավ այստեղ և Կենդանի Աստծո օրհնությունն ստացան Կաթողիկե կառուցելու, մի Եկեղեցի, որ 1700 տարիներ շարունակ ի մի է հավաքել հա-

յոց մեր բազմաչարչար ժողովրդին և ապագայի բարի լավատեսությամբ առաջնորդել գեպի Արքայության Միրտ խավիկրենությունն:

Ուզում եմ այսօր ձեր ուշադրությունը հրավիրել մի շատ կարևոր հանգամանքի վրա՝ մեր նահատակ և խոստովանող սուրբերի քաջության և հավատքի հանդեպ անսասանության վրա: Նայեք, թե՛ Հռիփսիմյանք և թե՛ Ս. Գրիգոր Լուսավորիչը երբեք ու երբեք չուրացան և իրենց հավատքից նշանախեց իսկ չզիջեցին, անգամ ամենակարող Տրդատ արքայի առջև: Չարչարվեցին, ենթարկվեցին աննկարագրելի և անմտածելի կտտանքների, անգամ թունավոր օձերի և կարիճների խայթոցները կրեցին, սակայն երբեք Քրիստոսին չուրացան, երբեք չշեղվեցին Քրիստոսահիմն և առաքելավանդ հավատքից, և սրա արդյունքն էր Տիրոջ ողորմությունն ու հայրենությունն այս ազգին:

Այսօ՛ր, եկեք այսօ՛ր տեսնենք՝ ո՛ւր էինք և ո՛ւր հասանք, ի՛նչ ունենք և ի՛նչ ենք կորցնում, ո՞րն է պատճառը, որտե՞ղ փնտրենք, յուրաքանչյուրս մեր մեջ, մեր անձերում: Մենք ենք պատճառը մերօրյա ամեն մի պատուհասի, որ պատահում է մեր ազգին:

Եկեք՝ միասին նայենք, թե ո՞ր ժողովուրդը, ո՞ր երկիրը և ո՞ր ազգն է, որ արժանացել է Տիրոջ Միածին Որդու այցելությանը, ո՞ր ազգի հովիվն է, որ նախ տարիներ շարունակ ճգնել և սրբագործվել է, հետո ճշմարտության լույսը սփռել և առաջնորդել «ժողովրդեանն ի վայրի դալարւոջ եւ առ ջուրս հանգստեան», և մանավանդ այդ ո՞ր ժողովուրդն է, որ Միածնակերտ և Քրիստոսահաստատ Հայրապետական Աթոռ ունի և Աստվածահիմն Մայր Տաճար, որ գուրգուրող և սիրող Մայրն է ամենայն Եկեղեցյացս մերոց, մի քարեղեն շինվածք, որի հոգեղինացման 1700-ամյակն ենք տոնում, մի Կաթողիկե, որ դարերի ընթացքում միշտ իր անսասանությամբ և եպարտ հայացքով, իր միշտագեղ զորության հորդումով շարունակ պահել, պահպանել ու պայծառ ցալիքի հույսն է ներշնչել հայ մարդուն:

Այսօր, երբ ի մի խմբված, կանգնած ենք Իջման այս Ս. Սեղանի առջև, եկեք՝ ուխտենք, որ այս հնաբույր Խորանի 1700-ամյա հոբելյանի նախաշեմին կանգնած, մեր Ս. Հոր չարչարանքը, աղոթքի յուրաքանչյուր կաթիլ արցունքը միջնորդ և բարեխոս ունենալով, մեր մեջ կվերակենդանացնենք այն ճշմարտության կյանքը, որ իր հետ Խոր Վիրապից վեր հանեց Ս. Գրիգոր և սփռեց Հայոց աշխարհում՝ մաքրելով ու սրբելով ամեն կեղծիքից ու խաբեությունից: Ուխտե՛նք, որ հավատարիմ կմնանք մեր Արարչին և Տիրոջը և կհրաժարվենք կռապաշտությունից ու նյութապաշտությունից, հավատարիմ կմնանք մեր ազգին, մեր հողին, մեր ավանդությանը՝ հեռու վանելով օտարամոլության ախտը և անտարբերության մոլությունը, որպեսզի մեր հոր արժանավոր զավակները լինենք:

Թող Ամենակարողն Աստված միշտ պայծառ ու օրհնաբեր պահի Հայոց 1700-ամյա Հայրապետությունն իր Սրբություն Սրբոց Միածնաէջ այս Տաճարով, բարգավաճ դարձնի մեր հայրենին, պտղաբեր՝ մեր հողը, և առավել զորացած ու անսասան իր հավատքի մեջ՝ մեր պառապյալ ժողովրդին:

Տիրոջ շնորհքի ու իմաստության մեջ ապրենք այժմ և հավիտյանս, ամեն:

# Տ. ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏԱՆՅԱՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՕԾՄԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՕՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(24 հունիսի 2003 թ.)

*«Ուր եսն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի»:*
(Հովհ. ԺԲ 26)

Այսօրվա ավետարանական ընթերցվածքը կարծես թե ուղիղ կերպով համադրվում է իմ կյանքի ուղու հետ, որ իր հանգուցալուծումն է գտնում այս Իջման Ս. Խորանին: Մեր Տերն ասում է. «ուր որ ես եմ, այնտեղ թող լինի նաև իմ պաշտոնյան»: Երբ մի հետադարձ հայացք եմ նետում, թե ինչ ճանապարհով անցանք և ինչպես անցանք, ուզում եմ հավատալ, որ այս խոսքը նաև մեզ համար էր ասված, և փորձեցինք՝ ուր որ Նա է, ուր որ մեր Տերն է, մենք էլ փորձեցինք այնտեղ լինել, որովհետև ընդհանրապես առաջինն ինքն է, որ մեր կողքին լինում է, մեր մեջ լինում է, բայց շատ հաճախ բացակայությունը մերն է, որ չենք կարողանում Տիրոջն ընդունել մեր կողքին, Իր ներկայությունը զգալ: Մեր անցած ամբողջ ճանապարհի ընթացքում՝ հանգրվան առ հանգրվան՝ Հոգևոր ճեմարանում և ուսումնառության ավարտից հետո և տարբեր զանազան հանգամանքներում ցանկացանք լսել այդ խոսքը և փորձեցինք լինել այդ խոսքին համաձայն, թե՝ «ով իմ պաշտոնյա, դու ևս իմ կողքին եղիր»: Գևորգյան ճեմարանի հարկից ներս որպես ուսանող, խարխափող ուսանող, երիտասարդ մեկը, որ կյանքի լավն ու վատը դեռ չգիտի, առաջին իսկ պահից ունկնդիր եղանք այդ վերին պատգամին, թե՝ «ուր որ ես եմ, այնտեղ իմ պաշտոնյան է լինելու», և այդ պաշտոնյան պարզ կյանքի, գործի, գործարանի պաշտոնյա չէ, այլ այդ պաշտոնյան կյանքի համար հոգիներ որսացող պաշտոնյա է և հետևաբար՝ «եթե կուզես՝ վերցրու քո խաչը և եկ իմ ետևից» (հմմտ. Մտթ. ԺԹ 21):

Հնազանդվեցինք այդ ձայնին, ունկնդիր եղանք այդ ձայնին, անկումներով, վերելքներով շարունակեցինք մեր կյանքը և ապա նոր հանգրվանների առջև, զանազան պատասխանատվությունների առջև, մարդկանց հետ հարաբերության մեջ միշտ փորձեցինք լսել այդ խոսքը՝ «Ես այստեղ եմ, և դու ևս այստեղ եղիր»: Այս խոսքի քաղցրության զգացումը կիմանան նրանք, ովքեր գնացել են այդ ճանապարհով, ովքեր պաշտոնյա լինելու, ծառայող լինելու զգացումով են գնացել Տիրոջ ետևից: Բազում առիթներով ասել ենք ու ասելու ենք՝ մեր Եկեղեցին գործարան չէ՝ ոգի արտադրող, ոգի որսացող հաստատություն է, մարդկանց վերջնական կյանքի ճանապարհը ցույց տվող հաստատություն է, բոլոր ինչուների պատասխանող հաստատություն է, և հարցական չկա մեր Եկեղեցու կյանքից ներս: Մենք կոչվեցինք առաջացող հարցականների լուծումները տվող միջոցներից մեկը լինելու, կոչվեցինք բարձրագույն ծառայության՝ եպիսկոպոսության աստիճանի՝ հիմք ունենալով այն անցած ամբողջ ճանապարհը, որի մեջ ամեն անգամ, ամեն պատասխանատվության մեջ լսել ենք

այդ ձայնը և այսօր հաստատում ենք. որ ցանկացանք լինել. ով Տեր. այնտեղ. որտեղ Դու ես:

Մեր հարաբերության մեջ ճնշում չկա, այլ ազատություն կա. մեր հարաբերության մեջ երկխոսություն կա և, ով Տեր, երբեք չենք փորձի Քեզ վանող լինել: Այս սուրբ վայրկյանին, ինչպես ասացինք, կյանքի հանգուցալուծման այնպիսի պահի ենք հանդիպել միմյանց, որտեղ Աստված և մարդ գալիս, իրար հետ են ձուլվում, խնկապես պաշտոն կարգող և պաշտոնյա՝ իմ սիրտը լցված է միայն փառաբանությամբ և երախտագիտությամբ և որքան էլ որ խոսքեր ասեմ, որքան էլ որ վերլուծումներ փորձեմ անել՝ տկար և կիսատ կմնան, որովհետև այս վայրկյանը խոհափիլիսոփայական կամ աստվածաբանական խորքերի մեջ մտնելու վայրկյան չէ, այլ փառաբանության վայրկյան և շնորհակալության:

Եվ, հետևաբար, առաջին իմ փառքը և գոհությունը Աստծունն է, որ ամեն անգամ մեզ բարձրացնում է այնպիսի աստիճանների, որոնց առջև մենք տարակուսած ենք և ապշած: Առաքելական մեր պաշտոնը, որ տրվել է այսօր ինձ, իմ տկար անձին, հրեշտակների բարձրագույն պաշտոն է, որ տրվել է ինձ, և դրանք փորձելու ենք կրել արժանավորապես և կրել այնպես, որպեսզի ո՛չ Աստծո անունը նզովվի մարդկանց կողմից և ո՛չ էլ այն պաշտոնակից եղբայրների անունը, որոնք խորը ծառայության մեջ են Աստծո փառքի և իր խոսքի ծավալմանը:

Երկրորդ խոսքը շնորհակալության իմ ընտանիքինն է, որ այս ծառայության ամբողջ ընթացքում, որևէ վայրկյան խաթարող չեղան, չմասնակցեցին իմ կյանքին իրենց անձնական ցանկություններով և ձգտումներով և մեկ կողմ քաշված աղոթքով հետևեցին:

Երրորդ շնորհակալության խոսքս ուղղում եմ բոլոր նրանց, որոնց հետ ճանապարհ ենք անցել, որոնց հետ աղոթակից ենք եղել, հաց ու աղ ենք կիսել և այդ ճանապարհին հատկապես ուզում եմ շեշտել ինձ համար շատ հարազատ հաստատություն՝ Գևորգյան Հոգևոր ճեմարանը իր բոլոր տեսչական կազմերով, որոնք ավանդ ունեն մեր կյանքի մեջ, բոլոր պաշտոնյաները: Եվ հատկապես ուզում եմ շեշտել ու կրկնել՝ կյանքիս լավագույն հանգրվաններից մեկը՝ Սևանի Վազգենյան Դպրանոցը, որտեղ փորձեցի ես ինքս ինձ տեսնել, որտեղ փորձեցի տեսնել մեր Եկեղեցու ապագան և որտեղ ցանկացա տեսնել հանձնառու կամքով լեցուն մարդիկ, երիտասարդներ, որոնք այսօր ոչ թե իրենց երիտասարդական ավյունին ու ցանկություններին են ուզում հագուրդ տալ, այլ ցանկանում են իրենց երիտասարդական մտքի միջից ծառայել այս Ժողովրդին և Աստծուն, տեսնել իրենց կյանքի ճանապարհը, գաղափարական ճանապարհը ծառայության միջոցով և իրենց կյանքը դնել այս Ժողովրդի զոհասեղանին: Դա իմ ինքս ինձ տեսնելն էր:

Ես ցանկացա, որ նրանք էլ այդպիսին լինեն, որքանով է հաջողվել կամ չի հաջողվել դա, Աստված գիտե և իրենք: Բայց այդ տունը, Վազգենյան տունն ինձ համար հարազատ և կյանքիս ամբողջ ընթացքում կրեղ մի հաստատություն է լինելու: Եվ այսօր նրանք է, որ այս Ուխտի Պատարագին Աստված իրենց շրթունքների վրա առած ողջունում են մեզ, աղոթք են բարձրացնում մեր հետագայի համար, և վստահ եմ, որ շատ կարճ ժամանակահատվածում նրանցից շատերի հետ լինելու ենք պաշտոնակից, և նրանցից շատերը ես լսելու են այս ձայնը. «Ուր եսն եմ, անդ եւ պաշտօնեան իմ եղիցի»:

Իմ գոհությունը և շնորհակալությունը բոլոր իմ միաբան եղբայրներին, ավագ սերնդի, միջին սերնդի, իմ փարեկիցների, և ընդհանրապես բոլոր միաբաններին և հատկապես կուզեմ շեշտել այս տաճարի լուսարարապետության շարքը սպանձնած անձանց՝ մեր հոգևոր հայրը եղած Հուսիկ Սրբազանին և նաև այսօրվա իմ հոգևոր եղբայրը՝ Արտակ Հայր Սուրբը, որ այսքան պայծառ, այսքան շեն է պահում այս Մայր Տաճարը, որտեղից մենք, այս Լույսի տաճարից հոգևոր լույս ենք ստանում և սփռում ենք մեր ժողովրդին:

Եվ հաջորդը աղոթքի խոսքեր են, գոհության խոսքեր են, հիշատակի խոսքեր են երկու պատվական շիրիմներին, որոնք երբեք ու երբեք քարի կողմից զրկված չեն եղել, անշնչացած չեն եղել. դա մեր առջև Հոգևոր Ճեմարանի դռները բացող Վազգեն Առաջին երջանկահիշատակ Կաթողիկոսն է և երկրորդը՝ իմ հոգևոր ծնողը՝ Գարեգին Առաջին Կաթողիկոսը, ով արժանի պեսավ մեզ որպես երիտասարդ բարձրացնելու այս Սուրբ Սեղանի սպասավորության: Նրանք իրենց կյանքը տվեցին, այրվեցին, բայց չսպառվեցին և թողեցին մեզ այդ գործը շարունակելու, և Աստված թող օրհնի մեր ճանապարհը նաև իրենց հիշատակի համար:

Հաջորդը մեր ժողովուրդն է, բոլոր նրանք, ովքեր աղոթակից եղան, խրախուսող եղան, ուղեկցեցին մեզ, դժվար օրերին մասնակից եղան, ուրախությունները կիսեցին և մեկ գործի համար՝ այս Եկեղեցու շինության համար, այս Եկեղեցու պայծառության համար, իրենց իսկ անձերի պայծառության համար, և դրա համար անսահման շնորհակալություն բոլոր նրանց, ուր որ էլ գտնվեն:

Իմ շնորհակալությունը հատկապես Կանադահայոց թեմի աշխարհական և հոգևոր անձանց, որ վստահություն ունեցան իմ անձի հանդեպ, վստահեցին ինձ և ցանկացան, որ ես իմ սկսար անձով լինեմ իրենց առաջնորդը: Սա վստահության հարց է, ո՛չ ձայնի, ո՛չ ցանկության, ո՛չ նախասիրության: Եվ դա ամեն մի հոգևորականի համար արժեք է, երբ իր հոտը, իր ժողովուրդը մինչև հեռավոր վայրերը վստահում է իրեն: Եթե մենք չվստահենք, վստահություն չունենանք կյանքում, կյանքը մեծ իմաստով թերի կլինի, և կանադահայության կյանքում ծառայելու համար, ուզում եմ այս Սուրբ Սեղանի առջև հատկապես իրենց շնորհակալության և երախտիքի խոսք ասել և ինչպես բազում առիթներով ասել ենք, մեր կյանքը թող զոջումի կյանք չլինի:

Վերջում ամփոփելով այս բոլոր շնորհակալությունները և երախտիքի խոսքերը երախտագիտության ամենախորը, խոնարհ երախտիքի խոսքս եմ ուզում ասել ազգիս Վեհափառ Հայրապետին, Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ով մի անգամ ևս ինձ լսելի դարձրեց ես մի հանգամանքում, մի այլ աստիճանի վրա, որ «ով պաշտոնյա, ուր մեր Տերն է, դու ևս այնտեղ պիտի լինես», եպիսկոպոսական արդեն այսպիսի բարձր աստիճանի ծառայության մեջ:

Այսօր, այս Ս. Խորանի վրա, իմ և իմ ամբողջ թեմի հավատարմությունն եմ ցանկանում հայտնել Ամենայն Հայոց Հայրապետին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ խոր գիտակցությամբ, որ կյանքը խավարի կյանք պիտի լինի մեզ համար, եթե չլինի Մայր Աթոռը, եթե չլինի Ամենայն Հայոց Կաթողիկոսությունն իր գահակալով: Մենք այս տան հարազատ զավակներն ենք, մենք հյուրեր չենք այստեղ, կենվորներ չենք այստեղ, գործավորներ չենք այստեղ, այլ հոգու ու մտքի զավակներն ենք այս մեծ տան, այս մեծ հոգեշենքի: Հետևա-

բար, այս Սուրբ Սեղանի վրա, Հիսուսի իջման վայրի վրա կանգնած դարձյալ իմ երախտագիտությունը և հավատարմությունն եմ հայտնում, որ Ամենայն Հայոց Հայրապետին այսպես տնօրինեց մեզ համար: Թող Աստված իրեն երկար կյանք, արևշատություն տա՝ գործելու համառությամբ, կամքով և աղոթքով, որպեսզի կյանքը մեր երկրում և ընդհանրապես մեր Եկեղեցու կյանքը իրական օջախ դառնա, և մարդիկ ոչ թե խոցված հեռանան, այլ զգաստությամբ հետ վերադառնան դեպի իրենց հոգևոր հայրենիքը:

Ամփոփելով՝ վերստին ցանկանում եմ վստահեցնել և համոզված լինելով ասել, որ քաղաքիս համար բնաբան ընտրած ավետարանական խոսքը, որը հնչում է ամեն մի պաշտոնյայի համար, այսօր առավել ուժգնությամբ գալիս է դեպի ինձ, և մեր ձգտումն է՝ հարազատ մնալ այս գործին, երբեք չարատավորել Աստծո անունը և ոչ էլ այն տան անունը, որտեղից մենք բոլորս դուրս ենք եկել:

*«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. ամէն»:*

# Տ. ՊԱՐԳԵՎ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(29 հունիսի 2003 թ.)

*«զՈւխտն հարցն մերոց հաստատ եւ անսասան*
*պահեա եւ պարածեա զայն ի վերայ մեր,*
*եւ ի վերայ սերնդոց մերոց»:*
(Ժամագիրք)

«Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Որքան մեծ է պատիվը և որքան մեծ է ուրախությունը հայ մարդու, որը կարող է գալ այստեղ Մայր Աթոռ և այստեղից իր աղոթքը բարձրացնել առ Աստված: Որքան մեծ է մեր բերկրանքը, Ձերդ Սրբություն, որ այսօր Արցախից մենք ուխտավորաբար եկել ենք այստեղ և մեր Ուխտի Պատարագն ենք մատուցում այս Ս. Խորանի վրա: Մեր խորին երախտագիտությունը Ձեզ, Ձերդ Սրբություն, որ բոլոր թեմերին, նաև մեր թեմին այս ցնծալից և նվիրական առիթը ընծայվեց:

Ով Ամենակալ Տեր, «Զուխտն հարցն մերոց հաստատ եւ անսասան պահեա եւ պարածեա զայն ի վերա մեր, եւ ի վերա սերնդոց մերոց»: Հրեա ժողովուրդն անդադար դիմում էր Աստծուն՝ ասելով. «Դու, Տեր Աստված, ուխտ արիր՝ Աբրահամի, Հակոբի, Իսահակի հետ: Մենք նրա սերունդն ենք, շարունակիր այդ ուխտը պահել նաև մեզ հետ»:

Այսօր մեզ՝ հայերիս համար, առավելապես արցախահայերիս համար, խիստ կարևոր և արդիական են այս խոսքերը: Առաջին դարում հայոց Աբգար թագավորն ընդունեց քրիստոնեությունը, մինչդեռ իր որդին հակառակն արեց: 301 թ. Մեծն Տրդատը քրիստոնեությունը հայոց աշխարհում պետական կրոն հռչակեց: Մի զիլուն, իմաստուն թագավոր, պետական այր, խիզախ հրամանատար, լավ դիվանագետ, և այդ պահին իր կողքին ունենալով զորեղ հռոմեական կայսրություն, պարսկական կայսրություն, որոնցում քրիստոնեությունը հալածվում էր, և հանկարծ այս պետական այրը, կարծես թե ի հակառակ այս երկու պետությունների, հռչակում է քրիստոնեությունը Հայաստանում որպես միակ և պաշտոնական հավատ: Ինչ է, քաղաքական պրագմատիզմ չունե՞ր մեր Տրդատ թագավորը, ինչո՞ւ էր նման քայլի գնում հայոց արքան: Եթե աշխարհիկ ձևով պրամաբանենք՝ այո՛, իսկ եթե հոգևոր տեսանկյունից նայենք՝ ոչ:

Տրդատ թագավորը գնաց այս քայլին, որովհետև ապաշխարեց, հավատքի եկավ: Լուսավորչի աղոթքների շնորհիվ հրաշքներ տեղի ունեցան, և Տրդատ թագավորը ճաշակեց թագավորների թագավորի գերագույն զորությունը, ամենազորեղ ուժը և համարձակորեն հռչակեց ու հայտարարեց, որ այս է ճշմարիտ հավատքը: Եվ իր հոգու այս խիզախ քայլը դարձավ ուխտը հայ ազգի, հայ պետականության, Հայ Եկեղեցու և Աստծո միջև: Եվ մենք, որպես Լուսավորչի և Տրդատի զավակներ, այսօր այս Սուրբ Խորանից մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված, որ Տերն այդ նույն ուխտը հաստատ պահի մեր օրերում, անսասան պահի նաև եկող սերունդների վրա, որպեսզի մինչև աշխարհի ավարտը ողջ հայ ազգն

իր բոլոր սերունդներով մնա հաստատուն իր հավատքի վրա, իր հայրերի ուխտի վրա, որ մեր հայրերը՝ պետական և հոգևոր այրերը կնքել են Աստծո հետ:
մեր հայրերը՝ պետական և հոգևոր այրերը կնքել են Աստծո հետ:

1930-ական թվականներից մինչև 1989 թ. Արցախ աշխարհը հալածվում էր կրոնական տեսանկյունից. այսօր բարեբախտաբար ունենք այնտեղ հավատք, ունենք թեմ, ունենք անկախ հանրապետություն, մեր հարազատ հայեցի իշխանություն, որտեղ մենք կարող ենք վերանորոգել մեր ուխտը, բայց մենք այսօր եկել ենք այստեղ մեր ծննդավայրը, մեր հոգևոր տունը, որովհետև ամեն մի հայ ծնվում է այս մկրտության ավազանից: Սա է մեր հոգևոր արգանդն ամեն մի հայի համար: Սա ամենայն հայոց տունն է, զահանիստ տունն է, և մենք բոլորս եկել ենք այստեղ այսօր վկայակոչելու ի դեմս ձեզ բոլորիդ, Աստծո առջև, Հայրապետի առջև, եկել ենք ասելու, որ մենք հայ ենք, հայ քրիստոնյա ենք և այդպիսին էլ կմնանք Արցախ աշխարհում: Նաև եկել ենք ծնրադրելու այստեղ և ասելու, որ մենք հավատարիմ հոտն ենք Հայ Առաքելական Եկեղեցու, հոգևոր զավակներն ենք Հայրապետի ու մեր ուխտը եկել ենք այստեղ ավելի նորոգելու, ավելի զորացնելու, որպեսզի մեր հավատքը փայլելով փայլի և լուսավորի մեր փրկության, մեր խաղաղության ճանապարհը դարերով:

Մենք եկել ենք այս հոբելյանական տարին շնորհավորելու Ամենայն Հայոց Հայրապետի, քանզի մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոբելյանն է: Վեհափառ Տեր, արցախահայոց հոտից ընդունեք մեր ջերմագին շնորհավորանքները, ընդունեք մեր աղոթքները Ձերդ Սրբության արևշատության, քաջառողջության և բազմամյա հոգևոր գործեղ ծառայության համար՝ ի փառս Աստծո և ի վայելումն ազգիս հայոց: Թող Աստված միշտ շեն և անսասան պահի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, քանզի դրանով ենք ուրախ, դրանով ենք հպարտ և դրանով էլ պիտի փրկվենք:

Այս հոգևոր օրրանից, որտեղից ծնվել ենք, սրանով էլ պիտի գնանք դեպի հավերժություն, որովհետև դեպի երկինք տանող այս ճանապարհը հարթեցին առաքյալները, Գրիգոր Լուսավորիչը և մեր հայոց թագավոր Տրդատը, որ ինքը սրա հիմքի մեջ դրեց յոթ քար, որ բերեց Արարատ լեռից և իր ազնիվ տիկին մեր հայոց թագուհին իր փեշերով քարերը բերեց և թափեց այս եկեղեցու հիմքում: Թող Տերը միշտ անսասան պահի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, նրա գահակալին, մեր միաբանությունը և խաղաղություն պարգևի մեր հայոց աշխարհին, և մենք էլ այստեղից վերադառնանք Արցախ աշխարհ ոգևորված՝ ստանալով Մայր Աթոռի օրհնությունը, նրա զորությունը և Վեհափառ Հայրապետի ամենաբարի մաղթանքները և հայրական իր օրհնությունը: Եվ իհարկե, ինչպես նշեց մեր սիրելի Հայր Արշակը, պահն է, որ մենք այսօր մի պահ հիշենք, թե սա բոլոր Հայրապետների հոբելյանն է և տոնը:

Մենք մեր սրտերում նաև այսօր աղոթք բարձրացնենք առ Աստված հանուն Գարեգին Ա Հայրապետի հոգու լուսավորության, մեր լուսահոգի Գարեգին Ա Կաթողիկոսի, որ ճիշտ 4 տարի առաջ հանգավ ի Քրիստոս, և իր հետ մեկտեղ թող Աստված մեր բոլոր Հայրապետների հոգին լուսավորի, որոնք այնքան աղոթք, առողջություն և ջանք չեն խնայել մեր Եկեղեցու պայծառության համար, մեր ազգի բարգավաճման համար և մեր հայրենիքի շինության համար: Թող մեր Լուսավորչի, Տրդատ թագավորի բարեխոսությունը հավետ լինեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ, նրա գահակալի, մեր իշխանության, մեր հավատավոր ժողովրդի, մեր զինվորների հետ և գալիք բոլոր ապագա սերունդների հետ, մինչև որ ազգովի արժանի դառնանք փրկության և բոլոր տեսակի նվաճումների:

## ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ԱԴԱՄ ՔՀՆ. ՄԱԿԱՐՅԱՆ

# ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ ԵՐԿՆՔՈՒՄ Է

(Աստվածաշնչյան թարգմանությունների մասին)

Աստվածաշնչյան թարգմանություններ կատարելիս անհրաժեշտ է ծանոթ լինել ոչ միայն Եկեղեցու դավանանքին, այլև կարևոր է գոնե մակերեսորեն իմանալ Աստվածաշնչի թարգմանվող տվյալ գրքի մեկնությունը: Իհարկե, թարգմանչից չի կարելի այս ամենի խոր իմացություն պահանջել, սակայն Աստվածաշնչի ամբողջական թարգմանության դեպքում հսկայական աշխատանք պետք է իրականացնեն խմբագիրները: Աստվածաշնչի գրքերի թարգմանությունը շատ երկար ժամանակ և բազում թարգմանիչների լուրջ աշխատանք է պահանջում: Առավել ևս կրկնակի աշխատանք պետք է իրականացվի խմբագիրների կողմից: Աստվածաշնչի բոլոր գրքերը խմբագրելու համար բավական չէ մեկ խմբագիր, այդ մեծ աշխատանքը նույնիսկ երկու խմբագիրների ուժերից վեր է, իհարկե եթե նպատակը ճիշտ և լուրջ թարգմանություն ունենալն է:

Թարգմանիչները այսօր ավելի հմտորեն տիրապետում են քերականությանը և հաճախ մակերեսորեն են տեղյակ դավանանքին կամ մեկնություններին: Եվ դրա պատճառով թարգմանություններում ի հայտ եկող թերությունները պետք է սրբագրեն հմուտ խմբագիրները: Այսօր, ցավոք, տեսնում ենք, որ նույնիսկ նորկտակարանյան գրքերում թարգմանված այնպիսի նախադասություններ կամ բառեր կան, որոնք չեն շեշտում Եկեղեցու դավանանքը և շատ դեպքերում էլ կարող են շփոթության մեջ գցել ընթերցողին: Այսպիսի թերությունը հիմնականում մեկ կամ երկու խմբագրով բավարարվելու արդյունք է: Սակայն նույնիսկ այդ դեպքում կարելի կլինի սխալների հավանականությունը նվազագույնի հասցնել, եթե թվով քիչ խմբագիրները հավատքի խորը ըմբռնումով և Աստծո հանդեպ երկյուղածությամբ կատարեն իրենց աշխատանքը: Ճիշտ է, Աստվածաշնչի թարգմանությունների ժամանակ կարելի է բնագրի մտքին համապատասխան բառերի վերադասավորում անել կամ էլ երբեմն նույնիսկ ազատ թարգմանության դիմել, բայց դա չի նշանակում, որ դրա պատճառով բառերը պետք է սխալ գործածվեն կամ էլ նախադասության միտքը շեղվի Եկեղեցու վարդապետությունից: Երբեմն թարգմանիչները իրենց աշխատանքը հեշտացնելու համար գուցե օգտվում են նաև այլ լեզուներով կատարված թարգմանություններից և վերջիններիս ազատ թարգմանությունները փոխադրում հայերեն Աստվածաշունչ, ինչը բոլորովին չի համապատասխանում գրաբար բնագրին:

## ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հովհաննու Ավետարանում Քրիստոսի կողմից ասված մի նախադասություն կա, որը բացահայտում է Աստծո ամենուրեքությունը, և որի վրա է հիմնված Հայ Առաքելական Եկեղեցու աստվածաբանական ըմբռնումներից մեկը: Դա Հովհաննու Ավետարանի երրորդ գլխի 13-րդ համարն է, որտեղ ասվում է. «Եւ ոչ ոք յերկինս ել, եթէ ոչ որ էջն յերկնից Որդին մարդոյ՝ որ էն յերկինս»: Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այս բարդ նախադասության *Որդին մարդոյ՝ որ էն յերկինս* կապակցության վրա: Այս նախադասությունը Աստվածաշնչի արևելահայերեն և արևմտահայերեն թարգմանություններում հանդիպում է զանազան ձևերով: Նախ *յերկինս* ձևը *երկինք* բառի ներգոյական իմաստն է արտահայտում, որն ստացվել է գրաբարի *ի* հոդի և *երկինք* բառի հայցական հոլովի միասին կիրառությունից, այսինքն՝ *ի* հոդը հայցական հոլովի հետ տվյալ դեպքում ներգոյական հոլովի իմաստ է տալիս, իսկ բայը ներկա ժամանակով է: Ազատ թարգմանությունը մի հիմնական իմաստ է փոփոխել այս նախադասության մեջ: Աստավածաշնչի՝ Ս. Էջմիածնի արևելահայերեն թագմանությունում, սակայն, մեզ հետաքրքրող նախադասությունը հետևյալ ձևով է. «...մարդու Որդին, որ *երկնքից էր*»[1]:

Կատարված է միանգամից երկու փոփոխություն. ոչ միայն բայի ժամանակն է անցյալ, այլև գոյականի հոլովը բացառական է դարձել: Այսպիսի թարգմանությունը բոլորովին չի համապատասխանում այն բացատրությանը, որը տալիս է մեր Եկեղեցու Հայրապետ աստվածաբաններից Ղազար Ջահկեցին: Արևմտահայերեն թարգմանություններից մեկում մեզ հետաքրքրող հատվածը այլ ձևով է ներկայացված. «...Որդին մարդոյ որ *երկնքէն է*»[2]: Այստեղ էլ թարգմանիչը պահպանել է ներկա ժամանակը, բայց փոխել է գոյականի հոլովը: Այս ձևը պահպանվում է նաև Աստվածաշնչի մի քանի այլ հրատարակություններում: Սակայն երբեմն Հովհաննու Ավետարանի այս նախադասությունը կարող ենք տեսնել նաև հետևյալ ձևով. «...մարդի Որդին՝ նա որ երկնքումն է»[3]: Իհարկե, ավելի նախընտրելի է այս ձևը: Նույն իմաստն է արտահայտվում նաև Աստվածաշնչի շատ ավելի վաղ հրատարակված մեկ այլ հրատարակության մեջ. «...Որդին մարդոյ, որ երկինքն է»[4]: Եթե ուշադրություն դարձնենք, կտեսնենք, որ Աստվածաշունչ գրքերի թարգմանությունը կատարվել է, ինչպես նշվում է, «եբրայական եւ յունական բնագիրներից»: Եբրայական բնագիրը հիմնականում կարող է վերաբերել միայն Հին Կտակարանի գրքերին, որովհետև Նոր Կտակարանի գրեթե բոլոր գրքերը գրվել են հունարեն և հայտնի են հունարեն բնա-

---

[1] ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ, ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ, Հրատարակութիւն Հայաստանի Աստուածաշնչային Ընկերութեան, ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, 1994:

[2] ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ գիրք ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ, եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած, Աստուածաշնչի Միացեալ Ընկերութիւններ, Պէյրութ, 1981:

[3] ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ մատեան ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ, եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած, Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն, 1999:

[4] ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ գիրք ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ, եբրայական եւ յունական բնագիրներէ թարգմանուած, Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ի տպարանի Ա. Յակոբ Պօյաճեան, 1906:

գրերով[5]: Եվ եթե թարգմանությունները կատարվել են այդ հունարեն բնագրերից, ապա ինչպե՞ս է ստացվել, որ նույն բայն ու գոյականը զանազան ձևերով են ներկայացված: Ակնհայտ է, որ կատարվել է ազատ թարգմանություն, որովհետև առաջին հայացքից զարմանալի է թվում, թե ինչպես կարելի է միաժամանակ լինել և՛ երկրում, և՛ երկնքում: Հատկապես հենց այս մտքի համար աշակերտները Քրիստոսին ասացին, թե խիստ են քո խոսքերը, ո՞վ կարող է լսել[6]:

Մի հետաքրքիր երևույթ կարող ենք նկատել Աստվածաշնչի ֆրանսերեն մի քանի թարգմանությունների մեջ: Շատ ավելի վաղ հրատարակվածները ամբողջությամբ պահպանում են ճիշտ ձևը[7], մինչդեռ վերջին ժամանակների հրատարակություններում[8] բոլորովին դուրս է թողնված մեզ հետաքրքրող հատվածը, սակայն նշում է արվում, որ մի քանի ձեռագրերում կամ շատ ձեռագրերում և Հայրերի տարբերակներում կա նաև *Մարդու Որդին, որ երկնքում է* շարունակությունը: Նշված վերջին թարգմանությունները հրատարակվել են Ֆրանսիայի Աստվածաշնչային Ընկերության կողմից:

Նկատելի է, որ Աստվածաշնչային Ընկերությունը վերջին ժամանակներում հիմնականում նպատակ ունի Նոր Կտակարանը կամ Աստվածաշունչը ժողովրդի համար հեշտ ընկալելի դարձնել, այդ իսկ պատճառով էլ երբեմն անտեսվում են աստվածաբանական կարևոր հատվածները: Մինչդեռ ահա վաղ հրատարակություններից մեկը շատ ավելի հարազատ է բնագրին, որովհետև նման թարգմանիչները առաջին հերթին ուշադրություն են դարձնում ոչ թե քերականությանը կամ լեզուն պարզեցնելուն, այլ աստվածաբանական հարցերին: Այսպիսի նախանձախնդրություն պետք է դրսևորվի յուրաքանչյուր թարգմանության ժամանակ, որպեսզի սուրբգրային տեքստը կարողանա հարազատ մնալ Եկեղեցու վարդապետությանը և եկեղեցական Հայրերի մեկնություններին, ինչը հատկապես այսօր չափազանց կարևոր է:

Նույնն է պատկերը նաև անգլերեն թարգմանություններում: Նորագույն թարգմանություններում դուրս է թողնված *մարդու Որդին, որ երկնքում է* մասը: Այն պահպանված է հին հրատարակություններում և դրանց հարազատ մնացած վերահրատարակություններում[9]: Այդպիսին է, օրինակ, Աստվածաշնչի անգլերեն թարգմանության մի հին կաթոլիկ հրա-

[5] Կարծիք կա, որ, ի տարբերություն Նոր Կտակարանի մյուս հեղինակների, Մատթեոսն իր Ավետարանը գրել է եբրայերենով, սակայն այն մեզ է հասել հունարեն լեզվով (Ներածություն Նոր Կտակարանի. պատրաստեց՝ Եզնիկ ծայրագույն վարդապետ Պետրոսյան. Դոկտոր Աստվածաբանության. Բ տպագրություն, Ս. Էջմիածին, 1996, էջ 40):

[6] Ղազար Ճահկեցի, Աստուածաբանական Դրախտ ցանկալի, վերատպեալ ի տպարանի Սրբոց Յակոբեանց. Երուսաղէմ, 2002, էջ 155:

[7] **La Sainte Bible** qui comprend l'Ancien et le Nouveau Testament, traduits sur les textes originaux hébreu et grec par Louis Segond docteur en théologie, Nouvelle édition revue, Paris, 58; Rue de Clichy; 58, 1931.

**La Sainte Bible** ou L'Ancien et le Nouveau Testament, Version Synodale, Paris, 58; Rue de Clichy; 58, 1934.

[8] **La Bible**, traduction œcuménique, édition intégrale, Société biblique française, 1988.

**La Bible**, Ancien et Nouveau Testament, avec les Livres Deutérocanoniques, Traduite de l' hébreu et du grec en français courant, Alliance Biblique Universelle, Société biblique française, 1990.

[9] Հիմնականում այն թարգմանության հրատարակություններում, որը կոչվում է King James Version:

տուրակոություն[10], ոլի՝ նպատակն է եղել հարազատ մնալ քրիստոնեական վարդապե-
տությանը: Այն, բացի այս հատվածից, ունի նաև դրա բացատրությունը:

Աստվածաշնչի ռուսերեն թարգմանության հրատարակություններում Հովհաննու Գ 13-ի իմաստը ճիշտ է արտահայտված:

## ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԱՄԵՆՈՒՐԵՔՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԳՈՐԾՎԱԾ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐԴԵՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԵՍԱԿԵՏԸ

Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետական հիմնավորումներից մեկը կապված է հենց Հովհաննու Ավետարանի այս հատվածի հետ: Դեռևս քրիստոնեության վաղ ժամանակաշրջանից այս կարծիքն իր ազդեցությունն է ունեցել նաև մեր ծիսական գրքերի վրա: Ըստ Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետության, Քրիստոսի մարդեղությունը և փրկագործությունը կատարվել են աստվածային ամենուրեքությամբ, այսինքն՝ Քրիստոս մարմնանալիս, ծնվելիս, չարչարվելիս, թաղվելիս, հարություն առնելիս և համբարձվելիս միևնույն ժամանակ եղել է Հոր մոտ՝ փառքի աթոռին: Մեր Հայրերից մեզ հասած մի կարճ, բայց հստակ ու ճշգրիտ սահմանումով Քրիստոս Իր կողմից մարդկության փրկագործությունն իրագործել է *ոչ մեկնելով ի Հօրէ*: Այս նույն ըմբռնումը հենց այս բառերով կարող ենք գտնել Մովսես Խորենացու Ծննդյան և Աստվածահայտնության շարականում, որի երրորդ տան մեջ ասվում է. «Անքննելին երկնի և երկրի ի խանձարուրս պատեցաւ. *ոչ մեկնելով ի Հօրէ* ի սուրբ այրին բազմեցաւ»[11]:

Երբեմն սա բացատրում են արեգակի օրինակով: Ինչպես որ արեգակից եկած ճառագայթը երկրում է և միաժամանակ արևից անբաժան, ճիշտ այդպես էլ Քրիստոս միաժամանակ երկրում էր և երկնքում: Աստվածային ամենուրեքությանն այս իմաստով ուշադրություն է դարձնում հատկապես Ղազար Ջահկեցին[12] իր «Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի» գործում: Ամենուրեքությունը բնորոշ է միայն Աստծուն ըստ սաղմոսի հետևյալ խոսքերի. «Աստուած մեր յերկինս եւ յերկրի» (Սաղմ. ՃԺԳ 11): Նմանապես և մարդու Որդին միաժամանակ Հոր ծոցում էր և կույսի արգանդում, խաչի վրա անարգված և միևնույն ժամանակ փառքի աթոռին բազմած: Սա է ապացուցում հենց Քրիստոսի ասածը. «Եւ ոչ ոք ելեալ է յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ՝ որ էն յերկինս» (Հովհ.

---

[10] **The New Testament of our Lord and Savior Jesus Christ**, Using the new translation, edited by catholic scholars under the patronage of the episcopal committee of the confraternity of christian doctrine, Illustrated edition, **Catholic Book Publishing Company, New York.**

[11] Ցայնքաղ Տարական յորում բովանդակին հոգեւոր պաշտօներգութիւնք Սուրբ Եկեղեցւոյ Հայաստանեայց ի փառաբանութիւն Աստուծոյ եւ ի մեծարանս սրբոց նորա, կարգաւորեալ ըստ պատշաճի հրաքանչիւր աւուր հանդերձ խորհրդաւոր քաղուածովք ի դիւրութիւն երգեցողաց, Երրորդ տպագրութիւն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ի տպարանի Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, 1999 – ՌՆԽԸ, էջ 22:

[12] Ղազար Ջահկեցին կամ Ճահկեցին հաջորդել է Աբրահամ Գ Կրետացուն և կաթողիկոս է եղել 1737 – 1751 թվականներին:

Գ 13): Եվ մեր վկայությունը մարդկանցից չէ, այլ սա վկայեց Աստված հենց Ինքն Իր մասին[13]:

Քրիստոսի կողմից ասված այս նախադասության այնպիսի թարգմանությունները, որոնք բնագրին հարազատ չեն և ցույց տրվեցին հայերեն տարբեր հրատարակություններում, բոլորովին չեն համապատասխանում մեր Եկեղեցու վարդապետությանը: Հենց միայն բայի ժամանակը կամ գոյականի հոլովը փոխելն այս դեպքում հեռացնում են աստվածաբանական ճշմարտությունից: Գրաբարում բայի որևէ ժամանակ, ըստ բնագրի մտքի, երբեմն կարելի է այլ ժամանակով թարգմանել: Սակայն նման երևույթն այս պարագային տեղին չէ: Այդպիսի սխալ լուծում է առաջարկվում անգլերենով հրատարակված Աստվածաշնչի մեկնության և մեկնաբանության տասներկուհատորանոց գրքի ութերորդ հատորը: Նշելով Հովհաննու Ավետարանի Գ 13-ի *ով երկնքում է (who is in heaven)* բառերը՝ այս գիրքը հետևյալ բացատրությունն է տալիս. եթե այս ընթերցումը ճիշտ է, ապա ներկա ժամանակը պետք է դիտվի որպես ապառնի: Այնուհետև, իբրև այս կարծիքի հաստատում, համեմատություն է արվում այս Ավետարանի այլ համարների հետ, որոնցում ներկա ժամանակը կարծես թե ապառնի ժամանակի իմաստով է գործածված[14]: Օրինակ՝ «Ինձ կփնտրեք և չեք գտնի և *ուր Ես եմ գնում*, դուք չեք կարող գալ» (Հովհ. Է 34) կամ «Եթե մեկն Ինձ ծառայի, Իմ ետևից կգա. և *ուր Ես եմ*, այնտեղ կլինի և Իմ ծառան» (Հովհ. ԺԲ 26)[15]:

Նման բացատրությունը, ինչ խոսք, զրկում է աստվածային ամենուրեքության պատկերացումից: Դեռ ավելին, այստեղ նշվում է, որ *երկինք* բառն այս հատվածում տեղ չի ցույց տալիս, այլ այն, որ Քրիստոս երկրային դժվարությունների, մարդկանց մեջ գործելիս ուներ երկնային մտածողություն, արժեքների երկնային չափանիշ: Հետևաբար, այստեղ երկինքը կյանքի, լիճելիության ձև է[16]: Սակայն նման մեկ այլ աշխատության մեջ առկա բացատրությունն ամեն ինչով նույնանում է Ղազար Ջահկեցու հայտնած կարծիքի հետ: «*Որ երկնքում է* բառերը ցույց են տալիս, որ մեր Տերը երկրի վրա էր և միևնույն ժամանակ երկնքում, երկրի վրա նվաստացված վիճակում և միևնույն ժամանակ երկնքում՝ փառքի աթոռին»[17]: Նույն բանն է ասում նաև Ղազար Ջահկեցին. «Ո՛չ որոշեալ ի Հօրէ. այլ առ Հօր՝ և միացեալ ի մարմնի. և ո՛չ թողեալ զհայրական աթոռն, այլ և ըստ անձնաւորութեանն ինքն միայն մարմին զգեցեալ. զի կամակցութեամբ Հօր և Հոգւոյն մարմնացաւ»[18]: Աստվածաբանական այս հիմնավորումը շեշտում է նաև Սբ. Գրիգոր Տաթևացին Համբարձման մասին իր քարոզում: Եռամեծ վարդապետն իր քարոզում նշում է, որ բոլոր

---

[13] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Ղազար Ճահկեցի. Աստուածաբանական Դրախտ ցանկալի, վերատպեալ ի տպարանի Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 2002, էջ 151-154:

[14] **The Interpreter's Bible**, The Holy Scriptures in the King James and revised standard versions with general articles and introduction, exegesis, exposition for each book of the Bible, in twelve volumes, volume VIII, New York Abingdon Press Nashville, p. 508.

[15] Տե՛ս նաև Հովհ. 14.23, 17.24:

[16] **The Interpreter's Bible**, p. 507.

[17] **A Commentary on the Holy Bible** by various writers, edited by the Rev. J. R. Dummelow M. A. Queens' college, Cambridge, complete in one volume with general articles, New York, the Macmillan company, p. 780:

[18] Ղազար Ճահկեցի. Նշվ. աշխ., էջ 104:

հրեշտակները չէ, որ գիտեին Քրիստոսի տնօրինության մասին և Համբարձման ժամանակ զարմացած հարցնում էին՝ «Ո՞վ է սա թագավոր փառաց»[19]: Հենց միայն հրեշտակների այս հարցը ցույց է տալիս, որ նրանք իրենց երկնային սպասավորության մեջ Աստծուն մշտապես փառաբանելով անտեղյակ են մնացել Քրիստոսի մարդեղության և փրկագործության խորհրդին, որովհետև Քրիստոս միաժամանակ և՛ երկնքում էր՝ փառքի աթոռին, և՛ երկրի վրա:

Ինչպե՞ս կարելի է բացատրել այն փաստը, որ մեզ համար կարևոր ավետարանական այս արտահայտությունը բացակայում է որոշ ձեռագրերից: Նորագույն քննադատները այսօր հակված են այն կարծիքին, որ *երկնքում է* արտահայտությունը առկա է եղել վաղ ձեռագրերում, և ընդունելի չէ այն տեսակետը, ըստ որի այդ բառերը հետագայի հավելում են[20]: 2001 թ. Աստվածաշնչային Ընկերության կողմից հրատարակված Նոր Կտակարանում Հովհաննու Ավետարանի երրորդ գլխի 13 համարը ճշգրտորեն համապատասխանում է գրաբար բնագրին, և դա ընթերցողին մի գեղեցիկ պատկերացում է տալիս Աստծո ամենուրեքության մասին: Ահա թե երբեմն որքան անհրաժեշտ են որոշ բառերի կամ արտահայտությունների ճշգրիտ թարգմանությունները:

*(Շարունակելի)*

[19] Գրիգոր Տաթևացի, Ձմեռան հատոր, տպեալ յամի 1740 ի Կ. Պոլիս, վերատպեալ ի տպարանի Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1998, էջ 683:

[20] Толковая Библия или комментарий на все книги Св. Писания Ветхаго и Новаго Завета, том 3, Новый Завет, Петербург, 1911-1913, ст. 341.

# ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ Ս. ՍՎԱԶՅԱՆ

## ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՆՈՒԿ ԳՐԻԳՈՐԻՍ

Ըստ Աղվանից հայրապետների ցանկի, որ բերում են Մովսես Կաղանկատվացին ու Մխիթար Այրիվանեցին, Աղվանքում առաջին քրիստոնյա քարոզիչ Ս. Եղիշային[1] հաջորդել է «տէր սուրբն Գրիգորիս Պահլաւիկ՝ թոռն Մեծին Գրիգորի Հայոց լուսաւորչին»[2]: Նրանց հակառակ, Մխիթար Գոշը Եղիշայից հետո հիշյալ ցանկում զետեղում է Շուփհաղիշո անունով մեկին, մի խումբ այլ հայրապետների և ապա միայն Գրիգորիսին[3]: Կիրակոս Գանձակեցին էլ է բերում նույն ցանկը, ինչ որ Մխիթար Գոշը, բայց նաև իր տարակուսանքն է հայտնում Շուփհաղիշոյի հերթականության վերաբերյալ. «Բայց վասն առնս այսորիկ յառաջ կարգելոյ՝ երկմտութիւն գոյ մեզ,- գրում է նա և պատճառաբանում,- զի որ գրեաց զպատմութիւնն Աղուանից (նկատի ունի Մովսես Կաղանկատվացուն - Հ. Ս.) զայս անունս կարգէ յատուրս Վաչագանայ Բարեպաշտի լեալ ... Եւ յետ այսորիկ այս անուն ոչ գտանի ի կարգ համարոյ եպիսկոպոսացն»[4]: Կարծում ենք, իրավացի է Կ. Գանձակեցին և նրա կասկածանքը՝ տեղին: Շուփհաղիշոն, իրոք, գործել է շատ ավելի ուշ՝ Վաչագան Գ Բարեպաշտի ժամանակներում (488-510 թթ.) և չէր կարող հաջորդած լինել Եղիշային[5]: Ուրեմն ճիշտ են նշված պատմիչներից առաջին երկուսը, որոնց տվյալների համաձայն, Եղիշային Աղվանքում հաջորդել է Մանուկ Գրիգորիսը[6]: Այսպես են կարծել նաև հետագա ուսումնասիրողները[7]:

«Մանուկ» մականունն ստացած Գրիգորիսի ու նրա գործունեության մասին պատմում են Փ. Բուզանդը, Մ. Խորենացին ու Մ. Կաղանկատվացին: Նրանք էլ նրան անվանում են Աղվանքի «եպիսկոպոս» ու «կաթողիկոս»[8]:

---

[1] Հ. Սվազյան, Սուրբ Եղիշան Հայոց Արևելից կողմանց, Ձողա երկրի ու Աղվանից աշխարհի լուսավորիչ, Լրաբեր հասարակական գիտությունների, 2000, թիվ 2, էջ 55-56:

[2] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 342: Նաև՝ Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 19:

[3] Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 384: Կաղանկատվացի, էջ 350:

[4] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 194:

[5] Շուփհաղիշոյի մասին հանգամանորեն մի ուրիշ հոդվածում:

[6] Աղվանից հայրապետների շարքում չի հաշվվում Տրդատ Գ-ի ու Գրիգոր Լուսավորչի հետ Հռոմ քաղաքից եկած քրիստոնյա քարոզիչը, հավանաբար հույն, որը նախորդել է Մանուկ Գրիգորիսին Աղվանքում:

[7] Հովհ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառաց Այրարատայ, հ. 2, Էջմիածին, 1842, էջ 333:

[8] Փաւստոս Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1987, էջ 20 և հաջ. Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան 1991, էջ 259: Կաղանկատվացի, էջ 31 և հաջ.: Նշված պատմիչները Գրիգորիսին մեծարում են նման գերապատիվ տիտղոսներով, բայց նա չի կարող դիտվել որպես այդպիսին: «Կաթողիկոս»-ը եկեղեցական-վարչական գերագույն կենտրոնական իշխանության հոգևոր ծայրագույն պետն էր, իսկ «եպիսկոպոս»-ը՝ բարձր աստիճանավոր արդեն կազմավորված կաթողիկոսության համակարգում: Մասնավորապես,

Համաձայն պատմիչների հաղորդումների, Մանուկ Գրիգորիսը Լուսավորչի տոհմից էր, Հայոց կաթողիկոս Վրթանեսի երեց որդին, Մեծն Գրիգորի թոռը, որի անունն էլ կրում էր: Նա եղբոր` Հուսիկի հետ մանկությունն ու պատանեկությունն անցկացրել է Տրդատ Գ-ի պալատում, թագավորի աչքի առաջ և նրա հոգածությամբ էլ կրթություն ստացել` դառնալով, ինչպես Բուզանդն է բնութագրում, աստվածագիտությանը հմուտ, հոգևոր արդարնալով, ինչպես Բուզանդն է բնութագրում, աստվածագիտությանը հմուտ, հոգևոր արժանիքներով լի ու առաքինի անձ[9]: Բուզանդից հետո նրա նույն հատկանիշներն է ընդգծում նաև Կաղանկատվացին` նրան նմանեցնելով իր մեծ պապին ինչպես անունով, այնպես էլ վարքով[10]: Իր առաքինությունների շնորհիվ էլ նա, դեռ պատանի («թէպետ և յանլիութիւն աւուրցն»)[11], նշանակվում է քարոզչական աշխատանքի, սկզբնական շրջանում այն ծավալելով Հայոց երկրի ծայրամասային նահանգներում, մասնավորապես Փայտակարանում ու Արցախում, ապա Աղվանից ու Վրաց երկրներում և Մասքթաց աշխարհում:

Համաձայն պատմական սկզբնաղբյուրների, Մանուկ Գրիգորիսը Փայտակարան է գնացել այս քաղաքի վերակացուների խնդրանքով, որոնք, գալով Տրդատ Գ-ի մոտ, իրենց համար քարոզիչ են խնդրում Լուսավորչի սերնդից, որպեսզի Մեծն Գրիգորի հռչակված անվան շնորհիվ ականծեն նաև նրա սերնդակցից և վարվեն վերջինիս հրահանգների համաձայն[12]:

Քրիստոնեությունը թեպետև Հայաստանում արդեն պետական պաշտոնական կրոն էր, սակայն դարերով արմատավորված հեթանոսությունը դեռևս խոր արմատներ ուներ, մանավանդ երկրի ծայրամասերում, ուստի Տրդատ Գ-ն, որը «Մեծաւ պնդութեամբ առնէր վրէժխնդրութիւն հաւատոց և վարուց ... առաւել այնոցիկ, որ բացեայ կողմանցն էին յիւրում իշխանութեանն»[13], Մանուկ Գրիգորիսին ուղարկում է Փայտակարան, թեև նրա անչափահասությունը թույլ չէր տալիս դա անել` «Պարականոն գիրն վարկանէր»[14]: Մանուկ Գրիգորիսին ուղարկելով Փայտակարան, Տրդատ Գ-ն նրան աջակից է նշանակում Սա-

---

Աղվանքում եկեղեցական կենտրոնական իշխանությունը կամ կաթողիկոսությունը ձևավորվում է միայն 6-րդ դարի կեսերին, երբ կազմավորվել էր Աղվանից մարզպանությունը որպես վարչա-քաղաքական միավոր և նրա ողջ տարածքում գտնվող եկեղեցիները դարձել էին մեկ ընդհանրություն: Մինչդեռ Գրիգորիսը, որ գործում էր 4-րդ դարի 30-ական թթ., չէր կարող լինել այդ երկրում ավելի ուշ առաջացած բարձրագույն հոգևոր մարմնի պետը: Այդ վաղ ժամանակներում Աղվանքում քրիստոնեությունը ոչ միայն դեռ պետական պաշտոնական կրոն չէր, որ ունենար իր կենտրոնական իշխանությունը, այլև նոր-նոր էր տարածում գտնում երկրում և դրսևորվում էր համայնքներում: Ուստի, հիշտ չեն պատմիչների կողմից Գրիգորիսին տրվող նման տիտղոսները, որոնք ավելի շուտ խորհրդանշական են, նրա բարձր հեղինակության և կատարած մեծ գործի գնահատման արդյունք: Իրականում Մանուկ Գրիգորիսը Աղվանք (նաև Վիրք ու Մասքթաց երկիր) է մեկնել սոսկ որպես քարոզիչ` այդ երկիրը ավետարանական լույսով լուսավորելու համար, իսկ Աղվանքի առաջին կաթողիկոսը Աբասն էր, որը հովվել է 552-59 թթ.:

[9] Բուզանդ, էջ 30:

[10] Կաղանկատվացի, էջ 36:

[11] Խորենացի, էջ 259:

[12] Նույն տեղում:

[13] Նույն տեղում:

[14] Նույն տեղում:

նատրուկ անունով մեկին, որը նույնպես Արշակունի էր և Տրդատ Գ-ի ազգակիցը[15]: Դա տեղի է ունենում կա՛մ Տրդատ Գ-ի մահվան տարում՝ 330 թ., կա՛մ դրանից քիչ առաջ, երբ Հայոց կաթողիկոսը դեռևս Գրիգոր Լուսավորչի կրտսեր որդին էր՝ Արիստակեսը (325-333 թթ.): Փայտակարանում Գրիգորիսը, Խորենացու պատմելով, «լինէր օրինակ բարի, հայրենականօքն վարելով առաքինութեամբք. այլ կուսութեամբ գեր ի վերոյ քան զհարսն, և պատժականս զոյգ ընդ թագաւորին»[16]: Դատելով Խորենացու այս վկայությունից, Գրիգորիսը կարողացել է տեղի բնակիչների մեջ սերմանել քրիստոնեական հավատը՝ դրա համար օգտագործելով բոլոր միջոցները՝ թե՛ քարոզներ ու հորդորներ և թե՛ պատիժներ:

Փայտակարանից Մանուկ Գրիգորիսն անցնում է Արցախ և քարոզչական աշխատանքներ տանում նահանգի Հաբանդ գավառում՝ Փայտակարանին աշխարհագրորեն սահմանակից վայրում: Այստեղ ևս նա հասնում է որոշակի հաջողությունների. հաստատում ու ամրապնդում է քրիստոնեական հավատը, հիմնում համայնքներ և իր գործի շարունակության համար աշակերտներ պահում, որոնցից մի քանիսի ուղեկցությամբ էլ հետագայում մեկնում է Աղվանք:

Աղվանից իշխող վերնախավը ևս դիմում է Հայոց թագավորին և կաթողիկոսին՝ իրենց աշխարհի համար կաթողիկոս ուղարկելու խնդրանքով, ընդ որում նկատի ունենալով հատկապես Մանուկ Գրիգորիսին: «Խնդրեցաւ յԱղուանից մանուկն Գրիգորիս ի կաթողիկոսութիւն իւրեանց»- գրում է Կաղանկատվացին[17], որը հաստատում է Մխիթար Գոշը. «խնդրեցին Աղուանքի ի Հայոց՝ կաթողիկոս զսուրբն Գրիգորիս»[18]: Եվ ահա, ընդառաջելով նրանց խնդրանքին, հայոց թագավորը, որն այդ ժամանակ Տրդատ Գ-ի որդին էր՝ Խոսրով Գ-ն (330-338 թթ.), իսկ ժամանակի կաթողիկոսն էր Գրիգորիսի մյուս որդին՝ սպանված եղբորը՝ Արիստակեսին փոխարինած Վրթանեսը (331-341 թթ.), շուրջ 333/4 թ. Մանուկ Գրիգորիսին ուղարկում են Աղվանք և, ինչպես վկայում են նրա մասին խոսող աղբյուրները, նաև Վիրք[19]:

Մանուկ Գրիգորիսի ընտրությունը պատահական չէր: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում կաթողիկոսական գահը զբաղեցնելու ժառանգական իրավունքը պատկանում

---

[15] Նույն տեղում: Այս Սանատրուկը հետագայում, Տրդատ Գ-ի մահից հետո, հանդես է գալիս Հայոց գահի հավակնություններով, սակայն անհաջողության մատնվելով, անցնում է մազքութների մոտ, այստեղ հռչակվում թագավոր, ստանում նոր անուն՝ Սանեսան, և կովկասյան «բազմաճղի» ցեղերից հավաքագրելով մի մեծ բանակ՝ արշավում է Հայաստան՝ նպատակ ունենալով ձեռք բերել Հայոց գահը: Նա կարողանում է գրավել Վաղարշապատը և մի ամբողջ տարի իշխել այնտեղ: Մեկ տարի անց Օշական գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում նա պարտվում է և սպանվում, որով և վերջ են դրվում Հայաստանում գահակալելու նրա ձգտումներին: Սանատրուկ-Սանեսանի մեկ անձ լինելու և այլ մանրամասների մասին տես Հ. Ս. Սվազյան, Աղվանից թագավորության Արշակունյաց ճյուղի սկզբնավորումը: Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 1979 թ., թիվ 4, էջ 158-170:

[16] Խորենացի, էջ 259:

[17] Կաղանկատվացի, էջ 14:

[18] Հայսմավուրք, էջ 384:

[19] Բուզանդ, էջ 20. Խորենացի, էջ 259, Կաղանկատվացի, էջ 14: Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 20:

էր Լուսավորչի տոհմին և Աղվանքում նկատի ունենալով այս հանգամանքն ու առաջնորդվելով Փայտակարանի ավագանու վերոհիշյալ ըմբռնմամբ, քարոզիչ խնդրեցին Լուսավորչի տոհմից մեկին, որը նաև այնպիսի հեռահար նպատակ էր հետապնդում, որ վերջինիս հռչակված անվան շնորհիվ կլինեն նրա սերնդակցին և խոնարհությամբ կկատարեն նրա հրամանները:

Իրենց աշխարհի համար կաթողիկոս խնդրելով հայերից, աղվանացիները միաժամանակ խնդրեցին նաև, որ այսուհետ Աղվանից կաթողիկոսները ձեռնադրվեն Հայոց Կաթողիկոսի կողմից, որին հայերը համաձայնվում են: Այս քայլով սկիզբ է դրվում Հայոց և Աղվանից Եկեղեցիների միակամ եղբայրությանը և անխախտ ուխտին: Հետևելով այս կարգին՝ Աղվանից կաթողիկոսները դարեր շարունակ ձեռնադրվում էին Հայոց Կաթողիկոսների կողմից[20], որն, ըստ էության, նշանակում էր կրել Մեծ Հայքի քաղաքական ազդեցությունը: Եվ Խոսրով Գ-ն Մանուկ Գրիգորիսին ուղարկում է Աղվանք, որ նաև հոր՝ Մեծն Տրդատի քաղաքականության շարունակությունն էր, և որով ինքը ևս իր ազդեցությունն էր տարածում այդ երկրում: Այսպիսով, Ս. Եղիշայից հետո տևական՝ շուրջ 200-ամյա մի ժամանակամիջոց անց, Աղվանքում ի դեմս Մանուկ Գրիգորիսի հայտնվում է մի նոր քրիստոնյա գործիչ: Նրա գործունեությամբ Աղվանքում սկսվում է քրիստոնեության ներթափանցման երկրորդ փուլը, որի ժամանակ այն Աղվանք էր հասնում Հայաստանից՝ հայ քարոզիչների միջոցով[21]:

Ըստ եկեղեցական ավանդության, Մանուկ Գրիգորիսը 15 տարեկան էր, երբ ստանձնեց Վրաց ու Աղվանից կողմերի եպիսկոպոսությունը[22]: Կաղանկատվացին էլ գրում է, որ Մանուկ Գրիգորիսը «զհնգետասան ամօք ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն... Վրաց և Աղուանից աշխարհին»[23]:

Փ. Բուզանդի մի տեղեկությունից երևում է, որ Աղվանքում Գրիգորիսի ժամանակ կային և գործում էին կրոնական հաստատություններ՝ եկեղեցիներ, և Մանուկ Գրիգորիսը մեկնելով այնտեղ, կարգի է բերում դրանք, նոր ոգի ու շունչ հաղորդում: Պատմիչը գրում է. «Երթեալ (Գրիգորիսը - Հ. Ս.) նորոգեաց անդ եկեղեցին լուսաւոր կարգօք»[24]: Այս աշխատանքներին զուգահեռ Մանուկ Գրիգորիսն ընդլայնում է իր գործունեության աշխարհագրական շրջանակները, դարձնում ավելի ընդգրկուն ու ծավալուն: Պատմիչների վկայությամբ նա եկեղեցիներ է կառուցում քաղաքներում, շեներում ու զանազան բնակատե-

---

[20] Կաղանկատվացի, էջ 14-15:

[21] Հ. Սվազյան, Քրիստոնեության Աղվանք ներթափանցման ուղիներն ու ժամանակաշրջանը, Պատմաբանասիրական հանդես, 2002 թ.:

[22] Բուզանդ, էջ 20:

[23] Կաղանկատվացի, էջ 36-37: Օրմանյանը ճիշտ չի համարում Գրիգորիսի համար Բուզանդի ցույց տված տարիքը: Նրա կարծիքով, նա այդ ժամանակ 25 տարեկան էր («Ազգապատում, մաս Ա», Կոստանդնուպոլիս, 1912, էջ 138): Ըստ նրա, Մանուկ Գրիգորիսը ծնվել է Կեսարիայում 295 թ., Հայաստան է եկել հոր հետ միասին 310 թ., իսկ 320 թ.՝ 25 տարեկանում ձեռնադրվել եպիսկոպոս: Համամիտ լինելով Մ. Օրմանյանի հետ Գրիգորիսի տարիքի հարցում, սակայն կարծում ենք, որ թերևս կատարել է որոշ տեղաշարժեր, քանի որ մեր քննության համաձայն Գրիգորիսը Աղվանք է մեկնել ոչ թե 320 թ., այլ 333/34 թ.: Հետևաբար վերանայելու կարիք ունի նաև Օրմանյանի առաջարկած նրա ծննդյան տարեթիվը:

[24] Բուզանդ, էջ 20:

դիններում, քահանաներ ձեռնադրում, շրջում հեթանոսների մեջ և, նմանվելով իր մեծանուն պապին, նրանց քրիստոնեական հավատի բերում[25]:

Հաղորդելով այն մասին, որ Գրիգորիսը եղել է նաև Վիրքի «կաթողիկոս»[26], պատմիչները սակայն ոչինչ չեն հաղորդում այս երկրում նրա կատարած գործունեության մասին: Նրանք դա անում են Աղվանքում նրա գործունեությունը պատկերող հաղորդումների հետ միահյուսված՝ առանց տարբերակման: Այսպես, օրինակ, Բուզանդը պատմելով, որ Գրիգորիսը եպիսկոպոսության աստիճանի հասավ Վրաց և Աղվանից աշխարհների վրա, ավելացնում է. «երթեալ (Գրիգորիսը - Հ. Ս.) նորոգեաց անդ զեկեղեցիսն լուսաւոր կարգօք»[27] կամ, «(Գրիգորիսը - Հ. Ս.), որ կաթողիկոսն էր կողմանցն Վրաց և Աղուանից... շինեաց նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ»[28]: Նույնն է և Կաղանկատվացու մոտ: Նա ևս Վրաց և Աղվանից աշխարհում Գրիգորիսի գործունեության մասին պատմում է ընդհանուր բնույթի նկարագրություններով՝ շեշտելով, որ նա «լուսաւորէր զերկոսին զաշխարհսն և հաստատէր քրիստոսական հաւատովն զնա»[29]:

Ինչպես երևում է պատմիչների հաղորդումներից, Մանուկ Գրիգորիսի գործունեությունը նշված երկրներում հաջողությամբ էր ընթանում:

Նույն՝ 4-րդ դարի 30-ական թվականներին Աղվանքի քաղաքական ազդեցությունը տարածվում էր նաև իրենից հյուսիս, Կովկաս լեռան ստորոտում ընկած Ցրի կոչվող քաղաքի վրա, որը Ճղբաց երկրի բերդաքաղաքներից էր[30]:

Եվ Մանուկ Գրիգորիսն իր գործունեության ոլորտում ընդգրկում է այս քաղաքը և, հավանական է կարծել, ողջ ազգագավառը ևս, որ նաև Աղվանքի քաղաքական ազդեցությունը քրիստոնեական գաղափարախոսությամբ ամրապնդելու նպատակ էր հետապնդում[31]: Ավելի ազդեցիկ լինելու համար, նա իր հետ է վերցնում Նիկոմիդիա քաղաքում

---

[25] Նույն տեղում, Կաղանկատվացի, էջ 37:

[26] Ըստ Մ. Օրմանյանի, նաև Գուգարքի վրա էր տարածվում «Գրիգորիսի հովվական հոգածությունը» (տե՛ս «Ազգապատում», հ. Ա., էջ 138):

[27] Բուզանդ, էջ 20:

[28] Նույն տեղում, էջ 24:

[29] Կաղանկատվացի, էջ 37 (ընդգծ. - Հ. Ս.):

[30] Դատելով նրան տրվող «մեծ» և «բերդաքաղաք» մակդիրներից (Կաղանկատվացի, էջ 37, 39) և, որ Մանուկ Գրիգորիսը հենց այդ քաղաքն է ընտրել որպես իր քարոզչության վայր, կարելի է մակաբերել, որ այն եղել է Ճղբաց ազգագավառի կենտրոնը:

[31] Պատմագրության մեջ Ճիղբքը համարվել է Աղվանքի ազգագավառներից մեկը, իսկ նրա բնակիչները՝ ճիղբերը, աղվանական ցեղեր (տե՛ս **К. Тревер**, Очерки по истории и культуре Кавказской Албании, IV в до н. э – VII в н. э., Москва-Л-град, 1959, с. 46: **А. Акопян**, Албания-алуанк в греко-римских и древнеармянских источниках, Ереван, 1987, с. 84-92):

Սակայն այսպիսի կարծիքը հերքելու և նրանց տարբեր երկրներ լինելու հանգամանքը ցույց տալու համար տեղեկությունների պակաս չի զգացվում ինչպես հունահռոմեական, այնպես էլ հին հայկական աղբյուրներում: Ըստ Պլինիոս Ավագի, ճիղբերը (silvii) վայրի ցեղեր էին և ապրում էին հենց Աղվանքի սահմաններից այն կողմ՝ Կովկաս լեռան ամբողջ երկարությամբ. Известия древних писателей греческих и латинских, собрал и издал В. В. Латышев, т. II, СПБ, 1904, с. 182:

Աղվանքի սահմաններից դուրս՝ Սարմատիայում (որոնց միջև սահմանը Սոանա-Ալվանաս գետն է) է Ճղբաց աշխարհը տեղադրում նաև Հայոց «Աշխարհացույցը» («Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ», Հանդ-

նշխարները (արյունով լի սրվակնե-
նահատակված սրբերի՝ Զաքարիայի և Պանտալեոնի
րը) և գնում Ծրի: Այստեղ Մանուկ Գրիգորիսը եկեղեցի է կառուցում. որտեղ պահ է տալիս
իր հետ բերած մասունքները. սպասավորական կարգ հաստատում, քահանա նշանակում
Դանիել անունով մեկին որպես եկեղեցու սպասավոր, համայնքներ հիմնում և աշակերտ-
ներ պահում: Դանիելն էլ իր հերթին քրիստոնեական հավատի է բերում մի ճիղբ մանկան
և նրան դարձնում իր օգնականը: Նրանց օգնությամբ էլ Մանուկ Գրիգորիսն այդ «հեթա-
նոս աշխարհում» Քրիստոսի լույս հավատն էր տարածում[32]:

Ավարտելով իր գործունեությունը Ճղբաց երկրում և իր գործի շարունակողներ թողնե-
լով այստեղ, Մանուկ Գրիգորիսն ուղևորվում է[33] Մասքթաց երկիր, որի գլուխ էր կանգ-
նած Սանեսան անունով մեկը, որն իրականում այն Սանատրուկն էր, որը, հայոց թագա-
վոր դառնալու անհաջող փորձից հետո, այստեղ էր հայտնվել և, վերանվանվելով Սանե-
սան, հորջորջվում էր Մասքթաց թագավոր տիտղոսով[34]:

Այստեղ կրոնական առաքելությունից բացի նա ամենայն հավանականությամբ ունե-
ցել է նաև քաղաքական խնդիր. համոզել Սանատրուկ-Սանեսանին հրաժարվել հայոց

---

ուածով Նախնեաց. Վենետիկ. 1901. էջ 27):

Որ Ճիղբքը Աղվանքի ազգագավառներից չէր. իսկ ճիղբերն էլ աղվանական ցեղեր չէին. շատ պարզ երևում է նրանից. որ նրանց մասին խոսող մեր բոլոր հայ պատմիչները (Ագաթանգեղոս, Բուզանդ, Եղիշե և այլոք), որպես կանոն ճիղբերին և աղվանցիներին հիշատակում են առանձին-առանձին, ընդ որում, առաջիններին Կովկասյան «բազմաճղի» ցեղերի շարքում: Իրականն այն է. որ նրանք. ուսումնասիրվող ժամանակաշրջանում՝ 4-րդ դարի 30-ական թվականներին. գտնվել են Աղվանքի ենթակայության տակ և կրել նրա քաղաքական ազդեցությունը: Դա է ցույց տալիս Մ. Կաղանկատվացին իր նկարագրությամբ: Հայ պատմիչը. որի «Աղվանից աշխարհի պատմությունը» միակ երկն է. որտեղ հիշատակվում է Ծրի քաղաքը որպես մի շարք պատմական իրադարձությունների տեղի. գրում է, որ Մանուկ Գրիգորիսը մեկնում է «ի մեծ քաղաքն Ծրի յԱղուանից իշխանութեանն (Աղվանից իշխանության տակ գտնվող Ծրի մեծ քաղաքը)» (Կաղանկատվացի. էջ 37, ընդգծ. - Հ. Ս.): Իսկ այս հաղորդումն իր մեջ ոչինչ այլ բան չի պարունակում, քան այն. որ քաղաքը. ուրեմն և ողջ ազգագավառը. ենթակա էր Աղվանքին: Լինեո այն Աղվանքի ազգավառներից մեկը. պատմիչն անհրաժեշտ չէր համարի հատուկ շեշտելու նրա քաղաքական կարգավիճակը: Խնդրո առարկա ազգագավառի ենթակայությունն Աղվանքին հաստատվում է նաև պատմիչի մի այլ հաղորդումից. որտեղ նշվում է Աղվանից Ծրի քաղաքի ապստամբության մասին. «Բերդաքաղաքն անուանեալն Ծրի ապստամբեալ յԱղուանից թագաւորք և տուեալ ի պարսից արքայն» («Իսկ այդ ժամանակ Ծրի անվանված բերդաքաղաքը ապստամբվեց Աղվանքի թագավորի դեմ և ձեռք մեկնեց պարսից թագավորին»: Կաղանկատվացի. էջ 39): Ուրեմն այն եղել է Աղվանքի ենթակայության տակ. որ հետո ապստամբել է և դուրս եկել: Միայն դա կարող էր լինել ապստամբության պատճառը: Մ. Կաղանկատվացին էլ իր երկու հաղորդումներով. որոնք լրացնում են միմյանց. հենց դա է վկայում՝ բացահայտելով այս երկու իրադարձությունների միջև եղած պատճառա-հետևանքային կապը: Այսպիսով ճիշտ չեն ուսումնասիրողները՝ կարծելով. թե Ճղբաց երկիրը Աղվանքի ազգագավառներից է, իսկ նրա բնակիչները՝ աղվանական ցեղերից մեկը: Նրանք տարբեր երկրներ էին, որոնցից առաջինը 4-րդ դարի 30-ական թվականներին գտնվել է վերջինիս ենթակայության տակ:

[32] Կաղանկատվացի. էջ 37:

[33] Նրա հեռանալուց հետո Ծրի քաղաքը կամ որ նույնն է՝ Ճղբաց գավառը. ապստամբում է Աղվանից արքայից. սպանում Դանիել քահանային ու ճիղբ մանկանը և իր հնազանդությունը հայտնում Պարսկաստանին (Կաղանկատվացի. էջ 39-40): Այս իրադարձություններն այնպիսի տպավորություն են թողնում, որ երկիրն ապստամբել է Աղվանքից. ընդդիմանալով քրիստոնեությանը. որի համար և սպանել են վերջինիս սպասավորներին նոր կրոնի ծիլերը արմատախիլ անելու համար և հնազանդություն հայտնել Պարսկաստանին:

[34] Հ. Ս. Սվազյան. Աղվանից թագավորության Արշակունյաց ճյուղի սկզբնավորումը, էջ 158-170:

գահն անօրինական ճանապարհով ձեռք գցելու մտքից և կանխելու կրկին Հայաստան արշավելու նրա ծրագիրը, որն իրականացնելու էր հյուսիսային ցեղերի օգնությամբ, նրանց հրապուրելով ավարառության և հափշտակության գաղափարով: Այսպես կարծելու համար հիմք է հանդիսանում Գրիգորիսի քարոզչության էությունը. «Ատելի է Աստուծոյ աւարութիւն և յափշտակութիւն, սպանութիւն, ագահութիւն, այլազրկութիւն, զայլոցկերութիւն, ցանկութիւն այլոց ստացուածոց»[35]: Մանուկ Գրիգորիսը գրեթե հասնում է իր նպատակին: Սկզբնական շրջանում Սանատրուկ-Սանեսանը լսում է նրան ու համաձայնվում[36]: Հաջողվում է նույնիսկ հավատի բերել Սանատրուկի որդիներին ու էլի 3370 մարդու[37]: Այնուհետև նա մտնում է Սանեսան-Սանատրուկի բանակ և իր առաքելությանը համապատասխան աշխատանքներ տանում: Բայց շուտով բարբարոսները զգալով, որ նոր վարդապետությունն անհարիր է իրենց կենցաղին, թույլ չի տալիս ավարառություն, սպանություն, այլոց ունեցվածքի հափշտակություն և այլն, խորհուրդ են անում միմյանց մեջ և եզրակացնում, որ Մանուկ Գրիգորիսն իրենց մոտ է եկել Հայոց թագավորի հանձնարարությամբ, որպեսզի կանխի դեպի Հայաստան ծրագրվող արշավանքը, և որոշում են սպանել նրան ու իրագործել իրենց նպատակը: «Այս խորհուրդ,- ասում են նրանք,- Հայոց թագաւորինն է. զայս յեղեղ առ մեզ, զի այսու ուսմամբ խափանեսցէ զմեր արշաւանս ասպատակութեան հինի յաշխարհն իւրմէ. այլ եկայք զսա պակասեցուսցուք ի միջոյ, մեք ի Հայս արշաւեսցուք»[38]: Նրանց ճնշման տակ Սանեսան-Սանատրուկն այլ ելք չունենալով՝ նրան սպանելու թույլտվություն է տալիս: Մանուկ Գրիգորիսի սպանությունը կատարվում է մի առանձնակի դաժանությամբ: Կապելով մի ամեհի ձիու պոչից, նրան բաց են թողնում Կասպից ծովի առափնյա Վատնյան կոչվող դաշտով մեկ, մինչև վախճանվելը[39]: Մանուկ Գրիգորիսի վախճանն այսպես են նկարագրում նաև Մ. Խորենացին ու Մ. Կաղանկատվացին[40]: Հայաստանից գնացած նրա աշակերտները վերցնում են իրենց ուսուցչի դին և բերում-հասցնում են Արցախի Հաբանդ գավառի Ամարաս գյուղ և թաղում տեղի Ս. Գրիգոր Լուսավորչի հիմնադրած եկեղեցում[41]:

Նրա նահատակությունը տեղի է ունենում 336/337 թ.[42]:

---

[35] Բուզանդ, էջ 26:

[36] Նույն տեղում:

[37] Կաղանկատվացի, էջ 26:

[38] Բուզանդ, էջ 26:

[39] Նույն տեղում:

[40] Խորենացի, էջ 259-260, Կաղանկատվացի, էջ 38-39:

[41] Բուզանդ, էջ 26, Խորենացի, էջ 260, Կաղանկատվացի, էջ 39, 65:

[42] Եկեղեցական ավանդության համաձայն, ավելի ուշ Աղվանից Վաչագան Գ Բարեպաշտ թագավորի (480-510 թթ.) օրոք, հայտնաբերվում են սրբի նշխարները: Թագավորը նշխարների մեծ մասը թողնում է Ամարասում, իսկ մնացածը բաժանում Արևելից կողմանց եկեղեցական թեմերի միջև (Կաղանկատվացի, էջ 78-86): 1969 թ. Ամարաս վանքի պեղումների ժամանակ բացվել է մի գերեզման, որում գտնվել է կլոր արկղ, իսկ արկղում՝ մի կմախք կծկված վիճակում: Քարերից մեկի վրա եղել է հայերեն ազգանուն. «Սա Ս. Գրիգորիսի իմաստուն այրի գերեզմանն է» բովանդակությամբ: Ուսումնասիրողների կարծիքով սա իրոք Մանուկ Գրիգորիսի գերեզմանն է (Տես Р. Б. Геюшев, Христианство в Кавказской Албании, Баку, 1984, с. 34): Բայց արձանագրությունը, անխոս, կարող էր փորագրված լինել անհամեմատ ուշ ժամանակներում, որն էլ կասկածելի է դարձնում ուսումնասիրողների եզրակացությունը:

Սպանելով Մանուկ Գրիգորիսին, Սանատրուկ-Սանեսանը հալածանքներ է սկսում բոլոր նրանց նկատմամբ, ովքեր քրիստոնեություն էին ընդունել: Նրանցից շատերը փրկվելու համար փախչում են և ապաստանում Արցախի Դիզափայտ կոչվող լեռան վրա կառուցված Կատարո վանքում[43]: Բայց Սանատրուկ-Սանեսանը, որին այլևս ոչ ոք չէր խանգարում, մեծաքանակ և բազմացեղ բանակով Հայաստան արշավելիս հասնում է նրանց և բոլորին կոտորում՝ չխնայելով նույնիսկ որդիներին[44]:

Մանուկ Գրիգորիսը քրիստոնեական վաղ շրջանի ամենավառ գործիչներից էր: Նա վախճանվեց, բայց նրա ջանքերն ապարդյուն չանցան: Քրիստոնյա այս քարոզչի շուրջ 8-ամյա (330-337 թթ.) գործունեության շնորհիվ նոր ուսմունքն ամրապնդվում է Հայոց Արևելից կողմերում, մասնավորապես Փայտակարանում ու Արցախում, և ճանաչում ստանում հյուսիսային ցեղերի մոտ: Բայց նրա գործունեությունն առանձնապես արդյունավետ եղավ Աղվանքում: Այստեղ այն ոչ միայն լայն տարածում է գտնում ու ամրապնդվում, այլև պարարտ հող նախապատրաստում 4-րդ դարի 70-ականների սկզբին պետական պաշտոնական կրոն դառնալու համար:

Մանուկ Գրիգորիսի գործունեությամբ սկիզբ է դրվում հայ-աղվանական եկեղեցական հարաբերություններին, որոնց տևողությունը չափվում է դարերով:

[43] Հիմա էլ կանգուն է և գտնվում է Արցախի այժմյան Ջիարաթ լեռան վրա (Կաղանկատվացի, էջ 281, ծանոթություն 137):

[44] Կաղանկատվացի, էջ 119:

*ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ*
*Պատմական գիտությունների թեկնածու*

# ՍԱՄՈՒԵԼ ԱՆԵՑԻ
(կենսագրական լրացումներ)

12-րդ դարի հայ մատենագրության նշանավոր ներկայացուցիչներից է Սամուել Անեցին՝ Անիի Կաթողիկե եկեղեցու երեցը: Հատկանշական է, որ հայ պատմագիրների մատենագրական ցանկերում սովորաբար չեշտվում է Սամուելի՝ Անիի Կաթողիկեի սպասավոր լինելու հանգամանքը՝ «Սամուէլ քահանայ կաթուղիկէին Անւոյ» կամ «Սամուէլ երէց կաթուղիկէին Անւոյ»[1]:

Անեցին իր ժամանակագրությունը՝ «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց...» խորագրով, կազմել է Կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու (1113-1166) պատվերով: Մինչև վերջերս պատմագրության մեջ ընդունված էր Սամուելի աշխատության ավարտման տարեթիվ համարել 1177, 1179 կամ 1180 թվականները, որոնք շրջանառության մեջ են մտել ժամանակագրության մեջ կատարված հետագա հավելումների հետևանքով: Իրականում պատմիչը դեպքերի շարադրանքն ավարտել է 1163 թվականով, ինչը երևում է ժամանակագրության մեզ հասած հնագույն ընդօրինակությունից (Մատենադարան, ձեռ. թիվ 5619), որը կատարվել է 1176 թ. Կամրջաձորի վանքում, Ավետիս գրչի ձեռքով[2]:

Բացի ժամանակագրությունից, Սամուել Անեցին հեղինակել է նաև տոմարագիտական աշխատություն՝ «Մեկնութիւն տումարի, զոր արարեալ է Սամուէլի քահանայի ի խնդրոյ Ստեփանոսի Իմաստասիրի», որը հրատարակել է Ա. Աբրահամյանը[3]: Այն շարադրված է հարց ու պատասխանի ձևով, ըստ որում Անեցին օգտվել է Անանիա Շիրակացու Քննիկոն աշխատության տոմարագիտական բաժնից, երբեմն առանձին հատվածներ նույնությամբ արտագրելով: Ուշագրավ է, որ Շիրակացու հիշյալ աշխատության բնագիրը 1040-ական թվականներին պահվել է Անիի կաթողիկոսարանում, որի վերաբերյալ ուղղակի նշում կա Գրիգոր Մագիստրոսի՝ Պետրոս Գետադարձին ուղղված նամակներից մեկում: Գիտնական իշխանը կաթողիկոսին խորհուրդ է տալիս այդ աշխատությունն օգտագործել ուսումնական նպատակով[4]:

Ստորև կփորձենք ի մի բերել Սամուել Անեցու վերաբերյալ պահպանված տեղեկությունները՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախորդ ուսումնասիրողները հաճախ

---

[1] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց (աշխատությամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի), Երևան, 1961, էջ 8, Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ 51-53:

[2] Կ. Մաթևոսյան, Սամուել Անեցու «Ժամանակագրության» ավարտման թվականը և պատվիրատուն, «Պատմա-բանասիրական հանդես», 1992, թիվ 1, էջ 156-162:

[3] Ա. Գ. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունները, «Էջմիածին», 1952, Ա, էջ 30-36:

[4] Գրիգոր Մագիստրոսի թղթերը (աշխատասիրությամբ՝ Կ. Կոստանյանցի), Ալեքսանդրապոլ, 1910, էջ 8-9, Կ. Մաթևոսյան, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, էջ 236-237:

բավարարվել են «Նրա մասին կենսագրական տեղեկություններ չունենք»[5] կամ «Նրա մասին գրեթե ոչինչ չի պահպանվել»[6] և նմանօրինակ ձևակերպումներով[7]:

Մոտ 110 տարի առաջ Անեցու ժամանակագրության հրատարակիչ Արշակ Տեր-Միքելյանը նրան թեականորեն նույնացրել է Կիլիկիայում ապրած գրիչ Սամուելի հետ, որը 1190 թ. Սկևռայում Ներսես Լամբրոնացու հրամանով ընդօրինակել է վերջինիս «Սաղմոսաց մեկնությունը» և մի ընդարձակ հիշատակարան գրել[8]: Սակայն այն հանգամանքը, որ իրեն «նուաստ եւ յետին» գրիչ անվանող Սամուելը Սկևռայի միաբան էր և վանքի մոտ գտնվող Լամբրոնն անվանում է «ամրոց տէրանց մերոց», բացառում են նման նույնության հնարավորությունը: Կիլիկեցի գրիչը հիշատակարանում նշում է, որ գործը սկսել է իր կրոնակից եղբայր Գեորգը («զկրաւնակից զեղբայր մեր զԳէորգ սկսանել եւ գրել»), որը սակայն կիսատ է թողել և ինքն է շարունակել («Իսկ իմ ի գրելոյ զմատեանս ... նստելս միայնութեամբ սուրբ ուխտիս»): Սամուել Սկևռացին իր կրոնակից եղբորը մեկ անգամ էլ հիշատակում է անվանելով «վարժապետն Գէորգ»[9]:

Ցավոք, երկու Սամուելների՝ վերը նշված անհիմն նույնացման պատճառով Սամուել Անեցու կենսագրության մեջ սխալ տվյալ է սպրդել: «Սամուել Անեցին ուսումնառությունն անց է կացրել Գևորգ անունով վարդապետի մոտ»,- առանց որևէ աղբյուր նշելու գրում է Լ. Բաբայանը[10]: Թյուրիմացության աղբյուրն ակներև է: Նկատենք միայն, որ Սամուել Սկևռացու հիշատակարանում Գեորգը վարդապետ չի կոչվում և ոչ էլ երևում է, թե գրիչն աշակերտել է վերջինիս:

Սամուել Անեցին ժամանակագրության մեջ միայն մեկ անգամ է իր անունը տալիս, այն հատվածում, ուր նշում է նշանավոր վարդապետ Հովհաննես Սարկավագի մահվան մասին և ավելացնում. «Եւ աշակերտ սորա Երեմիա, որ եւ յասելն վարդապետին թէ՝ յո՞ւր լեր, զամս Գ (3), լուռ եկաց՝ ընդ միտս եւ ընդ Աստուծոյ խօսէր, որ եւ Անձրեւ կոչեցաւ: Եւ ընկերք սորա՝ տէր Խաչատուր եւ Գրիգոր եւ Յովհաննէս եւ Սամուէլ, ամենեքեան սոքա Անեցիք»[11]: Երեմիա Անձրևիկի և Սամուել Անեցու՝ Հովհաննես Սարկավագին աշակերտելու մասին նշում է նաև Վարդան Արևելցին. «Էին եւ վարդապետք յայնմ ժամանակի Յովհաննէս, որ եւ Սարկաւագ... որոյ յիշատակ ճառագայթիցն փայլին մինչեւ ցարդ ի բանս իւր - եւ ի նմանէ աշակերտեալն՝ Երեմիա, որ եւ Անձրեւիկ... եւ Սամուէլ երէց Անեցին, որ զգաւազանսն յօրինեաց Քրոնիկոնին»[12]:

Այժմ տեսնենք, թե որ դպրոցում և երբ է ուսանել Սամուել Անեցին:

---

[5] Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 94:

[6] Լ. Բաբայան, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության, Երևան, 1981, էջ 176:

[7] Սամուելի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, աշխատասիրությամբ Ա. Տեր-Միքելյանի, Վաղարշապատ, 1893, էջ Ե (այսուհետև՝ Անեցի), Ստ. Մելիք-Բախշյան, Հայոց պատմության աղբյուրագիտություն, Երևան, 1979, էջ 173, Թ. Խ. Հակոբյան, Անիի պատմություն, գիրք Ա, Երևան, 1982, էջ 116:

[8] Անեցի, էջ ԵՁ, 231-233, Ա. Մաթևոսյան, Ե-ԺԲ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1988, էջ 255-261:

[9] Ե-ԺԲ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 259:

[10] Լ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 177:

[11] Անեցի, էջ 128:

[12] Վարդանայ Բարձրբերդցւոյ պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 159:

## ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Հովհաննես Սարկավագի Անիի դպրոցում գործունեության մասին վկայություն է պահպանվել նրա կենսագրության մեջ, ուր կան բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ: Կենսագրի պատկերավոր արտահայտությամբ՝ Հովհաննես Սարկավագը, «իբրեւ զիմաստուն մեղու, թարձեալ յանդամս մտաց զծաղիկս յերանգոց գունոց, եւ հոտոց եւ համոց, բերէր ի քաղաք իւր եւ տեղի սննդեան՝ ի քաղաքամայրս Անի եւ լի առնէր ըզտունն ի փարթամութենէ անտի... Ուրչ բազ թոլորեալ զմանկունս զիւրեաւ՝ խոնարհաբար եւ անուշեղի սիրով ուսուցանէր զկրթին եւ զխորին իրս... Եւ զետք յորովայնէ նորա բղխեալ՝ արբուցին զտուն տէրունական եւ զնորատունկ մանկունս յարկաց Աստուծոյ... եղին յարմատոյ եւ ի շառաւիղէ նորին... ուսուցիչք եւ լուսաւորք ոգւով... եւ լցին զտիեզերս բանիւն կենաց...»[13]:

Հովհաննես Սարկավագի գլխավորած դպրոցին անդրադարձող ուսումնասիրողները, որպես կանոն, չեն խորացել դպրոցի հիմնման հանգամանքների մեջ, որի պատճառով անտեսել են այդ շրջանում Անիում կաթողիկոսական Աթոռի վերահաստատման հանգամանքը՝ կարծելով, թե Սարկավագը քաղաքում մի մասնավոր դպրոց է ստեղծել, իսկ ոմանք էլ այն պարզապես աշխարհիկ դպրոց են համարել[14]: Մինչդեռ իրողությունն այն է, որ Սելջուկյան ամիրաների իշխանության տակ գտնվող Անիում համահայկական նշանակություն ունեցող բարձրագույն դպրոց կարող էր բացվել միայն եկեղեցական բարձր հովանավորության պայմաններում:

11-րդ դարի վերջերին Անիում կարճ ժամանակով վերականգնվեց կաթողիկոսական Աթոռը, երբ կաթողիկոս դարձավ Բարսեղ Ա Անեցին (1081-1113): Հաղպատում ձեռնադրված Բարսեղը հավանաբար հենց այդ ժամանակ էլ իր հետ Անի է բերել տեղի նշանավոր վարդապետ Հովհաննես Սարկավագին՝ նրան հանձնարարելով կաթողիկոսարանի դպրոցի վերաբացումը (Անիի կաթողիկոսարանին կից դպրոց գոյություն ուներ Սարգիս Ա Սևանցի և Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսների ժամանակ): Այս էր պատճառը, որ հոգևոր բարձրագույն կրթություն ստանալու համար Սարկավագի մոտ էին գալիս Հայաստանի տարբեր ծայրերից, որպես «իմաստութեան գանձուց վաճառականք», Անիում ուսանելով դառնում «ուսուցիչք եւ լուսաւորք ոգւով», և վերադառնալով իրենց գավառները՝ վարդապետի պատգամները տարածում ողջ երկրում՝ «...նորայն առասացութիւնք լցին զոլորտս Հայաստանեայց»[15]:

Բնական է, որ Սարկավագի՝ Անիի դպրոցում քիչ չեն եղել նաև անեցիները: Հենց նրանց է հիշատակել Սամուել Անեցին. «տէր Խաչատուր եւ Գրիգոր եւ Յովհաննէս եւ Սամուէլ ամենեքեանք սոքա Անեցիք»: Սրանցից Գրիգորն է հավանաբար, որ 1127 թ. հիշվում է որպես Անիի կաթողիկեի ավագերեց, և որի դեմ փորձում է ճնշում գործադրել

[13] Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 120-121:

[14] Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 25, Թ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 114, Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 243, Կ. Միրումյան, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Երևան, 1984, էջ 29:

[15] Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 120:

Փաղդուն ամիրան, բայց հաջողության չի հասնում[16]: Ավելի ուշ Գրիգորին փոխարինում է Սամուել Անեցին:

Ինչպես տեսնում ենք, անեցի պատմիչը հայրենի քաղաքում ստացել է ժամանակի բարձրագույն կրթությունը, և պատահական չէ, որ հետագայում նրա պատվիրատուն է դարձել ժամանակի Հայոց Կաթողիկոսը:

Սարկավագի գլխավորած Անիի դպրոցի գործունեության ժամանակի առնչությամբ պետք է ասել, որ1105 թ. Բարսեղ Կաթողիկոսը տեղափոխվեց Քեսուն, կատարեց Գրիգոր Վկայասեր Կաթողիկոսի թաղումը և մինչև իր մահը (1113 թ.) այլևս Անի չվերադարձավ: Իսկ մինչև ե՞րբ է Անիում մնացել Հովհաննես Սարկավագը: Ենթադրվել է, որ «Հովհաննեսն իր ծերության հասակում քաշվել է Հաղբատի վանքը և այնտեղ անցկացրել իր վերջին օրերը»[17]: Ստույգ հայտնի է, որ նա մահացել է 1129 թ. և թաղվել Հաղբատում:

Սարկավագի՝ Անիում գտնվելու ժամանակի ճշտման հնարավորություն է տալիս գրիչ Մարկոսի 1195 թ. հիշատակարանը, ուր խոսվում է ձեռագրի («Կոչումն ընծայութեան Կիւրղի Երուսաղէմացւոյ») նախօրինակի մասին: Այն գրված է եղել Անիում, Մայր տաճարի սպասավոր Սարկավագ քահանայի (Հովհաննես Սարկավագի) կողմից՝ «...զոր Սարկաւագ քահանայ՝ սպասաւոր Սուրբ Կաթողիկէի մեծի, որ յԱնի, ի բազմաց աւրինակաց ի ձեռն եւ այլոց գիտնականաց, զաւգտակարսն առեալ հաւաքեց ի մի դիր եւ շարադրեաց իւրով ձեռամբ ի դիւրալուր մտաց եւ գիտութեան...»[18]:

Անիի Մայր տաճարը (Կաթողիկեն) 1064-ին սելջուկների կողմից մզկիթի էր վերածվել և կրկին օծվեց 60 տարի անց՝ 1124 թ., այն բանից հետո, երբ վրաց Դավիթ Շինարար թագավորը գրավեց Անին: Թեև 1126-ին նա հարկադրված քաղաքը վերադարձրեց Շեդդադյան ամիրաներին, բայց պայմանով, որ Կաթողիկեն մշտապես պետք է հայերին պատկանի: Փաստորեն, Հովհաննես Սարկավագն Անիի Մայր տաճարում կարող էր սպասավորել միայն 1124 թվականից հետո: Այսպիսով, եթե ընդունենք, որ նա Հաղբատից Անի է եկել Բարսեղ Անեցու հետ 1081 թվականին, ապա այս հիշատակարանի շնորհիվ կարող ենք ասել, որ քաղաքում է մնացել նվազագույնը մինչև 1124-26 թվականները: Անհավասիկ, այս շուրջ չորս տասնամյակը գերազանցող ժամանակաշրջանը նկատի ունենալու դեպքում միանգամայն հասկանալի են դառնում նաև անանուն կենսագրի՝ Սարկավագի մասին ասած խոսքերը, թե նա իմաստության գանձերը բերում էր «ի քաղաք իւր եւ տեղի սննդեան՝ ի քաղաքամայրս Անի»:

Այս ամենը կարևոր է նաև Սամուել Անեցու կենսագրության տեսանկյունից, քանի որ թույլ է տալիս որոշել նրա ուսումնառության մոտավոր ժամանակը: Անեցին Սարկավագի գլխավորած դպրոցում կարող էր ուսանել մինչև 1126 թվականը:

---

[16] Վարդանայ Բարձրբերդեցւոյ պատմութիւն..., էջ 158:

[17] Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 30:

[18] Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 126:

## ՍԱՄՈՒԵԼ ԱՆԵՑԻ ԵՎ ԳՐԻԳՈՐ Գ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ

Սամուելի ժամանակագրության ստեղծման համար պարտական ենք ոչ միայն հեղինակին, այլև պատվիրատուին՝ Հայոց Կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունուն: Նա կաթողիկոս ձեռնադրվեց 1113 թ. Քեսունի Կարմիր վանքում Գրիգոր Բ Վկայասերի և Բարսեղ Ա Անեցու պատգամի համաձայն: Տեղի հայոց իշխանության անկումից հետո՝ 1116-ին, փոխադրվեց Ծովք փոքր ամրոց՝ իր եղբոր՝ Վասիլ իշխանի մոտ, սակայն անհաստատ կացության մեջ էր և կայուն աթոռանիստ էր փնտրում: Ինչպես ստորև կտեսնենք, այդ ժամանակ նա փորձել է հաստատվել Անիում, ուր քառորդ դար աթոռակալել էր իր նախորդը՝ Բարսեղ Անեցին:

Սամուել Անեցին ժամանակագրության սկզբում իր օգտագործած աղբյուրները թվարկելուց հետո, դիմելով պատվիրատուին, գրում է. «Իսկ իմ մոռացեալ զտգիտութիւն եւ զանուսումնութիւն իմ, ի թախանձելոյ քոյ, սրբազգեացդ Գրիգոր, յաղթեցայ ի սիրոյ կամաց ձերոց, առ ի գրել, զոր կամեցար. եւ այժմ օժանդակեալ ի Հոգւոյն Սրբոյ՝ ժողովեցից ի սոցանէ կարճ ի կարճոյ զախորժակս ձեր զբանից հանդէս, միայն զճշմարտութեան գնալով զհետս»[19]:

Մարդկության պատմությունը սկսելով Ադամից, հասնելով մինչև Հիսուս Քրիստոսի ծնունդը, պատմիչը մեկ անգամ ևս անվանապես դիմում է պատվիրատուին. «Արդ, ով սրբազգեաց տէր իմ Գրիգոր, հարկեցայ ի թախանձելոյ ձեր զեղկելի անձն իմ, եւս զանարհեստ անձն իմ ի մշակութիւն այս գործոյ»[20]:

Ինչպես տեսնում ենք, առաջին դեպքում պատմիչը նշում է փաստերի հիշատակման իր սկզբունքը՝ «կարճ ի կարճոյ», բայց դրանից շեղվում է, երբ գրում է Գրիգոր Պահլավունու կաթողիկոսական ընտրության ու գործունեության մասին, երբ անդրադառնում է Անիի պատմության կարևոր դեպքերին, հատկապես՝ 1124-26 թթ. անցքերին, և երբ ծավալուն մեջբերումներ կատարելով Հովհաննես Սարկավագի գրություններից՝ պատմում է սելջուկների, մասնավորապես Մելիքշահի մասին: Հարկ է նշել, որ պատմական դեպքերի համառոտ ժամանակագրություն կազմելու հետ միասին Անեցին հանգամանորեն է ներկայացրել հատկապես այն հարցերը, որոնք ավելի շատ են հետաքրքրել պատվիրատուին: Այդ երևում է, օրինակ, Անիի 1124-26 թվականների դեպքերին վերաբերող հատվածից:

Սամուել Անեցու վկայության շնորհիվ հայտնի է դառնում, որ Գրիգոր Կաթողիկոսը բանակցություններ էր սկսել Անիի ամիրա Աբուլսավարի հետ, և 1120-ական թվականների սկզբներին նրա ու ամիրայի միջև նախնական համաձայնություն էր կայացել կաթողիկոսական Աթոռի՝ Անի փոխադրման համար: Անեցու վկայությամբ՝ «Հայրապետն... տէր Գրիգորիս... ուխտ սիրոյ ունէր առ Աբլսուար, վասն իւր սեփական Աթոռոյս՝ գալ այսրէն նորա յօժար կամակցութեամբ...»[21]: Սակայն 1224 թ. ծավալված քաղաքական անցքերն ակամա խափանել են այս կարևոր ձեռնարկի իրականացումը:

---

[19] Անեցի, էջ 3:

[20] Անեցի, էջ 51:

[21] Անեցի, էջ 126, Հմմտ. ՄՄ., ձեռ. թիվ 5619, էջ 104բ:

Անեցին նշում է, որ Աբուլասվարը չէր կարողանում ապահովել քաղաքի անվտանգությունը, որի շրջակայքն անընդհատ ասպատակում էին մերթ քոչվոր ավազակները, մերթ վրացիները: Ըստ պատմիչի՝ «անհնարին նեղութեամբ տարակուսեալ տառապեալ բնակիչք քաղաքիս Անւոյ եւ Շիրակ գաւառի՝ խորհեցան ելս գտանել մրրկին ձեռն տալով յարքայն Վրաց ի Դաւիթ, ենենգեցին ամիրայն Աբըլասարայ»[22]: Անեցիները կանչում են Վրաց Դավիթ Շինարար թագավորին և քաղաքի դարպասները բացում նրա առաջ: Վերջինս Աբուլասվարին ընտանիքով հանդերձ գերեվարում, ուղարկում է Վրաստան, ուր բոլորը մահանում են:

Այս նույն պատմությունը էական համընկնումներ ունի Մատթեոս Ուռհայեցու, Վարդան Անեցու և անանուն վրաց պատմիչի մոտ, ըստ որոնց՝ Աբուլասվարը ոտնահարում էր նաև հայերի կրոնական զգացումները: Նա Խլաթում պատրաստել է տալիս, Անի բերում ու Կաթողիկեի գմբեթին բարձրացնում մի մեծ մահիկ, որով լցնում է անեցիների համբերության բաժակը: Դրանից հետո են նրանք կանչում Դավիթին, որը քաղաքը գրավելով՝ կրկին օծել է տալիս Կաթողիկեն՝ մեծ հանդեսով[23]: Հիշյալ պատմիչները Կաթողիկեի խնդիրը 1224 թվականի դեպքերի պատճառն են համարում, մինչդեռ Անեցին այս մասին լռում է (նա որպես անեցիների դժգոհության պատճառ նշում է թշվառությունը, անապահովությունը, ասպատակությունները):

Դրանից հետո Աբուլասվարի որդիներից մեկը՝ Փադլունը, որը Խորասանում էր, համախմբելով համակիր ուժեր, մեծ վնասներ է հասցնում Անիին և ի վերջո կարողանում է երկու տարի անց Դավթի որդի Դեմետրեից հետ ստանալ քաղաքը: Բնականաբար, այս իրադարձություններից հետո Հայոց կաթողիկոսի և Շեդդադյանների հարաբերությունները չէին կարող ջերմ լինել, ուստի հասկանալի է դառնում, թե ինչու Սամուել Անեցին, խոսելով 1124-26 թթ. դեպքերի մասին, թեև պատճառաբանում է անեցիների արարքը, բայց հետո, փաստորեն, պարսավում է իր համաքաղաքացիներին, որոնց ընդվզման հետևանքով երկիրը մատնվել է կատարյալ թշվառության, իսկ կաթողիկոսը չի կարողացել Անիում հաստատվել[24]:

Գրիգոր Գ Պահլավունին երկրորդ անգամ փորձում է Անի տեղափոխվել 1149-50 թվականներին: Սմբատ Սպարապետը կարևոր տեղեկություն է հայտնում այն մասին, որ Իկոնիայի սուլթանի արշավանքի հետևանքով քրիստոնյա իշխանների մի շարք բերդերի գրավման պատճառով Գրիգոր Կաթողիկոսը որոշում է դիմել Վրաց թագավորներին և Ծովքից տեղափոխվել Անի (ըստ պատմիչի՝ քաղաքն այդ ժամանակ նրանց տիրապետության տակ էր): Կաթողիկոսը ճանապարհ է ելնում, սակայն նախ հյուրընկալվում է Թլպաշար ամրոցում, որի տիրուհին տեղեկանալով նրա մտադրության մասին, խոստանում է Հայոց Կաթողիկոսին հատկացնել Հռոմկլա անառիկ ամրոցը[25]: Գրիգոր Գ-ն ընդունում է

[22] Անեցի, էջ 125:

[23] Վարդանայ Բարձրբերդեցւոյ պատմութիւն..., էջ 156, Մատթէոսի Ուռհայեցւոյ Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1869, էջ 451-452, Լ. Մելիքսեթ Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 42-43:

[24] Տե՛ս Անեցի, էջ 127:

[25] Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 161:

այդ առաջարկը և կարճ ժամանակ անց Հայրապետական Աթոռով հանդերձ տեղափոխվում Հռոմկլա:

Այսպիսով, կաթողիկոս Գրիգոր Պահլավունին 1120-ական թվականներից մինչև 1150 թ. մշտապես հետևում էր Անիի անցքերին, սերտ կապ էր պահում անեցիների հետ, քանի որ մտադիր էր հաստատվել այդ ավանդական աթոռանիստում: Սամուել Անեցին, որն անկասկած կաթողիկոսի աջակիցն էր, ժամանակագրությունը կազմելիս նկատի է ունեցել պատվիրատուի քաղաքական շահագրգռվածությունը և շրջանցել անեցիների ու Աբուլասվարի առճակատման կրոնական շարժառիթը: Միաժամանակ Սամուելն առաջնորդվելով պատվիրատուի հետաքրքրությունը բավարարելու ցանկությամբ, փաստերի շարադրման իր որդեգրած «կարճ ի կարճոյ» սկզբունքը խախտում է նաև սելջուկների պատմության փաստերն արձանագրելիս՝ ներկայացնելով պատմական տվյալներ, որոնք կարող էին պիտանի լինել Անիի ամիրաների հետ բանակցող կաթողիկոսի համար:

Սամուել Անեցին ժամանակագրության շարադրանքում մի քանի անգամ ուղիղ խոսքով դիմում է պատվիրատուին: Հնարավոր է, որ նա իր գործը հատված-հատված ուղարկել է նրան և աշխատանքը շարունակել համապատասխան ցուցումներ ստանալով:

Գրիգոր Պահլավունու ձեռնադրության, ապա Երուսաղեմ կատարած փառավոր այցի մասին խոսելուց հետո պատմիչը գրում է. «Բայց վասն զի զսկիզբն ամաց եւ զյաջորդել առաջնորդութեան կամիմք տակաւին նշանակել եւ այսպիսի յաջողուածք եւ այլ բարեպաշտութիւնք եւ գործք զկնի ամաց աւր ըստ աւրէ յաւելաւ, այնր աղագաւ աստանօր թողաք զայլոցն պատմութիւն, զորս եթէ արժանի լինիմք յիւրում տեղւոջն գրեսցուք: Եւ աստանօր զայսոսիկ ծանուցուք մերոյ հրամանատուիդ եւ պատուասիրի»[26]:

Պատմիչը յուրովի զրուցում է պատվիրատուի հետ նաև իր ուսուցչի՝ Հովհաննես Սարկավագի գրություններից քաղվածքներ ներկայացնելիս: Սելջուկների հայտնվելու մասին գրում է. «Սկիւթացւոցն առնուլ զբռնակալութիւն այսպիսի պատճառաւ: Ընթերցաք գրեալ վարդապետին մեծի, որ Սարկաւագ վերակոչի անուանեալ, զի ասէ թէ...»[27]: Հատվածի վերջում ավելացնում է. «Զայսոսիկ նշանակաւ գրոյ եցոյց մեզ Իմաստասէրն մինչեւ ցՄելիքշահն, զոր յիւրում տեղւոջն գրեցից, սորին ձեռնտուութեամբ»: Ալփասլանի նախնիների անունները տալով՝ Անեցին նշում է, որ ինքը ժամանակին տեսել է Սարկավագի գրությունը նաև նրանց մասին, եթե մատյանը գտնի, կվերաշարադրի. «Տեսաք երբեմն գրեալ սորին ձեռօք, ստոյգ գտակաւ, եթէ հանդիպիմք մատենին եւ մեք շարագրեսցուք եւ թէ ոչ, լքցուք...»[28]: Ինչպես երևում է, Սամուելը Հովհաննես Սարկավագի այդ գրությունը չի գտել:

Ալփասլանի մահվան մասին նշելուց հետո, Անեցին գրում է. «Աստանօր զխոստացեալ պարտսն հատուցից զմնացուածս բանից, զոր եթող հարկ տեղւոյն այնորիկ այսու պատշաճեալ ժամանակի: Զի ասէ Իմաստասէրն աստուածային՝ թէ «Իբրեւ առնոյր զփառս իշխանութեան բարեբաղտն Մելիքշահ...»[29]: Շարունակությունն ընդարձակ մեջ-

---

[26] Անեցի, էջ 123, Հմմտ. ՄՄ., ձեռ. թիվ 5619, էջ 102ա–102բ:

[27] Անեցի, էջ, 97:

[28] Անեցի, էջ, 98:

[29] Անեցի, էջ 115:

բերում է Սարկավագի այժմ կորած երկից, ուր հիմնականում փառաբանվում է Մելիքշա-
հը: Հատվածի վերջում պատմիչը նշում է, թե այս ամենն իմաստասերն ասաց Մելիքշահի
կյանքի մասին (որը տիրեց 20 տարի), իսկ հետո ինքը կգրի նաև նրա մահվան մասին ա-
տածը. «Արդ՝ ասաց զայս զկենաց նորա, որ տիրեաց ամս ի (20) իսկ զկնի գրեցից զոր ինչ
վասն մահուան է ասացեալ»[30]: Քիչ անց, խոստումը կատարելով, պատմիչը գրում է Մե-
լիքշահի մահվան, բայց նաև՝ քրիստոնյաների և մասնավորապես հայերի նկատմամբ նրա
ունեցած բարյացակամ վերաբերմունքի, Բարսեղ Անեցու՝ նրա մոտ կատարած այցի մա-
սին: Անեցի պատմիչը դարձյալ մեջբերում է կատարում Սարկավագից՝ չմոռանալով մե-
ծարական ոճով հիշել իր ուսուցչին: Նա գրում է, թե Մելիքշահի մասին «ախորժելի եղեւ
բանից դրուատիւք վարդապետին սրբոյ գրել եւ խոստանալ դարձեալ գրել արուեստա-
բան եւ երկայն ճառիւք: Եւ ... այսպէս է գրեալ, թէ ....»[31]:

Ինչպես տեսնում ենք, Սամուել Անեցին կատարել է կաթողիկոսի պահանջը և հնարավորինս նյութեր քաղել սելջուկների մասին: Համառոտաբան ժամանակագրի երկում այդ հատվածներն այնքան նկատելի են, որ հաջորդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին իրավացիորեն գրում է. «...մինչեւ ցՄելիքշահ սուլթանն գրեալ էր զպատճառս տիրելոյն նոցա մեծիմաստ վարդապետին, որ Սարկաւագն կոչէր, եւ երկրորդեալ էր Սամուէլ քահանայ...»[32]:

Բերված հատվածները միաժամանակ ցույց են տալիս Անեցու բացառիկ ակնածանքը Հովհաննես Սարկավագի նկատմամբ:

Ցավոք, Անեցու երկը զուրկ է վերջաբանից: Եթե ժամանակագրության սկզբում պատմիչը գեղեցիկ ոճով դիմում է պատվիրատուին, շարադրանքի տարբեր հատվածներում բացատրություններ տալիս[33], ապա ավարտում է 1161-1163 թթ. Անիի շուրջ ծագած վրացամահմեդական պատերազմին վերաբերող դեպքերի պարզ հիշատակությամբ[34]:

Հաջորդ թվականին Գեորգին ստիպված էր Անին կրկին վերադարձնել Շեդդադյաններին, որը վկայված է տարբեր սկզբնաղբյուրներում[35], սակայն այս փաստն այլևս տեղ չի գտել Սամուելի երկում, քանի որ նա շարադրանքն ավարտել է հենց 1163-ին: Հատկանշական է, որ Անեցու ժամանակագրության հնագույն ընդօրինակության մեջ (1176 թ.) վերջին հիշատակությունից հետո դրված է զարդագիծ ավարտանշան[36]:

Այսօր դժվար է ասել, թե արդյոք Անեցու երկն անավարտ է մնացել: Ուշադրության է արժանի Անեցու նշումը 1161 թ. Գեորգիի հաղթանակի ականատեսը լինելու մասին՝ «եւ այսորիկ ականատես եղաք մեք», որը նույնպես պատվիրատուին հասցեագրված ուղիղ խոսք է: Հավանական է ենթադրել, որ Անեցին իր գրածը կաթողիկոսին էր ուղարկում ա-

---

[30] Անեցի, էջ 116:

[31] Անեցի, էջ 119:

[32] Կիրակոս Գանձակեցի, էջ, 84:

[33] Անեցի, էջ 3, 51, 97, 109, 116, 123, 128:

[34] Տե՛ս Անեցի, էջ 137-138 Համտ. ՄՄ., ձեռ., թիվ 5619, էջ 106բ-107ա:

[35] Դեպքերի հանգամանալից պատմությունը տե՛ս Հ.Գ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարերի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, էջ 116-119:

[36] Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 107ա, Կ. Մաթևոսյան, Սամուել Անեցու «Ժամանակագրության» ավարտման թվականը..., էջ 156-162:

վարտում հատվածներով: Եթե այդպես է, ապա 1163-ի վերջերին (Գեորգիի պարտությունը տեղի է ունեցել ամռանը)[37] կաթողիկոսին ուղարկված հատվածը իրոք պետք է վերջինը լիներ, քանի որ Գրիգոր Գ Պահլավունին այդ ժամանակ արդեն ծանր հիվանդ էր և համոզում էր եղբորը՝ Ներսես Շնորհալուն, ստանձնել կաթողիկոսությունը[38]: Երկար ընդդիմանալուց հետո, տեսնելով եղբոր անմխիթար վիճակը, 1166 թ. ապրիլին Ներսեսը համաձայնում է ձեռնադրվել, որից երեք ամիս անց մահանում է Գրիգոր Պահլավունին:

Այսպիսով ավարտվում է Անի վերադառնալ փափագող կաթողիկոսի և Անիի գլխավոր եկեղեցու մատենագիր քահանայի համագործակցությունը: Ուշագրավ է, որ կաթողիկոսությունն ստանձնելու առիթով արտասանած ատենախոսության մեջ Շնորհալին ցավով նշել է հայրապետական Աթոռի «պանդխտության» մեջ գտնվելու հանգամանքը[39], յուրովի վկայելով, որ դեռ մոռացված չէր Անի վերադառնալու ծրագիրը:

Թե երբ է մահացել ինքը՝ Սամուել Անեցին, հայտնի չէ, սակայն խիստ հետաքրքրական է նրա սերնդի մասին պահպանված տեղեկությունը, որին անդրադառնալուց հետո կփորձենք ընդհանրացնել Անեցու կենսագրության մասին առկա տվյալները:

## ՍԱՄՈՒԵԼ ԱՆԵՑՈՒ ՍԵՐՈՒՆԴԸ

1233 թ. Սամուել Անեցու թոռը՝ Աբրահամ երեցը, Անիում գտնվող իր ունեցվածքից արժեքավոր նվիրատվություն է կատարել քաղաքի մերձակա Խծկոնքի վանքին: Արձանագրության մեջ նա հիշում է հորը՝ Սարկավագ քահանային, և համբավավոր պապին՝ վերջինիս հիշատակին նվիրելով կատարած նվիրատվության դիմաց ստացած վեց պատարագներից երկուսը: Ահա այդ արձանագրությունից մի հատված. «Ի ՈՁԲ (1233) թուին շնորհիւն Քրիստոսի, ես Աբրահամ երէց, որդի Սարկաւագ քահանայի, թոռն Սամուէլ երիցոյ Անեցի ետու զիմ գանձագին Բ (2) տուն նորաշէն եւ ի վերէն Բ (2) կուղպակ ի սուրբ ուխտս ի Խծկաւնս... եւ փոխարէն հատուցէն մեզ յամենայն ամի Զ (6) աւր պատարագ՝ Դ (4) Աբրահամու եւ Բ (2) տէր պապ երիցու...»[40]:

Արձանագրության շնորհիվ մեզ հայտնի է դառնում, որ Սամուել Անեցու քահանա որդին Սարկավագ անունն է կրել: Վերն արդեն տեսանք, թե ինչպիսի վերաբերմունք ուներ Անեցին Հովհաննես Սարկավագի նկատմամբ, որից հետո բնական պետք է լինի ենթադրությունը, թե նա որդուն Սարկավագ է անվանել ի պատիվ սիրելի ուսուցչի:

Չի բացառվում, որ Սամուելի որդի Սարկավագն է 1151 թ. նորոգել Անիի Ս. Սարգիս եկեղեցին, որը գրականության մեջ երբեմն կոչվում է նաև Սարկավագի եկեղեցի[41]:

Սամուելի թոռ և Սարկավագի որդի Աբրահամ երեցից հետո այս քահանայական տոհմը շարունակվել է, թե ոչ՝ հայտնի չէ: Խծկոնքի արձանագրության մեջ Աբրահամը հիշատակում է իր մի քանի ազգականներին՝ Խոցադեղին, Հովհաննես երեցին, Տիրանցին,

[37] Հ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 113:

[38] Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, 2003, էջ 1622:

[39] Նույն տեղում, էջ 1623:

[40] Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 211:

[41] Կ. Մաթևոսյան, Անի, էջ 128-129:

Ծահմամին, որոնք բոլորն էլ մահացել էին և թաղվել վանքի Ս. Սարգիս եկեղեցու մոտ[42]: Այս հանգամանքը վկայում է, որ 1233 թ. արձանագրման ժամանակ Աբրահամն առաջացած տարիքում գտնվող մարդ էր:

Անեցի մատենագրի տոհմի երեք սերնդի մասին պահպանված վկայությունն արդեն իսկ ուշագրավ իրողություն է (Սամուել Անեցին այս առումով միակն է հայ միջնադարյան պատմիչների մեջ):

## ԱՄՓՈՓՈՒՄ

Քանի որ Սամուել Անեցու ծննդյան և մահվան թվականները հայտնի չեն, այս մասին արված ենթադրությունները միշտ էլ մոտավոր են լինելու: Ա. Տեր-Միքելյանը, որը նույնացրել է Անեցուն և 1190-ին հիշատակարան գրած Սամուել Սկևռացուն, գրում է. «Կգանք այն եզրակացութեան, որ Սամուէլ Անեցին վախճանուել է խորին ծերութեան մէջ՝ մօտաւորապէս 1190 թուից յետոյ, ուրեմն համարեա թէ հարիւր տարեկան հասակում: Ըստ այսմ Սամուէլ ծնուած պէտք է լինի շուրջ 1100 թուին»[43]: Այլ ուսումնասիրողներ պատմիչի ծնունդը տեղադրում են 12-րդ դարի առաջին տասնամյակում, մահը՝ նույն դարի 80-ականներին[44]:

Փորձենք Սամուել Անեցու կենսագրության տվյալները դասակարգել նրա իսկ նախասիրած եղանակով՝ ժամանակագրական կարգով, ծննդյան, ուսումնառության և մահվան ենթադրելի ժամանակահատվածները (նշվում են շեղագիր) համադրելով պատմական հայտնի թվականների հետ:

*1100-1110* թթ. ժամանակամիջոց - Սամուել Անեցու ծնունդը:

1113 թ. - Անեցու պատվիրատու Գրիգոր Գ Պահլավունու կաթողիկոսական ձեռնադրությունը:

*1120* թ. շուրջ (վերջին ժամկետը՝ 1126) - ուսումնառություն Հովհաննես Սարկավագի Անիի դպրոցում:

1129 թ. - Հովհաննես Սարկավագի մահը (Անեցին ժամանակագրության մեջ այս մասին վկայությունից հետո վարդապետի սաներին թվարկելիս՝ առաջին և միակ անգամ տալիս է իր անունը՝ Սամուել):

1161 թ. - Անիի մոտ վրաց Գեորգի թագավորի հաղթանակը նկարագրելուց հետո Անեցին նշում է, որ դրա ականատեսն է եղել:

1163 թ. - Վերջին նշումը Անեցու ժամանակագրության մեջ:

1166 թ. - Գրիգոր Գ Պահլավունու մահը:

1176 թ. - Անեցու ժամանակագրության հայտնի հնագույն ընդօրինակությունը Կամրջաձորի վանքում:

---

[42] Ն. Սարգիսեան, նույն տեղում:

[43] Անեցի, էջ Ջ:

[44] Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական..., էջ 31, Մելիք-Բախշյան, նշվ. աշխ., էջ 173, Բաբայան, նշվ. աշխ., էջ 177:

*1180-1190* թթ. ժամանակամիջոց - Սամուել Անեցու մահը:

1233 - Անեցու թոռան՝ Աբրահամ քահանայի արձանագրությունը Խծկոնքում, ուր հիշատակում է հորը՝ Սարկավագ քահանային, և պապին:

Այսպիսով, կարող ենք ասել, որ 12-րդ դարի սկզբներին Անիում ծնված Սամուել Անեցին 1120-ական թվականներին հայրենի քաղաքում Հովհաննես Սարկավագի դպրոցն ավարտելով ստացել է ժամանակի համար բարձրագույն կրթություն, որից հետո, հավանաբար 1130-ական թվականներից, քահանայագործել է քաղաքի Մայր տաճարում: Նա եղել է ժամանակի ամենազարգացած անձանցից մեկը և պատահական չէ, որ Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի պատվերով է կազմել իր ժամանակագրությունը: Անեցին օգտվել է բազմաթիվ աղբյուրներից, որոնց մի մասն այժմ կորած են, միաժամանակ նկարագրել է իրադարձություններ, որոնց ականատեսն է եղել, շարադրանքը հասցնելով մինչև 1163 թ.: Ժամանակագրական, տոմարական հարցերում նրա քաջագիտակ լինելու վկայությունն է նաև Ստեփանոս Իմաստասերի պատվերով «Մեկնութիւն տումարի» գործի ստեղծումը:

Անիի հզոր մշակութային միջավայրի ծնունդ, գիտնական քահանա Սամուել Անեցին թողել է արժեքավոր մատենագրական ժառանգություն: Սակայն այն դեռևս կարոտ է հանգամանալից և ամբողջական գիտական ուսումնասիրության ու հրատարակության, նաև աշխարհաբար թարգմանության:

*ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻՆ ԱՊԱՎԻՆՈՒՄ Է ԼՅՈՒԴՈՎԻԿՈՍ XIV ԹԱԳԱՎՈՐԻՆ

Աստվածաշնչի տպագրությամբ Ոսկան Երևանցին նպատակ ուներ իրականացնելու ոչ միայն Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու հանձնարարությունը, այլև ակնկալում էր այդ գրքի վաճառքի միջոցով թեթևացնել տպարանի վրա ծանրացած պարտքերի բեռը:

Հայտնի է նաև, որ վիճակի բարելավման փոխարեն տեղի է ունենում ճիշտ հակառակը: Վաճառքի նպատակով Հայաստան ուղարկված Աստվածաշնչի կապոցները նավաբեկման հետևանքով ջրասույզ են լինում Միջերկրականի ջրերում: Անհետևանք են մնում Կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու կողմից խոստացված օգնության գումարների առաքումը: Լիվոռնոյում, ինչպես նաև Լվովում ձախողման է ենթարկվում Աստվածաշունչ, Ծարականոց և Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմության» վերնագրով գրքերի վաճառքը: Այս ամենի հետևանքը լինում է այն, որ, չկարողանալով ժամանակին վճարել տոկոսով փոխ առնված գումարները, նա ենթարկվում է պարտատերերի ճնշմանը, ապա նաև հալածանքին: Դրությունը փրկելու նպատակով Ոսկան Երևանցին դիմում է մի շարք գործնական քայլերի՝ գիտակցելով, որ պարտատերերը վաղ թե ուշ կարող են գրավել տպարանը: Ելնելով այդ իրավիճակից՝ Ոսկանը տպարանի շարժական կայքը, տառային տնտեսության հետ մեկտեղ, ենթարկում է տրոհման: Մի մասի համար ներքին պայմանավորվածությամբ սեփականատեր է դարձնում իր աշակերտ՝ տպարանի գրաշար Կարապետ Անդրիանացուն և ապա Ս. Էջմիածնի և Ս. Սարգիս զորավարի անվան տպարանը որոշակի նկատառումով Բումսլոտից տեղափոխում է Կայզերշտատ փողոց[1]:

Ամստերդամը Ոսկան Երևանցու համար թեև ուներ որոշակի առավելություն՝ համեմատաբար զերծ էր Հռոմի Հավատի տարածման ժողովի գրաքննչական միջամտություններից, այնուհանդերձ այդ քաղաքն ուներ այն թերությունը, որ բավական հեռու էր Հայաստան աշխարհից և զգալապես մեծ էին բեռներ Հոլանդիայից արևելք տեղափոխելու հետ կապված ծախսերը, ինչը Ոսկան Երևանցու համար ուներ կարևոր նշանակություն:

Այս և այլ կարգի հանգամանքների պատճառով Ոսկան Երևանցին ստիպված է լինում կանգ առնել Ամստերդամը թողնելու փաստի առաջ: Ելնելով այն բանից, որ Վենետիկը չէր ենթարկվում Հավատի տարածման ժողովի գրաքննչական խստություններին, նա մտադրվում է տպարանը տեղափոխել Վենետիկ կամ Ժենովա: Այս պարագայում Ոսկանը պետք է ունենար Հռոմի կողմից տրված համապատասխան թույլտվություն... Ուստի նա 1668 թվականի հոկտեմբերի 29-ին մի նամակով դիմում է Հռոմի Հավատի տարածման ժողովին: Տեղյակ պահելով Ամստերդամի տպարանը Վենետիկ կամ Ժենովա տեղափոխե-

---

[1] Տե՛ս Առաքել Սարուխան, Հոլանդան և հայերը, Վենետիկ, 1926, էջ 85:

լու մտադրության մասին, Ոսկանը խնդրում է իրեն տալ համապատասխան թույլտվություն: Նա միաժամանակ նպատակ ուներ Աստվածաշնչից իր մոտ մնացած օրինակների վաճառքն իրականացնել կաթոլիկե դավանանքին հարող հայության միջավայրում: Ենթադրվող խոչընդոտները հարթելու նպատակով, նա ոչ միայն նամակով դիմում է, այլև իր հրատարակած Աստվածաշնչից մեկական օրինակ համապատասխան մակագրությամբ նվեր է ուղարկում Հռոմի քահանայապետ Կղեմես Թ Պապին և Հավատի տարածման ժողովին[2]:

Մինչև Հռոմից կստացվեր առաքված նամակների պատասխանը, 1668 թվականի վերջերին Ոսկան Երևանցու ականջին լուր է հասնում ֆրանսիական կառավարության քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունների մասին: Ոսկանին ուրախացնող լուրը վերաբերվում էր Ֆրանսիայի հարավային ծովեզրյա քաղաքներում վաճառականների հանդեպ կիրառվող նոր սահմանված ստատուսին:

Ինչպես գրում է Ա. Բայբուրդյանը, «Այդ առիթով Լյուդովիկոս XIV-ի և Կոլբերգի հրապարակած էդիկտում ասված էր, որ Մարսել եկող և այնտեղից մեկնող բոլոր նավերը ազատվում են ամեն տեսակի հարկերից և որ այդ նավահանգիստն այսուհետև հայտարարվում է ազատ ու մատչելի բոլոր վաճառականների, բոլոր տեսակի ապրանքների համար»[3]: Ըստ այդ հրամանագրի՝ վերացվում են նախկինում կիրառվող խստություններն ու սահմանափակումները, և Մարսելը հայտարարվում է բաց նավահանգիստ: Վերացվում են Մարսել մտնող և այնտեղից մեկնող նավերից գանձվող հարկերը: Արտոնություններ են տրվում հայ վաճառականներին, խրախուսվում է հայկական գրատպությունը և այլն:

Ժամանակին Եվրոպայում լայն տարածում ունեցող այս լուրը հասնում է նաև Հոլանդիա և հեղաբեկում առաջացնում Ոսկան Երևանցու ծրագրերի մեջ: Խորհելուց ու կշռադատելուց հետո, Ոսկան Երևանցին որոշում է իր տպարանը Ամստերդամից տեղափոխելու հարցում ապավինել Ֆրանսիայի գահակալ Լյուդովիկոս XIV թագավորի բարյացակամությանը:

Մտահղացման այս նոր տարբերակը Ոսկան Երևանցու համար ուներ աչքի ընկնող առավելություններ: Նախ կարող էր օգտվել կիրառվող արտոնություններից և ապա Ֆրանսիայի հարավը նրան ձեռնտու էր Հայաստանին ավելի մոտիկ լինելու առումով՝ կարող էր տպագրված գրականությունն ավելի նվազ ծախսերով հասցնել Զմյուռնիա և ապա Հայաստան:

Փոխելով մտադրությունը՝ Ոսկան Երևանցին կատարում է նախապատրաստական աշխատանքներ Ֆրանսիայի գահակալ Լյուդովիկոս թագավորի հետ իր հանդիպումն իրականացնելու համար: Թե նա ինչպես է ձեռք բերել հանդիպումն իրականացնելու իրավունքը, մեզ չհաջողվեց պարզել, սակայն հայտնի է, որ նա Մարսելի ստատուսի մասին լուրը լսելուց հետո եռանդով սկսում է նախապատրաստվել, որպեսզի Ֆրանսիայի ինքնակալին ներկայացնի համապատասխան դիմումնագիր Ամստերդամի տպարանը Մարսել տեղափոխելու վերաբերյալ: Նա որոշում է նաև «Արև արքային» նվիրել իր հրատարակած հայերեն Աստվածաշնչից մեկ օրինակ: 1669 թվականի մայիսի 21-ին նա Լյուդովիկոս

[2] Սահակ Ճեմճեմյան, Հայ տպագրությունը և Հռոմը (ԺԷ դար)», Վենետիկ, Ս. Ղազար, 1989, էջ 94-95:

[3] Տե՛ս Վ. Ա. Բայբուրդյան, Միջերկրածովային առևտրական ճանապարհը և հայ վաճառականների առևտուրը Արևմտյան Եվրոպայի երկրների հետ XVII դարում, «Պատմաբանասիրական հանդես», Ե., 1987, No 3, էջ 112:

XIV-ին գրում է մի «Ուղերձ», թարգմանել է տալիս լատիներեն և Հոլանդիայի նշանավոր կազմարար Ալբերտ Մագնուսին պատվիրում է «Ուղերձի» տպածոն զետեղել շքեղությամբ կազմվող Աստվածաշնչի մատյանի սկզբի էջում: Միաժամանակ ցուցում է տալիս նրան և հանձնարարում կազմը նկարազարդել համապատասխան պատկերով[4]:

Օգտվելով առիթից՝ «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Ոսկան Երևանցու՝ Լյուդովիկոս XIV-ին գրած և Աստվածաշնչի մեջ տեղադրված «Ուղերձի» լուսանկարը[5]:

*Seren ſimo & Potentiſſimo*

DOMINO,

N. LUDOVICO XIV.

DEI GRATIA,

CHRISTIANISSIMO GALLIÆ ET NAVARRÆ REGI,

DOMINO MEO CLEMENTISSIMO

*Perpetuam Felicitatem.*

Sistunt ſeſe, Sereniſſime REX, aſpectui Tuæ Regiæ Majeſtatis longe ſplendidiſſimo Sacra hæc BIBLIA Armenica, à natione noſtrâ diu multumque deſiderata ac expetita, nunc verò primum in orbe Christiano novis elegantibus Typis excuſa, magnisque ſumptibus & ſummo labore ac induſtriâ publicata. Quoniam autem magnos magna decent, hoc pretioſum cimelium, imò animæ medicinam immortali Chriſtianiſſimi REGIS gloriæ conſecrare & dedicare libens meritoque volui. Meritiſſimò quidem propter admirandas & incomparabiles Animi Tui proríus Regii virtutes, nempe Fortitudinem armipotentem, Clementiam mitem, Juſtitiam ſalubrem, Prudentiam circumſpectam, ac Munificentiam inexhauſtam: de quibus & aliis ſatius eſt tacere, quàm breviter ſtrictimque attingere. Pro hac igitur inſitâ Regiâ magnificentiâ, Potentiſſime REX, ſuſcipe ſerenâ fronte hoc devotiſſimæ voluntatis meæ monumentum, ac ſummæ obſervantiæ munus quoddam, quò gratiſſimo benignitatis favore extimulatus alia præclara Manuſcripta Armenica, Sacræ Tuæ Regiæ Majeſtatis ſplendori ad nunquam intermoriturum honorem reſervata, pro virili in lucem edere valeam. Quod ſupereſt, ad Deum omnipotentem confugio, eique ardentiſſimis precibus ſupplico, ut clementiſſimam TUAM SERENITATEM, unà cum totâ Sereniſſimâ Domo Gallicâ, quàm diutiſſimè Imperio, Eccleſiæ Catholicæ, & Reipublicæ literariæ ſuperſtitem atque ſoſpitem eſſe dignetur. Quo voto iterum, & omina fauſta hic finit, & ſubmiſſe æternum veneratur faſtigium

AUGUSTISSIMI REGIS

[illegible]

OSKAN *Vartabied*,

*Epiſcopus Armenorum.*

[illegible]

Ոսկան Երևանցու կազմած լատիներեն «Ուղերձի» լուսանկարը

Նույն՝ 1669 թվականի 26-ը մայիսի ամսաթվով Ոսկան Երևանցին գրում է «Ամենաքրիստոնյա թագավորին» ուղղված մի «Աղերսագիր»՝ Ամստերդամի տպարանը Մարսել տեղափոխելու խնդրանքի առնչությամբ:

Ոսկանն այս «Աղերսագիրը» նույնպես թարգմանել է տալիս լատիներեն և տպածոն պատրաստում ընտանեկության ժամանակ Աստվածաշնչի հետ մեկտեղ Ֆրանսիայի գահակալին ներկայացնելու համար[6]:

Ստորև ներկայացնում ենք այս ուղերձի հայերեն թարգմանությունը:

---

[4] Աստվածաշնչի կազմի լուսանկարի տպածոն տե՛ս Ֆ. Ե. Գուրիեզ, Հայ գրատպությունը Ամստերդամում XVII – XVIII դարերում, «Տեղեկագիր» (Գ. Ա.). Ե., 1963, No 2, էջ 88, 91-92:

[5] Մեր շնորհակալությունն ենք հայտնում պատմաբան մատենագետ Նինել Ոսկանյանին՝ հոդվածում զետեղված լատիներեն «Ուղերձի» լուսապատճենը մեզ տրամադրելու համար:

[6] Ցավոք սրտի, չնայած գործադրած ջանքերին, մեզ չհաջողվեց ձեռք բերել ինչպես Ոսկանի գրած «Աղերսագրի», այնպես էլ Լյուդովիկոսի կողմից Ոսկանին շնորհած արտոնագրի լուսապատճենները: Թերևս պետք է դիմել Ֆրանսիական դեսպանատան օգնությանը:

# ԱՄԵՆԱՊԱՅԾԱՌ ԵՎ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ՏԻՐՈՋԸ ԱՍՏԾՈ ԸՆՏՐՅԱԼ ԼՅՈՒԴՈՎԻԿՈՍ XIV-ԻՆ ՏԻՐՈՋ ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ ԳԱՂՂԻԱՅԻ ԵՎ ՆԱՎԱՐԱՅԻ ԱՄԵՆԱՔՐԻՍՏՈՆՅԱ ԹԱԳԱՎՈՐԻՆ՝ ԻՄ ԱՄԵՆԱՆԵՐՈՂԱՄԻՏ ՏԻՐՈՋԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ՀԱՎԵՐԺ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Պայծառափայլ թագավոր, թող Ձերդ Մեծության հայացքը պարգևող լինի: Այս հայկական Աստվածաշունչը մեր ազգի կողմից երկար ժամանակ ցանկալի և սպասված, այժմ ինկապես առաջին անգամ քրիստոնեական աշխարհում նոր չքեղ տառերով տպագրված և մեծ ծախսերով, չափազանց մեծ աշխատանքով և ջանքերով հրատարակված, մեծաց մեծերին է վայել այս մեծագին գանձը, որը ցանկացա նվիրել ամենաքրիստոնյա անմահ թագավորի փառքին և ձոնել հանույքով և արժանիքով: Նկատի ունենալով հատկապես Քո վճռական թագավորության ոգու հիանալի և անհամեմատելի արժանիքները, ինչպես նաև հուժկու ռազմական ուժը, մեղմությունը, բարերար արդարադատությունը, շրջահայաց իմաստությունը և անսպառ առատաձեռնությունը և որոնց այլոց մասին նախընտրելի է լռել, քան արտահայտվել մակերեսայնորեն: Հետևաբար, Ամենակարող Արքա, այս անձնուն թագավորության մեծության համար պարզ մտքով հարգիր իմ նվիրյալ ցանկության այս հուշարձանը և գերագույն ուշադրության արժանի այս մատուցումը, որով ոգևորված՝ գերաշնորհ բարյացակամության առատաձեռնությամբ կցանկանամ լույս ընծայել ուժերիս ներածի չափով մյուս հիանալի հայկական ձեռագրերը, Քո արքայական սուրբ թագավորական Մեծության փառքի համար, որին վիճակված է երբեք չհանգչելու պատիվը: Մնացածը թողնում եմ Ամենազոր Աստծուն և Նրան խնդրում ջերմագին աղոթքներով, որպեսզի Քո ամենաներողամիտ պայծառության Գաղղիական ամենապայծառ գերդաստանի հետ միասին, ինչքան հնարավոր է արժանի լինի ամենաերկարակյաց կայսրության, Կաթոլիկ Եկեղեցու և գիտությունը հովանավորող ներկայիս պետության համար: Այսու անկեղծորեն աղոթում եմ և երջանիկ նախանշանով այս «Ուղերձը» վերջացնում եմ և ստորագրյալս երկյուղածությամբ աղոթում հավերժական գահիդ համար:

Օգոստոսափառ թագավորի խոնարհ ծառա
Ո Ս Կ Ա Ն Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ
Հայերի եպիսկոպոս (առաջնորդ)

Ամստերդամ,
21-ը մայիսի,
1669 թվական:

Մինչ մտորումների ու երկընտրանքի մեջ տառապող Ոսկան Երևանցին նախապատրաստվում էր մեկնել Փարիզ, Հռոմի Հավատի տարածման ժողովում քննարկում են նրա՝

հոկտեմբերի 29-ին գրած և Կարապետ Անդրիանացու միջոցով Հռոմ ուղարկած նամակը: Հավանություն տալով Ոսկանի՝ Ամստերդամի տպարանը Իտալիայի տարածք տեղափոխելու մտադրությանը, հունիսի 8 թվակիր նամակով Հավատի տարածման ժողովը ողջունում է Ոսկանի քայլը և խոստանում՝ իրենց օգնությունը ցուցաբերել նրան՝ տպարանը Լիվոռնո տեղափոխելու հարցում: Ոսկան Երևանցին նախքան կկարողանար որոշել իր անելիքը, ֆրանսիական արքունիքից տեղեկություն է ստանում Լյուդովիկոս XIV-ի հետ նրան տրվելիք հանդիպման հնարավորության մասին:

1669 թվականի հունիսի կեսերին Ոսկան Երևանցին իր հետ առնելով Աստվածաշնչի նվիրաբերվող օրինակը, Ամստերդամից մեկնում է Ֆրանսիա և Փարիզում արժանանում Ֆրանսիայի գահակալ «Արև արքայի» կողմից ընդունելության ու նրան է հանձնում իր հրատարակած Աստվածաշունչը և իր գրած «Աղերսագրի» լատիներեն տպածո՝ տպարանը Ամստերդամից Ֆրանսիայի հարավ տեղափոխելու վերաբերյալ:

Ինչպես ցույց են տալիս բանասիրության մեջ անուղղակի աղբյուրներից քաղված մեջբերումները, Ոսկան Երևանցին ընդունելության արդյունքից մնացել է գոհ: Թագավորը նրան ընդառաջելով՝ իրավունք է տալիս տպարանը տեղափոխել «Մարսել, Լիոն, կամ ֆրանսիական տերության որևէ այլ քաղաք», միաժամանակ նա Ոսկան Երևանցու առաջ դնում է մի նախապայման, ըստ որի՝ նրա «Հրատարակվելիք գրքերը ուղղափառ հռոմեական կրոնի, վարդապետության և հավատքին հակառակ բան չպետք է պարունակեն»[7]:

Ստանալով գոհացուցիչ խոստումներ՝ Ոսկան Երևանցին միաժամանակ պետք է անորոշ ժամանակով սպասեր, որպեսզի նրան տրվեր արքայական արտոնագիրը:

Լիվոռնոյում անորոշության մեջ թողնված և լուծում պահանջող գործերը նրան հանգիստ չէին տալիս և նա չէր կարող անորոշ ժամանակով մնալ Փարիզում, ուստի առանց բաղձալի արտոնագիրն ստանալու, 1669 թվականի նոյեմբերի 1-ին Փարիզից շտապով մեկնում է Լիվոռնո:

1670 թվականի մարտի սկզբին Փարիզից Ոսկան Երևանցուն տեղյակ են պահում իր ստանալիք արտոնագրի պատրաստ լինելու մասին: Նա առանց հապաղելու մեկնում է Փարիզ, Արքունի հանձնակատար Ռիշար Սիմոնից ստանում Լյուդովիկոս XIV-ի շնորհած հրամանագիրը[8] և նույն թվականի ապրիլի սկզբին մեկնում Մարսել և շուրջ երկու-երկուսուկես ամիս մնում այնտեղ[9]: Թե այդ ընթացքում նա Փարիզում ինչով է զբաղված եղել, ոսկանագիտությանը, իր մանրամասնություններ մեջ, մինչև այժմ ոչինչ հայտնի չէ:

Այս ամենով հանդերձ, հարկ է խոստովանել, որ հետևողական պրպտումների հիման վրա հայտնի է դարձել, որ հենց այդ ժամանակամիջոցում, գաղտնիության պայմաններում, Ոսկանի եղբայր Ավետիսի ղեկավարությամբ սկսել է գործել Ոսկան Երևանցու Մարսելյան տպարանը:

Հ. Սահակ վ. Ճեմճեմյանի՝ Վենետիկում հրատարակած «Հայ տպագրությունը և Հռոմը» վերնագրով, իր տեսակի մեջ շատ արժեքավոր աշխատության մեջ տեղ է գտել մի

---

[7] Զարբհանալյան Գ., Պատմություն հայկական տպագրության, Վենետիկ, 1895, էջ 114:

[8] Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 2000, № 3, էջ 120:

[9] 1670 թվականի ապրիլը պետք է համարել Մարսելյան տպարանի հիմնադրման սկիզբը:

դրվագ, որն անուղղակի առումով, ինչ-որ չափով լույս է սփռում այդ վարկածի հիմնավորման վրա: «Ավինոյի փոխնվիրակը,– գրում է նա,– Հռոմի Հավատի տարածման ժողովի քարտուղարին իր 1671 թվականի 4-ը մարտի նամակում գրում է. «Ձեր 10-ը հունվարի թվակիր նամակով (1670 թ. - Խ. Ս.) պատվեր տված էիք ինձի քննել թե արդյոք Մարսելիա բացվա՞ծ է հայկական տպարան և թե հոն կտպվի հայկական գրքեր Կաթողիկոսին պատվիրակի կողմեն... Հետամուտ եղա,- շարունակում է փոխնվիրակը,- բայց հետքը չգտա, անշուշտ որովհետև ծածուկ կտպեն»[10]:

Համանման անորոշ տեղեկություններ բանասիրության մեջ հայտնվել են նաև այլ աղբյուրներում, սակայն քանի որ ձեռքի տակ ունեցել են Ոսկանի Մարսելյան տպարանի հաստատման մասին ընդհանրացված այն տեսակետը, ըստ որի այդ տպարանը հիմնադրվել է 1673 թվականի հունիս-հուլիս ամիսների ընթացքում, հասկանալի պատճառով այս խիստ արժեքավոր տեղեկությունները մատնվել են անուշադրության:

[10] Հ. Ս. Ճեմճեմյան, Հայ տպագրությունը և Հռոմը (ԺԷ դար), Վենետիկ, 1989, էջ 125:

*ԱՆԱՀԻՏ ՋԱՔԱՐՅԱՆ-ԲՈԵՂՆԵՆՍԻԵԿԵՐ*

# ԱԼԻՇԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԵՐԳԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆԱՑՈՒՄԸ «ԲԱԶՄԱՎԵՊԻ» ԷՋԵՐՈՒՄ

Հայ հին գրականության տեսական արժևորումն ու բնագրերի հրատարակությունը «Բազմավեպում» թեև սկսվեց 1850-ական թվականներից, սակայն ամսագրի տպագրման առաջին իսկ տարուց նրանում հետևողականորեն մեծ տեղ է հատկացվում ժողովրդական ստեղծագործություններին և վերջիններիս հետ իրենց լեզվամտածողությամբ և ընդհանուր շնչով կապված ուշ միջնադարյան բանաստեղծությանը:

Հոդվածագիրները չբավականանալով նման գործերի հրատարակությամբ ու վերլուծությամբ, նաև շեշտում են նրանց ունեցած կարևորությունը և կոչ անում գրառել, հավաքել ու մոռացումից փրկել դրանք, ինչպես նաև ձեռագրերի էջերից հանել ու երկրորդ գրական կյանք տալ մեր տաղասացների գործերին:

«Բազմավեպը», այսպիսով, շուրջ մեկուկես տասնամյակ ծավալում է «ազգային երգը» հավաքելու և ամսագրում հրատարակելու մի շարժում, այն դեպքում, երբ բուն դասական պատմագրությանն ու հոգևոր գրականությանը, առաջին երկու եռամյաներում անդրադառնում է բավականին հպանցիկ:

Այս ստեղծագործությունները և նրանց վառվռուն գնահատությունն ու բնորոշումները գումարվելով ամսագրի ինքնօրինակ և անկրկնելի արևմտահայ միխիթարյանական աշխարհաբարին, մեծ հմայք են հաղորդում «Բազմավեպին»՝ ապահովելով նրա համահայկական հռչակը տպագրության առաջին իսկ համարներից:

«Բազմավեպում» ժողովրդական ստեղծագործություններին ընծայված նման կարևորությունը բացատրվում է իրար միահյուսված երեք պատճառներով. առաջին՝ ժամանակի ընդհանուր համաեվրոպական գրական շարժմամբ, երկրորդ՝ ազգային ինքնագիտակցության վերելքով և ըստ այդմ ազգային կյանքի առաջադրած խնդիրներով, և երրորդ՝ ժողովրդական ստեղծագործություններն իրենց լեզվական պարզությամբ, մտածողությամբ ու թեմատիկայով առավել համահունչ էին «Բազմավեպի» առաջին տարիների առաջադրած բարոյա-կրթական և դաստիարակչական խնդիրներին:

Պատահական չէ, որ արևմտահայ միջավայրում այս շարժումն սկսելու էին Մխիթարյանները, որոնք գտնվում էին Իտալիայում, ուր բավականին հետաքրքիր զուգորդմամբ միմյանց էին միահյուսվել ռոմանտիզմն ու գերմանական դիցաբանական դպրոցը, իսկ արևելահայ միջավայրում Մխիթարյաններից միանգամայն անկախ տեսական նույն ըմբռնումներով և նույն հարցադրումներով համանման գործունեություն էին ծավալելու դարձյալ գերմանական միջավայրում կրթություն ստացած Աբովյանը և դիցաբանական դպրոցի նույն հետևորդ Մնսրոպ Թաղիադյանը:

Ժողովրդական ստեղծագործություններին ու նրանց հրատարակության կարևորությանը նվիրված առաջին հոդվածը «Ազգային դպրություն» խորագրի ներքո «Ազգային եր-

գերու և ուրիշ աւանդներու վրայ» վերնագրով «Բազմավեպում» լույս է տեսնում 1843 թ. նոյեմբերի համարում:

Ամսագրի 1845 թվականի վերջում զետեղված մատենագիտությունում թեև նշվում է, որ այս հոդվածի հեղինակը Գաբրիել Այվազովսկին է, սակայն Սուրեն Ստիկյանն իրավացիորեն այն համարում է Ալիշանինը՝ նշելով, որ սա հոդվածաշար է, որի հաջորդող հոդվածների մի մասն ունեն Հ. Ղ. Մ. ստորագրությունը, իսկ վերջինն ուղղակիորեն ստորագրված է Նահապետ[1]: Այս առաջին իսկ հոդվածում լավագույնս ցոլանում է հայ երգի Ալիշանի ըմբռնումը և ներքին զգացողությունը:

Նա նաև կոչ է անում հավաքել և հրատարակել համանման ստեղծագործությունները: Ինչպես ինքն է գրում՝ «Փափաքելի բան է, որ մեր ազգայինք ալ ուրիշ բարեկիրթ ազգաց պէս վառուէին ազգային աւանդութեանց սիրովը, ու ձեռքերնէն եկածին չափ ջանային հաւաքել այնպիսի երգեր, անմեղ խաղեր, պատմութիւններ ու առակներ, նաեւ ուրիշներուն ալ հաղորդէին՝ կամ առանձին տպագրութեամբ, և կամ ազգային օրագիրներէն մէկուն խրկելով»[2]:

Ալիշանի այս կոչը, հոդվածում արծարծված հարցերը և ընդհանրապես՝ ժողովրդական ստեղծագործությունների և լեզվի Մխիթարյանների ըմբռնումները քանի որ ստուգաբանվում են ժամանակի համաեվրոպական գրական շարժմամբ, ուստի անհրաժեշտ է այդ շարժման շրջագծում ներկայացնել Մխիթարյանների գործունեության այս ուղղությունները ու եվրոպական տեսական և գեղագիտական մտքի հետ զուգահեռում դիտել «ազգային երգերին» տված նրանց քնորոշումները:

Ժողովրդական ստեղծագործություններին դիմելը, որպես գրական չափանիշ և ստեղծագործական հետևողության օրինակ, եվրոպական գրականությունում պայմանավորված էր գրական և ազգային-քաղաքական գործոններով:

Որպես գրական շարժում այն եկավ ժողովրդական ստեղծագործության կենդանի և ալիքվող տարրերով հակադրվելու կլասիցիզմի սառը և կանոնակարգված դատողականության ու բանականությանը: Ինչպես գրում է Սերգեյ Սարինյանը, «Կլասիցիզմի ծանր, դատողական ու հոգնեցնող չափաբանության դիմաց արժեք են ստանում «վսեմական արվեստի» օրենքներով արհամարհված երգիչների սրտահույզ մեղեդիներն ու զգացմունքային թրթիռները»[3]:

Մանուկ Աբեղյանը ոչ միայն որպես գրականության տեսաբան, այլև բուն Գերմանիայում 19-րդ դարավերջին գրական ուղղությունների հերթագայության կենդանի արձագանքի ունկնդիր, գրում է. «Միջնադարին դառնալով ռոմանտիկները սառը, օտար հնությունից բնականաբար իրենց ազգային հին դարերին էին դառնում, միջնադարի ուսումնասիրությամբ իրենց ազգային անցյալն էին ուսումնասիրում և իրենց սեփական պատմության մեջ խորամուխ լինում: Այստեղից ծնվում է ազգայնությունը, հայրենասիրությունը գրականության մեջ»[4]:

---

[1] Տե՛ս Ղ. Ալիշան, Երկեր, կազմեց Ս. Ստիկյանը, Երևան, 1981, էջ 377:

[2] «Բազմավեպ», 1843, էջ 333:

[3] Ս. Սարինյան, Հայկական ռոմանտիզմ, Երևան, 1966, էջ 96-97:

[4] Մ. Աբեղյան, Գրական դպրոցներ, Երկեր, հտ. Է, Երևան, 1975, էջ 302:

Գրականության տեսաբանները ռոմանտիզմի, ավելի ճիշտ՝ նախառոմանտիզմի հաղ-թական երթը և ամենուր ժողովրդական ստեղծագործություններին դիմելով արտահայտ-վելը բացատրում են եվրոպական երկրներում ազգային ինքնագիտակցության սկսված պայքարով Նապոլեոնի դեմ մղված պայքարով, ուր տեղի ունեցած ճակա-վիպեղքով և հատկապես Նապոլեոնի դեմ մղված պայքարով, ուր տեղի ունեցած ճակա-տամարտերի կողքին պատերազմի ողջ ծանրությունն իրենց վրա կրեցին նաև այդ երկրների ժողովուրդները[5]:

Մխիթարյանների և հատկապես Ալիշանի վրա ժողովրդական ստեղծագործություննե-րին դիմելու հարցում, սակայն, առանձնակիորեն մեծ է եղել Գրիմ եղբայրների ազդեցու-թյունը, իսկ ժողովրդական ստեղծագործությունների գնահատման և դրանց վերլուծություն-ների գեղագիտական ըմբռնումների ձևավորման գործում օսսեանական շարժումը: 1812 և 1815 թթ. Գրիմ եղբայրները հրատարակում են Գերմանական ժողովրդական հեքիաթնե-րի նշանավոր երկու հատորները, նույն 1815 թ.՝ «Գերմանական ավանդություններ», 1819 թ.՝ «Գերմաներենի քերականություն», և 1835 թ.՝ «Գերմանական դիցաբանություն» գործե-րը:

1860-ական թվականներին որպես ժամանակի գրական տեսաբան արժևորելով այս շարժումը և նրա թողած ազդեցությունը տարբեր ժողովուրդների, այդ թվում և հայերի վրա, Ստեփանոս Պալասանյանը գրում է, որ ժողովրդական ստեղծագործությունների տարածմանը և գրականության ժողովրդականացմանն «առավելապես ծառայեցին Յա-կոբ և Վիլհելմ եղբարքը, որոնց անունը իրանց գրվածքներով ծանոթ են բոլոր Եվրոպայի: Գերմանական ռոմանտիզմը մեծամեծ հետևանքների հասնելուց հետո, առանց ազդե-ցության չմնաց նաև մյուս եվրոպական ազգերի վրա: Ամեն տեղ գիտնականները սկսեցին ուշադրություն դարձնել ազգային կյանքի վրա, որին մինչ այդ ժամանակ արհամարհում, բանի տեղ չէին դնում»[6]:

Վերը հիշված հոդվածի առաջին իսկ նախադասությամբ Ալիշանը ժողովրդական ստեղծագործությունները պաշտպանելով հնարավոր քամահրական վերաբերմունքից, ա-սում է, որ դրանք շատ հարգի են ճշմարիտ ազգասերի համար: Ժողովրդական ստեղծա-գործությունները հավաքելն ընդհանուր մի երևույթ համարելով շեշտում է, որ բոլոր ազգե-րի հին և նոր պատմիչները ցանկացել են դրանք ժողովել և մոռացությունից փրկել:

Ասվածը որպեսզի միայն որպես տեսական հարցադրում չհնչի, այլև կապվի ազգային նվիրական հասկացությունների հետ, շեշտում է, որ հայ կյանքում այս գործն առաջինը ձեռնարկել է Խորենացին. «Պատմահայրը իբրև անգին գանձ հաւաքեր ու պահեր է մեզի մէկ քանի հին երգեր ու աւանդութիւններ, որոնց վսեմ գեղեցկութեան վրայ ոչ միայն մենք, այլև օտարները կը զմայլին ու կը զարմանան»: Ալիշանն այս գործերն անվանում է վսեմ ցանկանալով ասել, որ վսեմականը ոչ միայն կլասիցիզմի ոճով գրվածներն են, այլև ժո-ղովրդական ստեղծագործությունները:

Ինչպես որ Հայնեն էր ասում, թե ժողովրդական ստեղծագործություններում բաբախում է գերմանական ժողովրդի սիրտը, այնպես էլ Ալիշանն է գրում, որ «ազգային հոգի ըսուա-ծը այսպիսի աւանդութեանց մէջ խիստ պայծառ կը տեսնուի»: Նույն ձևով էլ հոդվածի

[5] Տե՛ս История всемирной литературы, том 6-ой, Москва, 1989, страница 48.

[6] Ստ. Պալասանյան, Պատմություն հայոց գրականության, 1865, էջ 35-36:

վերջում է շեշտում, որ «Այսպիսի բանաստեղծութիւններն են, որ ազգին անարատ ու սկզբնական համճարը կը հասկցնեն մեզի»:

Հաշորդը, որ քանիցս ընդգծում է Ալիշանը թե՛ այս ծրագրային հոդվածում, թե՛ նրան հաջորդած մյուս հրապարակումներում, այդ ստեղծագործությունների լեզվական պարզությունն է և գեղեցկությունը, որը ևս միայն Ալիշանի անհատական ընկալմամբ և բանաստեղծական ճաշակով չի պայմանավորված: Նոր գրականությունն ամենուր ուղեկցվում էր լեզվական նոր ձևերով: Կլասիցիզմի բանականության լեզվին հակադրվում է ռոմանտիզմի զգացմունքների լեզուն, որը լավագույնս արտացոլված էր հենց ժողովրդական ստեղծագործություններում: Ինչպես գրում է Սերգեյ Սարինյանը, «Գրական նոր ուղղությունն իր նախորդին պիտի հակադրեր նաև մի էական գործոն՝ լեզուն: Գրականության դեմոկրատացումը չէր կարելի պատկերացնել առանց լեզվի ժողովրդականացման, և պատահական չէ, որ բոլոր ժողովուրդների գրականության մեջ ռոմանտիզմի հանդես գալն ուղեկցվեց լեզվի մի յուրատեսակ ռեֆորմով»[7]:

Նույն այս օրինաչափությամբ է պայմանավորված, որ Գրիմ եղբայրները գերմանական ավանդություններն ուսումնասիրելուն զուգընթաց անդրադառնում են գերմաներենի լեզվական խնդիրներին՝ տպագրելով այս հարցին նվիրված առանձին մի ուսումնասիրություն: Համանման ձևով ոչ միայն «Բազմավեպն» է արևմտահայ աշխարհաբարով հրատարակվում, այլև առաջին իսկ համարներից սկսում են տպագրվել աշխարհաբարի գրական արժանավորությունը հիմնավորող հոդվածներ: Դրանցից երկուսը գրել է հենց Գաբրիել Այվազովսկին: Առաջին՝ «Ազգային լեզուն պահելու կերպը» հոդվածում այն միտքն է հայտնվում, որ գրաբարի՝ որպես գրական լեզվի հետագա կիրառումը շատ ցանկալի է, սակայն անհնարին է, քանի որ մեռած մյուս դասական լեզուների նման այն ևս չի կարող նորից «կենդանանալ ու հասարակաց լեզուն ըլլալ»[8]:

Որպես գրական աշխարհի ներկայացուցիչ, աշխարհաբարի լեզվական այս գեղեցկությունն է շեշտում նաև Ալիշանը: Ազգային երգերի ընդհանուր արժանիքը ներկայացնելուց հետո, որպեսզի ասվածը ընդհանուր տեսական չլինի, այն մասնավորեցնում է «Նատով Աղթամարայ եյանք» բանաստեղծության օրինակով: Ասում է, որ այս բանաստեղծությունն այնքան կենդանի է, որ ասես «ալէկոծութիւնը աչքովդ կը տեսնես» և ինքդ կապրես փոթորիկի սարսափը:

Դարձյալ ներքին մի վեճ մղելով կլասիցիզմի հետ, շեշտում է այս բանաստեղծության բնականությունը, որն արտահայտվում է յուրաքանչյուր տողում և պատկերում: Ասես ի հակադրություն կլասիցիզմի նորմավորված արտահայտչամիջոցներին և պատկերներին, այս գործի արժանիքը համարում է նման կանոնավորության շրջանակում չտեղավորվելը և իբրև տեսական ընդհանրացում՝ ասելիքն ավարտում այսպես. «Անարուեստ է ոտանաւորը, բայց կարծես թէ անոր համար ալ աւելի բնական է, վասնզի բնութեան ամէն գեղեցկութիւններն ալ թէպէտ համեմատ են ու սիրուն, բայց մեր հաշիւներուն ու չափերուն տակը ամէնը չեն իյնար, անոր համար աւելի կը զմայլեցնեն զմեզ»[9]:

---

[7] Ս. Սարինյան. Հայկական ռոմանտիզմ, էջ 97:

[8] «Բազմավեպ», 1843, էջ 76:

[9] Նույն տեղում, էջ 334:

Այս շարքի հաջորդ հոդվածի առաջին իսկ պարբերությամբ դարձյալ շեշտվում է, որ «Ռամկական երգը ազգային ոգւոյն մէկ ձայնն է» և այս պատճառով էլ «ազգային երգ կը ըստի»:

Գերմանական ռոմանտիկներն իրենց առաջին հրատարակություններում էական տարբերություն չէին դնում ժողովրդական ստեղծագործությունների և դրանց հիման վրա նույնաշունչ ոգով գրված գործերի միջև[10]: Ալիշանը, սակայն, հստակորեն տարբերակում է «Ռամկական երգը» «Ազգային երգից»: Բայց նա տարբերակման հիմքում դնում է ոչ թե անհատական գրական կամ ժողովրդական ստեղծագործություն լինելու հարցը, այլ թե ինչ լեզվով և ոճով է գրված: Ռամկականը՝ միշտ պարզ է, իսկ ազգայինը կարող է լինել նաև վսեմ[11]:

Ըստ Ալիշանի՝ ժողովրդական բանաստեղծության գլխավոր հմայքը «պարզ և ընտիր մակդիրներով» տրված բնորոշումներն են: «Մանտրուքայլ ոտկունքը» և համանման պատկերները «Անակրեոնի ու Կատուղղոսի փափուկ բառերուն հետ չփոխվիր»:

Պատահական չէ հունական գրականության հետ տարված այս զուգահեռը, որում ոչ թե պարզապես համեմատություն է անցկացվում անտիկ բանաստեղծների հետ, այլ ավելին, «Կաքավի ողբը» անգամ վեր է դասվում նրանց գործերից:

Նման բնորոշումը գալիս է ոչ թե ազգայինն ավելի վեր դասելու ցանկությունից, այլ դարձյալ կապվում է եվրոպական նախառոմանտիզմի և օսսիանական շարժման հետ, առանց որի հնարավոր չէ ճիշտ հասկանալ և գնահատել Ալիշանի 1840-ական թթ. գիտագեղարվեստական գործունեությունը և հատկապես՝ նրա համարձակ մեկ այլ համեմատությունը: 1847 թ. «Բազմավեպում» «Հայոց աշխարհիկին» կից բացատրական-ներածական խոսքում Նահապետը անվանվում է «Հայոց դաշտերուն Վերգիլիոսը կամ Հոմերոսը»[12]:

Նման բնորոշումը եթե չդիտարկվի եվրոպական գրական շարժման շրջանակում, ապա կարող է անգամ թվալ, թե հանդես գալով ուրիշի անվամբ, Ալիշանն ինքն իրեն համեմատել է Հոմերոսի և Վերգիլիոսի հետ: Այնինչ այս համեմատության հիմքում դարձյալ ընկած է ոչ թե քննվող ստեղծագործության գրական արժևորումը, այլ այն գնահատականը, որ եվրոպական ռոմանտիկներն օսսիանականության շրջանակում տալիս էին ժողովրդական բանաստեղծությանը:

Ալիշանը քաջածանոթ է եղել Օսսիանին վերագրվող ստեղծագործություններին և նույն այս շրջանում, «Հայոց աշխարհիկից» ոչ ուշ գրված «Քաղաքական աշխարհագրությունում» այսպես է գրում շոտլանդական ենթադրյալ բանաստեղծի մասին. «Նախկին բարբառ բնակչաց Բրիտանիոյ էր լեզու կելտաց, յոր ոչինչ աւանդեցաւ ի գիրս, բայց միայն երգք Բարդ անուանեալ երգչացն կամ քրմաց, յորս մեծահռչակ են քերդուածք Ոսսիանայ՝ զոր ասեն կացեալ ի մերձ վախճան Գ դարու»[13]:

---

[10] История всемирной литературы, том 6-ой, стр. 48.

[11] «Բազմավեպ», 1845, էջ 109:

[12] «Բազմավեպ», 1847, էջ 183:

[13] Ղևոնդ Ալիշան, Քաղաքական աշխարհագրութիւն, Վենետիկ, 1853:

Ջեյմս Մակֆերսոնի՝ Օսսեանի անվամբ հրատարակած ստեղծագործությունների հմայքն այնքան մեծ էր, որ եթե նա ինքը «գտնված» պոեմները համեմատում էր Հոմերոսի գործերի հետ, ապա այնուհետև դրանք նույնիսկ վեր դասվեցին Հոմերոսի գործերից: Անգլերեն առաջին հրատարակությունից հետո ժամանակի նշանավոր քննադատներից Էդինբուրգի համալսարանի պրոֆեսոր Բլերը (1718-1800 թթ.) Օսսեանին անվանում է հյուսիսային ժողովուրդների Հոմերոս[14]: Իտալացի քննադատ, բանաստեղծ Չեզարոտին Օսսեանի 1803 թ. իտալերեն հրատարակությունում նրան Հոմերոսից վեր է դասում[15]: Նույն ձևով էլ Գյոթեն է երիտասարդ Վերթերի միջոցով ասում, թե «Օսսեանը դուրս է մղել սրտիցս Հոմերոսին»[16]: Եվրոպական հեղինակների նման Մխիթարյան հայրերից Զարբհանալյանն էլ նույն կերպ է գրում, հետևյալ հռետորական ոճով. «Ո՞վ էր այս սկովտիացի Հոմերոսը՝ որուն գոյութիւնը Մակֆերսոնի ձեռքով յայտնուեցաւ»[17]:

Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ եվրոպական գրականությունում ևս Օսսեանին Հոմերոսից վեր դասելը պայմանավորված էր ավելի շատ ոչ թե շոտլանդացի Բարդին վերագրվող ստեղծագործությունների գրական արժանիքով, այլ կլասիցիզմի դեմ ռոմանտիզմի մղած պայքարով, և այն ենթատեքստն ուներ, որ փոքր ժողովուրդները ևս ունեն իրենց ազգային գրականությունը, որն արժանի է սիրո և հարգանքի: Ինչպես իտալացի տեսաբան Ջուզեպե Կոկյարան է գրում, Մակֆերսոնը գրական այս միստիֆիկացիայով ցանկանում էր Շոտլանդիան ներառել այն ժողովուրդների շարքում, ովքեր հին ժամանակներից ունեին իրենց ազգային բանաստեղծությունը[18]:

Նման ձգտումը համահունչ էր նաև եվրոպական մյուս ժողովուրդներին, և այսպիսի գրական նմանակումները առավել տարածվում են հատկապես այն ժողովուրդների շրջանում, ովքեր անկատար իղձեր ունեին և պատրաստվում կամ մղում էին ազգային-ազատագրական պայքար: Նրանց շարքում առանձնակի տեղ էր գրավում Իտալիան, որն այնուհետև պայքարի դրոշն էր բարձրացնելու Գարիբալդիի գլխավորությամբ: Պատահական չէ, որ Եվրոպայում Օսսեանի ամենամեծ արժևորողներից մեկը իտալացի բանաստեղծ-քննադատ Չեզարոտին էր: Եվ ահա դարձյալ Իտալիայում գտնվող հայկական միաբանությունում նույն ճանապարհով է ընթանում նաև հայ բանաստեղծ-գիտնականը: Այսպիսով, հայ ժողովրդական բանաստեղծությունը հունականի հետ համեմատելը, իսկ Օսսեանի հայկական համարժեք Նահապետին Հոմերոսից և Վերգիլիոսից վեր դասելը վերածվում էր եվրոպական ռոմանտիզմի հայկական արձագանքին:

Ինչպես որ բանաստեղծ Ալիշանի «Նահապետի երգերում» է բնությունը որպես գործող անձ մեծ տեղ գրավում, և կամ էլ բնության հետ է հարաբերվում հերոսի հոգեվիճակը, այնպես էլ քննադատ Ալիշանը ժողովրդական ստեղծագործության գլխավոր արժանիքը համարում է բնության գեղեցկությունը ներկայացնելը և բնությունից վերցված պատկերներով ստեղծագործությունը կառուցելը, որը ևս մեծապես պայմանավորված էր գրական

---

[14] История английской литературы, том 1-ий, Москва, 1945 год, страница 577.

[15] **Джеймс Макферсон**, Поемы Оссиана, Ленинград, 1983, страница 493.

[16] Գյոթե, Երիտասարդ Վերթերի տառապանքները, Երևան, 1981, էջ 156:

[17] Գ. Զարպհանալեան, Պատմութիւն մատենագրութեան միջին և նոր դարուց, Վենետիկ, 1874, էջ 14:

[18] **Джузеппе Коккьяра**, История фольклористики в Европе, Москва, 1960 г., стр. 149.

այն նույն շարժմամբ և ըմբռնումներով, որոնցում ծեր ռազմիկի և կույր Բարդի հոգեկան ալեկոծումները ներկայացվում էին բնության համահունչ պատկերներով և արձագանքով:

Այս շարքի առաջին երկու ստեղծագործությունները՝ «Նավով Աղթամարայ եկանք» և «Նստեալ կայր ու լայր կաքվիկն» եթե անխառն ռամկական են, ապա հաջորդն արդեն մեծապես գրականացված է, ու թեև հայտնի է ժողովրդական մի շարք փոփոխակներով[19], սակայն մեծապես համարվում է նաև Գրիգորիս Աղթամարցու բանաստեղծությունը[20]: Ալիշանը ևս, սակայն, հակված է այն ժողովրդական ստեղծագործություն համարելու, ուստի հեղինակի մասին գրում է, որ «նա կերևնա նորահաս անձ մը», որը մահվան հիվանդությամբ բռնվելով չի համակերպվում աշխարհը թողնելու մտքին: Ալիշանն այցուց ելնելու հրավերը ոչ միայն հոգու՝ մարմինը թողնելու այլաբանություն է համարում, այլև նշում, որ թեմատիկ առումով այն գալիս է Աստվածաշնչի Եզեկիայի մասին համանման պատմությունից:

Ալիշանի համար հայ ձեռագրային աշխարհի բնագրային տարընթերցվածներն իսկ իրենց հոգևոր գրական խորհուրդն ունեին, որոնք ոչ թե սխալ ընդօրինակություններ էին, այլ հաճախ ընթերցողի առջև բացում էին պատկերային մի նոր աշխարհ, ինչպես որ այս բանաստեղծության հետևյալ տարընթերցվածում: Միայնակ մնացած բլբուլն արտահայտելով իր բողոքը և վիշտը վարդի կորստյան համար, ասես ցանկանում է, որ բնությունը վշտակցի իրեն քարանալով, կանգնեցնելով իր ընթացքը.

Ակունք յորդախաղացք, մի գնայք յառաջ,
Ծառե՛ր, թօթափեցէք զտերև ձեր կանաչ:

Ալիշանը գրում է, որ իր ունեցած ձեռագրում *յորդախաղացք* բառի յ-ն չկար, և այն ինքն է ավելացրել, որպեսզի ճիշտ լինի: Այս ձևն է բերված նաև Ավդալբեկյանի հրատարակությունում: Այստեղ բլբուլը ցանկանում է ասել, որ ի նշան իր վշտի, թող չհոսեն հորդախաղաց աղբյուրները և թափվեն ծառերի կանաչ տերևները:

Միաժամանակ Ալիշանը գրում է, որ առանց յ-ի ոչ միայն սխալ չէ, այլև եթե այդպես լիներ, այն բանաստեղծականորեն ավելի գեղեցիկ կլիներ, քանի որ ակունք որդախաղաց կնշանակեր խաղողի որթի ողկույզների հատիկների ծփանքը, խաղը: Եթե այդ տողն իսկապես նման իմաստ է ունեցել, ապա ըստ Ալիշանի «կը սեպուինք երևելի իտալացիի մը հետ մեկտեղ խոստովանելու, որ ժողովուրդն ալ, եթէ միայն ժողովուրդն է այս տաղիս հեղինակը, ժողովուրդն ինքնին բանաստեղծ է և բանաստեղծներուն աշխոյժը վառող»[21]:

Այս քննությունը ցույց է տալիս, որ Ալիշանը գրական ընթացքն ու երևույթները քննարկում է համաեվրոպական գրականության շրջանակում՝ վերջինիս տեսական ըմբռնումների վրա խարսխելով իր արժեվորումները:

---

[19] Տե՛ս Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 409-441:
[20] Տե՛ս Գրիգորիս Աղթամարցի, աշխատասիրությամբ Մ. Ավդալբեկյանի, Երևան, 1963, էջ 254-283:
[21] «Բազմավեպ», 1847, էջ 147:

Ինչ վերաբերում է *որդախաղաց* ձևին, ապա իսկապես այն ավելին է, քան զուտ սխալագրությունը, և ինչպես երևում է Ավդալբեկյանի կազմած բնագրից, մի շարք ձեռագրերում գտնում ենք *որդախաղացք, որդախաղաց, որդայխաղաց* տարընթերցվածները:

«Ոսկեփորիկի» մը մեջ եղած քանի մը ազգային երգեր» խորագրված նույն այս հոդվածում Ալիշանը հրատարակել է Աղթամարցու մեկ այլ բանաստեղծություն ևս, դարձյալ առանց ժամանակին ու հեղինակային պատկանելությանն անդրադառնալու: Ավդալբեկյանը «Տաղ գարնան Աղթամարցոյ» վերնագրի ներքո բերում է այս բանաստեղծության հինգ տարբերակներ, որոնցից Ալիշանինը վերջին՝ հինգերորդն է[22]:

Ինչ վերաբերում է Ալիշանի՝ 1840-ական թթ. վերջերին «Բազմավեպում» հրատարակած հայ բանաստեղծության տարբեր նմուշներին, ապա 1847 թվականից համար առ համար ընդլայնվում է նրանց թեմատիկան: Մի էական հավելում է կատարվում և այս գործերի մեկնաբանման մեջ: Եթե մինչ այդ կարևորվում էին ռամկական գործերի գեղարվեստական արժանիքները, որոնք նաև ազգային հոգեբանության հայելին էին համարվում, ապա այժմ կարևորվում են հատկապես այն գործերը, որոնք պատմական տեղեկություններ հաղորդելով, նաև պատմական սկզբնաղբյուրի արժեք ունեին:

Գրական ժանրերի տարբերակման ու բնորոշման Մխիթարյանների և հատկապես Ալիշանի ըմբռնումները ճիշտ հասկանալու համար բավականին արժեքավոր և հետաքրքիր են այն խորագրերը, որոնց ներքո բերվում են այդ գործերը: Եթե ժողովրդական ստեղծագործությունները զետեղվում էին «Ռամկական երգեր» խորագրի ներքո, ապա անհատական կամ դարձյալ ժողովրդական, սակայն պատմական որևէ իրադարձության նվիրված ստեղծագործությունները բերվում են «Ազգային երգեր» խորագրի ներքո:

Բազմաբնույթ տարբեր այս բանաստեղծությունների հրատարակության կողքին 1848 թվականից Ալիշանը վարում է ևս մեկ շարք՝ այն անվանելով «Քնար Հայկական», որով լույս են տեսնում տասնչորս գործեր: Ինչպես որ ռամկական և ազգային երգերի պարագայում էր, այս շարքի առաջին հրապարակումները ևս լույս են տեսնում համապատասխան վերլուծություններով և բացատրություններով, իսկ այնուհետև բերվում են միայն հրատարակվող ստեղծագործությունների բնագրերը: Շարքի «Քնար Հայկական» անվանումն իսկ հուշում է, որ նրանով պետք է բերվեն առավել «վսեմ» բովանդակություն ունեցող և առավել նշանակալից գրական ստեղծագործությունները:

Բացատրելով շարքը «Քնար Հայկական» անվանելը, Ալիշանը քնարի համար ասում է. «Ինչ ախորժելի, քան բանաստեղծություն ու երգ», իսկ հայկականի համար էլ «Ինչ անուշ, քան զհայրենիք և ազգային զրույցք»[23]: Այսինքն՝ «Քնար Հայկականը» միևնույն ազգային բանաստեղծությունն է, բայց ոչ «պարզ ռամկականը»: Սակայն որպեսզի այն տպավորությունը չստեղծվի, թե վերջիններս ինքը ստորադասում է հրատարակվել սկսվող շարքին, նա մի անգամ ևս արժևորում է ռամկական ստեղծագործությունները՝ գրելով. «Որոնք թէպէտ և զուրկ ըլլան այն վսեմական և գեղեցկաշատ լեզուին գեղեցկութենէն, սակայն շատ հեղ, քան զայն լեզուով գրուածները ազդու և սիրելի կ՚ըլլան»:

[22] Տե՛ս Մ. Ավդալբեկյան, Գրիգորիս Աղթամարցի, էջ 253:

[23] «Բազմավեպ», 1848, էջ 87:

Հայ միջնադարյան բանաստեղծությունը ներկայացնելով որոշակի թեմատիկ բաժանմամբ, Ալիշանը տալիս էր նրանցից յուրաքանչյուրի՝ իր ընկալմամբ բնորոշ առանձնահատկությունները: Այս շարքի առաջին հոդվածը վերնագրված է. «Ազգահոգի կամ բնիկ հայկական բանաստեղծութիւնք», որն ըստ Ալիշանի «մեր վսեմ հայկական գրաբառ լեզուով գրուած նախնեաց ընտիր» բանաստեղծություններն ու երգերն են:

Այս ստեղծագործությունները ևս, սակայն, Ալիշանը բաժանում է երեք խմբի: Առաջինների այն գործերն են, որոնք բարձր լեզվով են գրված, բայց նրանց «հոգին մեր ռամկական հոգւոյն հարմար», այսինքն լեզուն դասական գրաբարն է, իսկ ասելիքը համահունչ է ժողովրդային ընկալմանը, որի համար էլ այս գործերն անվանում է ազգահոգի և բնիկ հայկական: Նրանք ազգային են նաև իրենց թեմատիկայով, սկսած Վահագնի ծնունդից մինչև աշուղական բանաստեղծներից Աղբար Ադամը:

Երկրորդ խումբը կազմում են «վսեմական կամ հայկաբան, բայց ոչ ազգահոգի և ոչ բնիկ հայկական» բանաստեղծությունները, որոնց թեմաները վերցված են «սրբազան և արտաքին նիւթոց վրա» գրվածներից, այսինքն, համաքրիստոնեական ու համամարդկային և եկեղեցական բնույթի են: Այս խմբի բնորոշ ստեղծագործություններն են Շնորհալու գրածները: Երրորդ խումբը «Թէպէտ օտար նիւթոց վրայ գրուած է, թէ սրբազան և թէ արտաքին, բայց վառվռուն հոգւով և խաղուն լեզուով գրուած, և իբր թէ հայու մտքին ու լեզուին խաղալիկ ըրած է նիւթը»:

Ինչպես տեսնում ենք, առաջին խմբի գործերը հաջորդ երկուսից տարբերվում են իրենց թեմատիկայով, իսկ երկրորդ և երրորդ խմբերը միմյանցից զատորոշվում են իրենց ներքին էությամբ և այն հանգամանքով, թե արդյոք միևնույն թեման ընդհանուր ոճո՞վ են ներկայացնում, թե ազգային ոգուն և լեզվամտածողությանը համահունչ: Իհարկե երկրորդ և երրորդ խմբերի նման բաժանումը ինչ-որ տեղ արհեստական է և հիմնված ոչ թե որոշակի գրական չափանիշների, այլ Ալիշանի բանաստեղծական ներքին ընկալման վրա և պայմանավորված նրա գրական-գեղագիտական ըմբռնումներով:

Ալիշանի «Նահապետի երգերի» և նրա հրատարակած «Ազգային, ռամկական երգերի» ու «Քնար Հայկականի» համադրական քննությունը ցույց է տալիս, որ մի ներքին ընդհանրություն կա բանաստեղծ Ալիշանի և հայ բանաստեղծության հրատարակիչ Ալիշանի միջև, թե՛ բանաստեղծական ասելիքի և թե՛ գեղարվեստական արտահայտչամիջոցների առումով: Միջնադարյան և ժողովրդական մի շարք բանաստեղծություններն էլ այնքան հոգեհարազատ են եղել նրան, որ ասես իր սրտից են բխել և իր գրչից ելել: Այդ պատճառով է, որ հաճախ Ալիշան բանաստեղծի քնարի լարերն այնպես են միախառնվում գիտնականի գրչին, որ ինչ-որ տեղ ջնջվում են իր հրատարակած բնագրերի, նրանց վերլուծությունների և պատճառած բանաստեղծական ներշնչանքի սահմանները և միջնադարյան ստեղծագործության բնագիրը շարունակվում է իր խոսքով, ապա և ծնունդ տալիս Նահապետի երգերին:

*ՌՈՒՄԱ ՄԻՐՈՒՄՅԱՆ*
*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու*

# ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԸ ԵՎ ԱԶԳԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԸՄԲՌՆՈՒՄԸ XIX դ. ՀԱՅ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(Մեթոդաբանական փեսանկյուններ)

XIX դ. հայ պատմափիլիսոփայության քաղաքական կառույցի առանցքը պետության մասին ուսմունքն է: Ազգային պետության հետևորդ հայ մտածողների մոդելում ներառվում են նաև ազգի ինքնապաշտպանական հասարակական-տնտեսական կառույցները՝ ազգի նյութական բարօրությունը ապահովող սեփականության, և ազգի ավանդական հիմքերը պահպանող ընտանիքի կառույցները[1]:

Լուսավորիչների հայեցակետում սեփականության հիմնախնդիրը շաղկապվում է իրավական պետության նրանց իդեալի հետ: Ըստ այդմ, սեփականությունը քաղաքակրթության երկրորդ (իրավունքից հետո) հրամայականն է: Ավելին, սեփականությունը ինքնին իրավունք է, քանզի մարդու բնական պահանջմունքն է և նրա աշխատանքի (մարդու համար բնական օրենքի և գոյության անհրաժեշտ պայմանի) արդյունքը: Սեփականությունը (իբրև իրավունք) նույնքան կարևոր է մարդու գոյատևման համար, որքան ազատությունը (իբրև իրավունք): Տնտեսական խնդիրը հասարակական կեցության ծնունդ է, մինչդեռ տնտեսական մարդը՝ հասարակական (ընտանեկան) մարդու մի այլ սահմանում:

Տնտեսական շահը, միավորված իրավունքի հետ, քաղաքակրթության շարժման հիմքն է՝ ուղղորդված անհատական և կոլեկտիվ երջանկությանը: Անհատական և կոլեկտիվ կյանքի բարեկեցությունը, այսինքն՝ կենսական պահանջմունքները բավարարելու հնարավորությունը ձեռք է բերվում աշխատանքի անհրաժեշտ արդյունքի՝ սեփականության միջոցով: Միաժամանակ, աշխատանքը մարդու սեփականություն-կարողությունների կիրառումն է: Հետևապես՝ մարդու իրավունքը բովանդակում է նաև սեփականության իրավունքը և աշխատանքի ազատության իրավունքը: Այդպես ընկալված մարդու իրավունքը կոչված է պաշտպանել իրավական պետությունը: Երբ կառավարման կառույցը ճնշում է անհատի ազատությունը և նրան զրկում իրավունքներից, ապա գործում է հակա-

---

[1] Հոդվածի վերնագրում ձևակերպած խնդիրը հայագիտության մեջ առաջին անգամ է հետազոտվում: Ընդսմին, հոդվածում օգտագործված որոշ աշխատություններ (Ա. Ծահանյանի, Գ. Մուրադյանի, Խորեն Պատրիարք Աշըգյանի, Վահան վրդ. Բաստամյանի) առաջին անգամ են դառնում փիլիսոփայական վերլուծության առարկա:

ռակ իր կոչման և կործանում այն, ինչը կոչված է պաշտպանել: Սակայն, մարդու իրավունքները պաշտպանող կառավարման կառույց ընդունակ է ունենալ բարձր ինքնագիտակցության հասած ժողովուրդը և այս տեսանկյունից՝ «տղայ ժողովուրդներ անարժան են որևէ ազատութեան և ոչ այնքան կառավարութիւններն որքան իրենք մեղապարտ և դատապարտելի կը գտնուին իրաւանց և արդարութեան առջեւ...»[2]:

Աշխատանքի ազատությունը, այն է՝ սեփական կարողությունները ազատ կիրառելու մարդու իրավունքը, լուսավորիչները պայմանավորում են մարդու ներունակության բնականոն զարգացման անհրաժեշտությամբ, ինչը, իր հերթին, ապահովում է մարդու լիարժեք գոյությունն ու հասարակության բնականոն զարգացումը: Ըստ լուսավորիչների՝ սեփականության իրավունքը մարդու գոյության, կատարելագործման և երջանկության հիմնական պայմանն է. «Ամեն ոք իրաւունք ունի իրեան սեփականելու իւր աշխատութեան արդիւնքն: Առանց այս պայմանին և երբ մարդ իւր աշխատութեան արդեանց տէր չէ, ո՞վ կը յորդորուի աշխատիլ: Ապահովութիւն հարկաւոր է որպէս զի իրաւունք եւ սեփականութիւն յարգուին, և աշխատութիւնն խրախուսուի և չերկնչի»[3]:

Սեփականության իրավունքի համատեքստում դիտելի է նաև հողատիրության հիմնախնդիրը: Հողը և հողագործությունը մտածողները համարում են ազգի գոյության, նյութական բարօրության ապահովման նախապայմանը, ինչպես նաև ազգության պահպանման գրավականը:

Ելնելով մարդկանց բնական (ֆիզիկական, մտավոր) և ձեռք բերված (կրթվածության աստիճան) կարողությունների տարբերության հաստատումից, լուսավորիչները հետևեցնում են, որ մարդկանց սեփականության չափը, հետևաբար՝ նաև հասարակական կարգավիճակը նույնպես պետք է տարբեր լինեն: Նրանք օրինաչափ են համարում հասարակության մեջ խավերի (Նազարյանի տերմինաբանությամբ՝ «հակառակ բաժինների») առկայությունը և այս տեսանկյունից մերժում սոցիալական հավասարության սկզբունքը: Հարուստների սեփականազրկումը ոչ միայն անիրավություն է համարվում, այլև, ըստ էության, վնասակար, ուստի բացառվում է ոչ միայն հասարակության բոլոր անդամների միջև մեծահարուստների սեփականության հավասար բաժանման, այլև աղքատների վիճակի բարելավման իրական հնարավորությունը:

Մտածողների կարծիքով, սեփականատերի սեփականազրկումը կարող է հանգեցնել միայն համաժողովրդական աղքատության: Մինչդեռ, հարստությունը «բարի մարդու ձեռքը աղէկութիւն ընելու հզօր գործիք մըն է» (Ն. Զօրայան): Ազգային պետության լուսավորիչների մոդելին քնորոշ է հետևյալ բանաձևումը՝ հարստությունը հասարակության կանոնավոր գործելու, բարգավաճելու և առաջադիմելու անհրաժեշտ պայմանն է: Սոցիալական ներդաշնակության լուսավորիչների հաստատած սկզբունքը հարկ է ընկալել ոչ միայն որպես գաղափարական և գաղափարախոսական, այլև գործնական երանգ ունեցող սկզբունք:

Պահպանողականների հայեցակետում սեփականության հիմնախնդիրը շաղկապվում է «պարտք – իրավունք» բարոյական օրենքի հետ: Ըստ այդմ, սեփականությունը մարդու

[2] Մ. Մամուրեան, Ազատութիւն աշխատութեան: – «Արևելեան մամուլ», 1871, նոյեմբեր, էջ 527:
[3] Ռ. Պերպերեան, Համառօտ քաղաքական տնտեսութիւն, Կ. Պոլիս, 1883, էջ 8:

սուրբ և վսեմ պարտականության՝ աշխատանքի արդյունքում ձեռք բերված իրավունք է: Աշխատելու մարդու պարտականությունը պայմանավորված է եռակի՝ բնական, հասարակական և աստվածային օրենքով: Բնական օրենքի համաձայն, մարդը պարտավոր է աշխատել իր գոյությունը պահպանելու համար: Հասարակական օրենքի համաձայն՝ մարդը պարտավոր է աշխատել ի նպաստ հասարակական բարօրության. «Ընկերային բարեբաստութիւնը կը նշանակէ մարդու երջանկութիւնը. քաղաքացիի ազատութիւնը եւ ազգաց մեծութիւնը». քանի որ առանց «ընկերական բարգաւաճման անհատական ճշմարիտ երջանկութիւն չկայ. մարդիկ կը պարտաւորին ամենէն առաջ ընկերական բարգաւաճման հոգ տանել և այս կը լինի միմիայն անհատական գործունէութեամբն ու պարտականութեամբը»[4]:

Սեփականության հիմնախնդրի համատեքստում դիտելի է նաև պահպանողականների առաջադրած հողագործության խնդիրը: Ելնելով այն նախադրյալից, որ առաջադիմությունը նյութական բարօրությամբ ապահովվող «ժողովրդեան հասարակային երջանկութիւնն է», Աշըգյանը նշում է. «Ամեն հարստութեանց աղբիւր երկիրն է, որուն վրայ աշխատելու եւ քրտինքով ապրելու սկզբնական պայմանը իբրեւ յափտենականին Աստուծոյ անդարձ վճիռ անհրաժեշտ ըլլալով՝ բանաւոր մարդկութիւնն ուրիշ հնարք չկրնար գտնել այն դատակնքոյն դառնութիւնը քաղցրացնելու՝ եթէ ոչ զօրութեամբ հանճարոյ»[5]: Դրանից նա բխեցնում է երկրագործությամբ զբաղվելու հայ ժողովրդի պարտականությունը՝ աղքատության «ազգակուլ» հետևանքները կանխելու նկատառումով:

Որպես բարոյական օրենքի («աշխատելու պարտականություն - սեփականության իրավունք») իրականացման հետևանք ըմբռնվող սոցիալական ներդաշնակության պահպանողականների պաշտպանած սկզբունքը չի հակասում սոցիալական անհավասարության բնականության և անխուսափելիության նրանց գաղափարին: Պատճառն այն է, որ սոցիալական անհավասարությունը մտածողները բխեցնում են մարդկանց ի բնե տրված կարողությունների և կյանքի հանգամանքներով պայմանավորված նրանց զարգացվածության աստիճանի տարբերությունից: Ինչ վերաբերում է մեծահարուստների սեփականազրկության և մարդկանց միջև գույքի հավասար բաժանման հանրապետականների պահանջին, ապա պահպանողականներն այն անվանում են հասարակությունը քայքայող և հասարակական օրենքը ոչնչացնող «վայրենի հավասարության» կարգախոս: Նրանց պնդմամբ, մեծահարուստների սեփականազրկությունը ոչ թե կրճատում է աղքատների թիվը, այլ, ընդհակառակը, մեծացնում է այն: Բացի այդ, հավասարության միտումը աղճատում է աշխատանքի ազատությունը, սպանում գործունեության եռանդը, իսկ արդյունքում՝ նաև աշխատելու հնարավորությունը: Այն հարուցում է ամենաանմիտ՝ քաղաքացիական պատերազմը, որը, մատուցվելով «մարդկայնության» և «մարդասիրության» դրոշի ներքո, իրականում ձևափոխում է մարդկայնության խորհուրդը և տարածում մարդասպանության տենդը:

---

[4] Ջահանեան Ա., Պարտաւորութիւն աշխատելու: – «Սիոն», 1873, դ 11, էջ 266, տե՛ս նաև՝ Խորեն Վ. Աշըգեանց, Աշխատութիւն: – «Ցոյս» (Արմաշ), 1865, դ 12, 105-109 էջերը:

[5] Խորեն Վ. Աշըգեանց, Երկրագործական // «Ցոյս» (Արմաշ), 1866, դ 22, 529:

Մտածողների կարծիքով, եվրոպական երկրներում ձևավորված «նոր և ճշմարիտ» գիտության՝ քաղաքական տնտեսության նշանակությունը սահմանափակված է աշխատանքի կազմակերպմամբ և արդյունավետության ապահովմամբ: Սակայն, այդ գիտության միջոցով անհնար է բացահայտել աղքատության գաղտնիքը, ինչպես նաև լուծել հասարակական մեծ նշանակություն ունեցող այդ խնդիրը: Այդ առաքելությունը վերապահված էր աստվածային և մարդկային գաղափարախոսությանը՝ քրիստոնեությանը, համաձայն որի՝ «անհաւասարութեան անդարմանելի և բնական չարիք մ՚ըլլալը կ՚ընդունի, բայց միանգամայն կը հրամայէ աղքատութեան դարման տանիլ» (Աշըգյան): Բնականաբար, բարեգործական հաստատությունների գաղափարը պետք է որոնել քրիստոնեական ուսմունքում. «... միայն կրօնքը և քրիստոնէական հայեցողութիւնը կրնան մեզ խելամուտ ընել՝ թէ աղքատութեան չարիքն ու ողորմութեան պարտքը անբաժանելի ընկեր մնալով իրարու՝ այնչափ կը դիւրանայ աղքատութեան աղետը՝ որչափ առատանայ ողորմածին շնորհքը»[6]:

Իրավական պետության իդեալի լուսավորիչների մշակած արժեհամակարգում ընտանիքը բնութագրելի է որպես ազգի գոյության հիմք, ազգային ավանդույթների պահպանման և ժառանգորդման խթանիչ, հետևապես՝ նաև ազգի ինքնատիպության պահպանման գրավական. «Ընտանիքն է մանաւանդ որ կը պահէ որ ևս է ազգի աւանդութիւնքն, տոհմային առաքինութիւնքն, լեզուն ու կրօնն, ցեղային հանգամանքները: Յորչափ ընտանիքն է կանգուն, ազգն ու եկեղեցին են հաստատուն»[7]:

Միաժամանակ ընտանիքը սահմանելի է որպես ազգի բաղկացուցիչ մաս, իսկ ազգը՝ մարդկության անհրաժեշտ տարր: Այս հարթության վրա հասարակական շարժումն առանձին ազգերի առաջընթացն է, որոնց զարգացման չափանիշը ընտանիքն է: Ազգի տնտեսական, քաղաքական և բարոյական կարգավիճակը ընտանեկան հարաբերությունների և, մեծ մասամբ՝ կնոջ վիճակի պրոյեկցիա է, ուստի կարելի է եզրակացնել, որ կնոջ պատմությունը համեմատելի է քաղաքակրթության պատմության հետ:

Ընտանիքի հիմնախնդիրը (որը հարաբերակցվում է կնոջ խնդրին) շաղկապվում է ազգի առաջադիմության և ազատագրության գերխնդրին: Լուսավորիչների պատկերացմամբ, կինը հասարակության հոգին է, ուստի՝ նրան է տրված կանխորոշել անհատի (մարդու և ազգի) ճակատագիրը: Ըստ ամենայնի, դարաշրջանի առաջնային խնդիրներից մեկը մտածողները համարում են կնոջ հասարակական առաքելության և դրան համապատասխանող նրա բարոյական նկարագրի սահմանումը:

Կնոջ խնդրի երևան գալը նրանք պայմանավորում են ֆրանսիական մեծ հեղափոխության գաղափարական հենքի՝ «մարդու իրավունք» կարգախոսի առաջացմամբ: Ըստ այսմ, քաղաքացիական իրավունքների պահանջը ծնունդ է տվել «կնոջ իրավունք» գաղափարին, որի հիմքն է բնական իրավունքի խորքային իմաստն արտահայտող «իրավունք-պարտականություն» հարաբերակցությունը: Այս տեսանկյունից նրանք մերժում են ինչպես կնոջ իրավունքը բացառող, այնպես էլ կնոջ և տղամարդու բացարձակ հավասարությունը պաշտպանող ուսմունքները՝ իբրև բնական իրավունքի բովանդակության խեղաթյուրման դրսևորում:

---

[6] Խորեն Վ. Աշըգեան, Գաղտնիք աղքատութեան: – «Յոյս» (Արմաշ), 1875, դ 5, էջ 263:

[7] Ռ. Պերպերեան, Ընտանեկան բարոյական: – «Երկրագունդ», 1887, դ 5, 111-112 էջերը:

Նման կողմնորոշման հիմքում դիտելի է երկու նախադրյալի՝ կնոջ և տղամարդու բարոյական հավասարությունը սահմանող քրիստոնեական սոցիալական ուսմունքի և երկու սեռերի իրավունքների հավասարությունը հաստատող լուսավորականության սոցիալական իդեալի համադրում: Լուսավորիչների համար բնորոշ է երկու սեռերի բարոյական հավասարության հետևյալ բանաձևումը. «Աւետարանն ամենայն իրաւանց և ամենայն պարտուց վարդապետութիւնն մէկ մարմնոյ մը մէջ ամփոփելով, բոլոր մահկանացուներն զիրար սիրելու հրաւիրեց... երկու սեռերին բարոյական հաւասարութիւնը հռչակեց, և զիրենք մի և նոյն յաւիտենական երջանկութեան հրաւիրելով, մարդկային ազգի բարոյականն բոլորովին կերպարանափոխ ըրաւ»[8]:

Այս համատեքստում օրինաչափ է թվում լուսավորիչների պնդումն այն մասին, որ ընտանիքի (ազգային համակեցության գլխավոր օղակի) հիմքը սերն է: Վերջինի նրանց բնութագրումները հանգեցվում են հետևյալին: Ամուսնությունը երկու սեռերի միջև սերտ կապի հաստատումն է, ինչը նպաստում է մարդկային բնության կատարելագործմանը: Միայնակ մարդն անկատար է. ավելին, նա ինքն իր հետ մշտատև հակադրության մեջ է գտնվում, քանզի իր մեջ համադրում է երկու հակառակադիր նախասկիզբ՝ երկրային և երկնային: Միայն սերն է միավորում դրանք, իսկ ամուսնությունը հզորացնում և սրբագործում է այդ կապը: Սիրո մեջ (մարդու երկակի՝ հոգևոր և մարմնավոր բնության համապատասխան) առանձնացվում են հոգևոր և մարմանավոր կողմեր: Սիրո գերագույն արտահայտումը, ըստ էության, հոգևոր է:

Մարմնական սերը մարդուն լիակատար բավարարում չի տալիս, մարդը նախ՝ զգում է հոգևոր բավարարման կարիք: Բացի այս, մարդու մարմնական պահանջմունքի բավարարումը սերտորեն կապված է նրա հոգևոր պահանջմունքի բավարարման աստիճանի հետ: Խնդիրն այն է, որ ֆիզիկական մերձեցումն ինքնին չի «հանում» մարդու միայնության զգացումը (Նազարյան): Մյուս կողմից, եթե ֆիզիկական հակումը հոգևոր ձգտման հետևանք չէ, «բարոյական էակ մը չկա հոն» (Պերպերյան): Եվ վերջապես, մարմնական սերն իր խորքային էությամբ հոգևոր է: Մինչդեռ կնոջ և տղամարդու միջև սիրո առաջացումը (նշված իմաստով) հնարավոր է կրթությամբ և դաստիարակությամբ ձեռք բերվող նրանց հոգևոր ընդհանրության պարագայում: Այս իմաստով է ընկալելի լուսավորիչների տեսակետը, ըստ որի՝ կնոջ և տղամարդու տարբերությունը նրանց կրթվածության աստիճանների տարբերության հետևանք է, ինչը համապատասխան է բնական իրավունքի ճշմարիտ ըմբռմանը:

Երկու սեռերի բարոյական հավասարության հաստատումը հարկ է բնորոշել որպես գաղափարական այն հենքը, որի վրա կառուցվում է լուսավորիչների՝ ա) ընտանեկան հարաբերությունների ազգային ավանդույթները պահպանելուն ուղղորդված բազմակնության արևելյան, ինչպես նաև ազատ սիրո եվրոպական ավանդույթների հերքումը, այդ թվում նաև Եկեղեցական ամուսնության ինստիտուտի պահպանման անհրաժեշտության հիմնավորումը, բ) ազգային խնդիրներում կնոջ մասնակցելու (ուղղակի կամ անուղղակի) պահանջը:

[8] Տ. Եուսուֆեան, Կանանց դերը ընկերութեան մէջ: – «Մասիս», 1884, դ 3730, էջ 10:

Մտածողների կարծիքով, ընտանիքի ամենակատարյալ ձևը միամուսնությունն է, քան-
գի այս պարագայում է հնարավոր ընտանիքի իդեալի կենսագործումը: Արևելքում տա-
րածված բազմակնության ավանդույթը կնոջ նկատմամբ բռնության կիրառման հետևանք
է: Նման մթնոլորտում, որտեղ վիրավորվում է կնոջ արժանապատվությունն ու առաջա-
նում են անառողջ կրքեր, անհնար է սիրո վսեմ զգացումը, ինչպես նաև սերնդի բարոյա-
կան դաստիարակությունը: Մինչդեռ հայ ընտանիքի ավանդական ձևը միամուսնությունն
է: Պահպանողականների պնդմամբ. միամուսնությունն անհրաժեշտաբար ենթադրում է
ամուսինների փոխադարձ հավատարմություն. «Ամուսնութիւնն այր ու կնոջ փոխադարձ
կացութեան մէջ հաւասարութիւն կը պահանջէ, քանի որ երկու անձերու սերտ միութեան,
մտքի և սիրոյ համաձայնութեան վրայ հաստատուած է: Սիրոյ բաժանումը՝ թէ էրկան և թէ
կնկան կողմէ պատահի, անհաւասարութիւն յառաջ կը բերէ և ընտանեաց մէջ մտերմու-
թիւնն ու վստահութիւնը կը խանգարէ: Հետևապես բազմակնութիւնն հակառակ է ամուս-
նութեան պայմաններուն, և օրէնքը զայն արգիլել պէտք է»[9]:

Ըստ էության, լուսավորիչները դեմ են հայ ընտանիքում ազգային ավանդույթների որևէ արմատական փոփոխության: Պատճառն այն է, որ ազգի զարգացման հեռանկարը նրանք շաղկապում են ընտանիքի բարոյական առողջությանը, ինչը, իր հերթին, նրանք պայմանավորում են հայ ընտանիքում ազգային ավանդույթների պահպանմամբ: Ինչպես գրում է Մամուրյանը, «մեր էութեան պաշտպանութեան» գլխավոր շաղկապներն են՝ «Հայ Եկեղեցին՝ Հայութեան մի հաստատուն խարիսխը» և «Հայ ընտանիքը, Հայութեան հզօր մի պատուարը» և գտնում, որ ամուսնության վերաբերյալ օրենքի «վերանորոգման» (իրավական պետության իդեալի շրջանակներում), այսինքն՝ քաղաքացիական ամուսնության ինստիտուտի հաստատման որոշ հայ լուսավորիչների միտումը ոչ թե հայ ժողովրդի կենսական պահանջմունքի, այլ եվրոպական ընտանեկան բարքերի ուղղակի փոխառման նրանց ցանկության արտահայտությունն է: Խնդրի էությունը մտածողը հանգեցնում է հետևյալին. «մեր ունեցած կանոնները բուռն և անբաւական են ընտանեկան կենաց անդորրութիւնն ու երջանկութիւնն ապահովելու, այր ու կնոջ իրաւունքը պաշտպանելու, թէ պէտք է այս կանոնները փոփոխել, կրօնական ամուսնութեան հետ քաղաքայինն ալ հաստատել, և թէ՝ մէկ խօսքով՝ ծանրակշիռ պարագայից մէջ քակել այն կապն զոր Եկեղեցին անքակտելի կը ճանչէ և իբրև նուիրական խորհուրդ»[10]:

Քաղաքացիական ամուսնություն կնքելը ոչ միայն չի համապատասխանում ազգային ավանդույթներին, ազգային կեցության առկա պայմաններին (տվյալ պարագայում նկատի է առնվում գլխավորապես ազգի քաղաքական կարգավիճակը), այլև խարխլում է ազգային կեցության հոգևոր-բարոյական հիմքերը, ինչը վտանգի տակ է դնում ազգային ինքնության պահպանումը. «Ազգայնութեան ի՞նչ բարոյական սիւներ ունին այսօր հայք եթէ ոչ Եկեղեցի և ընտանիք, որ արդէն արտաքին այլ և այլ յարձակումներու ենթակայ կը գտնուին: Եթէ մեր ամուսնական կեանքը վարող օրէնքն՝ ըստ եւրոպականին փոփոխենք և թեթևութեամբ այր ու կին իրարմէ հոգւով մարմնով զատելու դրութիւնն ընդունինք, ո՞ւր կ'երթայ մեր վիճակն այս մեր ապրած բազմազան ժողովրդոց մէջ»[11]: Վերը բերվածը ըն-

[9] Մ. Մամուրեան, Ընտանիք: – «Արևելեան մամուլ», 1872, յունիս, էջ 251:
[10] Մ. Մամուրեան, Ընտանիք: – «Արևելեան մամուլ», 1874, փետրվար, էջ 49:
[11] Նույն տեղում, էջ 50:

կալելի է դարձնում Մամուրյանի միտքն այն մասին, որ «մեր ազգային կրօնական ինքնօրինութենէ դուրս չենք կարող ելնել»: Հայ Առաքելական Եկեղեցու կողմից սահմանված Ամուսնության կանոնների փոփոխությունն անգամ անհրաժեշտության դեպքում կարող է վերաբերել միայն այդ կանոնների երկրորդական կետերին:

Մամուրյանի հայեցակետն այն իրողության տեսական հիմնավորումն է, որ ընտանիքն ազգի կենսագործունեության հիմնական ոլորտն է, որտեղ Հայ Եկեղեցին իրականացրել է (մինչև 1917) ազգի սոցիալական և իրավական կյանքի կազմակերպչի և նրա հոգևոր դաստիարակի գործառույթները: Անհրաժեշտ է նշել նաև, որ Եկեղեցական ամուսնության ինստիտուտի անհրաժեշտության հիմնավորմամբ մտածողը հաստատում է Ամուսնության հոգևոր-բարոյական բնույթը: Ինչ վերաբերում է նրա կողմից չճանաչված Քաղաքացիական ամուսնության ինստիտուտին, ապա այն նա դիտում է որպես հոգևոր-բարոյական խորհրդից զուրկ լոկ իրավական դաշինք:

Ազգային խնդիրների իրականացման գործընթացում ընտանիքի, հետևապես՝ նաև կնոջ դերի վերաբերյալ լուսավորիչների պաշտպանած տեսակետները առնչվում են ընտանիքում իշխանության խնդրի վերաբերյալ նրանց կողմնորոշումներին: Դրանցից նպատակահարմար է ներկայացնել դարաշրջանի համար բնութագրական Նազարյանական ու պերպերյանականը:

1. Ելնելով սեռերի բնական տարբերությունից, Նազարյանը իշխանությունն ընտանիքում տղամարդու մենաշնորհն է համարում: Կնոջ համար մտածողն ավելի էական է համարում բարոյական ազատությունը՝ նրա երջանիկ լինելու և առողջ ընտանիք ստեղծելու գրավականը: Կրթությամբ և դաստիարակությամբ ձեռք բերված գիտելիքը և մշակած ճաշակը, ըստ նրա, պետք են կնոջը ընտանեկան կյանքին նախապատրաստվելու, հավատարիմ կին և բարի մայր դառնալու համար: Մինչդեռ քրիստոնեության և նոր ժամանակի լուսավորականության մեծ ձեռքբերումը՝ բարոյական ազատության գաղափարը, ենթադրում է, որ «այր մարդը չէ այսուհետև կնոջ տէրը, այլ նա է, ինչ որ միշտ եղած է և կը լինի, գլուխը գերդաստանի: Կինը չէ ոչ նորա ծառան, ոչ նորա աղախինը և ոչ նորա հպատակը, այլ նորա ստորադրեալը իրաւունքի կարգով, բայց լինելով նորան գլխովին հաւասար, բարոյական կարգին մէջ»[12]:

2. Սեռերի բարոյական հավասարության սկզբունքից Պերպերյանը հետևեցնում է, որ ընտանիքում իշխանությունը պետք է բաժանվի կնոջ և տղամարդու միջև՝ նրանց կատարած պարտականություններին համապատասխան, քանզի պարտականությունների կատարումը իրավունքի առկայություն է ենթադրում. «Ընտանեկան կառավարութիւնն ընկերհաշտական է մանաւանդ քան միապետական, փոխադարձ յարգանաց, զիջողութեանց, համերաշխ գործողութեան վրայ հիմնուած»[13]: Դրանից մտածողը բխեցնում է կնոջ և տղամարդու իրավահավասարության սկզբունքը: Կինը, ըստ նրա, տարբերվում է տղամարդուց, սակայն, հավասար է նրան: Կինը քաղաքակրթության գլխավոր գործիչն է, քանզի նրա բարոյական զարգացման մակարդակով է պայմանավորված հասարակական բարքերի մաքրությունը: Կինը պետք է ունենա նաև հասարակության վրա ուղղակի ազդելու հնարավորություն՝ մանկավարժական և դաստիարակչական գործունեության միջոցով:

---

[12] Ստ. Նազարեան. Ընտանեկան կեանք: – «Հիւսիսափայլ», 1863, դ 2, էջ 102:

[13] Ռ. Պերպերեան. Դաստիարակի մը խօսքերը, Վիեննա, 1901, էջ 10:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ կնոջ հասարակական դերի լուսավորիչների ըմբռնումը հարաբերակցվում է ազգային դաստիարակության գերխնդրի նրանց իմաստավորման հետ: Կնոջը նրանք համարում են Դաստիարակության առանցքը[14]:

Ըստ էության, ընտանիքն ազգի կենսագործունեության այն ոլորտն էր, որի վրա ավելի քիչ էր տարածվում լուսավորիչների հայեցակարգի «առաջադիմական» միտումը: Ժամանակի ոգով պահանջված հայ ընտանեկան կյանքի բարեկարգության խնդիրը կարելի է համարել առաջադիմության լուսավորիչների հայեցակետի փորձաքար: Առաջադիմության գաղափարի արժեքային բովանդակությունը չէր համապատասխանում ազգային կեցության առանձնահատկություններին, ազգի ավանդական մշակույթի մատրիցային, որի լավագույն վկայությունն էին հայ ընտանիքում իրենց կենսական նշանակությունը չկորցրած ազգային ավանդույթները:

Ազգային ընտանեկան ավանդույթների պահպանմանը միտված լուսավորիչների կողմնորոշումն արդարացի է թվում այն պատճառով, որ ավանդույթը համապարփակ ամբողջականացնող կառույց է, որը, անցյալը կապելով ներկային, հանդես է գալիս որպես կոլեկտիվ փորձի արտահայտություն, դրանով իսկ նպաստում ազգի ինքնության պահպանմանն ու ազգի հարատևության ապահովմանը: Ավելի խորքային հարթության վրա այդ միտումն արտահայտվում է պահպանողականների հայեցակետում:

Անձնավորության բարոյական հայեցակարգի պահպանողականների մշակած արժեհամակարգում ընտանիքը բնութագրելի է որպես «ընկերական աշխարհի շենքի» պատվանդան, հետևապես՝ նաև ազգի և մարդկության գոյատևման և կատարելագործման հիմք. «Ոչ միայն մի մասնաւոր ցեղի, ազգի, պետութեան, այլև ընդհանուր մարդկութեան աճումն, բարոյականութիւնը, մտաւոր զարգացումն, բարօրութիւնը, մի խօսքով՝ նոյն իսկ լինելութիւնը և յարատևութիւնը, սերտ կապակցութիւն ունեցել են միշտ ընտանեկան կեանքի հետ, որի գլխաւոր շաղկապը և հիմունքը Ամուսնութիւնն է»[15]:

Միաժամանակ ընտանիքը սահմանելի է որպես «ազգայնութեան սիւն», ազգային միության «ոգի ու կապ», ազգային ավանդույթների «անեղծ անկորուստ պահելու խորան»: Բանն այն է, որ «ազգերը միայն հացով չեն ապրիր, թագաւորութեամբ եւ ազատութեամբ չեն բարձրանար, այլ առաւել բարոյական կեանքով, եւ այդ կենսական կեանք տուողը ընտանիքն է» (Խրիմյան Հայրիկ):

Նման միտվածությամբ է պայմանավորելի ամուսնության՝ իբրև կնոջ և տղամարդու միության աստվածային, բնական և բարոյական օրենքի, պահպանողականների բանաձևումը: Ըստ այսմ, ամուսնությունը կրկնակի խորհուրդ ունի, այն է՝ բարոյական (փոխադարձ սեր ու անքաժանելի միություն և ընկերակցություն՝ օգնելու միմյանց) և «նիւթական՝ աճումն մարդկային ցեղի»: Երկրորդ խորհրդում մտածողները դիտարկում են ամուսնության մեջ Աստծո արարչագործության «շնորհաբաշխության» անընդհատ շարունակականությունը: Մինչդեռ բարոյական խորհրդի հետ նրանք շաղկապում են մի շարք խնդիրներ՝ բազմակնության ավանդույթի, ինչպես նաև ազատ բարքերի հերքումը, Եկեղեցական ա-

---

[14] Այս մասին տե՛ս Гаспарян Ю. А., Мирумян Р. А. Проблема взаимосвязи семьи и социального развития в армянской социальной философии XIX века (методологические аспекты). Ереван, 2001, с. 16-17.

[15] Վահան Վրդ. Բաստամեան. Ամուսնութիւնը ըստ հայոց եկեղեցական իրաւաբանութեան: – «Փորձ», 1880, դ 6-7, էջ 148:

մուսնության հաստատության պահպանումը և կնոջ աստվածատուր առաքելության պաշտպանումը:

Կրոնական մտածողները բացառում են բազմակնությունը, այն համարելով ամուսնության բարոյական խորհուրդը մերժող, հետևապես՝ նաև ազգի (մարդկության) բարոյական առաջադիմությանը խոչընդոտող երևույթ: Ըստ նրանց, բազմակնության պարագայում նենգափոխվում են ամուսնության բարոյական նպատակները՝ ամուսնական փոխադարձ սերը, ծնողական պարտականությունները, վտանգի տակ են դրվում ընտանիքի խաղաղությունն ու երջանկությունը[16]: Բացի այս, բազմակնությունը ո՛չ աստվածային կամքի դրսևորում է, ո՛չ բնական անհրաժեշտ պայման, ո՛չ էլ համընդհանուր դրական օրենք: Այսպես, հեթանոսական շրջանի սկզբում բազմակնությունը տեղ էր գտել շատ ազգերի կյանքում, սակայն այն աստիճանաբար անհետացել է այդ ազգերի բարոյական և մտավոր զարգացմանը զուգընթաց:

Ս. Գրքի աստվածադիր օրենքով հաստատվել է միակնությունը, այդ իսկ պատճառով քրիստոնեական Եկեղեցին, ընդունելով ամուսնությունը իբրև սրբազան խորհուրդ, բոլորովին մերժել է բազմակնությունը և օրինավոր համարել միայն միակնությունը:

Ի տարբերություն լուսավորիչների, որոնք բազմակնության իրենց մերժումը պատճառաբանում են ազգային բազմադարյան ավանդույթներին և ընտանեկան միության բարոյական հիմքերին դրա անհամապատասխանությամբ, պահպանողականներն այն հերքում են՝ ելնելով մարդու բուն էությունից: Պահպանողականները, ըստ էության, փոխում են խնդրի քննարկման կտրվածքը: Լուսավորիչները խնդիրը քննարկում են պատմամշակութային կտրվածքով, մինչդեռ պահպանողականները՝ «ներքին» մարդու, մարդու՝ իբրև հոգևոր-բարոյական էակի տեսանկյունից : Այս հարթության վրա հնարավոր է դառնում՝ ա) առհասարակ բացառել բազմակնության անհրաժեշտությունը մարդկային կյանքում, բ) հայ ազգի ավանդույթներում բազմակնությունը չարմատավորվելու փաստի հիման վրա հիմնավորել ազգի հոգևոր-բարոյական բարձր ներունակության գաղափարը:

Ընտանիքի՝ իբրև կնոջ և տղամարդու բարոյական միության, պահպանողականների սահմանումը անհրաժեշտաբար ենթադրում է երկու սեռերի բարոյական հավասարության հաստատումը: Նման կողմնորոշման հիմքում դիտելի է անձնավորության ազատության քրիստոնեական գաղափարադրույթը: Ըստ այսմ, կինն ու տղամարդը թեպետ տարբեր են իրենց կարգավիճակով և առաքելությամբ, սակայն հավասար են իրավունքներով. «Կինը՝ երկան սպասուհին կամ մանաւանդ արծաթագին աղախինը չէ, ընկերն է, օգնականն է, ոսկր է յոսկերաց, և մարմին ի մարմնոյ իւրմէ: Ժողովրդեան մը մէջ բարոյական զգացումը որչափ շատնայ, կինը համեստութեամբ և ազատութեամբ կճոխանայ, բայց ազատութիւն ըսելով՝ բնաւ չեմ ուզեր պարտազանցութիւն և կարգակեղծութիւն հասկըցունել, այլ արձակուրդ ամեն տեսակ ծառայական կախումէ»[17]:

Վերաիմաստավորելով լուսավորիչների առաջադրած «բարեկարգության» գաղափարը նաև ընտանեկան կյանքի վերաբերմամբ, մտածողները հաստատում են, որ ժամանակի կողմից պահանջված «հավասարություն» և «ազատություն» կարգախոսների ազդեցության ներքո ընտանեկան կյանքի նորմերի փոփոխելու միտումն անգամ վտանգավոր է ազ-

[16] Տե՛ս Խորեն Վ. Աշըգեանց. Քրիստոնէական ամուսնութիւն: – «Ցոլս» (Արմաշ), 1876, դ 2, էջ 91-99:

[17] Խորեն Վ. Աշըգեանց. Առողին ընկերութիւն: – «Ցոլս» (Արմաշ), 1864, դ 4, էջ 91:

գային բարքերը ապականելու առումով: Մինչդեռ ընտանեկան կյանքի իրական բարեկարգությունը ենթադրում է ընտանիքի յուրաքանչյուր անդամի կողմից պարտքի և իրավունքի հստակ ճանաչում, որի բանալին կրոնն է՝ ընտանեկան կյանքի առաջին և գլխավոր խարիսխը. «Կրօնքն է՝ որ ամեն ընկերութեանց մէջ հաստատուն կանոններ և պարտքեր կը սահմանէ, նա՛մանաւանդ կրօնքն է որ պիտի առաջնորդէ ընտանեաց»[18].

Ընտանիքում իրավունքների և պարտականությունների ճշգրիտ հարաբերակցության նախապայմանն է տղամարդու իշխանությունը կնոջ, ինչպես նաև ծնողների իշխանությունը երեխաների նկատմամբ: Ընտանիքում տղամարդու և ծնողների նշված կարգավիճակի խախտման պարագայում խզվում են ընտանեկան կապերը, ինչը խարխլում է ազգային կյանքի հիմքերը՝ ազգի մեջ սերմանելով անբարոյականություն:

Ընտանեկան կապերի ամրությունը, հետևաբար՝ նաև ազգային կեցության հիմքերի անփոփոխելիությունը պահպանողականները պայմանավորում են Եկեղեցական ամուսնության հաստատության պահպանմամբ: Իբրև մեկնակետ ընդունելով «Եկեղեցին է կոչված «թագադրեցնել» ամուսնության հոգևոր-բարոյական խորհուրդը» բանաձևը, նրանք պնդում են, որ Քաղաքացիական ամուսնության ինստիտուտը տարանջատում է ամուսնության կրոնական և բարոյական կողմերը՝ հանդես գալով որպես լոկ քաղաքացիական հաստատություն, իրավաբանական «դաշնակցություն» կամ ընկերություն: Մտածողները շեշտադրում են այն հանգամանքը, որ Հայ Առաքելական Եկեղեցին ընդունել է ամուսնությունը որպես հոգևոր-բարոյական խորհուրդ ունեցող երևույթ և Գոշի «Դատաստանագրքի» հիման վրա ստեղծել Ամուսնության Սահմանադրություն՝ նպատակ ունենալով «օրինավոր կացուցանել ամուսնությունը իր բոլոր հետևանքներով»:

Այս համատեքստում ընկալելի է դառնում կնոջ «ազատագրության» հիմնախնդրի կրոնական մտածողների իմաստավորումը: Վերջինի ներքին իմաստը դիտելի է կնոջ բարոյական նկարագրի պահպանման անհրաժեշտության պահպանողականների ըմբռնման մեջ: Ազգի առկա կեցության և առաջադիմության տեսանկյունից կարևորելով «կանանց բարոյց ազնուութիւնը», մտածողներն այն պայմանավորում են կանանց «ուղիղ դաստիարակությամբ», որի գլխավոր նպատակը համարվում է բարեկիրթ մայրերի և տանտիկինների պատրաստումը, ինչը նախ՝ ենթադրում է հայուհիների դաստիարակումը քրիստոնեական ոգով: Նման մոտեցմամբ պահպանողականները, ըստ էության, շեշտադրում են ընտանիքի՝ իբրև օրգանական, կենսական միության, ներքին, բարոյական հենքի անհրաժեշտությունը, որի միջոցով ընտանիքը շաղկապվում է ազգի հետ և ապահովում նրա բարոյական նկարագիրը:

Նման մոտեցմամբ է բացատրվում այն հանգամանքը, որ կնոջ առանձնաշնորհությունն է համարվում նոր սերնդի դաստիարակությունը, որի առանցքն առ Աստված, Հայ Եկեղեցի և Հայրենիք սիրո ներշնչումն է և նրանց ծառայելու անհրաժեշտության գիտակցման սերմանումը: Բնավ պատահական չի թվում այն հանգամանքը, որ ընտանեկան դաստիարակությունը մտածողներն անվանում են ազգային դաստիարակության գլխավոր օղակը. «Տակաւին շատ ու բազում է գեղծեալ ժողովրդի մի նկարագիրը, որ իւր սկզբնատիպ գաղափար իւր բնական տան ընտանիքէն կ՚առնու... առանց բարի ընտանիք կազմե-

---

[18] Խորեն Վ. Աշըգեան, Ընտանիք: – «Ցոյս» (Արմաշ), 1876, դ 10, էջ 597:

յու, առանց հայրական ու մայրական դաստիարակութեան՝ անհնարին է բարեկեցիկ ազգ, ժողովուրդ կազմել: Վասն զի ինչ որ շինենք, ինչ որ կազմենք, պէտք է գիտնանք, որ այդ կազմող առաջին տարրը ընտանիքն է»[19]:

Ասվածը հիմք է տալիս հաստատել, որ ընտանիքը հայ մտածողները ըմբռնում են որպես ազգի ինքնապաշտպանական կառույց՝ ուղղորդված ազգային կեցության կարևորագույն խարիսխներից մեկի՝ ազգային ավանդույթների պահպանմանը: Հայ ընտանիքում դեռևս վաղ շրջանում ձևավորված և ընդհուպ նոր ժամանակաշրջանը պահպանված ազգային ավանդույթները հանդես են գալիս որպես ազգի կենսունակությունն ապահովող հոգևոր-բարոյական շաղկապ, ազգային մշակույթի վերարտադրման և փոխհաղորդման գլխավոր միջոցներից մեկը: Մտածողների հայեցակետում դրսևորվող «կենտրոնաձիգ», այսինքն՝ անձնավորության արժեքների և կողմնորոշումների համեմատությամբ ազգային արժեքների և կողմնորոշումների գերակայության հաստատման միտվածությամբ է բացատրելի այն հանգամանքը, որ ժամանակաշրջանի համար արդիական՝ կնոջ իրավունքի (և ազատության) հիմնախնդիրը լուսավորիչների մեծամասնության և պահպանողականների կողմից դիտարկվում է հոգևոր-բարոյական կտրվածքով: Այս հենքի վրա ձեռք բերվող ազգի հոգևոր առողջությունը նպաստում է ազգային կյանքի օրգանական կարգի պահպանմանը, ինչն էլ անձնավորության հաստատուն ինքնության միակ էական գրավականն է:

Նման մոտեցումն արդարացի է թվում ինչպես քննարկվող ժամանակաշրջանում առկա ազգային գերակայությունների, այնպես էլ արդի աշխարհում նկատելի հետևյալ միտման տեսանկյունից: Զարգացման նոր ուղիներ մշակող Արևմուտքը բարոյական հիմքեր փնտրելիս դիմում է ավանդական Արևելքին՝ ձգտելով արժեքային և աշխարհայացքային նոր իմաստներով հարստացնել տեխնոգեն մշակույթը: Զարգացման նոր կառույցի որոնումը հանգեցնում է ավանդական հասարակության կայունացնող գործոնների օգտագործման անհրաժեշտության գիտակցմանը: Ակնհայտ է, որ այս հարացույցը պետք է ստեղծվի այն հիմքի վրա, որի վրա են խարսխվում հասարակական կազմակերպության բոլոր բարդ կառույցները և առաջին հերթին ընտանիքը: Այս հարթության վրա անհիմն են ավանդույթների, կրոնական դավանությունների վրա հիմնված ազգային օրենսդրությունների և առանձին երկրների պրակտիկայի ու մարդու (կնոջ) իրավունքների ստանդարտների միջև հակասության հարթեցման միտումը: Ապարդյուն և վնասակար են պատմության մեջ արմատավորված և ավանդույթներով ու կրոնով սրբագործված սովորույթների անսասանության «առասպելի» մերժման բոլոր ցանկությունները, քանզի ավանդական հասարակությունն ամենաամուր կազմակերպությունն է և առայժմ լիակատար չափով իրականացված հասարակության միակ ձևը:

[19] Խրիմյան Հայրիկ, Դրախտի ընտանիք: – Երկեր, Երևան, 1992, 208-209 էջերը:

*ՀԵՆՐԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ*

# ԷՋԵՐ ՄԻ ԲԱՐԵԳՈՐԾ ՏՈՀՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1828-1829 թվականների ռուս-թուրքական պատերազմի ընթացքում ռուսներին թեև հաջողվում է գրավել նաև Բայազետ քաղաքը, սակայն Ադրիանապոլսի պայմանագրի համաձայն քաղաքը վերստին հանձնվում է Օսմանյան կայսրությանը: Հայերն իրենց սպասումներում հուսախաբ լինելով հարկադրված բռնում են գաղթի ճանապարհը, միայն այն տարբերությամբ, որ նրանք ընտրում են ոչ թե օտար երկրների ճանապարհը, այլ Արևելյան Հայաստանի: Բայազետից գաղթածներին ապրելու համար տեղ է առաջարկվում Սևանա լճի շրջակայքում: Բայազետցիները բնակության վայր են ընտրում Գյոքչյա գետակի հյուսիսային եզերքի տափարակ հարթավայրի, ծովից չորս վերստ հեռավորության վրա գտնվող տարածքը և հիմնում ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ քաղաքը:

Ս. Էջմիածինն այստեղ է ուղարկում Գրիգոր և Զաքար արքեպիսկոպոսներին, որոնք հորդորում են հիմնել եկեղեցիներ և ձեռնադրել քահանաներ: Բնակչության աշխատանքները կազմակերպելու և գավառի գործերը կառավարելու համար 1830 թ. ժամանակավոր կառավարիչ է նշանակվում Մկրտիչ աղա Արծրունին: Ժողովրդի այս երախտավոր ծառան իր պարտքն է համարում սատար կանգնել հայրենակիցներին, օգնել և հոգալ նրանց կարիքները: Այդ նպատակով դրամական մեծ նվիրատվություններ է անում անասուններ ձեռք բերելու, տուն կառուցելու և այլ անհրաժեշտ խնդիրներ լուծելու համար:

Այդ պաշտոնը նա վարում է երեք տարի, որից հետո, 1833 թվականին, այստեղի գավառապետն է դառնում պոդպորուչիկ Լարիոնովը: 1837 թ. երբ Նիկոլայ Առաջինը գալիս է Հայաստան, վերադարձին, Սևանով անցնելիս, դիմավորողների թվում է լինում նաև Մկրտիչ աղան: Կայսրը, իմանալով նրա կատարած գործերի մասին, նրան պարգևատրում է շքանշանով և շնորհում ցեղային տիտղոս: Ցավոք, դրանից երեք օր անց, Մկրտիչ աղան վախճանվում է: Մինչ իր մահը նա, տեղեկանալով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նյութական ծանր վիճակի մասին, որն առաջացել էր Երևանի պարսից Սարդարի և խաների կողմից Էջմիածնի վրա դրած տոկոսներով 1000 թուման պարտքից, միանվագ մարում է այն՝ արժանանալով Եփրեմ Կաթողիկոսի գնահատանքին: Նրա մահից հետո այդ պարտականությունը ստանձնում է նրա եղբայր Բարսեղ Արծրունին:

Նրա ջանքերով բարեկարգվում են նորահիմն քաղաքի փողոցները, 1848 թ. կառուցում են նոր եկեղեցի և մի շենք, որտեղ հավաքում են տներում, գոմերում և տարբեր տեղերում պահվող եկեղեցական խաչեր, գրքեր, Ավետարաններ և արժեքավոր այլ իրեր ու առարկաներ:

«Պսակ» պարբերականը գրում է. «Թեև Գյոկչեն կոչումը փոխեց, Նոր Բայազետ դարձավ, բայց ողորմելի օտարականների համար (ծառայողների ) դժոխք էր կատարյալ, նրանց միակ մխիթարությունը Արծրունու տունն էր, որտեղ գտնում էին ամեն տեսակի պարբերական թերթեր, լինում էին թղթախաղեր: Արծրունին չափազանց սիրել է ընթերցանությունը, նույնիսկ տարեց հասակում ուսումնասիրել և սովորել է ռուսաց լեզուն: Նա ու-

ներ ձեռագրերի և հայերեն ու ռուսերեն տպագիր գրքերի մեծ գրադարան, իսկ սեփական դեղատնում պահվող դեղամիջոցներով, որոնց մի մասը ինքն էր պատրաստում, բուժում էր հայրենակիցներին: 1850-ականներին նա այստեղ բացում է արական մի դպրոց, որի համար տրամադրում է սեփական տունը՝ այն բաժանելով երկու մասի, մի մասը դարձնելով հայկական, իսկ մյուսը՝ ռուսական նախնական-տարրական ուսումնարան, իր վրա վերցնելով ինչպես նրա հսկողությունը, կառավարումը, այնպես էլ ամբողջ ծախսը: Այստեղ ընդհանուր կրթության հետ սովորեցնում և պատրաստում էին նաև գավառի եկեղեցիների հոգևորականներ: Ինչպես ասում են, Արծրունին միանգամայն ժողովրդի կենաց դեկը դեպի ապագա բարձրությունն էր ուղղում» («Պսակ», 1881 թ.):

Ներսես Ե Կաթողիկոսը 1850 թվականին Բարսեղ Արծրունուն նշանակում է Նոր Բայազետի վիճակային կառավարության գործակատար: Նա տասը տարի անընդմեջ իրեն վստահված պարտականությունները կատարում է լավագույնս: Նրա ակնառու գործերից են Սևանի վանքի եկեղեցիների վերանորոգությունը, միաբանության սենյակները, հյուրանոցը, գյուղերի եկեղեցիների բարեկարգումը և այլն: Այդ ամենն ըստ արժանավույն գնահատվում է Մատթեոս Կաթողիկոսի հատուկ կոնդակով:

Բարսեղ Արծրունին հոգ է տանում նաև կանանց մասին, հիմնում է օրիորդաց դպրոց, վերջինիս համար բաժանորդագրում անգամ Փարիզում հրատարակվող ամսագրեր:

Արծրունու համբավն այնքան է տարածվում, հատկապես դպրոց կազմակերպելու և երեխաներին կրթելու գործում ունեցած վաստակի համար, որ նույնիսկ նրան փառաբանող երգեր են հորինվում: Այդպիսին է Վաղարշապատի հայտնի աշուղ Ծիրինի երգը (1856 թ. «Նոր քնար Հայաստանի» տետրակ): Նա ունեցել է նաև հին դրամների հարուստ հավաքածու, ուր եղել են հարյուրից ավելի ոսկյա, արծաթյա, պղնձյա հայկական, հռոմեական, հունական, ասորական և պարսկական հին ու նոր դրամներ:

Արծրունի Հակոբ Նավասարդյանի որդիներ Մկրտիչ և Բարսեղ աղաների օրինակին են հետևել նաև նրա այլ մեծահարուստ հայրենակիցներ: Երևսփոխան Ա. Սաղաթելյանցը 1848-ին օգնում է քաղաքի Ս. Կարապետ եկեղեցու կառուցմանը, իսկ 1867-ին Գևորգ Գոբոյանցն իր ծախսով կառուցում է տեղի կամուրջը՝ վճարելով 2500 ռուբլի գումար:

Այսօր Նոր Բայազետն իր եկեղեցիներով, հայտնի մտավորականներով ու հերոսներով, աշխատասեր բարի մարդկանցով այդ երախտավորների կենդանի հուշարձանն է հանդիսանում:

Բարսեղ Արծրունու մահից հետո ժողովուրդը նրա աճյունը, որպես բարեգործի, ամփոփել է Սևանի կղզում, նրա հիշատակը հավերժացնող շիրմաքար կանգնեցրել՝ գրելով հետևյալ արձանագրությունը.

«Ընդ այս տապանաւ յուսով Նորոգչին
Ցաւերժ պարծանօք ի խաղաղ հանգչին
Ոսկերք իշխանին Բարսեղի Արծրունւոյ,
Որ տանն հայկազանց էր ճրագ լուսոյ,
Որ եհեղ զքրտունս փոխանակ արեան,
Ժառանգեաց զանուն իբր զՎարդան,

Թողլով զնշատակ անջնջելի բարեաց,
Փոխեցաւ աստի ի կեանս անանց:
Ծնաւ ի 1-օրն յունիսի 1805 ամի,
Վախճանեցաւ ի 1-օրն յունիսի 1875 ամի»[1]:

2000 թվականին այցելեցի Սևանի կղզի և ցանկացա տեսնել այդ երախտավորի վերոնիշյալ տողերով տապանաքարը, ցավոք մեծ ափսոսանքով ճեռացա այնտեղից` չգտնելով անգամ գերեզմանի ճետքը:

Երևի թե 30-ական թվականներին ինչպես քանդվել էր Ս. Աստվածածին եկեղեցին, այնպես էլ ավերվել էր նրա շրջակայքի գերեզմանոցը: Այժմ այնտեղ ծառածածկ այգի է:

[1] Տէր Մեսրոպ եպս. Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունեաց ծովազարդ գաւառի, Ս. Էջմիածին, 1895, էջ 124:

*ՀՐԱՆՏ ԲԱՐՍԵՂԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*
*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

# ԱՐՑԱԽԻ ԹԵՄՆ ԻՐ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

(1920-1933 թթ.)

Արձագանքելով արցախահայության խնդրանքին, 1922 թ. մարտի 27-ին Գևորգ Ե Կաթողիկոսի Սրբատառ կոնդակով Անանիա արքեպիսկոպոս Համազասպյանը կարգվեց Արցախի թեմի առաջնորդ՝ նստավայր ունենալով Վարանդայի Ավետարանոց գյուղը: Մինչև կժամաներ Անանիա արքեպիսկոպոսը, թեմական առաջնորդի փոխանորդն էր Բյուզանդ ծայրագույն վարդապետը, որին հաջորդել էր Սուրեն վարդապետը: Թեմի առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսի Էջմիածին ուղարկած զեկուցագրերից և նամակներից պարզվում է, որ Արցախի թեմը լրիվ կազմալուծվել էր խորհրդային իշխանության կողմից: Ըստ նրա հաղորդումների, 1922 թ. թեմի մեջ մտնող 159 բնակավայրերից 27-ը չուներ եկեղեցի, քահանաներ ունեին միայն 39-ը: Այդ ժամանակ թեմն ընդգրկող բնակավայրերն ունեին 19004 ընտանիք՝ 109526 բնակիչներով[1]: Նրանցից շատերն Արցախի թեմակալ առաջնորդին ու Էջմիածին ուղարկած իրենց դիմումներում և համախոսականներում ցանկություն էին հայտնում վերականգնել իրենց եկեղեցիները և նշանակել ծխական քահանաներ:

Սակայն տեղի էր ունենում հակառակը: 1925 թ. փակվեց Ծամախու հայոց եկեղեցին և Վարդգես քահանա Գրիգորյանին արգելվեց ծիսակատարությունների անցկացումը[2]:

1922 թ. դեկտեմբերից լույս տեսնող «Բեզբոժնիկ», ինչպես և «Ազատ Եկեղեցի» «Անաստված» և այլն պարբերականներ իրենց կեղտոտ գործն էին կատարում և լայն քարոզարշավ ծավալում երկրում գործող եկեղեցիների և հավատացյալների դեմ: Հակակրոնական և հավատացյալների դեմ լայնածավալ պայքար էր տանում մանավանդ Անաստվածների միությունը և նրա հարյուրավոր բաժանմունքները: ԽՍՀՄ Անաստվածների այդ միությունը, որը ձևավորվել էր 1925 թվականին և որի բաժանմունքը Հայաստանում ստեղծվել էր 1928 թվականին, հետագայում դարձավ ԽՍՀՄ մարտնչող անաստվածների կազմակերպություն, որի բերած վնասները չափազանց մեծ էին: Եվ չնայած դրան, Արցախ-Ղարաբաղում չէր դադարում թեմի գործունեությունը վերականգնելու և ընդլայնելու պայքարը: Մանավանդ պայքարում էին եկեղեցիներից վտարված քահանաներին վերադարձնելու կամ նորերին ձեռնադրելու ուղղությամբ:

Արցախահայությունը հավատում և վստահում էր Եկեղեցուն, որին ապավինել էր դարեր շարունակ: Այդ են ապացուցում 1921-1922 թվականներին Մայր Աթոռ ուղարկված համախոսականները: Խաչենի գավառի Ղշլաքենդի և Սեյդիշենի հասարակությունների

---

[1] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 3, գ. 492, թ. 137:

[2] Նույն տեղում, ֆ. 409, ց.1, գ. 601, թ. 1:

անունից 168 հոգու ստորագրությամբ ուղարկված համախոսականում խնդրվում էր իրենց ընտրած ընծայացու ուսուցիչ Միքայել Տեր Անդրեաս Սարումյանին ձեռնադրել քահանա[3]: Նման խնդրագրեր ուղարկվել էին նաև Դիզակի Հադրութ, Խաչենի Դաշբուլաղ, Պտրեցիք, Ջիվանշիրի Գանձասար, Հոռաթաղ, Դրմբոն, Չափար, Վարանդայի Ղզղալա, Սոս, Գյունե Ճարտար, Ներքին Թաղավարդ, Սարուշեն և այլ գյուղերից:

Արխիվային նյութերում փաստեր կան այն մասին, որ տեղական իշխանությունները իրենք էին հովանավորում եկեղեցու դեմ «հանդես եկող» հոգևորականներին: Օրինակ, Անանիա արքեպիսկոպոսին և Գևորգ Ե Կաթողիկոսին ուղարկված նամակներում պաշտպանում էին Ամարասի վանքի վանահայր Սուրեն վարդապետի հակաեկեղեցական ելույթները: Անանիա արքեպիսկոպոսը Սուրեն վարդապետին զրկել էր վանահայրությունից, ինչպես և թեմական ու վարչական պաշտոններից: Մինչդեռ հասարակության մի շարք խմբեր (Ավետարանոց, Սոս, Սխտորաշեն, Սարուշեն) փորձում էին պաշտպանել Սուրեն վարդապետին[4]:

Կատարվում էին նաև այլ բնույթի քայլեր, որոնք պարզ են դառնում քահանա Ադամյանի և Անանիա արքեպիսկոպոսի նամակագրությունից: Արցախի թեմի հոգևոր խորհրդի անդամ, Խանքենդ ավանի նախկին ծխատեր Ջավեն քահանա Ադամյանը 1923 թ. օգոստոսի 19-ին Անանիա արքեպիսկոպոսին հաղորդել է, որ Խանքենդի Ս. Գևորգ եկեղեցին և նրա ունեցվածքը բռնագրավվել է խորհրդային կառավարության կողմից, իսկ քահանայի սենյակը դարձրել են արհեստանոց, եկեղեցին էլ՝ պահեստատեղի[5]: Դրանից վրդովված թեմի առաջնորդը 1924 թ. մարտի 12-ին բողոքի նամակ է ուղարկում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Գործադիր կոմիտե, որում Ղարաբաղի իշխանություններին հիշեցվում է, որ եկեղեցին թողնվել է «ժողովրդի ազատ կամքին և խղճին»: Սակայն «նորաբողբոջ ինքնավար Ղարաբաղի զանազան գյուղերում» ժողովրդի նվիրած տուրքերի «գանձումը խիստ արգելքների են հանդիպում մի քանի անմարդասեր իսպալկոմների շնորհիվ և մինչև անգամ բռնանում են, ժողովրդի զգացմունքները ավելի վիրավորում, եկեղեցին ժողովրդատեղի և թատերգության բեմ դարձնում, նրա սեփականությունը բռնագրավում»:

Անանիա արքեպիսկոպոսն օրինակ է բերում, որ Հերհերի եկեղեցում ժողով գումարելով՝ Մարկոս Ադամյանն իր համախոհների հետ որոշել է եկեղեցին դարձնել թատերգական բեմ: Մի կողմ են նետել սրբազան մատյանները և ծիսական առարկաները, իսկ Մուշկապատում բռնագրավել են եկեղեցու շինանյութը: Շատ գյուղերում եկեղեցիները դարձրել են ժողովատեղի: Անշուշտ, այդ ամենից «քահանաները վիրավորված են և վշտացած հեռանում են»: Բացի այդ, տուրքերը գանձվում էին չափից դուրս շատ: Արցախի թեմի առաջնորդը «ի նկատի ունենալով այդ տարօրինակ երևույթները և քրիստոնեական եկեղեցու ծաղրելը» և, քանի որ «նրա առաջն առնելն» իր ուժերից վեր էր, ուստի ստիպված էր խնդրել «հեռանալ» իր պաշտոնից: Նա բողոքում էր Ստեփանակերտի խորհրդի նախագահ Հարություն Շադունցից, որը «հատուկ անմարդասեր բնավորություն

[3] Նույն տեղում, ց. 3, գ. 340, թ. 12:

[4] Նույն տեղում, գ. 522, թ. 3:

[5] Նույն տեղում, ֆ. 409, ց. 1, գ. 2723, թ. 2:

ցույց տվեց և արգելք հանդիսացավ» հավատացյալների գործունեությանը: Թեմի առաջնորդը խնդրում է կարգադրել «վերոգրյալ երևույթներին վերջ տալ» և հնարավորություն տալ 78-ամյա ծերունուն հեռանալ Արցախից[6]:

Ջավեն քահանա Ադամյանի՝ Անանիա արքեպիսկոպոսին ուղարկած վերոհիշյալ նամակից նաև իմանում ենք, որ ինքը արքեպիսկոպոսի հանձնարարությամբ շրջելով Վարանդայի Ա մասի գործակալության բոլոր գյուղերը, այնտեղ տեսել է ժողովուրդը բարեպաշտությունից հիասթափված, և ծխական քահանաները գանգատվում էին, որ «իրենց բարոյապես ընկճելուց զատ, տնտեսապես գտնվում են չքավոր վիճակում: Ամեն գյուղում, առանց բացառության, քահանան հայտնում էր, որ ուզում է հրաժարվիլ քահանայագործությունից, պարապել այլ գործերով, որպեսզի կարելի լինի գոյությունը մի կերպ քարշ տալ»: Պաշտոնից հրաժարվող որոշ քահանաներ, տեղական իշխանությունների պահանջով, հաճախ ներկայացնում էին անամոթ հրաժարականներ: Ծեխեր գյուղի քահանա Տ. Խաչատրյանը Վարանդայի շրջանի լուսավորչական բաժնին գրել է. «Խորհրդային կարգերը Ղարաբաղ մտնելուց, ես միանգամայն համոզվում եմ, որ հոգևորականությունը սկզբից մինչև մեր օրերը եղել է ժողովրդին խաբող մի դասակարգ, շահագործելով զանազան աստվածների ու սրբերի անվան տակ»[7]:

Արցախի թեմի առաջնորդը 1924 թ. մայիսի 1-ին նոր նամակով դիմելով Գերագույն Հոգևոր Խորհրդին, հաղորդում է, որ բացի Ստեփանակերտում տեղի ունեցածից, «Երից մանկաց վանքի տաճարի համար պատրաստված թախտափուշի տախտակները 1900 կտոր, բռնագրավել են տեղական խուզարկուները»: Այս և համանման մյուս բոլոր գործողությունների մասին չնայած նոր բողոք ուղարկվեց մարզխորհուրդ, սակայն այն մնաց անհետևանք:

Արցախի թեմի առաջնորդ Անանիա արքեպիսկոպոսը, որն իր ամբողջ կյանքը նվիրել էր Հայ Առաքելական Եկեղեցուն ծառայելուն, այլևս չկարողանալով հանդուրժել Արցախում տեղի ունեցող անօրինությունները և «ի նկատի ունենալով ժամանակիս ծանր ու անտանելի անցուդարձը», հաստատ վճռում է հրաժարվել «այդպիսի պատասխանատու ծանր պաշտոն վարել»[8]: 1924 թ. հունիսի 3-ի Գևորգ Ե Կաթողիկոսի հրամանով նա ազատվում է Արցախի թեմի առաջնորդի պաշտոնից և վերադառնում Էջմիածին[9]:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ի հրամանով Մայր Աթոռի միաբան Վրթանես վարդապետ Հակոբյանը (1875-1943) 1925 թվականի փետրվարի 26-ին կարգվեց Ղարաբաղի թեմի առաջնորդ և Գանձասարի ու Ամարասի վանքերի վանահայր[10]: Թեմի նստավայր է ճանաչվում Գանձասարի վանքը, ուր թեմակալ առաջնորդը հասավ ապրիլի 7-ին, մի այնպիսի ժամանակ, երբ թեմում «ոչ միայն որևէ հոգևոր ներկայացուցչութիւն գոյութիւն չունէր, այլև ամբողջ շրջաններ, քահանայք և ժողովուրդ դադարել էին եկեղեցական

[6] Նույն տեղում, թ. 34:

[7] Նույն տեղում, թ. 2:

[8] Նույն տեղում, թ. 8:

[9] Նույն տեղում, թ. 7:

[10] Նույն տեղում, գ. 2722, թ. 11:

ծէս և արարողութիւն կատարելուց. նոյնիսկ հայի համար ամենանուիրական տօներին՝ Ծննդեան ու Զատկին»[11]:

Վրթանես վարդապետն ահա այդպիսի մի ժամանակ ժամանելով Արցախ, «Շնորհիւ եկեղեցական, քարոզչական, վարչական ունակութեան և անդուլ աշխատանքի» կարողացավ թեմում վերականգնել աստվածապաշտական կարգը: Նա շրջելով և քարոզելով, բոլոր գյուղերում նշանակեց թեմական խորհուրդ, գործակալներ, հոգաբարձուներ: Եվ այդ ամենի շնորհիվ թեմի հոգևոր գործերը մտան իրենց բնականոն հունի մեջ: Թեմի առաջնորդը «եպիսկոպոսական իրեն արժանի պաշտոնը վարելով, վայելում» էր բոլոր հավատացյալների սերն ու հարգանքը: Ելնելով այդ ամենից, Արցախի թեմի խորհուրդը խնդրում է Սրբազանակատար Սուրբ Հայրապետին թեմի առաջնորդ Բարձրապատիվ Տ. Վրթանես ծ. վարդապետին շնորհել եպիսկոպոսի աստիճան, «ի հնարաւորութիւն թեմիս աւելի քան հարիւր անհովիւ գիւղերին քահանաներ ձեռնադրելու և ի վարձատրութիւն ու ի խրախոյս իւր առաջնորդական և եկեղեցական գործունէութեան յօգուտ ընդարձակ թեմիս հաւատացեալ ժողովրդին»[12]: Գևորգ Ե կաթողիկոսն արցախցիների խնդրանքը կատարեց և 1928 թվականին Վրթանես ծ. վարդապետին ձեռնադրեց եպիսկոպոս:

Վրթանես ծ. վարդապետը գալով Արցախ, իր առաջնահերթ պարտքը համարեց այցելել Լեռնային Ղարաբաղի Կենտգործկոմի նախագահ Արմենակ Ղարագյոզյանին: Ստեփանակերտում նրան ընդունում են հարգանքով և խոստանում օգնել թեմի գործերը կարգավորելու: Եկեղեցու նկատմամբ արցախցիների ունեցած վերաբերմունքի մասին մանրամասը նկարագրված է 1925 թ. թեմի առաջնորդի՝ Վեհափառին ուղարկված ընդարձակ զեկուցագրում, որտեղ ասված է, որ երկրամասի տնտեսությունը քայքայված է, բերքը չափազանց ցածր, եղածին էլ մեծ վնաս են հասցրել դաշտամկները: «Երկու տարի է, ինչ եկեղեցու զանգի ձայն ոչ մի տեղ չի լսուել..., Ս. Պատարագ չի մատուցուել, մկրտութիւն ու պսակ եկեղեցու ծիսով չի կատարուել...»: Եվ չնայած այդ ամենին, այնուամենայնիվ «ժողովրդի մեջ վառ է կրօնական զգացմունքը...»:

Այդ զեկուցագրից նաև իմանում ենք, որ անցնող երկու տարիների ընթացքում իրենց կարգը թողել էին Նորաշենի, Մաշադիշենի, Հացիի, Կաղարծիի, Հաղորտիի, Ղուզե Ճարտարի, Խնուշինակի, Գիշիի, Սարուշենի, Խաչմաչի, Տռնավարգի, Շուշիի, Ծեխերի, Ղարաբուլաղի, Հարավի, Քռասնիի, Բալուջայի, Խանաբադի, Ծմկահողի, Վաղուհասի, Կուսապատի, Մարտակերտի, Մադաղիսի, Խծաբերդի, Նախիջևանիկի, Ղզղալայի և Տողի քահանաները: Նրանք «չդիմանալով արտաքին և նյութական ճնշումներին», հայտարարել էին, թե իրենք մինչև օրս խաբել են ժողովրդին: Այդ ժամանակաշրջանում տեղական իշխանությունները բռնագրավել էին Ստեփանակերտի, Մուշկապատի, Սխտորաշենի, Հաղորտիի, Խնուշինակի, Նգիի, Կուսապատի և այլ գյուղերի եկեղեցիները, ինչպես և Ամարասի, Երից մանկաց վանքերի և Ավետարանոցի եկեղեցու սրբությունները ու հնությունները:

Թեմի առաջնորդը բազմիցս խնդրել էր ԼՂԻՄ իշխանություններին ետ վերադարձնել բռնագրավված եկեղեցիները ու նրանց գույքը: Նա Արցախ գալուց հետո չորս ամսվա ըն-

[11] Նույն տեղում, թ. 1:

[12] Նույն տեղում, թ. 1-2:

թացքում մի շարք քահանաների վերադարձրել էր եկեղեցի, ստեղծել էր թեմական հոգևոր ատյան, 13 գործակալություն, հաշվառվել էր բոլոր վանքերի գույքը, բազմաթիվ անքահանա գյուղերում կազմակերպել էր Սուրբ Պատարագներ, շրջել էր Խաչենի, Ջրաբերդի ու Վարանդայի հայկական գյուղերը և ժողովրդին կազմակերպել «եկեղեցու շուրջը»: Բացի այդ, նախաձեռնել և հրավիրել էր թեմական պատգամավորական ժողով[13]:

Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդն Արցախի թեմի առաջնորդին հանձնարարում է «աշխատել ամեն կերպ փակուած եկեղեցիները վերաբանալ և թմրած ժողովրդի միտքն, հոգին վերակենդանացնել և յորդորել հոգեշունչ քարոզներով ու կապուել եկեղեցու ու նրա անբաժան նախնաւանդ ծէսերի ու սովորութիւնների հետ»[14]: Թեմից հեռացած տասնյակ քահանաներ մեղայական նամակներով և հայտարարություններով դիմում էին Վրթանես ծ. վարդապետին և խնդրում ընդունել իրենց մեղայականները և քահանայական կարգը վերականգնելու համար անել համապատասխան կարգադրություններ: 1925-1927 թվականներին նման խնդրագրերով դիմել էին Մյուրիշենի, Ավդուռի, Ծուշիի, Ղզղալայի, Սարուշենի, Խաչմաչի, Սխտորաշենի, Կարմիր գյուղի և Ղավախանի գյուղերի նախկին քահանաները:

Վրթանես ծ. վարդապետը 1925 թ. սեպտեմբերի 1-ին Գևորգ Ե Կաթողիկոսին ուղարկած հայտարարությամբ խնդրում էր թույլատրել ընդունել այդ քահանաների մեղայականները և նրանց վերադարձնել քահանայագործության: Քահանայությունից հեռացած քահանաներն իրենց հեռանալու հիմնական պատճառը համարում էին իրենց նյութական ծանր վիճակը և տեղական իշխանությունների ու կազմակերպությունների ճնշումը: Գերագույն Հոգևոր Խորհուրդը 1925 թ. սեպտեմբերի 19-ին Վրթանես ծ. վարդապետին տեղյակ է պահում «կարգալոյծ չեղած քահանաների մեղայականներն ընդունել և նրանց թոյլ տալ քահանայագործելու»[15]:

Արցախում թեմի առաջնորդի համար աշխատելը խիստ դժվար էր: Ադրբեջանի իշխանությունների հանձնարարությամբ փակվում էին եկեղեցիները ու դուրս վտարվում հոգևորականները: Դրան, անշուշտ, ակտիվորեն նպաստում էր Արմենակ Ղարագյոզյանն իր ադրբեջանամետ քաղաքականությամբ: Նրա և ներքին գործերի նախարարի հասցեով ուղարկած թեմի առաջնորդի բազմաթիվ բողոք-նամակները շարունակում էին մնալ անպատասխան և անհետևանք: Արցախում, որտեղ 1914 թվականին գործում էր մի քանի հարյուր եկեղեցի և 198 հոգևորական[16], 1920-ական թվականների կեսերին հազիվ գործում էին մի քանի տասնյակ եկեղեցի, իսկ մնացածները բռնագրավվել էին տեղական իշխանությունների կողմից:[17]

Խորհրդավոր պայմաններում մահանում էին Հայոց Եկեղեցու նվիրյալներ թե՛ Հայաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս: 1927 թ. դեկտեմբերի 1-ին մահացավ Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանը, որը բավականին օգնում և սրտացավ մոտեցում ուներ Ար-

---

[13] Նույն տեղում, թ. 3-5:

[14] Նույն տեղում, թ. 6:

[15] Նույն տեղում, թ. 29:

[16] «Արարատ», 1914, էջ 637:

[17] ՀԳՀ ՊԿՊԱ, ֆ. 409, ց. 1, գ. 616, թ. 1:

ցախի թեմի ընկատմամբ: Նրա մահվան առթիվ իր կասկածներն արտահայտեց Արցախի թեմի առաջնորդը: Նա Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուղարկած իր նամակում գրել է. «Գյուտ եպիսկոպոսի մահվան բոթը ցնցող տպավորություն թողեց ինձ վրա. այրեց և մրրկեց իմ ամբողջ էությունը և դեռ երկար տարիներ այս կսկիծի մուխը չպիտի մարի իմ սրտում և մղկտացող սիրտս միշտ պիտի հոսի աչքերիցս մրմուռի արցունքներ»[18]:

1927 թ. փակվեց Վրաստանի հայոց հոգևոր թեմը և առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը եռ կանչվեց Էջմիածին: Հայ Եկեղեցու դեմ ավելի կոպիտ արարքներ տեղի էին ունենում Ադրբեջանում: Արցախում եկեղեցականները ճզմվում էին պետական հարկերի տակ, ենթարկվում ծաղր ու ծանակի: Այդ սարսափելի հարկերից ազատվելու համար շատերն օգնություն էին խնդրում թեմի առաջնորդից կամ Մայր Աթոռից: Դաշբուլաղ գյուղի ծխատեր Սարգիս քահանա Քոչարյանը 1926 թ. օգոստոսի 9-ին Վրթանես վարդապետին տեղյակ պահելով քահանայությունից իր հրաժարվելու որոշման մասին, իր այդ քայլը բացատրում է հետևյալով. Ղարաբաղի գյուղացիությունը ներկայումս ապրում է խեղճ ու չքավոր դրության մեջ: Այսպիսի պայմաններում քահանայությունից ոչ մի օգուտ չկա, նույնիսկ քահանաները ապրուստի միջոց չունեն, նրանք զրկված են բոլոր միջոցներից [19]:

Արցախի թեմի այդ անմխիթար վիճակի ողջ պատասխանատվությունն ընկնում էր խորհրդային իշխանությունների վրա: Բերենք այսպիսի մի օրինակ. որոշվել էր 1925 թ. սեպտեմբերի 5-ին հրավիրել թեմական պատգամավորական ընդհանուր ժողով, որտեղ պետք էր ընտրեին թեմական մարմիններ և թեմի հոգևոր իշխանությունը պահպանելու համար գտնեին եկամուտների աղբյուրներ: Սակայն խորհրդային տեղական իշխանությունները արգելեցին և թույլ չտվեցին հրավիրել նախատեսված ժողովը, ժողովականներին ցրեցին և նրանց «մէկիկ-մէկիկ հարց ու քննութեան ենթարկեցին», իբրև իրենց հետ նախօրոք չպայմանավորվելու պատճառով[20]:

Տեղական իշխանությունների ճնշման հետևանքով շատ հավատացյալներ վախենում էին գնալ եկեղեցի և նվիրատվություններ անել: Ժողովուրդը սառել էր եկեղեցուց, իսկ «շատերի մէջ այն համոզմունքն էր կազմուել, որ այլևս հոգևոր իշխանութիւն գոյութիւն չունի, հոգևոր խորհուրդները դադարած են գրեթէ ամեն տեղ, ոչ մի հոգևոր պաշտոնեայ չի վարձատրուել և 34 քահանայ հեռացել են, որովհետև ապրուստի միջոցներ չեն ունեցել»[21]:

Ձնայած Գերագույն Հոգևոր Խորհուրդը նույնպես գտնվում էր նյութական ծանր պայմաններում, բայց և այնպես ֆինանսական որոշ օգնություն էր ցույց տալիս Արցախի թեմի առաջնորդ Վրթանես ծ. վարդապետին՝ որոշ հարցեր լուծելու համար: Մայր Աթոռն այդ զոհաբերություններն անում էր «ի սէր դէպի ժողովրդի կրօնական-բարոյական կեանքի բարգաւաճման»[22]:

---

[18] ՀԳՀ ՊԿՊԱ, գ. 919, թ. 6:
[19] ՀԳՀ ՊԿՊԱ, գ. 2727, թ. 12:
[20] Նույն տեղում, գ. 2722, թ. 13:
[21] Նույն տեղում:
[22] Նույն տեղում, գ. 2725, թ. 3:

Բացի եկեղեցիները բռնագրավելուց, սիստեմատիկ ավելացնում էին քահանայավարձը և քահանաներին զրկում հողաբաժիններից ու ապրելու միջոցներից:[23] Վերոհիշյալ Դաշբուլաղի ծխատեր Սարգիս քահանան թեմի առաջնորդին ներկայացնելով նոր հրաժարական, իր քայլն այսպես է բացատրում. «Սեփականութիւնից զուրկ եմ, հող, այգի չունիմ, հինգ շնչից բաղկացած ընտանիքս հաց է ուզում, պետութիւնն էլ՝ քահանայագործութեան համար վարձ: Ինչ անեմ, ինչով կերակրեմ ընտանիքս, երբ քահանայագործութիւնից ոչ մի արդիւնք չունիմ, քահանայական պաշտօնս էլ արգելք է հանդիսանում ինձ որևէ գործի մտնել ու աշխատել: Այժմ էլ ճար չունիմ. դորայ համար էլ, սորանով խնդրում եմ ինձ հայ հաւատի, ծէսի համաձայն հրաժարուած համարէք քահանայութիւնից…»[24]:

Տեղական իշխանությունները և կազմակերպությունները Արցախի թեմի հոգևորականներին ոչ միայն դուրս էին մղում եկեղեցուց, այլև երկրամասի քահանաներից շատերն ստիպված էին տեղափոխվել Բաքու, Միջին Ասիա, Ռուսաստան, Հայաստան և Վրաստան: Այդ ամենն ի նկատի ունենալով, 1926 թ. հուլիսի 30-ին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Գյուտ եպիսկոպոսի ստորագրությամբ Խորհրդային Ղարաբաղի Ժողկոմխորհի նախագահ Արմենակ Ղարագյոզյանին ուղարկված նամակում շարադրված է Արցախի գյուղերում կուսակցական գործիչների և տեղական իշխանությունների հակաեկեղեցական տգեղ ու պատիվ չբերող պահվածքը և խնդրվում է դրա դեմն առնել: Այդ փաստաթղթում նշված է, որ Արցախում գյուղական եկեղեցիները «փակելուց, թատրոնի և ակումբի վերածելուց և այդպիսով գիւղական հաւատացեալ համայնքները կրօնական մխիթարութիւնից զրկելուց յետոյ, գիւղական իշխանութեան ներկայացուցիչները և կուսակցական անփորձ գործիչները թոյլ են տալիս իրենց գիւղերում վերին աստիճանի տգեղ ու վրդովեցուցիչ ձևերով և անվայել արտայայտութիւններով վիրաւորել գիւղացի հաւատացեալների կրօնական սրբութիւններն ու զգացումները»:

Գյուտ եպիսկոպոսն ուղարկելով այդ նամակը, հույս ուներ, որ ԼՂ ղեկավարությունը կդադարեցնի հակաեկեղեցական այդ վայրագությունները, նրանց «կամայական վարմունքն ու հակաօրինական ճնշումները, որոնք իսկապես իրենց այդպիսի վարմունքով … վարկաբեկում են խորհրդային իշխանութեանը գիւղական հաւատացեալ համայնքների աչքում»: Գյուտ եպիսկոպոսը խնդրում է «Ա. վերաբանալ տալ փակուած եկեղեցիները և յանձնել հաւատացեալ համայնքներին, Բ. պատասխանատուութեան ենթարկել… Հանցաւորներին և Գ. յստակ կարգադրութիւն անել, որպէսզի հաւատացեալներին և քահանաներին այլևս կրօնական վիրաւորանքներ չհասցնեն գիւղական վարչական անձերը»[25]: Ինչ խոսք, Գերագույն Հոգևոր Խորհրդի գրած այդ բողոք-նամակը մնաց «ձայն բարբառո» և ոչինչ չփոխեց Եկեղեցու նկատմամբ իշխանությունների ունեցած վերաբերմունքում:

Արցախի թեմի առաջնորդը մտածում էր թեմն ապահովել նյութական միջոցներով, առանց որի հնարավոր չէր հետագա գոյությունը: Նրա խնդրանքով, 1926 թ. դեկտեմբերի 21-ին առաջնորդարան գալով խորհրդային իշխանության մի խումբ ներկայացուցիչներ, որոշում են Գանձասարի վանքի չորս կողմի վարելահողերը (երեք մեծ, երկու փոքր)

[23] Նույն տեղում, գ. 2722, թ. 32:

[24] Նույն տեղում, գ. 2727, թ. 12:

[25] Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Թ., էջ 860-861:

հանձնել թեմին[26]: Տեղական իշխանությունների այդ քայլը հույս էր ներշնչում, ինչպես ասում են, սայլը տեղից շարժել: Այդ հողամասերը ցանելու համար Գերագույն Հոգևոր Խորհուրդը ֆինանսական օգնություն է ցույց տալիս Արցախի թեմին:

Տեղական իշխանությունների կողմից կարգ էր սահմանվել, որ թեմի առաջնորդն իր բոլոր կատարածների և հետագա անելիքների մասին պետք է մանրամասը զեկուցեր մարզային իշխանություններին և ստանար նրանց հավանությունը: Վրթանես վարդապետը 1927 թ. մարտի 16-իմ ԼՂԻՄ ներքին գործերի նախարարին ուղարկած զեկուցագրում պատմելով այդ տարվա մի քանի ամիսներին իր կատարած աշխատանքների և հետագա անելիքների մասին, շեշտում է, որ առաջիկայում իր քարոզները լինելու են «զուտ կրօնական բովանդակութեամբ, կատարել պաշտօնների փոփոխութիւններ, ծանօթանալ եկեղեցիների կարիքների հետ, պատմական, գեղարվեստական արժեք ներկայացնող վանքերի մասին մասնաւոր ուսումնասիրութիւններ կատարել»: Նաև տեղեկացնում է, որ «թեմի եկեղեցական-կրօնական այլևայլ գործեր՝ գործակալական, քահանայական-թեմական ժողով կամ խորհրդակցութիւն չեն լինելու առանց պատշաճ իշխանութեան կանխօրոք թոյլտուութեան, որին պիտի ներկայացուի և օրակարգի խնդիրները»:

Արցախի իշխանություններին թեմակալ առաջնորդը հիշեցնում է, որ «բանւորագիւղացիական կառավարութիւնը Եկեղեցուն և հաւատացեալներին տուել է ազատ գործելու լուրջ իրաւունք և հնարաւորութիւններ», սակայն Լեռնային Ղարաբաղում դրանից օգտվում էին միայն համեստ չափով: Թեմի առաջնորդը կոմիսարին նաև տեղյակ է պահում, որ իր ներկայացրած «կետերից որևէ մեկը եթէ չպիտի» կատարվի իրեն անհայտ պատճառով, ապա խնդրում է այդ մասին իրեն տեղյակ պահել[27]:

Սոս գյուղն ուներ դպրոցական հարմարավետ շենք, թատերական դահլիճ, խրճիթ-ընթերցարան, բայց և այնպես Լենինի մահվան տարեդարձի օրը տեղի իշխանությունը գրավում է եկեղեցին և այդ նույն օրն էլ այնտեղ ներկայացում կազմակերպում: Այդպես են վարվում նաև Ջրաբերդի շրջանի Ղազանչի, Դիզակի շրջանի Տող, Խաչենի շրջանի Դահրավ, Նորագյուղ և մարզի այլ գյուղերում: Թաղավարդ գյուղի քահանա Ներսես Ծահրամանյանը 1927 թ. հունիսի 27-ին Գևորգ Ե Կաթողիկոսին ուղակած խնդրագրում ասում է, որ չորս շնչից բաղկացած ընտանիքը դժվարությամբ է կարողանում կառավարել: Ապա և պետական ու քահանայական հարկերը ուժերից վեր էր, բոլոր եկամտի աղբյուրները կտրված են: Քահանային ամենից առաջ շփոթեցրել էր «տնտեսական անձուկ դրութիւնը», որի պատճառով էլ չէր կարողանում մտածել «հոգևոր պարտականութիւնների մասին», ուստի խնդրում էր իրեն ազատել զբաղեցրած պաշտոնից[28]:

Կան բազմաթիվ փաստեր, որ տեղական իշխանություններն աշխատանքով կաշառում էին որոշ քահանաների և նրանցից պահանջում հանդես գալ Եկեղեցու դեմ ու հրապարակայնորեն հրաժարվել քահանայությունից: Թեմի առաջնորդը ջանում էր նման քահանաներին ետ պահել այդպիսի արարքներից և բարձր պահել Եկեղեցու հեղինակությունը: Նա լավ իմանալով Մայր Աթոռի անձուկ վիճակը, Գերագույն Հոգևոր Խորհրդին խնդրում էր

[26] ՀՀ ՊՀՊԱ, ֆ 409, ց. 1, գ. 2728, թ. 1:

[27] Նույն տեղում, գ. 2723, թ. 3

[28] Նույն տեղում, թ. 11:

թե՛ Ներսես քահանա Շահրամանյանցին և թե՛ նման 5-6 քահանաների նյութական օգնություն ցույց տալ «գէթ պետական տուրքերը հոգալով»: Գերագույն Հոգևոր Խորհուրդն ստիպված էր դիմել Բաքվի հայոց եկեղեցու առաջնորդ Գեր. Տ. Մատթեոս արքեպիսկոպոսին՝ բաքվաբնակ թաղավարդցիների մեջ հանգանակություն անել հօգուտ Ներսես քահանայի, քանի որ նրան այլ տեղ տեղափոխելը հնարավոր չէր և ոչ էլ Մայր Աթոռը կարող էր նրան օգնել[29]:

Արցախի թեմի վիճակն ավելի ծանր էր 1929-1930 թվականներին, մանավանդ կոլտնտեսային շարժման տարիներին: Այդ ժամանակ մնացած եկեղեցիների գրավումը և դրանք կոլտնտեսությունների կարիքներին ծառայեցնելը, մանավանդ պահեստներ և շտեմարաններ դարձնելը, համարում էին խիստ անհրաժեշտ: Թե՛ թեմի առաջնորդը և թե՛ հոգևորականները համառորեն պայքարում էին այդ երևույթի դեմ: Հենց այդ նպատակով 1929 թ. հունվարի 20-ից մինչև 1930 թ. փետրվարի 7-ը թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը գտնվելով Ստեփանակերտում և հանդիպումներ ունենալով մի շարք պաշտոնյաների հետ, Գանձասար վերադարձավ հուսահատված: Նա հասկացավ, որ Ադրբեջանի պարագլուխների պահանջով ԼՂՄ-ի ղեկավարները բացահայտորեն որոշել էին փակել Արցախի թեմը:

Վրթանես եպիսկոպոսը 1929 թ. փետրվարի 11-ին Էջմիածին ուղարկած զեկուցագրում Գերագույն Հոգևոր Խորհրդին հայտնում է, որ Արցախի 18 վանքերից խնամքով պահվում են միայն Գանձասարը, Երից մանկաց, Ամարաս, Ս. Հակոբ, Ինն մասանց, Ս. Ղևոնդյանց վանքերը, իսկ մնացածը գտնվում են անտեր վիճակում: Այդ զեկուցագրում նաև ասված է, որ Արցախի 164 գյուղերում եղած 112 եկեղեցիներից 79-ը վերացվել էին 1929 թվականի փետրվարի 1-ի դրությամբ: Փակվելու վիճակում էր գտնվում 27 եկեղեցի: Եվ եթե այդ նույն թվականի սկզբին թեմում գործում էին 91 քահանաներ, ապա մեկ ամսում քահանայությունից հեռացել էին 62-ը, 22-ն էլ գտնվում էին ծայրաստիճան հուսահատ վիճակում[30]:

Տեղական իշխանությունների կողմից քահանաներին ներկայացված պահանջները նոր ձևեր էին ընդունում և նոր դաժանություն ստանում: Ամենից առաջ պահանջում էին հարկերը մուծել միանգամից: Բողոքելու դեպքում հարկաչափը կրկնապատկում էին, եռապատկում կամ էլ ունեցած սեփականությունը բռնագրավում[31]: Գործադրվում էին նաև այլ տեսակի բռնություններ: Ջրաբերդի Հաթերք գյուղի 80-ամյա քահանա Սարգիս Մինասյանը 1929 թ. նոյեմբերի 3-ին Վրթանես եպիսկոպոսին ուղարկած աղերսագրում պատմել է հետևյալը. գյուղական խորհրդի նախագահի պահանջով հրաժարվել էր հաղորդություն տալ մահացողներին: Նրանից պահանջել էին մուծել 187 ռ. 5 կ. հարկ, այդ այն դեպքում, երբ նա հրաժարվել էր հաղորդություն տալուց: Այդ առթիվ նա դիմել էր իշխանություններին: Նրան պատասխանել են, որ հաջորդ տարում կմուծի կրկնապատիկը: Եվ չնայած նա տվել էր հրաժարական և դիմել չքավորական ժողովին, այնուամենայնիվ նրանից պահանջել են խուզել գլխի մազերը, մորուքը սևացնել, շորերը կարկատել և այդ ճանապարհով ստանալ չքավորի վկայական: Այդ ամենից հետո ալեհեր քահանայից պա-

---

29 Նույն տեղում, թ. 9:

30 Նույն տեղում, գ. 2731, թ. 2:

31 Նույն տեղում, թ. 23:

հանջել են հանդես գալ պատի թերթում և հայտարարել քահանայությունից իր հրաժարվելու մասին: Քահանան կատարում է այդ պահանջը նա: Իսկ շրջանային խորհրդում էլ պահանջել էին՝ եթե քահանայությունից հրաժարվի, ապա քահանայական հարկից լրիվ կազատվի: «Արցունքը իմ աչքից չի պակասի,- իր պատմությունն ավարտում է Սամսոն քահանան,- խնդրում եմ մեզ էս ծանր նեղ դրությունից փրկեք: Գյուղում ասում են, որ ով ինձ տերտեր ասի, օրհնհիա տեր ասող լինի, նրան տուգանք ենք տալու. իրան անունը տվեք, բայց համարակությունը էլի օրհնհիա տեր են ասում»[32]:

Ադրբեջանի իշխանությունների հանձնարարությամբ զանազան կեղծիքներ էին հորինվում և գրպարտվում Արցախի թեմի հոգևորականներն ու թեմի առաջնորդը: 1930 թ. փետրվարի 7-ին ձերբակալվում է թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը և երեք տարի տառապում Շուշիի ու Բաքվի բանտերում: Առաջնորդին պաշտպանում են թե՛ Մայր Աթոռը, թե՛ արցախցիները: Իրավապահ մարմինները ստիպված էին Վրթանես եպիսկոպոսին ճանաչել անմեղ և ազատել բանտից: 1932 թ. փետրվարին նա Բաքվից վերադառնում է Արցախ, շրջում գյուղերը, ապա մեկնում Էջմիածին և մանրամասը զեկուցագիր ներկայացնում Գերագույն Հոգևոր Խորհուրդ, որից իմանում ենք, որ 1932 թ. դրությամբ Արցախում չէր գործում որևէ եկեղեցի, թեմը չուներ ոչ մի քահանա, բռնագրավվել և պետականացվել էին եկեղեցիների ու վանքերի ամբողջ սեփականությունը[33]:

Գևորգ Ե կաթողիկոսի մահից հետո, 1932 թ. նոյեմբերի 10-ին գումարված Ազգային-եկեղեցական ժողովին Արցախի թեմից մասնակցում են համապատասխան թվով պատգամավորներ՝ Վրթանես եպիսկոպոսի գլխավորությամբ: Թեմակալ առաջնորդը ցանկություն է հայտնում վերադառնալ Արցախ՝ իր պարտականությունները շարունակելու համար: Այդ մասին հայտարարությամբ տեղյակ է պահում Գերագույն Հոգևոր Խորհրդին: Եվ ահա 1933 թ. ապրիլի 7-ին Սրբազանին հաղորդվում է, որ Ադրբեջանի կառավարությունը «ընդհանրապես ընդունելի չի համարում Ձեր առաջնորդական պաշտոնավարությունը Ադրբեջանում»[34]:

Ահա այսպես փակվեց Արցախի թեմը և այն վերականգնելու համար պահանջվեց ավելի քան 50 տարվա հերոսական պայքար:

[32] Նույն տեղում, գ. 2730, թ. 1:

[33] Նույն տեղում գ. 2736, թ. 1:

[34] Նույն տեղում գ. 2740, թ. 1:

# ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

*ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

## ՆՈՐ ԽՈՍՔ ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բոլորովին վերջերս Մայր Աթոռ Ս. Էջմիածինը լույս ընծայեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պետրոս Բեդիրյանի «Հայերեն շրջասությունների բառարանը», որն անշուշտ նոր խոսք է մեր բառարանագրության մեջ. շրջասությունների բառարան ցայսօր չի եղել մեզանում (որքան մեզ է հայտնի, նաև այլուր): Այս աշխատությունը համահունչ է հայերենագետի նախորդ ուսումնասիրությունների թեմատիկային. մասնագիտական շրջանակներին քաջածանոթ են Պ. Բեդիրյանի «Դարձվածաբանական բացատրական բառարանը» (1971), «Ժամանակակից հայերենի դարձվածաբանությունը» (1973), «Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները» (1990) և այլն:

Ի՞նչ է *շրջասությունը* (լեզվաբանական աշխատություններում և բառարաններում գործածվում են նաև *շրջաբանություն, շրջասույթ* եզրույթները): *Շրջասությունները* այն դարձույթներն են, լեզվական միջոցները, որոնք առարկաներն ու երևույթները (նաև գործողությունները) ներկայացնում են պատկերավոր ձևով, նկարագրական եղանակով: Դրանք կապակցություններ են, արտահայտություններ, որոնք առավել արտահայտչական են դարձնում խոսքը: Ասենք, որ Պ. Բեդիրյանն ընդունում է նաև բառ-շրջասությունները, օրինակ՝ *շտիկ* (նապաստակ), *ծուռթաթ* կամ *բրդոտ* (արջ) և այլն, որոնք, սակայն, սույն բառարանի մեջ ընդգրկելու նպատակ հեղինակը չի ունեցել:

Այստեղ ընդգրկվել են 1689 շրջասական կապակցություններ, որոնք հեղինակը քաղել է մեծաթիվ աղբյուրներից (հայ և օտար հեղինակների գրքեր, Հայաստանի և Սփյուռքի մամուլ), ավելի քիչ՝ նաև հեռուստատեսությունից ու ռադիոյից:

Կարելի է ասել, որ բառարան է ներմուծվել հիմնականում նոր և նորագույն շրջանի հայերենի (արևելահայերեն ու արևմտահայերեն) նյութը. նույնիսկ Աստվածաշնչից ու շարականներից բերված օրինակներն աշխարհաբարով են ներկայացված, այն էլ՝ որոշակի ընտրությամբ: Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև հիշյալ սկզբնաղբյուրները լի են հատկապես բանաստեղծական շրջասություններով: Այսպես, օրինակ, շարականներում հանդի-

պում են՝ *Աղբյուր անմահության* (Հիսուս), *հոգևոր անդաստան* (Մարիամ Աստվածածին), *լուսատուիցս տիեզերաց* (առաքյալներ), *երջանիկ ճառագայթ* (Ստեփանոս), *գուսանողք անեղ գույն* (մարգարեներ) և այլն (որոնք ներկա բառարանում չեն գրանցվել): Բառարանագիրը գրաբար շրջասությունները թողել է այլ ուսումնասիրողների:

Բառարանը գիտաճանաչողական կարևոր արժեք ունի, և պատահական չէ, որ այն ՀՀ ԿԳ նախարարության կրթական բարեփոխումների կենտրոնի կողմից երաշխավորվել է իբրև ուսումնական գրականություն: Ընթերցողը (պիտի ասվեր «բառարանից օգտվողը», բայց այս բառը միտումնավոր գրեցինք, քանզի սույն բառարանը կարելի է ուղղակի էջ առ էջ ընթերցել՝ գեղարվեստական կամ հետաքրքրաշարժ գրքի նման) այստեղ շատ բան կարող է գտնել: Օրինակ, թե մարդկային պատկերավոր մտածողությամբ ինչպես են անվանվում մայրցամաքներ (*կանաչ աշխարհամաս, կենգուրուների երկիր, հինգերորդ աշխարհամաս* - Ավստրալիա), երկրներ (*հազար ու մեկ գիշերների երկիր* - Իրաք), քաղաքներ (*նորաձևության մայրաքաղաք* - Փարիզ), նշանավոր մարդիկ (*ամենայն հայոց բանաստեղծ* - Հովհ. Թումանյան), կենդանիներ (*մարդու լավագույն բարեկամ* - շուն), բույսեր (*հայկական ժենշեն* - լոշտակ) և այլն, և այլն: Այդպես նաև գործողություններ ցույց տվող բազմաթիվ շրջասություններ, օրինակ՝ *ի վերին Երուսաղեմ գնալ* (մեռնել), *գլխին ձյուն դնել* (սպիտակել, տարիքն առնել), *քերանը կեղտոտել* (հայհոյել) և այլն:

Հեղինակը շրջասությունները սոսկ կողք կողքի չի դնում: Ո՛չ, մատնանշում է տարբերակներ, ինչպես՝ *Ադամի հագուստով /Ադամի ու Եվայի հագուստով/ զգեստով* (բոլորովին մերկ), տալիս է համեմատելի միավորներ, ինչպես՝ *Ադամի /Եվայի մերկությամբ/*. Բազմաթիվ շրջասությունների պարագայում նշում է մեկից ավելի իմաստներ, ինչպես՝ *հյուսիսային Վենետիկ* (1. Ամստերդամ, 2. Պետերբուրգ, 3. Ստոկհոլմ, 4. Բրյուգգե): Բառահոդվածներն օժտված են ոճական անհրաժեշտ նշումներով, ինչպես՝ *Պառնասի բնակչյալ* (գրք.) = բանաստեղծ. գրող, *երկաթե եզ* (հնց.) = տրակտոր, *տիեզերքի բիբեր* (բնստ.) = աստղեր, *վերնատունը դատարկ է* (խսկց.) = անխելք է, *սև ջուր* (ժող., արևմտ.) = սուրճ, *Հայոց Արևելից Կողմանք* (պատմ.) = Արցախ և Ուտիք: Իսկ բառարանի վերջում զետեղված առարկայացանկի միջոցով «իրար են մոտենում» գրքի տարբեր էջերում սփռված նույնանիշ շրջասությունները: Օրինակ՝ հետաքրքրվող ընթերցողը ցանկանում է իմանալ, թե շրջասաբար, պատկերավոր կամ այլաբանորեն ինչպես են անվանում Հայաստանը՝ *Անքանազյան երկիր, բիբլիական երկիր / հող, դրախտի երկիր* (հնց.), *թանգարան բաց երկնքի տակ, թափառող մայրաքաղաքների երկիր, Թորգոմա տուն / Թորգոմական երկիր, Նոյի երկիր* և այլն:

Վստահ ենք, որ Պ. Բեդիրյանի «Հայերեն շրջասությունների բառարանը», ընթերցողական լայն շրջանակներում ջերմ ընդունելություն գտնելուց զատ, կհետաքրքրի նաև հետազոտողներին, որոնք թերևս պիտի փորձեն պարզել, թե, օրինակ, ո՛ր հասկացություններն են հատկապես շրջասաբար արտահայտվում, և ինչո՛ւ, ինչպիսի՛ ընդհանրություններ և առանձնահատկություններ կան արևելահայերենի ու արևմտահայերենի շրջասությունների մեջ, որոնք են բուն հայկական, որոնք՝ փոխառյալ շերտերը, ինչպիսի՛ առնչություններ կան

մի կողմից՝ շրջասությունների, մյուս կողմից՝ դարձվածքների (իդիոմների) ու բաղադրյալ անվանումների միջև և այլն:

Անշուշտ, գրախոսվող բառարանում նկատվում են նաև թերություններ: Մեր կարծիքով, որոշ շրջասություններ կարելի էր չընդգրկել հատորի մեջ, քանի որ բառարանը լիակատար կոչվելու հավակնություն չունի: Օրինակ՝ *սիկին արդարություն* (Էլիզաբեթ Շվեյցարդ Սեյմըր), *փոփի արքայադուստր* (Մրայա Քերի), *քաոս քաղաք* (Բաքու) և այլն:

Մյուս կողմից էլ բառացանկը կարելի է լրացնել այլ հանրահայտ շրջասություններով, օրինակ՝ *Բարի հովիվ*, *Անարատ գառ* (Հիսուս Քրիստոս), *Քրիստոսի լծակիցներ* (առաքյալներ) և այլն:

Որոշ դեպքերում էլ այս կամ այն շրջասությանը տրված բացատրությունը բխում է միայն այդ տեքստից՝ խոսքաշարից, ու կարող էր այլ մեկնաբանություններ ևս ստանալ կամ էլ ընդհանրական բնույթ ունենալ. հմմտ. *երգի արքա* (մեծ բանաստեղծ), *երգի թագուհի* (Հենրիետա Զոնթագ) և այլն:

Մի շարք դեպքերում լրացուցիչ ոճական նշումների կարիք է զգացվում, ինչպես՝ *քաղաքական կենդանի* (մարդ)՝ հզվդվ., *սև քար* (վանք)՝ ժող., հնց., *հայ մամուլի Էմիլ դը Ժիրարդեն* (Գրիգոր Արծրունի)՝ հնց. և այլն:

Ակնհայտ է, սակայն, մեկ բան. Ամենայն Հայոց Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետի հոգածությամբ և ամերիկահայ Լևոն և Արաքսի Ջենյանների նյութական միջոցներով լույս աշխարհ է եկել ուշագրավ մի բառարան, որ լուրջ ներդրում է հայերենի դարձվածաբանության և բառարանագրության ասպարեզում:

*ՌՈՒԲԵՆ ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ԿՈՄԻՏԱՍԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*«Սողոմոն նախախնամութեան ընծան եղաւ՝ Սուրբ Էջմիածնին: Կոմիտաս Վարդապետ Սուրբ Էջմիածնի ընծան հանդիսացաւ՝ հայ ժողովրդին»:*
(Վազգեն Առաջինի կոնդակից)

Շահան Շահնուրը հայ ժողովրդի երբևէ ստեղծած մշակութային բարձրագույն արժեքներին անդրադառնալիս Ս. Մաշտոց, Կաթողիկե, Անդրանիկ շարքում նշում է նաև մեծն Կոմիտասին՝ իբրև հայ ոգու թռիչքի բարձրագույն արտահայտություն: Եվ պատահական չէ, որ Կոմիտասի մասին ստեղծվել է հսկայական գրականություն թե՛ իր երկրային կյանքի ընթացքում և թե՛ դրանից հետո: Նրա մասին գրել են մտերիմներն ու աշակերտները, հայերն ու օտարները, գիտնականներն ու քաղաքագետները: Նրա մասին ստեղծվել է բազմածավալ ու բազմանուն տեսական-վերլուծական, գեղարվեստական, հուշագրական գրականություն, որոնց հեղինակները փորձել են վերակերտել իրենց Կոմիտասը, քանի որ ամեն հայ ունի իր Կոմիտասը, ամեն հայ նրան տեսնում է իր հոգու արտացոլանքում... Եվ այս ամենի մեջ, իհարկե, մասիսվում է սնակյան «Զանգակատունը», որպես անլռելի Կոմիտասական...

Սակայն պարզվում է, որ դեռ շատ բան կա ասելու Կոմիտասի մասին: Եվ դրա լավագույն ապացույցը Խաչիկ Բադիկյանի «Կոմիտասը՞ ինչպիսին եղել է» գիրքն է, որ 2002 թ. լույս է ընծայել «Զանգակ-97» հրատարակչությունը: Հեղինակն անծանոթ անձնավորություն չէ հայ մտավորական շրջանակներում: Համալսարանի բազմավաստակ լեզվաբան պրոֆեսորը հեղինակ է բազմաթիվ գիտական ու մեթոդա-մանկավարժական ուսումնասիրությունների, որոնցից նշանավոր են շարահյուսական բազմաթիվ կնճռոտ հարցերի վերաբերյալ նրա աշխատությունները, բառարանները: Եվ ահա անակնկալ և հաճելի մի շրջադարձ, Խ. Բադիկյանը գիրք է գրել Կոմիտասի մասին:

Ըստ երևույթին հոգու խորքում անթեղված և տասնամյակներ շարունակ մխացող սերն առ երաժշտությունը պոռթկացել է և ստիպել հեղինակին ի վերջո լույս աշխարհ բերել սրտի և մտքի մի զարմանալի համադրություն ներկայացնող այս գիրքը: Իրոք, դժվար է տալ այս գրքի ժանրային բնութագիրը: Հենվելով ժամանակի մամուլի հաղորդումների, ժամանակակիցների հուշերի և ամենաբազմազան աղբյուրների վրա՝ հեղինակն ամենայն մանրամասնությամբ (հաճախ օրերի և նույնիսկ ժամերի ճշտությամբ) գծում է Կոմիտասի կյանքի ուղին: Գիտականորեն վերլուծված է Կոմիտասի կերպարը հայ իրականության մեջ՝ իբրև մեծ երգահան, բանահավաք, բանասեր, խմբավար, մանկավարժ և տեսաբան:

Գիրքը միաժամանակ պարունակում է զգացական մեծ լիցք. Կոմիտասի կյանքի ու գործի ղատրոդա-վերլուծական ընթացքը հաճախ ընդմիջվում է քնարական շեղումներով, որտեղ ամենից հաճախ ցերիշխում են հանճարեղ Պարույր Սևակի սքանչելի «Զանգակատան» ղողանջները: Իսկ այն բոլոր դեպքերում, երբ անզոր է փաստը, և բացակայում են կոնկրետ տվյալները, ասպարեզ է գալիս հեղինակի երևակայությունը, և իրար են միահյուսվում իրականն ու երևակայականը՝ վավերականն ու գեղարվեստականը: Հեղինակն այս հնարքին է դիմում հատկապես Կոմիտասի ներաշխարհը, նրա ապրումներն ու մտորումներն ընթերցողին ներկայացնելիս՝ միշտ մնալով հորինվածքի հավանականության սահմաններում (ինչպես, օրինակ, հեռավոր Բեռլինում, Փարիզում ու Պոլսում Կոմիտասի հայրենաբաղձությունը կամ կուսակրոն քահանայի աշխարհիկ ռգորումները նկարագրելիս):

Գրքի ողջ կառուցվածքը խոսում է հեղինակի գիտական մոտեցումները. գիրքն ունի ամփոփում անգլերեն լեզվով, հավելված, ուր բերվում է Կոմիտասի կյանքի տարեգրությունը՝ ամենայն մանրամասնությամբ, նմուշներ կոմիտասյան ասույթներից, Կոմիտասի մասին եղած հայերեն և ռուսերեն գրականության սպառիչ ցանկ, գեղարվեստական երկեր Կոմիտասի մասին, նշանավոր մարդկանց ասույթներ և այլն, և այլն: Ասել, որ Խ. Բադիկյանն ի մի է բերել, հավաքել և մեկնաբանել այն ամենը, ինչ մինչև այժմ հայտնի էր Կոմիտասի մասին, նշանակում է թվել գրքի արժանիքների մի մասը միայն: Խաչիկ Բադիկյանն այս ամենն անցկացրել է իր սրտի քուրայով՝ ստեղծելով Կոմիտասին արժանի և նրա հիշատակը հավերժացնող մի գործ:

Կցանկանայինք նշել նաև գրքի դաստիարակչական նշանակությունը հատկապես երիտասարդության համար: Մեր օրերում, երբ «օտարամուտ ախտն» իր վայրի խրախճանքն է տոնում, և եթերը ողողված է ամեն ինչով, բացի Կոմիտասից, այս գրքի անհրաժեշտությունն ավելի է կարևորվում մեկ անգամ ևս Կոմիտասին հաղորդակցվելու և ազգային երաժշտության ապագայի մասին խորհելու առումով:

Մնում է միայն ցավել մերօրյա մի «պակասության» համար. գիրքը լույս է տեսել ընդամենը 500 օրինակ, որ նման գրքի համար մի կաթիլ է մեծ ծովում: Մնում է հուսալ և սպասել լավ ժամանակների, երբ հայ ընթերցողը վերստին կգտնի իր նախկին ընթերցասիրությունը, և այս խիստ արժեքավոր և մնայուն գիրքը, ազատվելով մանր-մունր թերություններից ու վրիպումներից, կվերահրատարակվի պատշաճ տպաքանակով ու կգտնի իր ընթերցողը:

*ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ*

# ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԱՐԻ ԲՐՈՍՍԵ

*«Յետ Սէն-Մարտէնի՝ հայկական լեզուի ուսմանը*
*պաշտպանող և շարունակող եղաւ Բրոսսէ»:*
(Գուստավ Աղոլֆ Շրումպֆ)

Վերջերս «Զանգակ-97» հրատարակչությունը լույս է ընծայել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Մեսրոպ Մաշտոցի մրցանակի դափնեկիր Պարույր Մուրադյանի կազմած և խմբագրած «Ակադեմիկոս Մարի Բրոսսե» հոդվածների ժողովածուն, որը նվիրված է ականավոր հայագետ-վրացագետ ակադ. Մարի Ֆելիսիտե Բրոսսեի (1802՝ Փարիզ, 1880՝ Շաթելո) ծննդյան 200-ամյակին; Ի դեպ, վերջերս լրացավ նաև գրքի խմբագիր, հայագիտության անխոնջ մշակ Պ. Մուրադյանի ծննդյան 70-ամյակը: Ֆրանսիացի գիտնական Մարի Բրոսսեն չափազանց մեծ ծառայություններ է մատուցել ն՛ Հայաստանի, և՛ Վրաստանի պատմագիտությանը՝ իբրև միջնադարյան պատմական երկասիրությունների թարգմանիչ ու մեկնաբան, որն իր հայրենիքում և Ռուսաստանում հրատարակել է շուրջ 270 մեծարժեք աշխատություն:

Ժողովածուն, որը տպագրվել է Հ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, բացվում է պրոֆ. Պ. Մուրադյանի «Հայագիտության պատմության կարևոր հանգրվան» ներածական հոդվածով, որտեղ հեղինակը գրում է. «Հունարենից և լատիներենից բացի եբրայերեն, արաբերեն, չինարեն և մի քանի արևելյան այլ լեզուների իմացած Մարի Բրոսսեին Սեն-Մարտենը ներշնչեց նախ հայերեն ուսանել, ապա անցնել վրացերենին, Վրաստանի պատմության համար դիմելով հայոց պատմիչների վկայություններին»: Մեկ այլ տեղում, արժևորելով ֆրանսիացի մեծանուն գիտնականի կատարած հսկայածավալ աշխատանքը՝ պրոֆ. Պ. Մուրադյանը նշում է. «Ավելորդ չէ նկատել, թե Մ. Բրոսսեն ու նրա ժամանակակիցները խնդիր չունեին բնագրերի քննական հրատարակություններ կատարել: Ձեռագրական հավաքածուների նկարագրությունների բացակայությունը, ինչպես նաև նրանց ցանուցրությունը, չհաշված հրատարակիչների պատրաստության աստիճանը, այդ հնարավորությունը չէին տալիս: **Բայց որ նրանք հայագիտության կառույցի ուրվագծողներն ու ուղղորոշողները եղան՝ կասկածից դուրս է»** (ընդգծումը մերն է - Ա. Մ.):

Վերոհիշյալ հոդվածին հաջորդում է Մ. Բրոսսեի ուսուցիչ, ֆրանսիացի ականավոր հայագետ Սեն-Մարտենի (1971, Փարիզ - 1832, Փարիզ)՝ ակադեմիկոս Ալեքսանդր Հումբոլդտին ուղղված նամակը, գրված 1831 թ. դեկտեմբերի 22-ին, Փարիզում, իր անժամանակ մահից ոչ շատ առաջ: Սույն փոքրիկ նամակում Սեն-Մարտենը գրում է իր ծրագրերի մասին, որոնց շարունակողներից մեկը եղավ Մ. Բրոսսեն:

Չափազանց կարևոր նշանակություն ունի նաև գրքում զետեղված Գուստավ Աղոլֆ Շրումպֆի (1844, Օբերհաուսբերգեն - 1892, Լոնդոն) և Հ. Գարեգին Զարբհանալյանի

(1827, Կ. Պոլիս - 1901, Վենետիկ) «Մարի Ֆելիսիտէ Բրոսսէ» հոդվածը, որի հեղինակները մեջբերել են գիտնականի որդու՝ Լորան Բրոսսեի մասնավոր խմբագրությամբ հրատարակված «Bibliographie Analytique des ouvrages de M. F. Brosset» (St - Pb., 1887) գրքի հետևյալ խոսքերը. «Հարկ սեպուեցաւ յիշեցնել թէ Բրոսսէ ոչ պատմիչ մ'էր և ոչ լեզուագէտ: Բոլորովին հեռի ի կատարութենէ՝ ընծայելոյ իրեն ինչ որ չունէր, Բրոսսէ ոչ երբեք պահանջած է ըլլալ ոչ մին և ոչ միւսը, բառին բուն նշանակութեամբ: Խորթին ու վերացեալ ուսմանց եռանդուն սիրող, անխոնջ ու համբերող հետամուտ, բաւական սեպեց նոփրել իր կեանքը պատմութեան նիւթեր հաւաքելու, ու այդ ուսմանց երկիրը մաքրել պատմական հետախուզութեամբք, անոնց օգտին ու պիտոյից ծառայեցնելով նաև գրանասիրութիւն: Եւրոպայի հայագէտք գիտեն թէ որչափ օգտակար եղած է իրենց ուսմանց իր ջանքովը պատրաստուած այսպիսի ճոխ ժառանգութիւն մը» (էջ 22-23):

Սույն հոդվածը, որտեղ տրված է նաև ֆրանսիացի ձեռագրագետ աղբյուրագետի հայագիտական ուսումնասիրությունների ցուցակը (61 աշխատություն), վերցված է հեղինակների «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ դար)» գրքից (Վենետիկ, 1895):

Ժողովածուն եզրափակվում է ականավոր հայագետ Նիկողայոս Մառի (1864, Քութայիս - 1934, Լենինգրադ) «К столетию дня рождения М. Броссе» հոդվածով, որն արտատպվում է «Записки восточного отделения русского археологического общества» հանդեսից (СПБ, 1902, т. XIV, стр. 73-78):

Վերջում նշենք նաև, որ մեծ գիտնականի ծննդյան 200-ամյակին նվիրված սույն արժեքավոր ժողովածուն հրատարակվել է «Արմէն և Բերսաբէ Ճերեճեան հիմնադրամի» (ԱՄՆ) հովանավորությամբ:

# ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*«Ձեզ վստահված ժողովուրդն է*
*գանձը ձեր և այնտեղ են ձեր սրտերը»:*
(Գարեգին Բ Կաթողիկոս)

Հունիսի 22-ին՝ Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն: Հընթացս Ս. Պատարագի, ձեռամբ Ամենայն Հայոց Հայրապետի, եպիսկոպոսներ ձեռնադրվեցին և օծվեցին Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը և Կանադայի հայոց թեմի նորընտիր առաջնորդ Տ. Բագրատ վրդ. Գալստանյանը:

Նախորդ օրը, հունիսի 21-ին, երեկոյան ժամերգության ընթացքում, Իջման Ս. Սեղանի առջև ընծայացուները հանդիսավոր կերպով ընթերցեցին և ստորագրեցին երդումնագրեր՝ ի հավատարմություն իրենց եպիսկոպոսական ուխտին և Ամենայն Հայոց Կաթողիկոսությանը:

Կիրակի օրը պատարագիչ Վեհափառ Հայրապետը թափորով առաջնորդվեց Մայր Տաճար, ուր Ս. Ստեփաննոսի Խորանին տեղի ունեցավ ընծայացու եպիսկոպոսների հավատքի ճշմարիտ դավանության քննության կարգը:

Ըստ ընդունված կարգի, եկեղեցական նվիրապետական աստիճանների ներկայացուցիչներ՝ դպիրներ, սարկավագներ, քահանաներ, ինչպես նաև ժողովրդի տարբեր խավերը ներկայացնող երկուական աշխարհականներ, մոտենալով Վեհափառ Հայրապետին, իրենց վկայությունը բերեցին ձեռնադրվող եպիսկոպոսների մասին: Ապա Նորին Սրբությունը հաստատեց ընծայացուների վկայագրերը և նրանց շնորհեց եմիփորոններ:

Ս. Պատարագը շարունակվեց Մայր Տաճարի Ավագ Խորանին: Ընծայացուները, ծնկաչոք դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը, վեր բարձրացրեցին իրենց ձեռքերը՝ ի նշան բոլորանվեր ծառայության:

Ընթերցելով աղոթքներ Ձեռնադրության Մաշտոցից՝ Նորին Սրբությունը նրանց վարդապետությունից կոչեց եպիսկոպոսության: Վեհափառ Հայրապետը Սրբալույս Մյուռոնով օծեց ընծայացուների ճակատներն ու աջ ձեռքերի բութ մատները, ապա նրանց հանձնվեցին նաև եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշները՝ եպիսկոպոսական գավա-



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԱՏԱՐՈՒՄ Է Տ. ՎԱԶԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՕԾՈՒՄԸ



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԱՏԱՐՈՒՄ Է Տ. ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՍՏԱՆՅԱՆԻ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՕԾՈՒՄԸ



ԽՈՆԱՐՀՈՒՄ ՈՒԽՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՍՏԻՃԱՆԻՆ



ՁԵՌԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆՆԵՐ ՍՏԱՑԱՆ
ԵՐԿՈՒ ՆՈՐԱՕԾ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ

զաններ ու մատյանիներ: Օծման ավարտին Վեհափառ Հայրապետն իր պատգամն ուղղեց նորաօծ եպիսկոպոսներին:

«Ձեզ վստահված ժողովուրդն է զանձը Ձեր և այնտեղ են Ձեր սրտերը: Հիրավի, արժեքների փլուզման ու կորստի, բայց միաժամանակ, արժեքների վերագտնումի ու հոգևոր զարթոնքի մեր ժամանակներում սիրտ է պետք, սիրող, զոհաբերվող, Քրիստոսասեր սիրտ, որ սրտեր բոցավառի, հոգիներ ներշնչի ու առաջնորդի: Նոր խոսքեր չէ, որ պիտի ասենք, նոր ճանապարհ չէ, որ պիտի ցույց տանք, բայց Ձեր կյանքով ու բարյաց գործերով Ավետարանի խոսքը պիտի նորանա և հավատի ճանապարհը պիտի նորոգվի այն թեմերից ներս, որոնց առաջնորդներ կարգվեցիք».- ասաց Նորին Սրբությունը: Հայոց Հայրապետը վստահություն հայտնեց, որ նորաօծ եպիսկոպոսները, իբրև թեմակալ առաջնորդներ, կծառայեն իրենց հոտին՝ հավատարիմ պահելով նրանց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, Հայրենիքին ու հայրենյաց ժառանգությանը:

Եկեղեցական արարողությունից հետո, ի պատիվ նորընծա եպիսկոպոսների, Մայր Աթոռում տեղի ունեցավ ընդունելություն: Վեհափառ Հայրապետը նորաօծ եպիսկոպոսներին հանձնեց եպիսկոպոսական պանակեներ:

Արարողությանը ներկա էին Ս. Էջմիածնի միաբան հայրեր, բազմաթիվ հավատացյալներ, որոնց թվում Կանադահայոց, ԱՄՆ հայոց Արևմտյան ու Վիրահայոց թեմերից ժամանած թեմական խորհուրդների ատենապետերը և այլ ուխտավոր թեմականներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



## Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Ծնվել է 1965 թ. Էջմիածնի շրջանի Արտիմեդ (նախկինում Աթարբեկյան) գյուղում:

1971-1982 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1982 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1984-1986 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1989 թ. ավարտել է Հոգևոր Ճեմարանը և նույն թվականին, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել սարկավագ:

1990 թ. պաշտպանել է «Գրիգոր վարդապետ Մկնոացու կյանքը և մատենագրական ժառանգությունը» թեմայով ավարտաճառը:

1991 թ., ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Նույն թվականին հրավիրվել է դասախոսելու Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում, ինչպես նաև Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնում:

1993-1995 թթ. եղել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին կից կիրակնօրյա դպրոցների վարիչ-տնօրեն:

1995 թ. Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի վարիչ-տնօրեն:

1996 թ. ներկայացրել է վարդապետական թեզ՝ «Սուրբ Գրիգոր Տաթևացու «Հարցմանց» և «Ոսկեփորիկ» գրքերի հայրախոսական աղբյուրները» թեմայով, և ստացել մասնավոր վարդապետության չորս աստիճաններ:

1999 թ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ:

2002 թ. Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի փնօրհնությամբ նշանակվել է Վիրահայոց թեմի առաջնորդ:

2003 թ. հունիսի 22-ին՝ Կաթողիկե Ս. Էջմիածնի փոնին, ձեռամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս:



## Տ. ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏԱՆՅԱՆ

Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը (ավազանի անունով՝ Վազգեն) ծնվել է 1971 թ. մայիսի 20-ին Գյումրիում:

1978-1988 թթ. սովորել է Երևանի թիվ 156 դպրոցում:

1988 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր ճեմարան:

1993 թ. դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1994 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է Հոգևոր ճեմարանը՝ պաշտպանելով ավարտաճառ՝ «Խոսրով եպիսկոպոս Անձևացի. կենսագրական գծեր» և «Բացայայտութիւն Կարգաց Եկեղեցւոյ. բնագիրն ու աստվածաբանությունը» թեմայով:

1995 թ. հունիսի 23-ին, ձեռամբ երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Գևորգյան հոգևոր ճեմարանում դասավանդել է եկեղեցական երաժշտություն և Ս. Պատարագի մեկնություն առարկաները: Աշխատակցել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի խմբագրությանը:

1996 թ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի փնօրինությամբ նշանակվել է «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր: Միաժամանակ դասավանդել է Սևանի Վազգենյան Դպրանոցում:

1998 թ. մեկնել է Անգլիա՝ ուսումը կատարելագործելու Մըրֆիլդի «Ս. Հարություն» աստվածաբանական քոլեջում և Լիդսի համալսարանում:

2000 թ. հուլիսին, ավարտելով ուսումնառությունը, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի փնօրինությամբ վերադարձել է Մայր Աթոռ և օգոստոսի 1-ին նշանակվել Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ:

2002 թ. փետրվարին նշանակվել է Տեղեկատվական համակարգի խորհրդի նախագահ՝ շարունակելով փեսչի պարտականությունները:

2002 թ. մարտին պաշտպանելով «Հիվանդաց օծման խորհրդի խնդիրը Հայ Եկեղեցում» թեզը, ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճաններ:

2002 թ. հոկտեմբերի 14-ից Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր փնօրինությամբ նշանակվել է Արագածոտնի թեմի առաջնորդական փոխանորդ:

2003 թ. մայիսի 31-ին Կանադահայոց թեմի 20-րդ պատգամավորական ժողովում ընտրվել է Կանադայի հայոց թեմի առաջնորդ:

2003 թ. հունիսի 22-ին՝ Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնին, ձեռամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս:

# Տ. ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏԱՆՅԱՆԻ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հայ Եկեղեցում ընդունված կարգի համաձայն, նորաօծ եպիսկոպոսը Ուխտի Պատարագ է մատուցում Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի առջև:

Հունիսի 24-ին Մայրավանքում իր անդրանիկ եպիսկոպոսական Ուխտի Պատարագը մատուցեց անցած կիրակի Մայր Տաճարում եպիսկոպոս ձեռնադրված և օծված Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպս. Գալստանյանը:

Պատարագի ընթացքում Սրբազան Հայրն իր երախտիքի խոսքն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին և երջանկահիշատակ նախորդ երկու Հայրապետներին, որոնց գահակալության տարիներին սկսել ու շարունակում է հոգևորականի իր ուղին՝ մշտապես առաջնորդվելով Տերունական «Ուր ես եմ, այնտեղ կլինի և իմ ծառան» պատգամով: Նորաօծ Սրբազանն իր ողջույնը եղեց նաև բոլոր նրանց, ովքեր ուղեկից են եղել իրեն այդ ճանապարհին, ինչպես նաև ի մասնավորի երախտագիտություն հայտնեց Պատարագին ներկա Կանադահայոց թեմական խորհրդի անդամներին՝ այն վստահության համար, որ ցուցաբերել են իր անձի հանդեպ՝ կոչելով Կանադայի հայոց թեմակալ առաջնորդի բարձր պաշտոնին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՆՈՐԱՕԾ Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԸ ԹԲԻԼԻՍԻԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հունիսի 29-ին բազմամարդ էր Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցին: Վիրահայոց թեմի նորաօծ առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն իր անդրանիկ եպիսկոպոսական և Ուխտի Պատարագն էր մատուցում: Օրեր առաջ Միածնաէջ Մայրավանքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդն ստացավ եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում:

Ուխտի Պատարագին ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Գևորգի Խոսրոևը և վիրահայ համայնքի այլ պաշտոնյա այրեր:

Հրնթացս Պատարագի առաջնորդ Սրբազան Հայրն իր խոզերուխ գոհունակությունն ու փառաբանությունները հղեց Բարձրյալին՝ իրեն արժանացրած մեծագույն պատվի համար, և գնահատանքի խոսք ուղղեց բոլոր ներկաներին՝ աղոթակից լինելու իրեն:

Պատարագի ավարտին ներկաները հրավիրվեցին համեստ հյուրասիրության փոքրափարածք, բայց և հյուրընկալ առաջնորդարանում:

Նույն օրը, երեկոյան, նորաօծ առաջնորդը, ուղեկցությամբ՝ եպիսկոպոսական օծման ընթացքում կնքահոր սրբանվեր պարտականությունները ստանձնած Աջարիայի հայերի «Վերածնունդ» միության նախագահ Արմեն Գևորգյանի, Սամցխե Ջավախեթիի և Քվեմո-Քարթլիի առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանի, Վիրահայոց թեմի գործերի կառավարիչ Աշոտ Նաջարյանի և բարերար Ալեքսանդր Ութմազյանի, այցելեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդին: Պատրիարք Հայրը ջերմագին շնորհավորանքներով դիմավորեց Գերաշնորհ Սրբազան Հորը և Տիրամոր սրբազեղ պատկերով մի եպիսկոպոսական պանակե նվիրեց նրան:

Հանդիպումն անցավ ջերմ ու սրտաբաց մթնոլորտում:

*Դիվան Վիրահայոց թեմի*
*Առաջնորդարանի*

# ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԵՑ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆԸ

Կիրակի, հունիսի 1-ին, Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, մատուցվեց եռերթական Ուխտի Պատարագը: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի տոնակատարությունների ծիրից ներս այս անգամ եկեղեցականաց դասի առաջնորդությամբ Ս. Էջմիածին էր եկել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի ուխտապահ ժողովուրդը՝ ավելի քան 10 000 հայորդիներ: Օրվա պատարագիչն էր թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Հանուն Նորին Սրբության ուխտավորներին ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Հոգեշնորհ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը:

«Այսօր ես այս սրբարանից պիտի սկիզբ առնի մեր հոգևոր, կրոնական կյանքի ուժգին հոսանքը, քանզի այստեղ է հաստատված Լուսավորչի՝ Հայաստանյայց վերածնության Հոր սուրբ գավազանը, որ նրա հոտին միշտ ի փրկություն է հովվել: Այս ուխտով մենք պիտի նոր շունչ ու ոգի հաղորդենք մեր հավատքի հոր աստվածաշնորհ զորությանը՝ քրիստոնեությանը: Այս պահին ևս մեր մեջ լսելի է մշտակենդան հրավերը. «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»»: «Մեզ այստեղ բերել է մեր ուխտադիր նախնիներից ժառանգված հայրենասիրության ու եկեղեցասիրության ոգին: Այս պահին ամենքս նորացված հավատքով ավելացրինք սրբի արցունքներով լցված Լուսավորչի կանթեղի յուղը, նորեն մկրտվեցինք Լուսավորչյան լույսով, մեր հոգիներում վառեցինք փրկչական ջահը: Այս պահին ամեն մեկս ուխտի մեր սպասումն ունենք: Աստված ի կատար անի ուխտը ամենքիս, իրականացնի բոլորիս երազները, համակի բարի մղումներով: Ապրենք նոր ձգտումներով, որպեսզի Աստծո լուսեղ փաճարի մեջ յուղասպառ կանթեղ չդառնանք, ինչպես կասեր Մուշեղ Իշխանը, որպեսզի մեր հոգին չդառնա հին բույն, որտեղ ոչ մի թռչուն գարուն չի բերում: Ուրեմն այս ուխտով թող գարնանանա մեր կյանքը, թող բորբոքվի մեր հոգու կանթեղը աստվածային սիրով առլեցուն»,- ասաց Նավասարդ Սրբազանը՝ բազմահազար ուխտավորներին ուղղված իր քարոզում:

Սրբազան արարողությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներ, Արարատյան Հայրապետական թեմի թեմական Խորհրդի անդամներ, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, ՀՀ կառավարության անդամներ և Ֆրանսիայի Բուշ-դյու-Ռոն նահանգի վարչական խորհրդի նախագահ Ժան-Նոել Գերինին:

Արարատյան Հայրապետական թեմի ուխտի օրվա առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին նաև ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը և կառավարության մի շարք անդամներ:

Հավարտ Ս. Պատարագի թեմի հոգևորականաց դասին, թեմական և ծխական խորհրդի անդամներին, առաջնորդ Սրբազան Հոր գլխավորությամբ, Վեհարանում ընդունեց Վեհափառ Հայրապետը:

# ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԵՑ ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՆԱԹԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

Հունիսի 8-ին՝ Հոգեգալստյան տոնի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, մատուցվեց եերթական Ուխտի Պատարագը: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի տոնակատարությունների ծիրից ներս այս անգամ իր թեմականների հետ Սուրբ Էջմիածին էր եկել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Անգլիայի հայոց թեմի առաջնորդ ու օրվա պատարագիչ Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը՝ արտահայտելու իր սերն ու հավատարմությունը հանդեպ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«17 դարեր շարունակ ամեն հայորդի գալիս է աստվածակառույց այս կամարների տակ իր հայրերի աղոթքը կրկնելու և նրանց տեսիլքը կիսելու, 17 դարեր շարունակ հայ հավատացյալն այս Սուրբ Խորանից է հաղորդվում Փրկչի սուրբ արյանն ու մարմնին, բարձրացող խնկի ու մոմի աղերսող լույսի հետ իր աղոթքը վերառաքում առ Աստված, 17 դարեր շարունակ Միածին Որդու Իջման այս սուրբ վայրում և Իջման Սուրբ Խորանին լուսավորչավառ կանթեղն անդադար վառված է մնում, Քրիստոսակոխ այս սրբավայրի առջև ամեն մի հայորդի ծունկի է գալիս՝ նորոգելու իր ուխտը և գոհություն մատուցելու Ամենակալին, քանզի այստեղից է փրկության լույսը ծագել Հայաստան աշխարհում»,- ասաց Սրբազան Հայրն իր քարոզում:

Հանուն Նորին Սրբության և Մայր Աթոռի միաբանության ուխտավորներին ողջունեց նաև Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Հավարտ Ս. Պատարագի ուխտավորներին Վեհարանում ընդունեց Նորին Սրբությունը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 15-ին. Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուխտի էին եկել Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի մի խումբ ուխտավորներ՝ թեմակալ առաջնորդ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի գլխավորությամբ: Մայրավանքում առաջնորդ Սրբազան Հայրը մատուցեց ննթական Ուխտի Պատարագը և Ս. Էջմիածնի խորհրդով իր պատգամն ուղղեց ներկա հավատացյալ բազմությանը:

«Էջմիածինը մեր մայրն է, մեր փառքն է, մեր խիղճն է, որովհետև ինչ որ ունենք քաղաքակիրթ աշխարհին ներկայանալու, մենք այդ բոլորը ստացել ենք Ս. Էջմիածնի միջոցով: Տկարացնել Ս. Էջմիածինը, կնշանակե սառեցնել հայ ժողովրդի հոգին: Էջմիածինը կա և կմնա մեր ժողովրդի ամենանվիրական սրբավայրերեն մեկը»,- ասաց Սրբազան Հայրն իր քարոզում հորդորելով կենդանի և անսասան պահել Հայ Եկեղեցին:

Այս երկրներում Հայ Եկեղեցին երկար փառքերի պատմություն ունի: Սակայն համայնավարական վարչակարգի շրջանում ինչպես Ռումինիայում, այնպես և Բուլղարիայում սահմանափակվել էր հայոց հոգևոր համայնքների գործունեությունը, փակվել էին մի շարք եկեղեցիներ: 1990-ականներից ի վեր, ժողովրդավարության հաստատումից հետո, այս թեմերում կրկին ազգային-հոգևոր կյանքը ծաղկում է ապրում, գործում են թեմական խորհուրդներ, որոնք ձեռնամուխ են հայոց եկեղեցիների վերաբացմանը և նորերի կառուցմանը:

Ս. Էջմիածնում, հանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մայր Աթոռի միաբանության, ուխտավորներին ողջունեց Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, Հայաստանում Ռումինիայի և Բուլղարիայի արտակարգ և լիազոր դեսպանները, հյուրեր:

Հավարտ Ս. Պատարագի ուխտավորներին Վեհարանում ընդունեց Վեհափառ Հայրապետը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունիսի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, մատուցվեց հերթական Ուխտի Պատարագը: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի տոնակատարությունների առիթով Սուրբ Էջմիածին էր եկել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը՝ թեմի հոգևորականների և բազում հավատացյալ ուխտավորների հետ:

«Եվ չնայած 1930-1989 թթ. Արցախ աշխարհը հալածվում էր կրոնական տեսանկյունից, բայց այսօր, բարեբախտաբար, ունենք այնտեղ հավատք, ունենք թեմ, ունենք անկախ հանրապետություն, մեր հայկական իշխանությունը, որտեղ կարող ենք վերանորոգել մեր ուխտը: Բայց մենք այսօր եկել ենք այստեղ՝ մեր ծննդավայրը, մեր հոգևոր տունը, որովհետև ամեն մի հայ ծնվում է այս մկրտության ավազանից: Սա է հոգևոր արգանդն ամեն մի հայի համար: Սա ամենայն հայոց տունն է՝ զանանիստ տունը, և մենք բոլորս եկել ենք այստեղ վկայակոչելու ի դեմս ձեզ բոլորիդ Աստծո ու Հայրապետի առջև, որ մենք հայ ենք, հայ քրիստոնյա ենք, այդպիսին էլ կմնանք Արցախ աշխարհում, և եկել ենք ձնրադրելու՝ ասելով. «Մենք հավատարիմ հոտն ենք Հայ Առաքելական Եկեղեցու, հոգևոր զավակներն ենք մեր Հայրապետի, և մեր ուխտը եկել ենք այստեղ նորոգելու, ավելի զորացնելու, որպեսզի մեր հավատքը փայլելով փայլի և լուսավորի մեր փրկության, մեր խաղաղության ճանապարհը դարերով»,- ասաց Սրբազան Հայրն իր քարոզում:

Հանուն Նորին Սրբության և Մայր Աթոռի միաբանության ուխտավորներին ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Հոգեշնորհ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը:

Պատարագին ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, ԼՂՀ վարչապետ Անուշավան Դանիելյանը, ՀՀ-ում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Արման Մելիքյանը, պաշտոնատար այլ անձինք, երջանկահիշատակ Գարեգին Ա Հայրապետի քույր Եսթեր Սարգսյանը, ազգային բարերարներ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, մտավորականներ և բազմաթիվ հավատացյալներ:

Ս. Պատարագի վերջում, երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան տարելիցի առիթով, լուսահոգի Հայրապետի շիրիմի մոտ, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի, տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն:

Հավարտ Ս. Պատարագի ուխտավորներին Վեհարանում ընդունեց Նորին Սրբությունը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԵՑ ՎԱՆԱՁՈՐԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Հունիսի 23-ին, վաղ առավոտյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Վանաձոր (Գուգարաց թեմ)՝ կատարելու թեմի առաջնորդանիստ եկեղեցու հիմնարկեքը, որի խաղօրհնեքի արարողությունը տեղի էր ունեցել անցած տարի, մայիսի 25-ին: Ամերիկաբնակ տեր և տիկին Սարգիս և Հասմիկ Բեդլյանների բարերարությամբ կառուցվող առաջնորդանիստ այս շքեղ եկեղեցին կրելու է Ս. Գրիգոր Նարեկացու անունը՝ ի նշանավորումն այս տարի ազգովի տոնախմբվող՝ Ս. Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթագրքի 1000-ամյակի:

Մարզի սահմանագլխին Վեհափառ Հայրապետին դիմավորեցին և Հայրապետական շքախմբին միացան Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը, Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը և մարզային ու քաղաքային իշխանությունների այլ ներկայացուցիչներ:

Մինչ հիմնարկեքի արարողությունը Նորին Սրբությանը և ուղեկից եկեղեցականներին ու ազգային բարերարներին բարիգալստյան խոսքով դիմեցին թեմակալ առաջնորդ Սրբազան Հայրը և Լոռու մարզպետը՝ կարևորելով առաջնորդանիստ եկեղեցու կառուցման անհրաժեշտությունը և դերը Վանաձորի բնակչության հոգևոր արթնության համար:

Հիմնարկեքի արարողության ընթացքում, ձեռամբ Վեհափառ Հայրապետի, օծվեցին եկեղեցու 16 վեմ քարերը՝ կոչվելով Տիրոջ առաքյալների, 4 ավետարանիչների և Ս. Գրիգոր Լուսավորչի անուններով: Ապա դրանք տեղադրվեցին նորակառույց եկեղեցու հիմքում:

«Փառք և գոհություն ենք բարձրացնում, որ մեր կյանքի դժվարին ժամանակներում Աստված ողորմության իր լայն դռները բացել է մեր ժողովրդի առջև և պարգևում է շնորհը՝ եկեղեցի կառուցելու, աղոթքի մեր տները շենացնելու և մեր զավակներին համախմբելու մեր նվիրական հայրերի սրբազան ժառանգության և սուրբ հավատքի շուրջ:

...Տիրոջ ողորմության հայցումով այս եկեղեցին կոչում ենք Ս. Գրիգոր Նարեկացու անունով, որպեսզի մեր սրբի բարեխոսությունը միշտ մեր ժողովրդի համար բարձրանա առ Աստված, որպեսզի նրա աղոթքները գան մաքրելու մեր հոգին, սրբելու մեր կյանքից ամեն արատավոր երևույթ, աղոթքները գան՝ մեզ դառնալու բժշկություն, զորակցություն և ճանապարհ դեպի Աստված: ...Վստահ ենք, որ Ս. Գրիգորի անունով այս եկեղեցին, որ պիտի վեր խառնի մեր բարերարների ազնիվ հոգու և առատաձեռնության շնորհիվ ու հայրենյաց մեր զավակների քրտնաջան աշխատանքով, պիտի գա հրաշագործելու վանաձորցի մեր հայորդիների կյանքում»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Հիմնարկեքի արարողությունից հետո Վեհափառ Հայրապետն այցելեց նաև թեմապետական «Ծիծեռնակ» մանկական ճամբար:

- Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առա-



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ ԵԿԵՂԵՑՈՒ 16 ՀԻՄՆԱՔԱՐԵՐԻՑ ՕԾՈՒՄ Է ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ
ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՐԱՐ ՍԱՐԳԻՍ ԲԵԴԵՎՅԱՆԻ ՊԱՀԱԾ ՎԵՄ ՔԱՐԸ



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՆՐԱԿԵՐՏԻ ԱՌՋԵՎ ՄՅՈՒՌՈՆԱԹԱՓ ԱՂԱՎՆՈՒՑ ՀԵՂՈՒՄ Է ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԸ՝ ՆՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՔԱՐԵՐԻ ՕԾՄԱՆ ՀԱՄԱՐ

քել եպս. Քարամյանը, Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մովսես եպս. Մովսիսյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպս. Գալստանյանը, Մայր Աթոռի միաբաններ, ազգային բարերարներ տեր և տիկին Սարգիս և Հոռւթ Բեդիկյանները, տեր և տիկ. Գառնիկ և Անի Ցակուբյանները, ԱՄՆ հայոց Արևմտյան, Վիրահայոց և Կանադայի հայոց թեմերի թեմական խորհուրդների ատենապետերը և այլ թեմականներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանի դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 2002-2003 թթ. ուսումնական տարվա ամավերջյան հանդիսությունը: Ճեմարանի 123 ուսանողներից այս տարի ավարտական լսարանը տվեց 19 շրջանավարտ:

Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանի բացման խոսքից հետո, ավանդույթի համաձայն, Ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանը ներկայացրեց ընթացիկ տարվա գործունեությունը, ապա ներկաներին իր օրհնության խոսքն ու պատգամն ուղղեց Վեհափառ Հայրապետը:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, որ տարիներ ի վեր եղել է Հայաստանի միակ հոգևոր բարձրագույն ուսումնական հաստատությունը, անցած տարվանից կառավարության որոշմամբ ճանաչվեց որպես բարձրագույն ուսումնական հաստատություն: Այս առիթով Ճեմարանի տեսուչը ներկայացրեց այն նոր ձեռնարկումները, որ իրականացվել են Ճեմարանում: Ստեղծվել են մասնագիտական չորս ամբիոններ՝ աստվածաբանության, եկեղեցագիտության, լեզվաբանության, պատմության և իմաստասիրության, որոնց շնորհիվ համապատասխան առարկաների ուսուցումը դառնում է առավել հիմնավոր և համալսարանական չափանիշներին համապատասխան:

Ճեմարանի աշխատանքները գոհացուցիչ համարեց նաև Նորին Սրբությունը և վստահություն հայտնեց, որ առաջիկայում ևս պատմական Ճեմարանը կարձանագրի նորանոր հաջողություններ:

Ամավերջյան հանդիսության գեղեցիկ ավանդույթներից է նաև ուսման առաջադիմությամբ ու կարգապահությամբ աչքի ընկած ուսանողներին նվերների հանձնումը: Այս անգամ Վեհափառ Հայրապետը մրցանակներ հանձնեց յուրաքանչյուր լսարանից երեքական ուսանողի: Մրցանակներ էին սահմանվել նաև կատարյալ վարքի, ինչպես նաև մամուլին լավագույն թղթակցության համար:

Հանդիսության ընթացքում ճեմարանցիները, ինչպես միշտ, ներկայացան նաև գեղարվեստական ծրագրով:

*

* *

Հանդիսության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը հանձնեց ևս մեկ պարգև: Նորին Սրբությունը Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանին փոխանցեց 1700-ամյակի ոսկյա հուշամեդալ, որ Անգլիայի հայոց թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու վարչության կողմից շնորհվել է Սրբազան Հոր՝ թեմին բերած երկարատև ծառայության համար:

# ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑՈՒՄ

Հունիսի 15-ին Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում ևս ուսումնական տարվա փակման հանդիսավոր արարողություն էր:

Արարողությանն իրենց մասնակցությունն էին բերել կրթօջախի նախկին շրջանավարտներ, Մայր Աթոռից ժամանած միաբան հայրեր, դասախոսներ և հյուրեր:

Հանդիսության ընթացքում ներկաներին ողջունեց Դպրանոցի նորանշանակ տեսուչ Տ. Գարեգին աբեղա Հարությունյանը՝ մասնավորապես նշելով. «Զարմանք ապրեցի և միևնույն ժամանակ հիացա՝ տեսնելով Սևանի խստաշունչ ձմեռվա ու Դպրանոցի առող պայմաններում ապրող ուսանողությանը, որոնք աննկուն ոգու դրսևորմամբ ուսանում են և իրենց աղոթքը բարձրացնում առ Աստված: Մեր երախտագիտությունն ենք բերում բոլոր այն անձանց, ովքեր նպաստել են այս աննկուն ոգու կերտմանը»:

Ուսման ընթացքում վազգենյանցիներն ակտիվորեն մասնակցում են նաև Գեղարքունյաց թեմի հոգևոր կյանքին ու սպասավորությանը: Այս առիթով թեմի առաջնորդական տեղապահ Տ. Դերենիկ վրդ. Դավթյանն ընդգծեց Դպրանոցի կարևոր նշանակությունն ու առաքելությունը թեմական կյանքում:

Դպրանոցի 16 շրջանավարտներն արդեն իսկ հաջողությամբ հանձնել են ամավերջյան քննությունները և եկող տարի իրենց ուսումը կամբողջացնեն Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ավարտական լսարանում:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

*ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ*

# ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ ԶԵԿՈՅՑԸ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԷՋ

Հայա. Եկեղեցւոյ Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գեր. Տ. Յովնան արքեպս. Տէրտէրեանի հրաւէրով, երեքշաբթի, Յունիս 10-ին, Առաջնորդարան հրաւիրուած էին հայ մամուլի եւ կազմակերպութիւններուն ներկայացուցիչները եւ յարգոյ հասարակութիւնը՝ հանդիպելու համար Միացեալ Նահանգներու Հայաստանի դեսպան պատուարժան փիար ճան Մ. Օրտուէյի հետ եւ ապա լսելու իր հրապարակային զեկոյցը *«Հայաստանի ներկայ կացութեան մասին»:*

Պատուարժան դեսպանը, Միացեալ Նահանգներու Հայաստանի օգնութեան պատասխանատու փիար Գիթ Սիմընզ եւ Հայաստանի ու արտասահմանի հայութեան միջեւ ներկայացուցիչ, փիար Ռաֆֆի Գոճեան ժամը 5.30-ին ժամանեցին Առաջնորդարան եւ սիրալիր ընդունելութեան արժանանալով առաջնորդութեան դէպի առաջնորդ Սրբազան Հօր գրասենեակը:

Առաջնորդ Սրբազան Հայրը ողջունեց պատուոյ հիւրերը եւ իր ջերմագին բարի գալուստեան խօսքը ուղղելէ ետք, գնահատեց այս այցելութիւնը եւ վեր առաւ Միացեալ Նահանգներուն Հայաստանի մատուցած բազմալիսի օգնութիւնները: Այս հանդիպման ներկայ էին Գեր. Տ. Վաչէ արքեպս. Յովսէփեան, թեմիս բարերարներէն փէր եւ փիկին Արմէն եւ Նորա Համբար: Սիրալիր մթնոլորտի մէջ ներկաները հաճելի զրոյց ունեցան այն դեսպանին հետ:

Երեկոյեան ժամը 6.30-ին Առաջնորդարանի «Արմէն եւ Կլորիա Համբար» դահլիճին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն՝ ի պատիւ յարգարժան դեսպանին, ուր օրուան հանդիսավարը՝ Տիար Քարսեղ Գարթալեան, բարի գալուստ մաղթեց պատուարժան հիւրերուն՝ գնահատելով Հայաստանի մէջ յանուն Միացեալ Նահանգներու իր կատարած օգտակար ծառայութիւնը հայ ժողովուրդին: Ապա պաշտօնապէս ներկայացուց թեմակալ առաջնորդ Գեր. Տ Յովնան արքեպս. Տէրտէրեանը եւ Գեր. Տ. Վաչէ արքեպս. Յովսէփեանը՝ շեշտելով, որ Սրբազան Հայրը 32 տարիներ որպէս առաջնորդը Արեւմտեան թեմին, նուիրեալ ծառայութիւն մատոյց թեմին եւ իր ջանքերուն շնորհիւ կառուցուեցաւ ներկայ համալիրը: Պրն Գարթալեան նոյնպէս ներկայացուց դահլիճի բարերար փիար Արմէն Համբարը եւ ապա Լոս Անճելըսի մէջ Հայաստանի գլխաւոր հիւպատոս փիար Վալերի Մկրտումեանը:

Առաջնորդ Սրբազան Հայրը պաշտօնապէս իր բարի գալուստի խօսքն ուղղեց այն դեսպանին եւ իրեն ընկերացող պատասխանատուներուն՝ միշտ գնահատելով Միացեալ Նահանգներուն Հայաստանի մէջ կատարած մարդասիրական եւ օգտակար այլ ծառայութիւնները: Պրն դեսպանը շնորհակալութիւն յայտնեց իրենց նկատմամբ ցուցաբերուած յարգանքին եւ ջերմ ընդունելութեան համար: Հայ մամուլի եւ կազմակերպութիւններուն ներկայացուցիչներն առիթն ունեցան ծանօթանալու եւ զրուցելու պատուոյ հիւրերուն հետ: Այս հիւրասիրութիւնը պատրաստած էր Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը:

Դեսպանին հրապարակային զեկոյցը տեղի ունեցաւ երեկոյեան ժամը 7.30-ին, Առաջնորդարանի «Նազարեթ Ա. եւ Սիմա Ն. Գալայճեան» սրահին մէջ:

Հանդիսավարը բացման խօսքը կատարելէ ետք, հրաւիրեց դեսպան մեծայարգ տիար Ճան. Մ. Օրտուէյը, որ խօսի Հայաստանի ներկայ կացութեան մասին: Պրն դեսպանն ամփոփ գիծերու մէջ նկարագրեց Հայաստանի տնտեսական, քաղաքական, ընկերային եւ կենսական այլ վիճակը եւ Միացեալ Նահանգներուն տրամադրած նիւթական եւ զանազան այլ օգնութիւնները: Ապա հրաւիրեց Միացեալ Նահանգներու Հայաստանի օգնութեան պատասխանատու տիար Գիթ Սիմընզը, որ յաւելեալ տեղեկութիւններ եւ լուսաբանութիւններ տուաւ ներկաներուն՝ շեշտելով, որ տնտեսական աճը եւ կեանքի բարելաւումը դրական ընթացքի մէջ կը գտնուի:

Ապա շուրջ 20 վայրկեան տեւող տեսաժապաւէն մը ցուցադրուեցաւ Միացեալ Նահանգներուն Հայաստանի կատարած զանազան օգնութիւններուն շուրջ եւ տնտեսական աճման հետ առնչութիւն ունեցող այլ գործունէութիւններու վերաբերեալ:

Տեսաժապաւէնի աւարտին, պրն դեսպանը պատասխանեց ներկաներուն կողմէ տրուած շատ մը հարցումներուն, ինչպէս քաղաքական, տնտեսական, զինուորական, Արցախի կարգաւորման եւ այլն, որոնց բոլորին մասին պրն դեսպանը եւ երբեմն ալ պրն Սիմընզ տուին լայն բացատրութիւններ:

Տիար Ռաֆֆի Գոճեան, Հայաստանի ու արտասահմանի հայութեան միջեւ ներկայացուցիչը, խօսեցաւ արտասահմանի հայութեան եւ այլ գործատէրերուն հետ կապի մէջ մտնելու եւ անոնց գաղափարներն առնելով միջոցներ գտնելու՝ Հայաստանին տնտեսական վիճակը բարելաւելու համար:

Զեկոյցի աւարտին հանդիսավար տիար Քարսեղ Գարթալեան շնորհակալութիւն յայտնեց պրն դեսպանին եւ իրեն ընկերացող պատասխանատուներուն, որոնք զանազան միջոցներով օգտակար կը հանդիսանան Հայաստանի: Ապա հրաւիրեց թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպս. Տէրտէրեանը, որ իր փակման խօսքը ընէ:

Առաջնորդ Սրբազան Հայրը գնահատելէ եւ իր երախտագիտութիւնը յայտնելէ ետք Միացեալ Նահանգներու կառավարութեան, շեշտեց, որ իրար օգնելը քրիստոնէական առաքինութիւն մըն է, եւ թէ համայն աշխարհի հայութիւնը միասնական կամքով պէտք է շարունակէ իր եղբայրական օժանդակութիւնը Հայրենիքին, որպէսզի պետութիւններու կողքին մենք ալ որպէս նոյն ազգի զաւակները, մեր լուման ներդնենք Հայրենիքի եւ մեր հայրենակիցներուն ներկայ վիճակը բարելաւելու համար:

*ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ

# ՆՇՈՒԵՑԱՒ ՀՈԳՇ. Տ. ՎԱՐՈՒԺԱՆ Ծ. ՎՐԴ. ԳԱՊԱՌԱՃԵԱՆԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ 50-ԱՄԵԱԿԸ

Իլինոյի Էվընսթըն քաղաքի Ս. Յակոբ Հայց. եկեղեցւոյ երկարամեայ հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Վարուժան ծ. վրդ. Գապառաճեանի քահանայական ձեռնադրութեան 50-ամեակը նշուեցաւ Շաբաթ, Մայիս 31, քաղաքի «Ռատիսըն» Պանդոկի շքեղ սրահին մէջ:

Հոգշ. Տ. Վարուժան ծ. վրդ. Գապառաճեան ծնած է 1927 թուականին Պոլիս: 1947 թուականին ընդունուած է Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանը: 1951-ին կուսակրօն քահանայ ձեռնադրուած է: 1951-1958 տարիներուն Հայր Սուրբը զանազան պաշտօններ վարած է Երուսաղէմի Պատրիարքարանէն ներս: Եղած է Դպրեվանքի տեսուչ, հովիւ Երուսաղէմի հայերուն, տեսուչ Ս. Հրեշտակապետաց վանքին, այցելու հովիւ Ամմանի եւ ատենապետ ուխտաւորները հիւրընկալող յանձնախումբին: Եղած է ուսուցիչ Դպրեվանքի եւ Սրբոց Թարգմանչաց վարժարանին մէջ: 1958 թուականին Հայր Վարուժան եկած է Միացեալ Նահանգներ եւ հովիւ նշանակուած Էվընսթընի (Իլլինոյ) Ս. Յակոբ եկեղեցւոյ: 1963-ին՝ ստացած է ծայրագոյն վարդապետի աստիճան: Եղած է այցելու հովիւ շրջանի ծուխերուն, ինչպէս նաեւ նախագահը Միջ-Արեւմտեան Շրջանի Խորհուրդին: Հայր Սուրբը նշանակուած է Էվընսթըն քաղաքի Ոստիկանական Բաժանմունքի հոգեւոր մատակարար: 2001 թուականին Էվընսթըն քաղաքի քաղաքապետարանը գինք պատուած է՝ իր կատարած օգտակար ծառայութեանց համար:

Յոբելեանական այս հանդիսութիւնը կը վարէր Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանը:

Կարգադիր Յանձնախումբը, ատենապետութեամբ տիար Վահան Ճանիկեանի, ամէն ջանք ի գործ դրած էր, որպէսզի այս հանդիսութիւնը վայել շուքով նշուի՝ կրուած ըլլալով, որ Հայր Վարուժան 45 տարի վարելէ ետք Ս. Յակոբ Հայց. եկեղեցւոյ հոգեւոր հովուութիւնը՝ հանգստեան պիտի կոչուէր:

Մօտ 200 հրաւիրեալներ ներկայ գտնուեցան յոբելենական այս հանդիսութեան: Անոնց կարգին էին նաեւ շրջանի հոգեւորականները, Առաջնորդարանի Թեմական Խորհուրդի անդամներ, ինչպէս նաեւ Առաջնորդարանի անձնակազմի ներկայացուցիչներ:

Թեմակալ առաջնորդի բացման աղօթքէն ետք՝ հանդիսավար Վահան Ճանիկեան ընթացք տուաւ յայտագրին: Ան նախ ներկայացուց պատուոյ սեղանին վրայ տեղ գրաւած անձնաւորութիւնները, ապա շնորհակալութիւն յայտնեց Կարգադիր Յանձնախումբի անդամներուն եւ արտայայտուեցաւ օրուան ձեռնարկին մասին:

Տիար Ճան Իփճեան ներկայացուց Ս. Յակոբ Հայց. եկեղեցւոյ պատմութիւնը, իսկ տիար Փօլ Իփճեան խօսեցաւ Հայր Վարուժանի նուիրեալ ծառայութեան եւ ձեռք բերած յաջողութիւններուն մասին:

Ընդառաջելով թեմակալ առաջնորդի խնդրանքին եւ ի գնահատութիւն Հայր Վարուժանի կէս դարու հոգեւոր ծառայութեան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետը Օրհնութեան Կոնդակ մը շնորհած էր եւ Երուսաղէմի հայոց Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկեան Օրհնութեան Գիր մը ղրկած էր:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Կոնդակը կարդաց Հոգշ. Տ. Զոհրապ աբղ. Կոստանեան, իսկ Պատրիարք Սրբազան Հօր գիրը՝ Արժ. Տ. Հայկ ա. քհնյ. Տօնիկեան:

Նորին Սրբութիւնն Իր Կոնդակին մէջ կ'ըսէր. «... Մենք փեղեակ ենք հաւատաւոր ու ծառայասէր Ձեր ընթացքի բարի արգասիքներին եւ յանուն մեր Սուրբ Եկեղեցու եւ ժողովրդի ներդրած Ձեր անյոգնաբեկ ջանքերին: Ձեր հոգում կրելով Երուսաղէմի հայոց Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց վանքի Ժառանգաւորաց վարժարանի կնիքը, որպէս մշտարթուն հովիւ, Ձեր կարողութիւնները անձնուիրաբար ի սպաս էք դրել Տիրոջ խօսքը մեր ժողովրդի զաւակների հոգիներում սերմանելու սրբազան առաքելութեանը (Տե՛ս «Էջմիածին», Ե, էջ 31):

Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարքը կը գրէր. «Էվընթընի Ս. Յակոբ եկեղեցին եղաւ Հոգշ. Տ. Վարուժան ծ. վրդ. Գասպառաճեանի հոգեւոր փունը, եւ ինք՝ նուիրեալ հովիւը իր խնամքին յանձնուած հօտին եւ համայնքին: Իր պատրաստակամ ոգիով հոգատարեց կարիքներն իր ծխականներուն ... Յիսուն տարիներու օրհնուած ծառայութեան մը գնահատանքն է, որ կը նշուի: «Արժան եւ իրաւ»: Եւ իբրեւ իր կարելին եւ լաւագոյնը նուիրաբերած ծառայ Քրիստոսի, Հայր Վարուժան, արժանապէս «վարձս ի Տեառնէ» կ'ընդունի, իբրեւ «ծառայ բարի եւ հաւատարիմ»:

Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան ըսաւ. «Ինծի համար մեծ ուրախութիւն է այսօր այստեղ գտնուիլ ձեզի հետ՝ մեծարելու համար իմ հոգեւոր եղբայրս՝ Հայր Վարուժանը՝ Տիրոջ այգիին մէջ իր արդիւնաւոր առաքելութեան որպէս գնահատութիւն»: Ապա՝ի մէջ այլոց ըսաւ. «Իրապէս ներշնչիչ երեւոյթ է ինծի եւ բոլոր հոգեւորականներուն համար ներկայ գտնուիլ հոգեւոր եղբօր մը կէսդարեայ ծառայութեան յոբելեանական հանդիսութեան: Հոգեւորականութիւնը տարբեր պաշտօն մը չէ. անիկա կոչումի մը անսալն է: Եւ երբ մենք կը պատասխանենք այդ կոչումին (ինչպէս որ Հայր Վարուժանը ըրաւ 1951 թուականին), տարբեր մէկը կը դառնանք: Հայր Վարուժան այդ ուխտը կատարեց Երուսաղէմի պատմական Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Եւ իր առաքելութեան ընթացքին ինչ որ Տէրը շնորհած էր իրեն, որպէս նուիրեալ սպասաւոր, ան աւելիով վերադարձուց իր Եկեղեցիին, իր ժողովուրդին եւ Տիրոջ: Իր ցուցաբերած հովուական ազնիւ եւ անսակարկ հոգատարութիւնը հարստացուց շրջանի հոգեւոր կեանքը, եւ իր օրինակով ներշնչուեցան թէ՛ հոգեւորականներ եւ թէ՛ աշխարհականներ»:

Յոբելեար Հոգշ. Տ. Վարուժան ծ. վրդ. Գասպառաճեան շնորհակալութիւն յայտնեց Կարգադիր Յանձնախումբի անդամներուն եւ ներկաներուն: Ապա արտայայտուեցաւ գլխաւորաբար անցնող 45 տարիներու ընթացքին իր կատարած աշխատանքին եւ իրագործած ծրագիրներուն մասին:

Սրբազան Հօր փակման աղօթքէն ետք՝ ներկաներն առիթ ունեցան առանձնապէս շնորհաւորելու Հայր Վարուժանը եւ իրենց բարեմաղթութիւնները ներկայացնել անոր:

# ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԿԲԱՑՎԻ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հունիսի 1-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց ատամնաբուժական կենտրոնի օրհնության կարգ և խաչքարի բացում: Արարողությանը իրենց մասնակցությունն էին բերել ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Ֆրանսիայի Բուշ-դյու-Ռոն նահանգի վարչական խորհրդի նախագահ Ժան-Նոել Գերինին, ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Անրի Կյունին, Էջմիածնի քաղաքապետ Հրաչիկ Աբգարյանը, Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանը, Մայր Աթոռի միաբաններ և Մարսելից ժամանած ֆրանսահայեր:

Ատամնաբուժական դիսպանսերը Հայոց Հայրապետի օրհնությամբ կառուցվելու է Ֆրանսիայի Բուշ-դյու-Ռոն նահանգի վարչական խորհրդի նախագահ Ժան-Նոել Գերինի հովանավորությամբ և ֆրանսահայ «Բարձունք 5165» բարեգործական կազմակերպության ջանքերով:

Արարողության ավարտին Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց նահանգապետին և մարսելաբնակ բարեպաշտ հայորդիներին այս նախաձեռնության համար, որը վկայում է ֆրանսիացի և հայ ժողովուրդների բարեկամության ու եղբայրական սիրո մասին: «Այսօր մեր հոգին առանձնակի մխիթարություն է ապրում, որովհետև ձեր հովանավորությամբ և օժանդակությամբ բացվող ատամնաբուժական կենտրոնը վերականգնելու է մի հաստատություն, որը հիմնադրվել է դեռևս 1902 թ. երջանկահիշատակ Մկրտիչ Խրիմյան Ամենայն Հայոց Հայրապետի կողմից, որպես հիվանդանոց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սանուց համար», - իր խոսքում նշեց Վեհափառ Հայրապետը:

*

* *

Արարողությունից հետո Վեհարանում, ընդունելության ժամանակ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան հանձնեց Ֆրանսիայի Բուշ-դյու-Ռոն նահանգի վարչական խորհրդի նախագահ Ժան-Նոել Գերինիին՝ իբրև գնահատության իր հայանպաստ գործունեության:

Ստանալով Հայ Եկեղեցու բարձրագույն շքանշանը՝ պրն Գերինին Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնեց իրեն արժանացրած պատվի համար: Բարձր գնահատելով Հայ Եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում՝ նահանգապետը հավաստիացրեց, որ այսուհետ ևս ամեն ինչ կանի հայ-ֆրանսիական բարեկամությունն առավել ամրապնդելու համար:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՀԱՂՊԱՏՈՒՄ ԱՎԱՐՏՎԵՑ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ «Ս. ՀՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի նախաձեռնությամբ հունիսի 3-5-ը Հաղպատում փեղի ունեցավ «Ս. Հովհան Օձնեցի Հայրապետը և իր ժամանակը» խորագրով գիտաժողովը:

«Մեր նպատակն է նախ պանծացնել Սուրբ Հայրապետի հիշատակը, կարևորել նրա հիմնարար դերը Հայ Եկեղեցու ազգայնացման գործում և ապա վերարժևորել նրա իմաստուն կեցվածքը մեր ժողովրդի պատմության ճակատագրական հատվածում»,- բացելով գիտաժողովն ասաց Սեպուհ Սրբազանը:

Հանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի գիտաժողովի մասնակիցներին ողջույնի և օրհնության խոսք ասաց Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Ս. Հովհան Օձնեցին, որ իրավամբ կրում է Իմաստասեր անունը, 8-րդ դարի հայոց մեծացույն հայրապետներից է: Գահակալության 11 տարիների ընթացքում Ս. Հայրապետը կարողացել է դիմակայել բյուզանդական ու արաբական ճնշումներին և պայքար մղել աղանդավորության փարափեսակ արտահայտությունների դեմ: Օձնեցին թողել է նաև հարուստ ու արժեքավոր մատենագրական ժառանգություն: Նրա «Կանոնագիրք հայոց»-ը հայ իրականության մեջ իրավաբանական առաջին մեծ ժողովածուն է, իսկ «Գիրք թղթոց»-ը ամփոփում է Հայ և Ընդհանրական Եկեղեցու հայրերի թղթակցություններն ու նամակները: Ս. Հովհան Օձնեցուց մեզ են հասել նաև բազմաթիվ ճառեր, շարականներ: Նա հայտնի է նաև իր հրաշագործություններով:

Գիտաժողովի մասնակիցները՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Անդրկովկասում Վատիկանի դեսպան և պապական նվիրակ Կլաուդիո արքեպս. Գուջջերոտին, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի, Մաշտոցի անվան Մատենադարանի և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գիտնականներն իրենց զեկուցումներով բազմակողմանիորեն ներկայացրեցին Օձնեցի Հայրապետին՝ իբրև աստվածաբան, իմաստուն քաղաքական և մշակութային գործիչ, կանոնագետ, պատկերաբան, ուղղափառության ջատագով, շինարար, շարականագիր և խաչքարային մշակույթի ձևավորման գործում մեծ ներդրում ունեցող: Բոլոր այս զեկուցումները խեփագայում կփպագրվեն:

Ս. Հովհան Օձնեցու շարականների կատարմամբ հանդես եկավ Անահիտ Պապայանը:

Գիտաժողովի օրերին մասնակիցները Սեպուհ Սրբազանի առաջնորդությամբ այցելեցին Ալավերդու Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցի, եղան Սանահինի վանքում և Օձունի տաճարում: Մասնակիցներն ուխտագնացություն կատարեցին նաև Արդվիի Ս. Հովհաննես (Սրբանես) եկեղեցի, ուր գտնվում է Հայոց Իմաստասեր Կաթողիկոսի շիրիմը: Նրանք աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ իրենց խոնարհումը բերելով Սուրբ Հայրապետի լույս նշխարներին:

Ամփոփելով գիտաժողովի արդյունքներն ու նպատակները՝ գիտաժողովի մասնակիցները հանդես եկան կոչով՝ մատնանշելով հայ ազգային-եկեղեցական կյանքի ներկայիս մարտահրավերները, խորհրդելով առավել ուշադրություն ու նախանձախնդրություն ցուցաբերել հոգևոր և ազգային արժեքներին, մերժել ազգային նկարագրին անհարիր օտարամուտ երևույթները՝ որպես օրինակ ունենալով 8-րդ դարի Իմաստասեր Հայրապետին: Այս առիթով կոչ է արվում նաև՝ հանրությանը մատչելի դարձնել Եկեղեցու և ազգի պատմության ավանդույթներն ու բազմաժառանգ փորձը, քաջալերել նման գիտաժողովների կազմակերպումը և հատկապես ուսանողության մասնակցությունը դրանց՝ գիտակից ու ազգային նկարագրով սերունդ դաստիարակելու նպատակով:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

*ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՆՆԱԽԱԴԵՊ ՄԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ*

## Charta Oecumenica
## ԷԿՈՒՄԵՆԻԿ ՈՒՂԵԳԻԾ

2001 թ. ապրիլի 22-ին Ստրասբուրգում ստորագրվեց Charta Oecumenica-ն՝ Էկումենիկ Ուղեգիծը: Այս Ուղեգիծը, որ նպատակ ունի Եվրոպայում նոր ավյուն հաղորդել միջեկեղեցական հարաբերություններին, ստորագրեցին Եվրոպայի Եպիսկոպոսաց ժողովի նախագահ կարդինալ Միլոսլավ Վըլքը և Եվրոպայի Եկեղեցիների Համաժողովի (Կոնֆերանս) նախագահ մետրոպոլիտ Երեմին (Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին անդամակցում է եվրոպական Եկեղեցիները միավորող էկումենիկ այս կազմակերպությանը 1977 թ. ի վեր):

2003 թվականի մայիսի 28-ից մինչև հունիսի 1-ը Գերմանիայում տեղի ունեցավ եկեղեցական հավաք (Kirchentag), այս անգամ առաջինը լինելով Կաթոլիկ և Ավետարանական Եկեղեցիների միասնական ջանքերով, կազմակերպությամբ և պատասխանատվությամբ: Գերմանիայի պատմության մեջ աննախադեպ այս հավաքին կաթոլիկ, ավետարանական և այլ դավանանքների ու կրոնների հավատացյալներն առիթն ունեցան հանդիպելու իրար հետ, փոխադարձաբար ծանոթանալու միմյանց մշակույթին և դավանանքին: Մեծ և ծանրակշիռ դեր խաղաց նաև Charta Oecumenica-ն: Հանդիսավոր պայմաններում Գերմանիայի Եկեղեցիների Համագործակցության անդամ 16 Եկեղեցիներ, այդ թվում՝ նաև Հայ Եկեղեցին, հանձին Գերմանահայոց Առաջնորդության, մեծ շուքով ստորագրեցին Charta Oecumenica-ն: Այս ձևով մի նոր աստիճանի է բարձրանում Եվրոպայում քրիստոնյա Եկեղեցիների համագործակցությունը:

### *Եվրոպան և Եկեղեցիները*

Վերջին տասնամյակներում քրիստոնյաները և քրիստոնեական Եկեղեցիները կարողացան ապրել միասնաբար ավելի հաշտ և բարյացակամ մթնոլորտում: Եկեղեցիների միջև համագործակցությունն ապահովելու համար անհրաժեշտ է այս ոգին ամրացնել ու զարգացնել: Դեռևս գոյություն ունեցող տարաձայնությունները, սակայն, ոչ թե պետք է որ խոչընդոտեն, այլ մեզ համար խթան հանդիսանան միասնաբար քարոզելու Ավետարանի

պատգամը: Charta Oecumenica-ի նպատակն էլ այս է. բայց ոչ թե ընդհանուր առմամբ միայն, այլ կոնկրետ ձևով. ընտանիքներում, համայնքներում, ինչպես նաև Եվրոպայի և ամբողջ աշխարհի Եկեղեցիների համագործակցության միջոցով: Charta Oecumenica-ի առաջաբանը վկայում է, որ սույն գրությունը վարդապետական, դոգմատիկ և կամ եկեղեցաիրավական նկարագիր չունի: Իր նպատակն է՝ հիմք ստեղծել Եվրոպայի Եկեղեցիների համագործակցության ծավալման համար, որոնք խմբագրված են 12 ուղեգծերի և 24 պարտավորությունների մեջ:

Charta Oecumenica-ի գաղափարը ծնունդ է առել Եվրոպայի Միջեկեղեցական ժողովից, որ տեղի ունեցավ Գրացում (Ավստրիա) 1997 թվականին: Նոր և միասնաբար զարգացող Եվրոպան նեթաեող է ստեղծում միջեկեղեցական միասնական կյանքի և Եկեղեցիների գործունեության: Եվրոպայում ընթացող քաղաքական և հասարակական փոփոխությունները կարևորում են և անհրաժեշտ դարձնում Եկեղեցիների գործունեությունը, սակայն ոչ առանձնակի, այլ էկումենիկ ոգով՝ Եկեղեցիների միասնական համագործակցությամբ:

Քաղաքական գործիչները երկխոսությունների ճանապարհով փորձում են ուրվագծել և փեսք ու պատկեր տալ նոր՝ միասին աճող Եվրոպական միությանը: Այս առնչությամբ առաջ են գալիս բազմազան հարցեր, ինչպիսիք են. Միացյալ Եվրոպան արդյո՞ք միայն խնայողա-տնտեսական գաղափարով առաջնորդվող մի միություն է լինելու, մի «Եվրո-ցամաքամաս»: Եվ կամ Եվրոպան լինելո՞ւ է մի «տուն» բոլորի համար, որտեղ յուրաքանչյուրն ունենա ապրելու և գործելու համահավասար իրավունքը, և որտեղ հարգվեն մարդու իրավունքները: Միացյալ Եվրոպան արդյոք ընդգրկո՞ւմ է ամբողջ Եվրոպան, թե այն դառնալու է միավորված Արևմուտքի և բաժանյալ Արևելքի անհավասար մի ամբողջություն: Ի՞նչ դեր են խաղալու Եկեղեցիները Եվրոպայի զարգացման և կերպավորման գործում:

Իր ողջ կրոնական և մշակութային բազմազանության մեջ դարերի ընթացքում Եվրոպան ստացել է առավելաբար քրիստոնեական դրոշմ և նկարագիր: Սակայն սա միշտ օրինաբեր և խաղաղարար պատմական ընթացք չի ապահովել: Charta Oecumenica-ն հետևյալ ձևով է բնորոշում. «Միաժամանակ, քրիստոնյաների անտարբերությունը պատճառ է դարձել մի շարք չարիքների թե՛ Եվրոպայում և թե՛ նրա սահմաններից դուրս» (գլուխ Գ 7): Ասվածի բնորոշ օրինակներն են խաչակիրների արշավանքները, պատերազմի հանգեցնող դավանաբանական վեճերը, քարոզչության քողի տակ անխնա մարդորսությունը և այլն: Եկեղեցիների պառակտումներն ու վեճերը, որոնք հաճախ թշնամությունների և պատերազմների դուռ էին բացում, խորապես վնասեցին Ավետարանի ոգուն:

Այսօր քրիստոնյաները համարձակ կանգնած են արդի մարտահրավերների առջև և համոզված՝ քրիստոնեական Եկեղեցու էկումենիկ ոգով միությանը: Այս իմաստով Charta Oecumenica-ն նպատակ է հետապնդում՝ վերականգնել Եվրոպայի Եկեղեցիների հարգանքն ու հեղինակությունը: Միաժամանակ Եկեղեցիները ցանկանում են ցույց տալ իրենց մշակութային և դավանական գեղեցիկ բազմազանությունը և որ նրանք համերաշխորեն կարող են գործել քրիստոնեական մյուս դավանանքների և ոչ-քրիստոնեական մյուս կրոնների հետ:

***Charta Oecumenica-ի Բովանդակությունը***

Charta Oecumenica-ի բնագիր լեզուն գերմաներենն է: Իր բովանդակությամբ այն բաժանված է նախաբանի և 3 գլուխների: Charta Oecumenica-ն ընդրկում է էկումենիկ կյանքի և միջեկեղեցական հարաբերությունների գործնական առաջարկներ, որոնք խմբավորված են 12 մասերի և 24 հանձնառությունների մեջ: Իր հերթին յուրաքանչյուր գլուխ սկսում է Սուրբ Գրքի մի բնաբանով:

Առաջին գլուխը կարևորում է հավատքի միասնությունը, որ բոլոր քրիստոնյա Եկեղեցիները, հիմնվելով Քրիստոսի Ավետարանի վրա, քարոզում են Աստծու խոսքը: Ավետարանով հավատքի միասնությունը նախապայմանն է միջեկեղեցական համագործակցության (գլուխ Ա, մաս 1):

Երկրորդ գլխում քննարկվում են Եկեղեցիների միասնական համագործակցության կարևորություններն ու ձևերը, ինչպիսիք են՝ միասնաբար Ավետարանը քարոզել (գլուխ Բ, մաս 2), իրար ընդառաջ գնալ (գլուխ Բ, մաս 3), միասնաբար գործել (գլուխ Բ, մաս 4), միասին աղոթել (գլուխ Բ, մաս 5) և երկխոսությունները շարունակել (գլուխ Բ, մաս 6):

Երրորդ գլուխը նվիրված է Եկեղեցիների միասնական պատասխանատվությանը Եվրոպայում և նրա կազմավորմանը: Եվրոպան միասին կերտելը (գլուխ Գ, մաս 7), ժողովուրդներ և մշակույթներ հաշտեցնելը (գլուխ Գ, մաս 8) և Արարչագործված աշխարհը պահպանելը (գլուխ Գ, մաս 9) կազմում են էական պարտականությունները, որոնք վերապահված են Եկեղեցիներին: Այս ճանապարհին մեծ դեր է խաղում հարգանքն ու փոխհասկացողությունը և ինչու չէ՝ նաև համագործակցությունն այլ կրոնների հետ: Այս իմաստով կարևոր է հրեականության հետ միասնությունը խորացնելը (գլուխ Գ, մաս 10), իսլամի հետ հարաբերություններ մշակելը (գլուխ Գ, մաս 11) և այլ կրոններ և աշխարհայացքներ դավանողների հետ հանդիպումներ կազմակերպելը (գլուխ Գ, մաս 12):

Charta Oecumenica-ի 12 մասերից յուրաքանչյուրն ունի 2 հատված. 1-ինի մեջ նկարագրվում են Եկեղեցիների պարտականությունները, իսկ 2-րդ հատվածում նշված են երկու խոտակ պարտավորություններ իրագործելու համար բոլոր պարտականությունները: Charta Oecumenica-ն «նկարագրում է էկումենիկ հիմնական պարտականությունները, որոնք սկիզբ են տալիս մի շարք ուղեգծերի և պարտավորությունների: Այն հարկ է, որ քաջալերի երկխոսության և համագործակցության էկումենիկ մի մշակույթ՝ եկեղեցական կյանքի բոլոր մակարդակների վրա, և այս նպատակի համար համընդհանուր մի չափանիշ ստեղծի»:

*

* *

Պատմական և Եկեղեցիների պատմության մեջ աննախադեպ այս փաստաթղթի կարևորությունից ելնելով՝ ցանկանում ենք հայ ընթերցողին ներկայացնել Charta Oecumenica-ի հայերեն թարգմանությունը:

# Charta Oecumenica

**Leitlinien für die wachsende Zusammenarbeit unter den Kirchen in Europa**

## Էկումենիկ Ուղեգիծ

Ուղեցույց Եվրոպայում Եկեղեցիների միջև ընդլայնվող համագործակցության

«Փառք Հօր և Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:

Իբրև Եվրոպայի Եկեղեցիների Համաժողով (ԵԵՀ) և իբրև Եվրոպայի Եպիսկոպոսաց Համաժողովների Խորհուրդ (ԵԵՀԽ)*, հավատարիմ եվրոպական էկումենիկ երկու համախմբումների՝ Բազելի (1989) և Գրացի (1997) պատգամի ոգուն, նախանձախնդիր ենք մեր միջև բարգավաճած միասնությունը պահպանելու և զարգացնելու: Գոհություն ենք հայտնում մեր երրյակ Աստծուն, որ Իր Սուրբ Հոգու միջոցով մեր քայլերն առաջնորդում է դեպի հարաճուն միասնություն:

Էկումենիկ համագործակցության բազմազան ձևեր արդեն ստացել են իրենց հաստատումը: Հավատարիմ Քրիստոսի աղոթքին՝ «որպեսզի ամենքը մի լինեն ինչպես դու, Հա՛յր, իմ մեջ, որպեսզի նրանք էլ մեր մեջ լինեն, և որպեսզի աշխարհն էլ հավատա, թե դու՛ ուղարկեցիր ինձ» (Հովհ. ԺԷ 21), իրավունք չունենք այսօրվա կացության դիմաց անտարբեր մնալու: Մեր մեղքի գիտակցությամբ և դարձի պատրաստակամությամբ պետք է ջանք թափենք՝ դեռևս մեր մեջ գոյություն ունեցող պառակտումները հաղթահարելու, որպեսզի Ս. Ավետարանի պատգամը ժողովուրդների մեջ հավատալիորեն միասնաբար քարոզենք:

Ս. Գրքի մեջ Աստծու խոսքի մեր միասնական ընկալումով և մեր միասնական հավատքի խոստովանության հրավերով, ինչպես նաև, ըստ ընդունված ճշմարտության, հավաքական աշխատանքով ցանկանում ենք բոլոր մարդկանց սիրո և հույսի վկայությունը տալ:

Ատլանտյան օվկիանոսից մինչև Ուրալ և Հյուսիսային Բևեռից մինչև Միջերկրական ծով տարածվող եվրոպական մեր մայրցամաքում, որ այսօր, ավելի քան երբեք, բազմաբնույթ մշակույթի մի պատկերն է կրում, ցանկանում ենք Ս. Ավետարանի հետ, իբրև Աստծու պատկեր ստեղծված, մարդ անհատի արժանապատվությունը պաշտպանել և իբրև Եկեղեցիներ՝ ժողովուրդների և մշակույթների հաշտության համար պայքարել:

Այս իմաստով, սույն Էկումենիկ Ուղեգիծն ընդունում ենք իբրև միասնական պարտավորություն երկխոսության և համագործակցության համար: Այն նկարագրում է էկումենիկ հիմնական պարտականությունները, որոնք սկիզբ են տալիս մի շարք ուղեգծերի և պարտավորությունների: Այն պետք է որ քաջալերի երկխոսության և համագործակցության էկումենիկ մի մշակույթ՝ եկեղեցական կյանքի բո-

* Եվրոպայի Եկեղեցիների Համաժողովին (ԵԵՀ) մաս են կազմում Եվրոպայի Ուղղափառ Եկեղեցիների մեծ մասը, ինչպես նաև Եվրոպայի Բողոքական, Անգլիկան, Հին Կաթոլիկ և ազատ Եկեղեցիները: Իսկ Եվրոպայի Եպիսկոպոսաց Համաժողովների Խորհրդին (ԵԵՀԽ) մաս են կազմում Եվրոպայում Հռոմեական-Կաթոլիկ Եպիսկոպոսաց Համաժողովները:

*լոր մակարդակների վրա և այս նպատակի համար համընդհանուր մի չափանիշ սահմանելուն: Այդուհանդերձ, այն վարդապետական-դավանական և եկեղեցա-իրավական-օրինական բնույթ չունի: Իր պարտադրականությունը կայանում է եվրոպական Եկեղեցիների և էկումենիկ կազմակերպությունների ինքնապարտավորության մէջ: Նրանք, հիմք ունենալով այս գրությունը, կարող են իրենց շրջանակների համար յուրահատուկ հավելումներ և միասնական հեռանկարներ մշակել, որոնք կհամապատասխանեն ուղղակի իրենց հատուկ պահանջներին և նրանցից բխող պարտավորություններին:*

# Ա

## ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ «ՄԵԿ, ՍՈՒՐԲ, ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ»

*«Ջանացեք պահել Հոգու միությունը խաղաղության կապով. մեկ մարմին և մեկ հոգի, ինչպես որ կանչվեցիք ձեր կոչման միակ հույսին: Մեկ Տեր կա, մեկ հավատ, մեկ մկրտություն, մեկ Աստված, Հա՛յր բոլորի, որ է բոլորից վեր, բոլորի միջով և մեր բոլորի մեջ» (Եփես. Դ 3-6):*

### 1. Միասնաբար կոչված ենք ի հավատս միության

Հիսուս Քրիստոսի Ավետարանով, ինչպես որ Ս. Գիրքն է վկայում և Նիկիո-Կոստանդնուպոլսո (381) Հավատո Հանգանակում է արտահայտվում, հավատում ենք երեքսրբյան Աստծուն՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն: Որովհետև այս հանգանակով ենք խոստովանում «Մեկ, Սուրբ, Ընդհանրական և Առաքելական Եկեղեցին», մեր էկումենիկ անհետաձգելի պարտականությունը կայանում է սույն միությունը, որ միշտ Աստծու շնորհն է, տեսանելի դարձնելու մեջ:

Դավանանքում դեռևս էական տարբերություններն արգելք են հանդիսանում տեսանելի միությանը: Ի մասնավորի Եկեղեցու և իր միության մասին, [սուրբ] խորհուրդների և [նվիրապետական] կարգերի մասին կան տարբեր տեսակետներ: Սակայն մենք նրանց մեջ պետք չէ որ հապաղենք: Հիսուս Քրիստոս խաչի վրա մեզ հայտնեց իր սերն ու հաշտության խորհուրդը: Իբրև իր հետևորդներ, ցանկանում ենք մեր կարելին ի գործ դնել՝ դեռևս գոյություն ունեցող Եկեղեցիները բաժանող խնդիրներն ու արգելքները հաղթահարելու համար:

**Պարտավորվում ենք,**

- Հետևել Եփեսացվոց թղթի առաքելական հորդորին և ջանալ Ավետարանում հայտնըված Քրիստոսի փրկագործական պատգամի շուրջ միասնական հասկացողության հասնել,

- Սուրբ Հոգու զորությամբ նպատակասլաց գործել Հիսուս Քրիստոսի Եկեղեցու ի մի հավաքող տեսանելի միության համար, որ արտահայտվում է մկրտության [խորհրդի] երկկողմանի ճանաչման, Ս. Հաղորդության միասնության, ինչպես նաև միասնական վկայության և ծառայության մեջ:

## Բ

## ԴԵՊԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՏԵՍԱՆԵԼԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

*«Եթե դուք միմյանց սիրեք, դրանով բոլորը պիտի իմանան,*
*որ դուք իմ աշակերտներն եք » (Հովհ. ԺԳ 35):*

### 2. Ս. Ավետարանը միասնաբար քարոզել

Եվրոպայում Եկեղեցիների ամենակարևոր պարտականությունն է՝ Ս. Ավետարանը բանիվ և գործով բոլոր մարդկանց փրկության համար միասնաբար քարոզելը: Նկատի առնելով կողմնորոշման բազմազանության պակասությունը, քրիստոնեական արժեքներից օտարացումը, բայց նաև իմաստի բազմակողմանի փնտրտուքը՝ պարտավորվում ենք հատկապես քրիստոնյաներին տալու իրենց հավատքի վկայությունը: Սրա համար անհրաժեշտ են տեղային համայնքներում քրիստոնեական դաստիարակության և հովվության ասպարեզներում մեծ նվիրում և փորձառության փոխանակում: Խիստ կարևոր է նաև, որ Աստծո ժողովուրդը միասնաբար Ս. Ավետարանը ներմուծի ընկերության մեջ, ինչպես նաև ընկերային ծառայությամբ և քաղաքական պատասխանատվություն ստանձնելու միջոցով ի գործ դարձնի այն:

**Պարտավորվում ենք,**

- Ս. Ավետարանի քարոզչության մեր ջանքերի մասին քույր Եկեղեցիների հետ բանակցել, համաձայնություններ կնքել՝ խուսափելու համար վնասաբեր մրցակցությունից և մանավանդ նոր պառակտումների վտանգից,

- Ընդունել, որ յուրաքանչյուր անհատ խղճի ազատությամբ կարող է իր կրոնական և եկեղեցական ուղղությունն ընտրել. ոչ ոք իրավունք չունի բարոյական ճնշումով և կամ նյութական հրապույրներով մեկ ուրիշին դավանափոխության մղել, ինչպես նաև ոչ ոք իրավունք չունի մեկ ուրիշի ազատ կամքով առաջ եկած դավանափոխության արգելք լինել:

### 3. Իրար ընդառաջ գնալ

Ս. Ավետարանի ոգով պետք է որ միասնաբար վերանայենք քրիստոնեական Եկեղեցիների պատմությունը, որ լի է բազմաթիվ լավ փորձառություններով, բայց նաև պառակտումներով, թշնամություններով և նույնիսկ պատերազմական ընդհարումներով: Մարդկա-

յին մեղքը, սիրո պակասը և քաղաքական նպատակների համար հավատքի և Եկեղեցիների խաժախակի չարաշահումը չարաչար վնասեցին քրիստոնեական վկայության հավաստիությանը:

Այս պատճառով քրիստոնյաների համար էկումենիզմը սկիզբ պետք է առնի սրտերի նորոգությամբ և դարձի ու ապաշխարության պատրաստակամությամբ: Էկումենիկ շարժման մեջ բարգավաճել է արդեն նաշտության հասկացողությունը:

Ուրեմն կարևոր է ճանաչել քրիստոնեական տարբեր ավանդությունների հոգևոր արժեքները, իրարից սովորել և այդպես միմյանց հարստացնել: Էկումենիզմի առավել զարգացման համար խիստ անհրաժեշտ է երիտասարդների փորձառություններն ու սպասումները նկատի առնել և նրանց գործակցությունը ըստ կարելվույն քաջալերել:

**Պարտավորվում ենք,**

- Ձերբազատվել ինքնաբավարարվածությունից և նախապաշարումներից և իրար հետ հանդիպելու առիթներ գտնել և իրար օգնելու պատրաստակամ լինել,

- Քաջալերել էկումենիկ անկեղծությունն ու համագործակցությունը քրիստոնեական դաստիարակության, աստվածաբանական ուսումնառության, ինչպես նաև հետազոտական աշխատանքի մեջ:

**4. Միասնաբար գործել**

Էկումենիզմն արդեն իրականանում է միասնական գործունեության զանազան ձևերի մեջ: Տարբեր Եկեղեցիներին պատկանող քրիստոնյաներ թե՛ բարեկամությունների միջոցով, թե՛ դրացիությամբ, թե՛ հանգամանքների բերումով երբեմն իրենց ընտանիքում միասին են ապրում ու գործում: Մանավանդ պետք է տարադավան ամուսնությունների պարագան այ՛ն պատճառով քաջալերել, որպեսզի էկումենիզմը իրագործվի նաև առօրյա կյանքում:

Մենք խրախուսում ենք ստեղծել երկկողմանի և բազմակողմանի էկումենիկ հանձնաժողովներ տեղային, շրջանային, ազգային և միջազգային մակարդակների վրա համագործակցությունը զարգացնելու համար: Եվրոպական մակարդակի վրա անհրաժեշտ է Եվրոպայի Եկեղեցիների Համաժողովի և Եվրոպայի Եպիսկոպոսաց Համաժողովների Խորհրդի միջև համագործակցությունը զորացնել և եվրոպական էկումենիկ հետագա համախմբումներ հրավիրել:

Եկեղեցիների միջև ծիրող անհասկացողությունների պարագային պետք է տեղ տալ միջնորդարար և խաղաղարար ջանքերին և քաջալերել դրանք:

**Պարտավորվում ենք,**

- Միասնաբար գործել եկեղեցական կյանքի բոլոր մակարդակների վրա, եթե դրա համար գոյություն ունեն պայմաններ և հավատքի հիմքերը կամ եթե ավելի մեծ նպատակները չեն խաթարվում,

- Պաշտպանել փոքրամասնությունների իրավունքները և նպաստել մեր երկրներում գտնվող մեծամասնությունների և փոքրամասնությունների Եկեղեցիների միջև փիրող անհասկացողությունների և նախապաշարումների վերացմանը:

**5. Համատեղ աղոթել**

Էկումենիզմը կզարգանի, երբ մենք Աստծու խոսքը միասնաբար ենք ընկալում, և Ս. Հոգին մեր մեջ կներգործի և մեր միջոցով կգործի: Սուրբ Հոգու պարգևած շնորհքի զորությամբ այսօր կան բազմապիսի ձգտումներ՝ աղոթքների և եկեղեցական արարողությունների միջոցով՝ Եկեղեցիների միջև գոյություն ունեցող հոգևոր միասնությունը ամրապնդելու և Քրիստոսի Եկեղեցու տեսանելի միության համար աղոթելու: Միասնական հաղորդության բացակայությունը հատկանշականորեն ցավալի մի երևույթ է մի շարք քրիստոնեական Եկեղեցիների միջև պառակտման մեջ:

Մի քանի Եկեղեցիներ էկումենիկ միասնական աղոթքներին դեռևս վերապահությամբ են մոտենում: Բայց մյուս կողմից կան բազմաթիվ էկումենիկ արարողություններ, միասնական շարականներ և աղոթքներ, մանավանդ Տերունական Աղոթքը, որոնք մեր քրիստոնեական բարեպաշտության արտահայտությունն են:

**Պարտավորվում ենք,**

- Աղոթել իրար համար և քրիստոնյաների միության համար,
- Ծանոթանալ տարբեր Եկեղեցիների արարողություններին, ինչպես նաև նրանց հոգևոր կյանքի տարբեր արտահայտչաձևերին և արժևորել դրանք,
- Նպատակասլաց ընթանալ դեպի հաղորդության միասնություն:

**6. Երկխոսությունները շարունակել**

Մեր՝ ի Քրիստոս արմատացած միասնությունն էական կարևորություն ունի՝ հակառակ մեր աստվածաբանական և բարոյական տարբեր դիրքորոշումներին: Հակառակ մեզ պարգևված և մեզ հարստացնող բազմազանության՝ վարդապետության, բարոյական հարցերի, եկեղեցա-իրավական սահմանումների մեջ գոյություն ունեցող հակադրություններն առիթ դարձան Եկեղեցիների բաժանման: Հաճախ վճռական դեր խաղացին պատմական արտակարգ դիպվածները և մշակութային տարբեր յուրահատկությունները:

Էկումենիկ միասնությունը խորացնելու համար անհրաժեշտ է, որ ի հավատս միաբանության հասնելու ջանքերը անպայման շարունակվեն: Առանց ի հավատս միության հնարավոր չէ Եկեղեցիների լիիրավ միասնությունը: Երկխոսության համար ուրիշ մի այլ միջոց չկա:

**Պարտավորվում ենք,**

- Մեր Եկեղեցիների միջև երկխոսությունը՝ եկեղեցական տարբեր մակարդակների վրա բարեխղճորեն և հետևողականորեն շարունակել, ինչպես նաև քննել, թե երկխոսություննե-

րի ո՛ր արդյունքները կարող են Եկեղեցիների համար ընդունելի և պարտավորիչ հայտարարվել.

- Անհամաձայնությունների պարագային, մանավանդ երբ հավատքի և բարոյական հարցերը ներկայացնում են երկպառակտման վտանգ, անհրաժեշտ է երկխոսության առիթներ փնտրել և այս հարցերը Ավետարանի լույսի տակ միասնաբար քննարկել:

## Գ.

## ՄԵՐ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

*«Երանի՛ խաղաղարարներին, որովհետև նրանք*
*Աստուծո որդիներ պիտի կոչվեն» (Մատթ. Ե 9):*

**7. Եվրոպան միասին կերպավորել**

Դարերի ընթացքում Եվրոպան ունեցել է կրոնական, մշակութային և առավելաբար քրիստոնեական զարգացում: Միաժամանակ, քրիստոնյաների անտարբերությունը պատճառ է դարձել բազմաթիվ չարիքների թե՛ Եվրոպայում և թե՛ նրա սահմաններից դուրս: Մենք խոստովանում ենք մեր պատասխանատվությունն այս հանցանքի նկատմամբ և հայցում Աստուծո ու մարդկանց ներողամտությունը:

Մեր հավատքն օգնում է մեզ՝ անցյալից սովորելու և մեր ուժերը կենտրոնացնելու, որպեսզի քրիստոնեական հավատքը և նմանին սերը հույս ճառագայթի բարոյականության և պարկեշտության համար, դաստիարակության և մշակույթի համար, քաղաքականության և տնտեսության համար թե՛ Եվրոպայում և թե՛ ամբողջ աշխարհում:

Եկեղեցիները քաջալերում են եվրոպական մայրցամաքի միությունը: Առանց միասնական արժեքների անկարելի է հասնել հարատև միության: Համոզված ենք, որ քրիստոնության հոգևոր ժառանգությունը մի ուժ է Եվրոպան հարստացնող և ներշնչող: Հիմք ունենալով քրիստոնեական մեր հավատքը, պետք է որ կարելին անենք հումանիստական և ընկերախնամ Եվրոպայի համար, որտեղ պահպանվում են մարդու իրավունքներն ու խաղաղության, արդարության, ազատության, հանդուրժողության, համերաշխության և գործակցության հիմնարժեքները: Այլև մենք ընդգծում ենք կյանքի նկատմամբ ակնածանքը, ամուսնության և ընտանիքի արժեքը, աղքատներին կատարվելիք առաջնահերթ խնամքը, ներելու պատրաստակամությունն ու ամեն ինչում ներողամտությունը:

Իբրև Եկեղեցիներ և միջազգային կազմակերպություններ՝ պարտավոր ենք պայքարել այն վտանգի դեմ, որ Եվրոպան դառնա միավորված Արևմուտքի և բաժանյալ Արևելքի անհավասար մի ամբողջություն: Պետք չէ անտեսել նաև հյուսիսի և հարավի մասերը: Միաժամանակ պետք է խուսափել ամեն տեսակի եվրոկենտրոն ուղղվածությունից և զորացնել ողջ մարդկության հանդեպ Եվրոպայի պատասխանատվությունը, մանավանդ աղքատների և ողջ աշխարհի նկատմամբ:

**Պարտավորվում ենք,**

- Մեր ընկերային պատասխանատվության բովանդակությունն ու նպատակները միասնաբար պարզաբանել. այլն Եկեղեցիների պահանջներն ու երազները՝ աշխարհականացող եվրոպական կազմակերպությունների դիմաց ըստ կարելվույն միասնաբար ներկայացնել.
- Հիմնարար արժեքներն ամեն տեսակի միջամտության դիմաց պաշտպանել.
- Կրոնն ու Եկեղեցին ցեղամոլ և ազգայնամոլ նպատակների համար շահագործելու ամեն տեսակի փորձ մերժել:

## 8. Ժողովուրդներ և մշակույթներ հաշտեցնել

Եվրոպայի մեկ հարստությունն ենք համարում շրջանային, ազգային, մշակութային և կրոնական ավանդությունների բազմազանությունը: Բազմաթիվ ընդհարումներին ի տես՝ Եկեղեցիների պարտականությունը կայանում է և՛ ժողովուրդների, և՛ մշակույթների համար հաշտության համատեղ ծառայություն տանելու մեջ: Գիտակցում ենք, որ Եկեղեցիների միջև խաղաղությունը նույնպես կարևոր մի նախապայման է այս նպատակի համար:

Մեր միասնական ջանքերը տարվում են քաղաքական և ընկերային հարցերն Ավետարանի ոգով կշռադատելու և լուծելու ուղղությամբ: Որովհետև անձը և յուրաքանչյուր մարդու, իբրև Աստուծո պատկերի, արժանապատվությունն արժեվորելով պաշտպանում ենք բոլոր մարդկանց բացարձակ հավասարությունը:

Իբրև Եկեղեցիներ ուզում ենք Եվրոպայի մեջ ժողովրդավարության ընթացքը միասնաբար քաջալերել: Հանձնառու ենք խաղաղության մի համակարգի նկատմամբ, եթե դա հիմնված է հարցի խաղաղ լուծման սկզբունքի վրա: Դատապարտում ենք բռնության ամեն ձև, որ ուղղված է մարդկանց, մանավանդ կանանց և երեխաների դեմ:

Հաշտության ծիրի մեջ է մտնում նաև քաջալերել անձը՝ բոլոր ազգերի մեջ ընկերային արդարության, հաղթահարելու համար նախ և առաջ աղքատի և հարուստի միջև խտրականությունը, ինչպես նաև գործազրկությունը: Միասնաբար ցանկանում ենք Եվրոպայում գաղթականների, փախստականների և ապաստանյալների մարդավայել կերպով ընդունմանը նպաստել:

**Պարտավորվում ենք,**

- Պայքարել ամեն տեսակի ազգայնամոլության դեմ, որ ընկճում է ուրիշ ազգեր և ազգային փոքրամասնություններ, ինչպես նաև հարցերի խաղաղ լուծման ձևը պաշտպանել,
- Կյանքի բոլոր ոլորտներում զորացնել կնոջ դիրքն ու իրավահավասարությունն ու թե՛ Եկեղեցու և թե՛ հասարակության մեջ քաջալերել կանանց ու տղամարդկանց արդար հավասարությունը:

## 9. Արարչագործությունը պահպանել

Արարիչ Աստուծո սիրույն նկատմամբ մեր ունեցած հավատքով, երախտապարտորեն գիտակցում ենք արարչության պարգևը, բնության արժեքն ու գեղեցկությունը: Բայց սար-

սափահար ականատես ենք, թե ինչպես մարդկանց կողմից երկրի բարիքները, առանց նկատի առնելու նրանց արժեքը և առանց հարգելու նրանց սահմանափակ լինելությունը, անխնա վատնվում են՝ առանց մտածելու ապագա սերունդների բարեկեցության մասին:

Ցանկանում ենք ողջ արարչության համար կյանքի մնայուն պայմանները միասնաբար պաշտպանել: Աստուծո առաջ պատասխանատվությամբ՝ պարտավոր ենք միասնաբար չափանիշներ դնել և նրանք ի զորու դարձնել և առավել զարգացնել, այն, ինչը մարդիկ գիտական և ճարտարագիտական մարզում թեև կարող են իրագործել, բայց բարոյական մարզում իրավունք չունեն կատարելու: Ամեն պարագայի, պետք է յուրաքանչյուր մարդու անփոխարինելի արժանապատվությունը նախակարգ դասվի, քան ճարտարագիտական կարելիությունը:

Հանձնարարում ենք եվրոպական Եկեղեցիներում կյանքի կոչել էկումենիկ աղոթքի մի օր՝ արարչագործության պահպանության համար:

**Պարտավորվում ենք,**

- Առավել զարգացնել մի ապրելակերպ, որի միջոցով ժխտվեն տնտեսական և սպառողական պարտադրանքների գերիշխանությունը, և արժեք տալ պատասխանատու և մնայուն կենսամակարդակի,

- Քաջալերել եկեղեցական կենսոլորտապահպան կազմակերպություններին և էկումենիկ հիմնարկները՝ արարչագործության պահպանության իրենց պատասխանատվության մեջ:

**10. Հրեականության հետ միասնությունը խորացնել**

Ցուրահատուկ մի միասնություն կապում է մեզ հրեա ազգին, որի հետ Աստված հավիտենական մի ուխտ է կնքել: Հավատքով գիտենք, որ մեր հրեա քույրերն ու եղբայրներն «Աստուծո սիրելի են իրենց հայրերի սիրույն համար: Որովհետև Աստուծո պարգևներն ու կոչումը անդառնալի են» (Հռովմ. ԺԱ 28-29): Նրանք ունեն «որդեգրությունը, փառքը, ուխտերը, օրենսդրությունը, պաշտամունքը և խոստումը: Նրանցն են հայրերը, նրանցից և՝ ըստ մարմնի Քրիստոս» (Հռովմ. Թ 4-5): Մենք պախարակում ենք և դատապարտում հակասեմականության բոլոր արտահայտությունները, ինչպես ատելության պոռթկումներն ու հալածանքները: Քրիստոնեական հակահրեականության համար հայցում ենք Աստծուց ներողամտություն, իսկ մեր հրեա քույր-եղբայրներից՝ հաշտություն:

Խիստ անհրաժեշտ է մեր Եկեղեցիների թե՛ քարոզչության, թե՛ դասավանդության, թե՛ վարդապետության և թե՛ կյանքում գիտակից դարձնել քրիստոնեական հավատքի՝ հրեականության հետ ունեցած կապը և քրիստոնեա-հրեական համագործակցությունը քաջալերել:

**Պարտավորվում ենք,**

- Մերժել Եկեղեցու և հասարակության մեջ հակասեմական և հակահրեական բոլոր ձևերը,

- Փնտրել մեր երեա քույր-եղբայրների հետ բոլոր մակարդակների վրա երկխոսության առիթներ և աշխուժացնել դրանք:

### 11. Իսլամականության հետ հարաբերություններ մշակել

Դարեր ի վեր իսլամներն ապրում են Եվրոպայում: Նրանք եվրոպական մի շարք պետություններում կազմում են բազմաքանակ փոքրամասնություններ: Միաժամանակ քրիստոնյաների և իսլամների միջև գոյություն են ունեցել և ունեն բազմաթիվ լավ հարաբերություններ և դրացիություն, բայց նաև երկու կողմերի պարագային էլ՝ շատ վերապահումներ և նախապաշարումներ, որոնք արդյունքն են պատմական և մոտ անցյալի դառն փորձառությունների:

Ցանկանում ենք քրիստոնյաների և իսլամների միջև հանդիպումը, ինչպես նաև քրիստոնյա-իսլամ երկխոսությունը բոլոր մակարդակների վրա աշխուժացնել: Հանձնարարում ենք մանավանդ մեկ Աստուծո հավատքի շուրջ միատեղ զրույցների կազմակերպումը և մարդու իրավունքների հասկացողության պարզաբանումը:

**Պարտավորվում ենք,**

- Իսլամների հետ արժեքների նկատմամբ գնահատական կեցվածքով հանդիպել,
- Միասնական կարիքների պարագային իսլամների հետ համագործակցել:

### 12. Հանդիպումներ այլ կրոնների և աշխարհայացքների հետ

Կրոնական և աշխարհայացքային համոզմունքների և կենսաձևերի բազմազանությունը հատկանշական է Եվրոպայի մշակույթի համար: Արևելյան կրոններն ու կրոնական նոր խմբակցությունները տարածվում են [Եվրոպայում] շարժելով բազմաթիվ քրիստոնյաների հետաքրքրությունը: Կան նաև մարդիկ, որոնք, անտարբեր կեցվածք որդեգրելով, մերժում են քրիստոնեական հավատքը կամ հետևում են այլ աշխարհայացքների:

Ուզում ենք մեզ ուղղված քննադատական հարցադրումներին լրջորեն մոտենալ և ջանալ ազնիվ բացահայտման հասնել: Միաժամանակ պետք է տարբերել, թե ո՛ր խմբակցությունների հետ երկխոսություններն ու հանդիպումներն ընդունելի են և քրիստոնեական տեսանկյունից որոնք են մերժելի:

**Պարտավորվում ենք,**

- Ճանաչել և պաշտպանել մարդկանց և խմբակցությունների կրոնական և խղճի ազատությունը, որպեսզի նրանք, ի զորու իրավական սահմաններում, կարենան կիրարկել իրենց կրոնն ու աշխարհայեցողությունը թե՛ անհատական ու հավաքական և թե՛ ներքին՝ անձնական ու հանրային մակարդակների վրա,
- Տրամադիր լինել մարդկանց հետ բարյացակամ երկխոսության, նրանց հետ հասարակաց հետաքրքրություններ հետապնդել և նրանց դիմաց տալ քրիստոնեական հավատքի վկայությունը:

**ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՈՐՊԵՍ ՏԵՐԸ ՄԵԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԵՐ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՀՈՒՅՍՆ Է: ՀԱՆՈՒՆ ՀԻՍՈՒՍԻ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ: ԱՍՏԾՈՒՑ ՀԱՅՑՈՒՄ ԵՆՔ ԻՐ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԶՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ:**

*«Թող Հույսի Աստվածը լիացնի ձեզ* [*] *ամենայն ուրախությամբ և խաղաղությամբ, որպեսզի Սուրբ Հոգու զորությամբ դուք հույսով առատանաք» (Հռովմ. ԺԵ 13):*

*

*   *

Իբրև նախագահներ Եվրոպայի Եկեղեցիների Համաժողովի և Եվրոպայի Եպիսկոպոսաց Համաժողովների Խորհրդի, հանձնարարում ենք, որ սույն «Էկումենիկ Ուղեցիծ»-ը Եվրոպայի բոլոր Եկեղեցիների և Եպիսկոպոսաց Համաժողովների կողմից ընդունվի իբրև հիմք և իր համապատասխան շրջանակներում իրագործվի:

Այս հանձնարարությամբ ստորագրում ենք «Էկումենիկ Ուղեցիծ»-ը 2001 թվականի միասնական Ս. Զատկի տոնին հաջորդող առաջին կիրակի օրը, եվրոպական էկումենիկ հանդիպման շրջագծից ներս:

Ստրասբուրգ, 22 ապրիլ 2001

**Մետրոպոլիտ Երեմի**
Նախագահ
Եվրոպայի Եկեղեցիների
Համաժողովի Խորհրդի

**Կարդինալ Միլոսլավ Վըլք**
Նախագահ
Եվրոպայի Եպիսկոպոսաց
Խորհրդի Համաժողովի

*Հոդվածը պատրաստեց և գերմաներենից թարգմանեց*
***Տ. ԱՐՄԱՇ ԱԲԵՂԱ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ***
*Գերմանահայոց թեմ*

[*] Նոր Կտակարանի բնագրում ձեզ *(Ծանոթություն թարգմանչի)*:



# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՊՀ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

Հունիսի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՊՀ անդամ երկրների Անվտանգության մարմինների և հատուկ ծառայությունների ղեկավարների խորհրդի անդամներին, որոնք Երևան են ժամանել մասնակցելու խորհրդի հերթական նիստին:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հյուրերին, կարևորեց նրանց դերը խաղաղության խաղաղ ու բարօր կյանքի կերտման գործում: Նորին Սրբությունն Աստծո օգնականությունն ու զորակցությունը մաղթեց ԱՊՀ անդամ երկրների Անվտանգության մարմինների և հատուկ ծառայությունների ղեկավարների խորհրդի անդամներին իրենց դժվարին առաքելության մեջ: «Հավատում ենք, որ այս համագործակցությունը պիտի բարի պտուղներ բերի ԱՊՀ անդամ երկրներից յուրաքանչյուրին», - նշեց Հայոց Հայրապետն իր խոսքում:

Հանդիպման ընթացքում, ի պատասխան ներկաների հարցումների, Վեհափառ Հայրապետը ներկայացրեց Հայ Եկեղեցու գործունեությունը կրթական և սոցիալական ոլորտներում, Եկեղեցի-պետություն հարաբերությունները:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴԱՇՆԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄ ՌԴ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՎԻԿՏՈՐ ԿԱԶԱՆՑԵՎԻՆ

Հունիսի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ Հարավային Դաշնային մարզում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Վիկտոր Կազանցեին և իր գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց ՌԴ Հարավային Դաշնային մարզի իշխանությունների ներկայացուցիչներին այն հոգածության համար, որ տածում են հայ համայնքի նկատմամբ: Բարձր գնահատելով բազմազգ այդ տարածաշրջանում խաղաղություն ապահովելու նրանց ջանքերը՝ Վեհափառ Հայրապետը մաղթեց Վիկտոր Կազանցեին Աստծո օգնականությունը՝ ի զորացումն երկու ժողովուրդների դարավոր բարեկամության:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ փիար Կազանցևը արտահայտեց իր ջերմ վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ և փաստեց երկու ժողովուրդների բարեկամական սերտ կապերի մասին: «Մեր առաքելությունն է՝ վերականգնել այն բոլոր կապերը, որ եղել են մեր երկու ժողովուրդների միջև բոլոր ոլորտներում և առավել զորացնել դրանք», - ասաց ՌԴ Հարավային Դաշնային մարզում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչը՝ նշելով նաև, որ ամեն կերպ աջակցում է տարածաշրջանում կազմակերպվող միջեկեղեցական և միջկրոնական երկխոսություններին:

Հանդիպմանը ներկա էր Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Մովսես եպս. Մովսիսյանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Հունիսի 1-ին, կիրակի. - Երկրորդ Ծաղկազարդ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նավասարդ եպս. Կճոյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Անեղ գոչմամբ ռսոն ի ձեռին Իջեալ յերկնից Միածին Որդին, Տեսանելով արթուն անուն Հայաստանեայց Սուրբ Լուսաւորչին» *(Պաղպատասար Դպիր)* բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 16):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Հունիսի 8-ին, կիրակի. - Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Տուր ինձ ցնծութիւն փրկութեան, եւ հոգւով պետութեան քով հաստատեա զիս» *(Սաղմ. Ծ 14)* բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 19):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Հունիսի 15-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Հոգեգալստեան: Յիշատակ Եղիայի մարգարէին:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 22):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Հունիսի 21-ին, շաբաթ. - Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ելն ի Վիրապէն:***

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան աբղ. Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Հովիւ քաջ բանատր հոտի Տէր Ս. Գրիգոր հաստատեցեր զհիմունս Եկեղեցւոյ ի Հայաստան երկրի ի վերայ հիման սուրբ առաքելոց...» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 25):

Տոնի առիթով Մայրավանք էր բերվել նաև Ս. Գրիգոր Լուսավորչի սրբազան մասունքը, որին իրենց խոնարհումը բերեցին արարողությանը ներկա բազմաթիվ հավատացյալներ:

***Հունիսի 22-ին, կիրակի. - Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որի ընթացքում Նորին Սրբությունը կատարեց եպիսկոպոսական ձեռնադրություն: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը «Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ, արարէք տօնս ուրախութեան...» *(Սաղմ. ՃԺԷ 27)* բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 5):

***Յունիսի 24-ին, երեքշաբթի. - Սրբոց կուսանաց Նունեայ եւ Մանեայ:***

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, եպիսկոպոսական իր անդրանիկ Պատարագը մատուցեց Տ. Բագրատ. եպս. Գալստանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Ուր ես եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի» *(Յովհ. ԺԲ 26)* բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 27):

***Յունիսի 29-ին, կիրակի. - Գ. կիր. զկնի Հոգեգալստեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «զՈւխտ հարցն մերոց հաստատ եւ անսասան պահեա եւ տարածեա զայն ի վերա մեր, եւ ի վերա սերնդոց մերոց» բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 31):

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի վախճանման 4-րդ տարելիցի:

# "ЭЧМИАДЗИН" ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
## (Июнь 2003 г.)


1. Благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, на первой сессии третьего созыва Национального собрания Республики Армения, 12 июня 2003 г. (с. 3-4).
2. Слово Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, в Кафедральном соборе на Праздник Святого Эчмиадзина и по случаю возведения в сан епископов, 22 июня 2003 г. (с. 5-7).


## ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ


3. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Жан-Ноэлю Герини по случаю его награждения орденом «Св. Григория Просветителя», 1 июня 2003 г., № 170 (с. 8-9).
4. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Акопу Акопяну по случаю его награждения орденом «Св. Саак – Св. Месроп», 4 июня 2003 г., № 171 (с. 10-11).
5. Патриаршие награды (пожалование в июне 2003 г. энциклик и благословений Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, духовным и светским лицам, оказавшим большие услуги Армянской Церкви) – (с. 12).
6. Высшая награда Армянской Апостольской церкви г-ну и г-же Арету и Монике Ерканянам, 15 июня 2003 г. (с. 13).
7. Вручение ордена «Св. Нерсес Шнорали» благодетелям Армянской церкви г-дам Саро Ходавардяну и Арутюну Агасаркисяну, 30 июня 2003 г. (с. 14).
8. Избрание архимандрита Баграта Галстаняна главой армянской епархии Канады 31 мая 2003 г. (с. 15).


## ПРОПОВЕДИ


9. Проповедь Его Преосвященства епископа Навасарда Кчояна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета, 1 июня 2003 г. (с. 16-18).
10. Проповедь Его Преосвященства епископа Натана Оганисяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Праздник Пятидесятницы, 8 июня 2003 г. (с. 19-21).
11. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Тирайра Мартикяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета, 15 июня 2003 г. (с. 22-24).

12. Проповедь иеромонаха Вардана Навасардяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на праздник Вызволения Святого Григория Просветителя из Хор Вирапа, 21 июня 2003 г. (с. 25-26).
13. Проповедь Его Преосвященства епископа Баграта Галстаняна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Епископского Обета, 24 июня 2003 г. (с. 27-30).
14. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Паргева Мартиросяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 29 июня 2003 г. (с. 31-32).

## РЕЛИГИОЗНОЕ ИССЛЕДОВАНИЕ

15. **ИЕРЕЙ АДАМ МАКАРЯН** – Человеческий Сын на небесах (научное исследование) – (с. 33-38).

## ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

16. **А. С. СВАЗЯН** – Католикос Кавказской Албании Манук Григорис (научное исследование) – (с. 39-46).
17. **КАРЕН МАТЕВОСЯН** – Самвел Анеци (научное исследование) – (с. 47-57).
18. **ХАЧИК САМВЕЛЯН** – Воскан Ереванци полагается на короля Людовика XIV (научное исследование. Помещено также прошение архимандрита Воскана Ереванци королю Людовику XIV) – (с. 58-63).
19. **АНАИТ ЗАКАРЯН-БОЭХНЕНСИЕКЕР** – Алишан и популяризация армянской песни и литературы на страницах «Базмавепа» (научное исследование) – (с. 64-72).
20. **РИМА МИРУМЯН** – Восприятие модели национального государства и структур национальной самозащиты в армянской историко-философии XIX века. (научное исследование) – (с. 73-83).
21. **ГЕНРИХ ХАРАТЯН** – Страницы из истории одной семьи благодетелей (научное исследование) – (с. 84-86).
22. **ГРАНТ БАРСЕГОВИЧ АБРАМЯН** - Арцахская Епархия в последние годы своего существования – (научное исследование) – (с. 87-96).

## РЕЦЕНЗИИ

23. **ДАВИД ГЮРДЖИНЯН** – Новое слово в армянской лексикографии (о «Словаре армянских перифраз» проф. Петроса Бедиряна) – (с. 97-99).
24. **РУБЕН САКАПЕТОЯН** – Ценная Монография, посвященная Комитасу (о книге «Комитас, каким он был» проф. Хачика Бадикяна) – (с. 100-101).
25. **АРТАК МАГАЛЯН** - Академик Мари Броссе (о сборнике статей «Академик Мари Броссе» проф. Паруйра Мурадяна) – (с. 102-103).

# В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

26. Посвящение в сан епископа в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 22 июня 2003 г. Помещены биографии Его Преосвященства епископа Вазгена Мирзаханяна и Его Преосвященства епископа Баграта Галстаняна (с. 104-109).
27. Литургия Обета Его Преосвященства епископа Баграта Галстанян в Кафедральном соборе, 24 июня 2003 г. (с. 110).
28. Литургия Обета нововозведенного в сан епископа Его Преосвященства Вазгена Мирзаханяна в церкви Св. Геворка в Тбилиси, 29 июня 2003 г. (с. 111).
29. Литургия Обета Викаря Араратской Патриаршей епархии Его Преосвященства епископа Навасарда Кчояна в Кафедральном соборе, 1 июня 2003 г. (с. 112).
30. Литургия Обета главы армянской епархии Англии Его Преосвященства епископа Натана Оганисяна в Кафедральном соборе, 8 июня 2003 г. (с. 113).
31. Литургия Обета Армянских епархий Румынии и Болгарии в Кафедральном соборе, 15 июня 2003 г. (с. 114).
32. Литургия Обета епархии Арцаха в Кафедральном соборе, 29 июня 2003 г. (с. 115).
33. Основание церкви в Ванадзоре под предводительством Его Святейшества Католикоса Гарегина II, 23 июня 2003 г. (с. 116-117).
34. Церемония завершения учебного года в Эчмиадзинской духовной семинарии Геворкян, 16 июня 2003 г. (с. 118).
35. Церемония завершения учебного года в Севанской духовной семинарии Вазгенян, 15 июня 2003 г. (с. 119).

## В западной армянской Епархии Америки

36. Доклад посла Республики Армении в США в резиденции главы престоле Епархии, 10 июня 2003 г. (с. 120-121).

## В восточной армянской Епархии Америки

37. Празднование 50-летия рукоположения в сан Его Преподобия верховного архимандрита Варужана Гапараджяна, 31 мая 2003 г. (с.122-123).

38. Для населения г. Эчмиадзина в Святом Престоле откроется Стоматологический центр, 1 июня 2003 г. (с.124).
39. В Ахпате завершились работы организованного Гугаркской епархией симпозиума «Католикос св. Ован Одзнеци и его время», 3-5 июня 2003 г. (с.125-126).

# МЕЖЦЕРКОВНЫЕ СВЯЗИ

## Безпрецедентный межцерковный документ

40. **ИЕРОМОНАХ АРМАШ НАЛБАНДЯН** – Экуменическая Хартия (Анализ и перевод подписанного 22 апреля 2001 г. в Страсбурге документа "Charta Oecumenica" – (с. 127-139).

# АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

41. Аудиенция у Его Святейшества Гарегина II руководителей органов безопасности и спецслужб стран членов СНГ, 3 июня 2003 г. (с. 140).
42. Аудиенция у Его Святейшества Гарегина II Полномочного представителя Президента Российской Федерации в Южном регионе РФ г-на Виктора Казанцева, 3 июня 2003 г. (с. 141).

43. Краткие церковные новости. Информация о Святой Службе, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Святом Престоле Эчмиадзина в течении июня 2003 г. (с. 142-143).

# "ETCHMIADZIN"
# OFFICIAL MONTHLY REVIEW OF HOLY ETCHMIADZIN
## (June 2003)


1. Letter of Blessing of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, at the first session of the third gathering of the National Assembly, June 12, 2003 (p. 3-4).
2. Speech of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, in the Cathedral of Holy Etchmiadzin on the Feast of Holy Etchmiadzin and on the occasion of Episcopal Ordination, June 22, 2003 (p. 5-7).


## FONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING


3. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Jean-Noël Guériny, on the occasion of his decoration with the Medal of "Saint Gregory the Illuminator", June 1, 2003, no. 170 (p. 8-9).
4. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Hacob Hacobian on the occasion of his decoration with the Medal of "Saint Sahak – Saint Mesrop", June 4, 2003, no. 171 (p. 10-11).
5. Fontifical Awards (Encyclicals and Messages of Blessing granted to clergymen and laymen devoted to the Armenian Church by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, in June 2003) – (p. 12).
6. The Highest Award of the Armenian Apostolic Church to Mr. and Mrs. Aret and Monique Yerkanian, June 15, 2003 (p.13).
7. The Medal of "St. Nerses Shnorhali" granted to Mr. Saro Khodavardian and Mr. Harutiun Aghasarkissian, the benefactors of the Armenian Church, June 30, 2003 (p. 14).
8. Archimandrite Bagrat Galstian was elected Primate of the Diocese of the Armenian Church of Canada, May 31, 2003 (p. 15).


## SERMONS


9. Sermon delivered by His Eminence Bishop Navassard Kchoyan in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy of Oath, June 1, 2003 (p.16-18).
10. Sermon delivered by His Eminence Bishop Nathan Hovhanissian in the Cathedral of Holy Etchmiadzin on the Feast of Pentecost, June 8, 2003 (p.19-21).
11. Sermon delivered by His Eminence Archbishop Tirayr Martikian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy of Oath, June 15, 2003 (p.22-24).
12. Sermon delivered by Rev. Fr. Vardan Navassardian in the Cathedral of Holy

Etchmiadzin on the Feast of St. Gregory the Illuminator's Deliverance from the Pit, June 21, 2003 (p.25-26).

13. Sermon delivered by His Eminence Bishop Bagrat Galstian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy of Episcopal Oath, June 24, 2003 (p.27-30).
14. Sermon delivered by His Eminence Archbisbop Parkev Martirossian in the Cathedral of Holy Etchmiadzin, June 29, 2003 (p.31-32).

## RELIGIOUS STUDY

15. **REVEREND FR. ADAM MAKARIAN** – The Son of Man in the Heaven (investigation) – (p. 33-38).

## HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

16. **H. S. SVAZIAN** – Catholicos Manuk Grigoris of Caucasian Albania (investigation) – (p.39-46).
17. **KAREN MATHEVOSIAN** – Samuel Anetsi (investigation) – (p.47-57).
18. **KHACHIK SAMVELIAN** – Voskan Yerevantsi Relies upon King Louis XIV (investigation. Message of Archimandrite Voskan Yerevantsi to Louis XIV) – (p.58-63).
19. **ANAHIT ZAKARIAN-BOEHNENSIEKER** – Alishan and the Popularization of Armenian Songs and Literature on the Pages of "Bazmavep" (investigation) – (p. 64-72).
20. **RIMA MIRUMIAN** – The Model of National State and the Perception of National Structures of Self-Defense in Armenian Historical Philosophy of the 19th century (investigation) – (p. 73-83).
21. **HENRIK KHARATIAN** – Pages from the History of a Benefactor Family (investigation) – (p. 84-86).
22. **HRANT B. ABRAHAMIAN** – The Diocese of Artsakh in the Last Years of its Existence (1930s) – (investigation) – (p. 87-96).

## CRITICAL REVIEW

23. **DAVID GURJINIAN** – A New Word in Armenian Lexicography (On the "Dictionary of Armenian Paraphrases" by Prof. Petros Bedirian) - (investigation) – (p. 97-99).
24. **RUBEN SAKAPETOYAN** – A Valuable Monograph Devoted to Komitas (On the book "Komitas as He Was" by Prof. Khachik Badikian) – (p. 100-101).
25. **ARTAK MAGHALIAN** – Academician Marie Brosset (On the Collection of Articles "Academician Marie Brosset" by Prof. Paruyr Mouradian) – (p.102-103).

# IN THE MOTHER SEE AND THE DIOCESES


26. Episcopal Ordination in the Cathedral of Holy Etchmiadzin, June 22, 2003. Biographics of His Eminence Bishop Vasken Mirzakhanian and His Eminence Bishop Bagrat Galstian (p.104-109).
27. Divine Liturgy of Oath celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin by His Eminence Bishop Bagrat Galstian, June 24, 2003 (p.110).
28. Divine Liturgy of Oath celebrated in St. Gevork Church of Tbilisi by His Eminence Bishop Vasken Mirzakhanian, June 29, 2003 (p.111).
29. Divine Liturgy of Oath celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin by His Eminence Bishop Navassard Kchoyan, Locum Tenens of the Araratian Patriarchal Diocese, June 1, 2003 (p. 112).
30. Divine Liturgy of Oath celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin by His Eminence Bishop Nathan Hovhannisian, Primate of the Armenian Diocese of England, June 8, 2003 (p. 113).
31. Divine Liturgy of Oath of the Romanian and Bulgarian Dioceses of the Armenian Church, celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin, June 15, 2003 (p. 114).
32. Divine Liturgy of Oath of the Diocese of Artsakh celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin, June 29, 2003 (p. 115).
33. Blessing of the foundation of the Diocesan Church of Vanadzor presided by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, June 23, 2003 (p. 116-117).
34. Graduation ceremonies at the Gevorkian Seminary of Etchmiadzin, June 16, 2003 (p. 118).
35. Graduation ceremonies at the Vaskenian Seminary of Sevan, June 15, 2003 (p. 119).


## In the Western Diocese of the Armenian Church of North America


36. Report of the Ambassador of the Republic of Armenia to the USA made in the Prelacy, June 10, 2003 (p. 120-121).


## In the Eastern Diocese of the Armenian Church of North America


37. Celebration of the 50th Anniversary of Senior Archimandrite Varuzhan Gaparajian's Ordination, May 31, 2003 (p. 122-123).

38. Dental Center is to be opened in the Mother See for the inhabitants of the city of Etchmiadzin, June 1, 2003 (p.124).
39. Closing of the Symposium "Catholicos St. Hovhan Odznetsi and his Time" organized in the Monastery of Haghpat by the Diocese of Gougark, June 365, 2003 (p.125-126).

# INTER-CHURCH RELATIONS

## An Unprecedented Ecumenical Document

40. **REVEREND FR. ARMASH NALBANDIAN** – Charta Ecumenica (Analysis and Translation of the Document "Charta Œcumenica" signed in Strasbourg on April 22, 2001 (p.127-139).

# AUDIENCES AT THE MOTHER SEE

41. Audience granted by His Holiness Karekin II to the Heads of National Security Bodies and Special Services of CIS Member Countries, June 3, 2003 (p.140).
42. Audience granted by His Holiness Karekin II to Mr. Victor Kazantsev, Plenipotentiary Representative of the President of Russian Federation in the Southern Region of RF, June 3, 2003 (p.141).

43. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during June 2003 (p.142-143).

# "ETCHMIADZINE"
# ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
## (Juin 2003)

1. Message de bénédiction de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens à l'occasion de la première séance de la troisième convocation de l'Assemblée Nationale de la République d'Arménie, 12 juin 2003 (p. 3-4).
2. Intervention de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à la Cathédrale d'Etchmiadzine à la fête de Saint Etchmiadzine et à l'occasion de l'ordination des évêques, 22 juin 2003 (p. 5-7).

## ENCYCLIQUES PONTIFICALES ET MESSAGES DE BENEDICTION

3. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Jean-Noel Guériny à l'occasion de sa distinction de l'Ordre « Saint Grégoire l'Illuminateur », 1er juin 2003, no.170 (p. 8-9).
4. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Hacob Hacobian à l'occasion de sa distinction de l'Ordre « Saint Sahak – Saint Mesrop », 4 juin 2003, no.171 (p. 10-11).
5. Distinctions pontificales (Encycliques pontificales et messages de bénédiction accordés par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à des personnalités religieuses et laïques ayant rendu d'éminents services à l'Eglise arménienne au mois de juin 2003) – (p. 12).
6. La distinction suprême de l'Eglise Apostolique arménienne accordée à Monsieur et Madame Aret et Monique Yerkanian, 15 juin 2003 (p. 13).
7. Remise de l'Ordre « Saint Nerses Chnorhali » à Messieurs Saro Khodavardian et Haroutiun Aghassarkissian, bienfaiteurs de l'Eglise arménienne, 30 juin 2003 (p. 14).
8. Nomination de l'archimandrite Bagrat Galstian au poste de Primat du Diocèse arménien du Canada, 31 mai 2003 (p. 15).

## SERMONS

9. Sermon de Son Eminence l'évêque Navassard Ktchoyan à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Messe du Vœu, 1er juin 2003 (p. 16-18).
10. Sermon de Son Eminence l'évêque Nathan Hovhannissian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Fête de la Pentecôte, 8 juin 2003 (p. 19-21).
11. Sermon de Son Eminence l'archevêque Tirayr Martikian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Messe du Vœu, 15 mai 2003 (p. 22-24).

12. Sermon du Révérend Frère Vardan Navassardian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Fête de la Délivrance de Saint Grégoire l'Illuminateur de la fosse de Khor Virap, 21 juin 2003 (p. 25-26).
13. Sermon de Son Eminence l'évêque Bagrat Galstian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Messe du Vœu, 24 juin 2003 (p. 27-30).
14. Sermon de Son Eminence l'archevêque Parguev Martirossian à la Cathédrale de Saint Etchmiadzine, 29 juin 2003 (p. 31-32).

## ETUDE RELIGIEUSE

15. **REVEREND ADAM MAKARIAN** – Le Fils de l'Homme au ciel (recherche scientifique) – (p. 33-38).

## ETUDES HISTORICO-PHILOLOGIQUES

16. **H. M. SVAZIAN** – Manouk Grigoris, Catholicos de l'Albanie du Caucase (recherche scientifique) – (p. 39-46).
17. **KAREN MATHEVOSSIAN** – Samuel Anétsi (recherche scientifique) – (p. 47-57).
18. **KHATCHIK SAMVELIAN** – Voskan Erevantsi se fie au roi Louis XIV (recherche scientifique. Texte de la demande adressée à Louis XIV par Voskan Erevantsi) – (p. 58-63).
19. **ANAHIT ZAKARIAN-BOEHNENSIEKER** – Alichan et la vulgarisation du chant et de la littérature arménienne sur les pages du « Bazmavep » (recherche scientifique) – (p.64-72).
20. **RIMMA MIROUMIAN** – Le modèle de l'Etat national et la perception des structures d'autodéfense nationale dans la philosophie historique arménienne du XIX[e] siècle (recherche scientifique) – (p. 73-83).
21. **HENRIK KHARATIAN** – Pages de l'histoire d'une famille de bienfaiteurs (recherche scientifique) – (p. 84-86).
22. **HRANT B. ABRAHAMIAN** – Le Diocèse d'Artsakh aux dernières années de son existence (années 1930) – (recherche scientifique) – (p. 87-96).

## CRITIQUE LITTERAIRE

23. **DAVID GURDJINIAN** – Du nouveau dans la lexicographie arménienne (Sur le « Dictionnaire des périphrases arméniennes » du Prof. Pétros Bédirian) – (p. 97-99).
24. **ROUBEN SAKAPETOYAN** – Une monographie de valeur consacrée à Komitas (Sur le livre « Komitas tel qu'il fut » de Khatchik Badikian) – (p. 100-101).
25. **ARTAK MAGHALIAN** – L'académicien Marie Brosset (Sur le recueil d'articles « l'Académicien Marie Brosset » publié par Parouyr Mouradian) – (p. 102-103).

## AU SAINT-SIEGE ET DANS LES DIOCESES

26. Ordination d'évêques au Saint-Siège d'Etchmiadzine, 22 juin 2003 (Biographies de Son Eminence l'évêque Vazguen Mirzakhanian et de Son Eminence l'évêque Bagrat Galstian) – (p. 104-109).
27. Messe du Vœu servie à la Cathédrale de Saint Etchmiadzine par Son Eminence l'évêque Bagrat Galstian, 24 juin 2003 (p. 110).
28. Messe du Vœu servie par Son Eminence l'évêque Vazguen Mirzakhanian, nouvellement ordonné, à l'église diocésaine St.-Guévork de Tbilissi, 29 juin 2003 (p. 111).
29. Messe du Vœu servie à la Cathédrale de Saint Etchmiadzine par Son Eminence l'évêque Navassard Ktchoyan, locum tenens du Diocèse patriarcal d'Ararat, 1er juin 2003 (p. 112).
30. Messe du Vœu servie à la Cathédrale de Saint Etchmiadzine par Son Eminence l'évêque Nathan Hovhannissian, Primat du Diocèse arménien d'Angleterre, 8 juin 2003 (p. 113).
31. Messe du Vœu des Diocèses arméniens de Roumanie et de Bulgarie à la Cathédrale de Saint Etchmiadzine, 15 juin 2003 (p. 114).
32. Messe du Vœu du Diocèse d'Artsakh à la Cathédrale de Saint Etchmiadzine, 29 juin 2003 (p. 115).
33. Fondation de l'église diocésaine de Vanadzor en présence de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, 23 juin 2003 (p. 116-117).
34. Cérémonie de fin d'année scolaire au Séminaire Guévorkian d'Etchmiadzine, 16 juin 2003 (p. 118).
35. Cérémonie de fin d'année scolaire au Séminaire Vazguénian de Sévan, 15 juin 2003 (p. 119).

### Au Diocèse Occidental des Arméniens d'Amérique

36. Exposé de l'Ambassadeur d'Arménie aux Etats-Unis d'Amérique au Siège du Diocèse, 10 juin 2003 (p. 120-121).

### Au Diocèse Oriental des Arméniens d'Amérique

37. Cinquantenaire du sacerdoce du Révérend archimandrite suprême Varoujan Gaparadjian, 31 mai 2003 (p. 122-123).

38. Un Centre de stomatologie sera inauguré au Saint-Siège d'Etchmiadzine pour la population de la ville d'Etchmiadzine, 1er juin 2003 (p. 124).
39. Fin du symposium « Le Catholicos saint Hovhan Odznétsi et son époque », organisé à Haghpat par le Diocèse de Gougark, 3-5 juin 2003 (p. 125-126).

# RELATIONS INTER-ECCLESIASTIQUES

## Un document inter-ecclésiastique sans précédent

40. **REVEREND PERE ARMACH NALBANDIAN** – Charte Œcuménique (Analyse et traduction du document « Charta Œcumenica » signé à Strasbourg le 22 avril 2001 (p. 127-139).

# AUDIENCES AU SAINT-SIEGE

41. Audience accordée par Sa Sainteté Garéguin II aux chefs des organismes de sécurité et des services spéciaux des Etats membres de la C.E.I., 3 juin 2003 (p. 140).
42. Audience accordée par Sa Sainteté Garéguin II à M. Victor Kazantzev, représentant plénipotentiaire du Président de la Fédération de Russie dans la Région Fédérale Sud, 3 juin 2003 (p. 141).

43. Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les autres services accomplis au Saint-Siège et à la Cathédrale d'Etchmiadzine au mois de juin 2003 (p. 142-143).

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала
"Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՍԻՉ՝ 77764

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ